153. *422բ–5բ* Ի յիշատակի սուրբ մարգարէին Եղիսէի. Ի Չորրորդ թագաւորութենէն – *Եւ ասէ Տէր ցեղիայ…*

154. *425բ–6ա* Մահ Եղիսէի մարգարէի – *Սա էր յԱբեղմայուղայ…*

155. *426ա* Յաղագս Տապանակին Աստուծոյ. Ընթերցումն յելից – *Եւ խաւսեցաւ Տէր ընդ Մովսէսի… 426բ* Ի թուոց – *Եւ ասէ Տէր ցՄովսէս… 426բ–8ա* Ի Յեսուայ որդւոյ Նաւեայ – *Եւ կանխեաց Յեսու ընդ առաւաւտն… 428ա–9ա* ՅԱռաջին թագաւորութենէն – *Եւ եղեւ ընդ աւուրսն… 429աբ* Ի Մնացորդաց գլրոցն – *Եւ հրաման ետ Դաւիթ…*

156. *429բ–36ա* Ի Մեծի աւուր Վարդավարին Այղակերպութեան Տեառն մերոյ ի Թաբովր. Երանելոյն Յովհաննու Ոսկեբերանի Կոստանդինուպաւլսի եպիսկոպոսի ի Մաթէոսի Աւետարանին Մեկնութենէն – *Ամեն ասեմ ձեզ, զի իցեն…*

157. *436աբ* Երանելոյն Սեբերիանոսի Եմեսու եպիսկոպոսի – *Ոչ փոխեցաւ Տէրն ի մարմին…*

158. *436բ–7ա* Սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչի – *Քանզի յառաջագոյն իսկ աստուածագէտս…*

159. *437ա–40ա* Ի յիշատակի սուրբ մարգարէին Եսայեա. Երանելոյն Յովհաննու Ոսկեբերանի Կոստանդինուպաւլսի եպիսկոպոսի ի Մեկնութենէ նորին Եսայեա – *Եւ եղեւ յամին յորում մեռաւ Ոզիայ արքայ…*

160. *440ա* Ամովս մարգարէ (մահ) – *Սա էր ի Թեկուայ…*

161. *440ա* Եսայի մարգարէ (մահ) – *Սա էր որդի Ամովսեայ…*

162. *440ա–5ա* Ի յիշատակի սրբոց Մակաբէացւոցն. Ասացեալ սրբոյն Գրիգորի Աստուածաբանի Անձիանու եպիսկոպոսի – *Ջի՞նչ եւ Մակաբեացիքս վասն զի սոցա է…*

163. *445բ–6ա* Ի յիշատակի սրբոյ Աստուածածնին եւ միշտ կուսին Մարիամու. Թուղթ սրբոյն Դիոնեսիոսի Արիսպագացւոյ եպիսկոպոսի Աթենացւոցն եւ նախաշար վարդապետի, զոր գրեաց Պատասխանի թղթոյն Տիտոսի Կրետացւոյ եպիսկոպոսի. Յաղագս ննջման սրբոյ կուսին Մարիամու Աստուածածնի – *Ծանիցէ եղբայրութիւնդ քո, ով վսեմականդ Տիտէ…*

164. *446ա–52բ* Փոխումն եւ հանգիստ ննջման սրբոյ Աստուածածնին մաւր Տեառն եւ կուսին – *Սուրբ կոյսն Մարիամ Աստուածածին էր յերուսաղեմ…*

165. *452բ–3բ* Ի յիշատակի սուրբ առաքելոյն Թովմայի. Ի Վարդապետութենէ սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչի – *Արդ, նոր ծնան առաքեալքն զաշխարհս…*

166. *453բ–6բ* Վկայաբանութիւն սուրբ առաքելոյն Թովմայի, որ կատարեցաւ ի Հնդիկս – *Մտեալ այնուհետեւ երանելոյն Թովմայի…*

167. *456բ–7ա* Ի յիշատակի սրբոյն Յովհաննու Կարապետի եւ Մկրտչի. Սրբոյն Կիւրղի Երուսաղեմի հայրապետի – *Արդ լինէր հնոց աւրինացն կատարած…*

168. *457ա–9ա* Երանելոյն Յովհաննու Ոսկեբերանի Կոստանդինուպաւղսի եպիսկոպոսի ի Մաթէոսի Աւետարանին Մեկնութենէ – *Յայնմ ժամանակի լուաւ Հերովդէս…*

169. *459ա–61բ* Յաղագս սրբոյ Կարապետին եւ Մկր[տ]չին Յովաննու, ասացեալ երանելոյն Բաբիղայ եպիսկոպոսի Աղեքսանդրու – *Որպէս ոք անապատասէր…*

170. *461բ–3ա* Պատմութիւն սուրբ եւ պատուական գլխոյն Յովաննու Մկրտչի, թէ ուստի՞ բերաւ յԱմասիայ քաղաք – *Երկուք ոմանք յԱրեւելից…*

171. *463ա–4ա* Ի յիշատակի սուրբ եւ կաթողիկէ եկեղեցւոյ, որ կատարի յԵրուսաղէմ ի սուրբ տեղիսն. Առաջի աւուրն. Երանելոյն Կիւրղի Երուսաղէմի հայրապետի – *Յաղագս սուրբ եւ կաթողիկէ եկեղեցւոյ…*

172. *464ա–6բ* Երանելոյն Եւսեբի Կեսարոյ յԵկեղեցական պատմութենէ, ի տասներորդ դպրութենէ – *Մ վ քահանայք սիրելիք Աստուծոյ…*

173. *466բ–71բ* Յերկրորդում աւուրն. Ի հրաշապետում տաւնախմբութեան առաջի Սուրբ խաչին Քրիստոսի. Դաւթի փիլիսոփայի Ներբողեան ի Սուրբ Խաչս աստուածընկալ – *Բարձրացուցէք զՏէր Աստուած մեր… կամուրջ, քանզի ի մահուանէ /// (շար. թափուած)։*

174. *472ա–3ա* Երանելոյն Կիւրղի Երուսաղեմի հայրապետի – *Պարծանք սրբութեան կաթողիկէ եկեղեցւոյ…*

175. *473ա–4ա* Երանելոյն Յովհաննու Ոսկեբերանի Կոստանդինուպաւղսէ եպիսկոպոսի ի Մաթէոսի Աւետարանին Մեկնութենէ – *Մի ոք այսուհետեւ ամաւթ համարեսցի…*

176. *474ա–7բ* Նորին Յովհաննու Ոսկեբերանի ի Խաչն աստուածընկալ – *Զի՞նչ ասացից կամ զի՞նչ խաւսեցայց…*

177. *477բ–8ա* Ի Վարդապետութենէ սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչի – *Եւ վասն զի սովոր էին մարդիկ…*

178. *478աբ* Մովսէսի Խորէնացւոյ Ի Հայոց Պատմութենէ – *Իսկ երանելւոյն* Նունէի Վրաց *վարդապետուհւոյ…*

179. *478բ–80ա* Սրբոյն Սահակայ Հայոց եպիսկոպոսապետի, թէ որպէս հաստատեցաւ կարգ եկեղեցւոյ եւ որոշումն վանաց – *Հաւատք եկեղեցականք զաւրացուցանեն…*

180. *480բ–1բ* Երանելոյն Ջենովբայ եպիսկոպոսի Ի Սաղմոսն բառասներորդ չորորդ – *Արդ, եկ լուր դու երգ մի հոգեւոր երգոց…*

181. *481բ–4ա* Վերլուծութիւն կաթողիկէ եկեղեցւոյ եւ որ ի նմա յաւրինակ (=յաւրինակեալ) կարգաց – *Երանելին Պաւղոս առաքեալ գրէ եբրայեցւոյն…*

182. *484ա–6ա* Յաղագս գիւտի Սրբոյ Խաչին յԵրուսաղէմ, զոր տաւնէ ընդհանուր եկեղեցի ի տասն Մարերի ամսոյ, ի յԱբգարու Պատմութենէ – *Արդ, ասեմ առաջի ձեր իրս ինչ…*

183. *486ա–8ա* Գիւտ վերստին դարձեալ Սրբոյ Խաչին յԵրուսաղէմ – *Եւ եղեւ այնուհետեւ ի ժամանակին յայնմիկ…*

184. *488ա* Մովսիսի Հայոց Պատմագրի Վասն գիւտի Սուրբ Խաչին յԵրուսաղէմ – *Եւ եղեւ իբրեւ վախճանեցաւ թագաւորն Հոռոմոց* Կոստաս…

185. *488աբ* Գիւտ բեւեռաց Սուրբ Խաչին Քրիստոսի – *Երանելին* Հեղինէ *լցեալ հաւատովքն…*

186. *488բ–93ա* Ի յիշատակի սուրբ առաքելոյն Փիլիպպոսի. Վկայաբանութիւն նորին սուրբ առաքելոյն, զոր վկայեաց յԵպեփիմէս քաղաքի – *Մինչդեռ էին սուրբ առաքեալքն Փիլիպպոս…*

187. *493աբ* Եւսեբի եպիսկոպոսի յԵկեղեցական Պատմութենէ, յերկրորդ դպրութենէ – *Այդ Փիլիպպոս, մի յայնցանէ…*

188. *493բ* Ի նոյն գրոց յերորդ դպրութենէ – *Բայց վասն Փիլիպպոսի առաքելոյ գրեաց…*

189. *493բ–8բ* Պատմութիւն սուրբ առաքելոյն Բարթողիմէոսի – *Գլխաւորք սուրբ առաքելոցն ընտրեալ…*

190. *498բ–9բ* Գիւտ նշխարաց սրբոյն Բարթողիմէոսի առաքելոյ – *Յամս* Յազկերտի *փոքու* Պարսից *արքայի…*

191. *499բ–505ա* Յաղագս Անդրէի առաքելոյ եւ նորին սքանչելեացն, զոր եցոյց Տէր ի մարդակերաց աշխարհին ի ձեռն նորա, եւ Մատթէի, որ վիճակեցաւ նոցա քարոզ եւ առաքեալ – *Յետ Համբառնալոյ Տեառն յերկինս…*

192. *505ա–12բ* Վկայաբանութիւն սրբոյն Անդրէի առաքելոյ, որ չարչարեցաւ ի Սպոդեպադացւոց յառաջ քան զմի Կաղանդացն դեկ[տ]եմբերի ամսոյ – *Ես, եղբարք, առաքեցա ի Տեառնէ…*

193. *512բ–3ա* Ի յիշատակ սրբոյն Դաւթի մարգարէի եւ Յակովբայ առաքելոյն եղբաւր Տեառն. ՅԱռաջին թագաւորեցոյց զՍաւուղ…

194. *513ա* Սրբոյն Աթանասի եպիսկոպոսի Աղեքսանդրի – *Այսպէս Դաւիթ երգովք նուագարանացն…*

195. *513ա–4ա* Սրբոյն Եպիփանու եպիսկոպոսի Կիպրացւոյ ի Սաղմոսաց Մեկնութենէ – *Ով երգք հոգէխառնըք…*

196. *514ա–5ա* ՅԱռաջին թագաւորութենէն – *Եւ ժողովեցին այղ ազգիքն զբանակս իւրեանց…*

197. *515ա* Սրբոյն Յովհաննու Ոսկեբերանի – *Այղ Յակովբեանքն, որ անուանեալ էին եղբարք Տեառն…*

198. *515բ–6բ* Վկայաբանութիւն սրբոյն Յակովբու եղբաւր Տեառն. Յեկեղեցական Պատմութենէ – *Իսկ աթոռն* Յակովբայ *այն…*

199. *516բ–9ա* Ի յիշատակի սրբոյն Ստեփաննոսի Նախավկային Քրիստոսի. Սրբոյն Բարսղի Կեսարու Կապպադոացւոց եպիսկոպոսապետին Ներբողեան ի սուրբ Նախավկայն Քրիստոսի Ստեփաննոս – *Ամենեքեան որք սիրելեացն ճաշոց…*

200. *519ա–20բ* Սրբոյն Գրիգորի Նիւսացւո Յինն երանութենէ գրոցն – *Տէր մեր եւ Արարիչ զապականութիւն անտես…*

201. *520բ–2ա* Երանելւոյն Յովհաննու Ոսկեբերանի Ի սուրբն Ստեփաննոս յառաջին սարկաւագ եւ Նախավկայ Քրիստոսի – *Եկն Քրիստոս ետես ճանապարհորդելով առ ի կեանս…*

202. *522բ* Գիւտ նշխարաց սրբոյն Ստեփաննոսի, ետոբ ընդ նմա – *Որոց ըստ քաղաքաց … եւ նա ասէ ցիս /// (շար. թափուած)։*

Բ. *88բ–121բ [Յաւելագրութիւն ԺԴ., ի ստորին լուսանցս, եզրահատուած]* Պատմութիւն Մարխայի վաճառականի եւ սմանչելեացն Աստուծոյ, զոր եցոյց ի յաւգուտ ամենայն խոստովա[նողաց… – *Յետ կենդանարար չարչարանաց եւ Յարութեան Տեառն … Տէր Աստուած ողորմեայ մե///*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

1. 5բ (Յովաննէս գրչի) Ջմեղսամակար[դ]ս եւ զաղաղակս զՅովաննէս յիշեայ ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր։

10բ Ջգրող եւ զստացողս սորա, յիշեայ։

18ա Ջստացողս եւ զգրողս՝ զՅովաննէս *յիշեա (նման՝ 43բ)։*

23ա Ջգծող սորա յիշեա յաղաւթս։

61բ Ջմեղուցեալս յիշեա։

2. 97բ (Գէորգ գրչի) Յիշեա ի սրբամատոյց յաղաւթս ձեր՝ զՅովաննէս *քահանայ, զառաջի գիծն, որ սկսաւ կատարել եւ ոչ ժամանեաց, այլ փոխեցաւ ըստ աստուածային կամացն։ Եւ՝* Գէորգ *հայր՝* Յովաննիսի, *յանձն առեալ, խաւար աչաւք, թերեւս կարացից կատարել զյիշատակս* Յովաննիսի՝ *ինձ ծնողիս, եւ* Յովաննիսի, *եւ* Մխիթարչին *մեղաց թողութիւն խնդրեցէք ի Քրիստոսէ։*

110բ Աղաչեմ զընթերցողսդ՝ զԳէորգ *մեղապարտ յիշեսջիք ի յաղաւթս ձեր (նման՝ 276բ, 293ա, 303ա, 334ա, 358բ, 466բ)։*

142ա Աղաչեմ յայսմ վայրի՝ զՅովաննէս *զառաջի գիծն, եւ* զԳէորգ, *եւ* զՄխիթարիչն, *որ ձեռնատու եղեւ գրոցս, յիշեսջիք յաղաւթս ձեր, աղաչեմ։ Քրիստոս Աստուած… ողորմեայ մեղուցեալ ծառայիս սուտանուն քահանայի (նման՝ 407բ)։*

152ա… Ողորմեա մեղաւորիս (նման՝ 152բ, 166ա, 340ա, 426ա, 452բ, 511բ)։

192ա Յիշեսջիք զսուտանուն քահանայ՝ զԳէորգ, *եւ զառաջին գիծն՝* զՅովաննէս, *որ տարաշխարհ ելաւի յարս կենացս, եւ զնողս մեր՝* Խաչատուր *քահանայ, եւ զամենայն զեղբայրս մեր, որք ի Քրիստոս փոխեցան, եւ* զՄխիթարիչ, *որ աւկտակար եղաւ աւարտելոյ յառաջադիր գրոցս եղբաւր իւրոյ, եւ զծնողս սոցա յիշեսջիք, եւ խոշորութեան գրոյս անմեղադիր լերուք։ Լուր վասն յիշատակութեան չկորուսի, առհասարակ յիշեսջիք զմեղապարտս՝* Գէորգ։

220բ Ի թուականութեան ՈՄ (1201), ի ժամանակս բարեպաշտ ամիրսպասալար՝ Զաքարիայի, *ի Հրոտից ամսեան, բովանդակ ԻԲ (22) աւր թաթառ եկն եւ գերյարոյց եղեւ։*

445ա ՋԳէորգ *մեղապարտ գծողս եւ զորդին իմ* զՄխիթարիչ *անուն, որ զնիւթս ետ անտրտունջ ի յիւր հալալ վաստակոց ի յիշատակ իւրն, եւ զիս զսուտանուն գրողս յիշեսջիք ի սրբամատոյց յաղաւթս, եւ աղաչեմ զամենեսեան, մի մեղադրէք, զի ոչ էի տեղեկ բայից եւ բառից, այլ բնաւ չունէի. վասն այնր յաւժարեցայ ի ժամ ծերութեանս, զի զառաջի զգիծն* Յովաննէս *էր սկսեալ, եւ տարաժամ փոխեցայ աշխարհէ։ Այս* Յովաննէս *եւ* Մխիթարիչս *եղբարք էին. յիշեսջիք եւ զգրողս, որ հայրս եմ։*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

1. 340բ (ԺԳ – ԺԴ դդ.) Ով աստուածասէր եւ սրբասնեալ քահանայք, պատարագիչք զՔրիստոս եւ բաշխող մարմնո եւ արեանն Տեառն, զսեւացեալս մեղաւք՝ զՄկրտիչ *սուտանուն քահանա եւ զծնողսն իմ եւ եղբարս իմ յաղաւթս ձեր յիշեսջիք, ասասջիք լի բերանով, էթէ. Տէր Աստուած զքո զողորմութիւնդ արա նոցա հոգուն։ Եւ որ զմեզ յիշէն, յիշման արժանի լիցին յանմահ թագաւորէն, որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն։*

2. 340բ Ջոհաննէս *սուտանուն երէց եւ անուղղագործ քահանայութեան յիշեցէք յաղաւթս, աղաչեմ վասն սիրոյն Քրիստոսի, մի մոռանայք: Թվին ՉԾ (1301):*

3. 234ա (ԺԵ դ.) ԶԱնդրիաս գծաւղս /// *եւ առ Աստուած բարեխա[սեա] եւ թողութիւն հայցեայ:*

340բ ...ես՝ Անդրիաս *սուտանուն կրաւնաւոր/// (շար. 4 տող քերուած):*

4. 523բ (ԺԵ Դ.) Յիշատակարանս է Վարդանին *– Փա՛ռք... Զվերջին ստացող սուրբ գրոցս որ կոչի Ճառ, ստացաւ զսա՝* Ղուկասն, *եւ զհայրն՝* Վարդ[ա]նէս, *եւ զծնօղսն իւր յիշեցէք ի Քրիստոս եւ Աստուած ողորմի ասացէք նոցա հոգւոյն. ամէն:*

Այլեւ դատողն ամենայնի՝
Յիսուս Որդին Հօր անեղի,
Յորժամ բազմիս կալն առնայի,
Դատ առնելով ազգաց հողազարմի՝
Զվարդան արա, Տէր, արժանի,
Դասիլ ի դասս աջակողմի,
Լսել ըզձայն քո հայրե[ն]ի.
Եկայք աւրհնեալք, որ բարբառի,
Արքայութեան քո արքայի,
Զվարդան առնէ այնմ արժանի,

Եւ զիւր ծնօղքն, եւ զիւր կողակիցն՝ զՅոյսխաթուն, *եւ զվարդանի որդիքն՝* զՂազարն *եւ* զԱբիբարիդն, *եւ* զԱւետիսն, *եւ* զՅովսէփն, *եւ* զվարդանի *թոռներն՝* զՂազարն, զվարդերեսն, *եւ* զխաչատուրն, *եւ Աստուած ողորմի ասացէք նոցա հոգոյն. ամէն:*

Դարձեալ Աստուած ողորմի ասացէք՝ Սարգըսին *եւ իւր ծնօղացն, եւ իւր եղբարցն՝* Ղազարին *եւ* Գրիգորին, Կիրակոսին *եւ իւրեանց կողակցին, եւ* Սարգըսի *որդւոցն՝* Պօղոսին, Պետրոսին, Աստուածատրին, Գասպարին, *Աստուած օգնական լինի նոցա եւ փրկէ զնոսա յամենայն չարէ, եւ յետ աստեացս ելանելոյ արքայութեան քո Քրիստոս, արժանի [արա] զսոսա, որք յիշեցաք. ամէն:*

Քրիստոս Աստուած մեր, որ խոնարհեցար յանպատում փառաց աթոռոյ քո եւ եկիր կամաւորապէս ի չարչարանս, մեռար ի վերայ խաչի, թաղեցար ի գերեզման եւ յարեար ի մեռելոց, յարոյ ի մեռելութենէ Մեղաց զհոգի՝ Վարդանին *եւ զիւր կողակցին՝* Լոյսխաթունին, *եւ իւր որդւոցն՝* Ղազարոսին, Վարդերեսին, *եւ* Վարդանի *եղբարցն՝* Լիբարիդին *եւ* Աւետիսին, Յովսէփին, *եւ թոռներուն՝* Ղազարին, Վարդերեսին, Խաչատուրին, Մարթային, Թուտանդին, Շայիին *եւ* Ամիրին *եւ* Հարապետին, Կիրակոսին, *եւ* Եղիսին, Շամշադինին, *եւ Աստուածն ամենայնի զամենայնի մեղքն թողի. ամէն:*

Դարձեալ Աստուած ողորմի ասացէք՝ Սարգըսին *եւ իւր ծնօղացն եւ իւր եղբարցն՝* Ղազարին *եւ* Գրիգորին *եւ իւրեանց կողակցին, եւ* Սարգսի *որդւոցն՝* Պօղոսին, Պետրոսին, Աստուածատրին, *եւ* Գասպարին, Յակոբին, Աւետիսին, Նորտընկին, Մարգրտին *եւ* Եղիսէին, Թաւէզին *եւ* Գոյայրին, Կերեղին, *եւ ամենեցուն, որք յիշեցայք, զամենայնի մեղքն թողու Արարիչն Աստուած. ամէն:*

Դարձեալ կրկին անկամ, Աստուած ողորմի ասացէք՝ Վարդանին *եւ իւր ծնօղացն եւ իւր կողակցին, եւ իւր եղբարցն, եւ իւր թոռներացն, եւ իւր ամենայն արեան մերձաւորացն՝* Սարգըսին *եւ իւր եղբարցն եւ իւրեանց ծնօղացն, եւ* Սարգսի *կողակցին եւ իւրեանց զաւակացն, եւ Աստուածն ամենայնի զամէնի մեղքն թողու: Որք յիշեցուք եւ գրեցաք, Տէր գրէ զանուանս նոցա ի դպրութիւնն կենացն. ամէն:*

5. 274բ (ԺԷ դ.) Աբրահամ*:*

6. 304ա (ԺԷ դ.) Խնդրեսցուք հաւատով Հաւրէ վասն քաւութեան մեղաց եւ ///

7. 245ա (ԺՀ դ., շղագիր) Աստուած ողորմի Դաւթիս*. ամէն:*

8. 235բ ///(«Ասացի անհաւատը Աւետարանը ձեռք չառնի, անհաւատ եմ եթէ խաչը չտեսնեմ»):

ԿՆՔԱԴՐՈՇՄ 305բ, 360բ, 389բ Յոհաննէս *եպս. (ԺՀ դ.): 5բ, 204բ, 340բ, 516բ Գիրքս* Սուրբ Էջմիածնա *է:*


ԳՐՁԱՓՈՐՁ 278ա Այս բաղդազ ձուկն Կարապետիկ *է:*

1526
ՆԵՐՍԷՍ ԼԱՄԲՐՈՆԱՑԻ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՍԱՂՄՈՍԱՑ


Յովհաննավանք ՁԽԲ–ՁԽԳ–1293–1294

ԳՐԻՉ՝ երէց Ֆիլ.: ՍՏԱՑՈՂ՝ Համազասպ եպս. Յովհաննավանուց:

ԹԵՐԹ՝ 907. չգրուած՝ 907բ: ՊՐԱԿ՝ Ա–ՀՁx12 (Ա. 8, Գ 11): ՆԻՒԹ՝ թուղթ (1666 թ. յաւելում՝ 176, 178, 628, 907): ՄԵՇՈՒԹԻՒՆ՝ 50x33,5: ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն: ԳԻՐ՝ արեւելեան բոլորգիր (նորոգող Աթանաս գրչի՝ 176աբ, 178ա, 628աբ, 907ա): ՏՈՂ՝ 35: ԿԱՋՄ՝ դրոշմազարդ շագանակագոյն կաշի՝ դռնակով, Ա փեղկին երեք մետաղեա խոշոր ճարմանդակալներ, միջուկը՝ տախտակ, աստառը՝ ղալամքար վարագոյրի մաս, դռնակինը՝ կարմիր կտաւ: ՊԱՀՊԱՆԱԿ՝ 1+1, թուղթ (ԺԹ դ.):



Նմուշ՝ 6ա



Նմուշ՝ 8ա

ՊԱՏԱՌԻԿ – ՊԱՀՊԱՆԱԿ – Թէոդորետոս Կիւրացի, Մեկնութիւն ԼԱ. Սաղմոսաց: ժ – ԺԱ. դդ.: 2(Ա–Բ)+1(Գ), ստացուած կէս թերթի ընդլայնակի ծալումից (Ա–Բ), եզրաւատուած չորս թերթերի միացումից (Գ): Մագաղաթ, երկսիւն, ուղղագիծ երկաթագիր: Կարդալ՝ Գա «... ամենայն յանցանք նորա... Ասէ. Ես որ մեղայս եւ այսչափ աշխատութեամբ եւ արտասուաւք ընկալս զթողութիւն մեղաց...» (Սղմ. Լ7–ԼԱ8, ՃՁ 41-43, ձէ 1-4): Տե՛ս REA, 1983, p. 243:

Վիճակ՝ բաւարար. խոնաւութիւնից բազում թերթեր գունափոխուած, լուսանցային մասերում փոխրիկ պատռուածքներ, ցեցակեր, թանաքի բծեր: Կազմի կաշին՝ ճեռնուած, եզրերը՝ մաշուած: 1667–ին նորոգուած, լուսանցային մասերը կարկատուած, թերին լրացուած Աթանաս գրչի ձեռքով եւ վերակազմուած Զաքարիա կազմարարի կողմից:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Ա. *1ա–852բ* [Ներսիսի Լամբրոնացւոյ Մեկնութիւն Սաղմոսաց]

Տե՛ս ձեռ. 990, 2ա–730բ. *Նխ./1ա–9բ: §ա/9բ–133բ: բ/133բ–247բ: գ/247բ–338բ (չիք ԽԲ): դ/338բ–430ա: ե/430ա–521բ: զ/521բ–611ա: է/611ա–751ա (չիք ձէ): ը/751ա–852ա: Յիշատկրն Ներսիսի Լամբրոնացւոյ՝ 852բ:*

Բ. [Բանիւ զանազանի]

1. *853ա–61բ* Պատմութիւն Ներսիսի վարուց եպիսկոպոսին երգոցս Սաղմոսիս իննողի (Սամուէլի գրչի) – *Ընդ նուաղեալ թագաւորութեան եւ իշխանութեան Հայոց, յորժամ յափշտակեցաւ Խոսմաելացւոցն մայրաքաղաքն Անի... յիշատակ արքայիս ի Քրիստոս:*

Տե՛ս Սամուէլ Անեցի, Վաղարշապատ, 1898, էջ 224–243:

2. *861բ–77ա* Գովեստ բանի ներբողական բացասացութեամբ, ասացեալ Ներսէսի սրբազան կաթողիկոսին Հայոց եւ տիեզերական լուսաւորչին. Յաղագս տանի գերագունիցն էութեանց հրեշտակապետացն սրբոց Միխայելի եւ Գաբրիելի եւ ամենայն երկնայնոց զաւրութեանցն, զոր տաւնեն եկեղեցիք Քրիստոսի ընդ տիեզերս, համախմբեալ ուրախութեամբ ի յոթն նոյեմբերի ամսոյ – *Այսաւր երկրաւորս եկեղեցւոյ հանդիսաւորեալ քահանայապետութիւն ցնծայ...*

3. *877բ–9ա* Նորին Ներսիսի կաթողիկոսի ասացեալ Բանս մաղթանաց առ սուրբ հրեշտակս, ոտանաւոր չափով – *Այլ պաղատիմք առ հոգեգէնսդ,/ Մեք տկարքս եւ հողեղէնքս...*

4. *879ա–904ա* Ներբողեան պատմագրաբար ասացեալ սրբոյն Գրիգորի աստուածաճառոզ երջանիկ վարդապետի եւ առ ի Քրիստոս միայնացելոյ, ի վարս եւ ի ճգնութիւն մեծ հաճանայապետին սրբոյն Ներսիսի արհիեպիսկոպոսի Տարսոնի Կիլիկեցւոյ, ի խնդրոյ նորին համանուն եւ համազգւոյ Ներսիսի եպիսկոպոսի եւ սրբասնունդ հաճանայի – *Բազում զգուշութեան եւ ստէպ արթնութեան պէտք են...*

5. *904ա–5բ* Բան յիշատակի մատենիս (Յիշատակարան Ներսիսի՝ հեռորդոյն Ներսիսի Լամբրոնացւոյ) – *Աստուածային մարդասիրութեանն նախախնամութիւն... (տե՛ս §990, 745ա–6ա):*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

1. 17բ Ջատացաւղ մեծափառ կտակիս՝ զսրբազան եպիսկոպոսն զտէր Համազասպ յիշեսջիք ի Քրիստոս (նման՝ 204բ):

29բ Ջերջանիկ եւ զսրբազան եպիսկոպոսն՝ զտէր Համազասպ, ստացաւղ մեծափառ կտակիս, յիշեսջիք ի Քրիստոս, ո՛վ սուրբ վերծանաւղք, ընդ նմին եւ զանարժան գրիչ եւ զյոքնունակս մեղաւք, եւ Աստուած զձեզ յիշէ ի փառսն իւր. ամէն (նման՝ 62բ, 133բ, 165բ, 247բ, 313բ և այլուր):

34բ Յիշեա զաշխատող գրոցս (նման՝ 283ա, 493ա, 572ա, 819ա, 834բ, 841բ):

49ա Ջատացաւղ սուրբ տառիս եւ զաշխատողք սորին յիշեցէք ի Քրիստոս (նման՝ 79ա, 82ա):

547ա Քրիստոս Աստուած, ողորմեա Անդրեասիի՝ փոխեցելոյն ի Քրիստոս տարաժամ հասակաւ. ամէն:

672ա Յայսմ աւուր, յորում էր թիւս ՉԽԲ (1293), յԱրաց ամսոյ Լ (30), որ էր Վարդավառ, խաւարեցաւ Արեգակն ի միջաւուրէի եւ մեծ վտանկի կապ առհասարակ, զի ոչ գոյր խաղաղութիւն վասն ծովացե[ա]լ մեղաց մերոց:

751ա Տէր, Տէր եւ Աստուած Յիսուս Քրիստոս, ողորմեա ստացաւղի սորայ՝ սրբազան եպիսկոպոսին տէր Համազասպայ, վերադիտաւղի ուխտիս Յովհաննու վանից, ընդ նմին եւ եղկելի եւ ողորմելի գրչիս. ամէն (նման՝ 877ա):

852բ Փա՛ռք... Աստանաւր յաւարտմանս աստուածային տառիս, յիշեսցի սրբազան եպիսկոպոսն տէր Համազասպ՝ ստացաւղ սուրբ կտակիս, առաջի Քրիստոսի ամենայն իւրայաւքն, վասն զի մեծ ջանիւ եւ փափագմամբ սիրով ետ գրել զգանձս զայս հոգեւոր. ամէն: Նաեւ բազմամեղ անձին իմ անարհեստ, զի մեծաւ աշխատութեամբ եւ վշտաւք գրեցի զսա:

905բ Փառք... կարողութեամբն Աստուծոյ սկսայ եւ ողորմութեամբ նորին կատարեցի զմեծափառ կտակս, ի թուաբերութեանս Հայկազեան տումարիս Ջ—երորդի քառասներորդի երրորդի (1294), ի դառն եւ յանցեալ ժամանակիս, յորում ոչ գոյր հանգիստ քրիստոնէից ի հարկապահանջութենէ այլասեռիցն։ // (906ա) /// ասք լուսերամից եւ մանկունք սուրբ եկեղեցւոյ, որք զուարճանայքդ յայսմ բուրաստանի, որ է համակալոյս եւ ծաղիկ լուսերանգ, բազմախարի եւ յարփիթիթ, ծառան ծայրանալ ի տունկ եւ ճուղս ունելով բարձրածայրել, յիշեսջիք զսրբազան եպիսկոպոսն՝ զտէր Համազասպ վերադիտող սուրբ ուխտիս Յովհաննու վանաց, զի ստացաւ զսա գանձ եւ յիշատակ անջինջ ի մէջ սուրբ Յովհաննու Կաթուղիկէ եկեղեցւոյ եւ բազմախումբ եղբարցս, զի եւս առաւել զարդարեաց զեկեղեցիս Հին եւ Նոր կտակարանաւք եւ այլ բազում շինուածովք պէս—պէս եւ զանազան։ Արդ, աղերս եւ հայցեմ յամենեցունց, ասացէք՝ Տէր Յիսուս, ողորմեա ստացողի սորա եւ տուր ի քո լուսեղէն խորանացդ, զի մտցէ եւ ժառանգեսցէ ընդ քոոց սուրբ եւ ընտրեալ հայրապետացդ, նաեւ ամենայն ազգայնոց եւ արեան հարազատաց ողորմեսցի Քրիստոս իւր առատ ողորմութեամբն. ամէն։

Ար[դ] /// յոքն[ուն]ակս մեղաւք, փցուն եւ փանաքի գրիչս յոտս անկեալ աղաչեմ զամենեսեան զընթերցողս եւ զաւրինակողսդ, որք հանդիպիք այսմ աստուածային տառիս, յիշեսջիք եւ զանարժանս յիշ-ման՝ զսուտանուն Երէց քահանայ եւ ոչ ըստ արժանոյն, ասելով. Տէր Աստուած, ողորմեա գծողի սորա եւ տուր նմա ի քո պարգեւացդ, զի թերեւս ձերով ողորմութեամբ եւ աղաւթիւք զերծայց ի վատթարացն դասուց եւ արդանացայց հանդիպիլ երեսացն Աստուծոյ։ Նայեւ ամենայն երախտաւորացն եւ սպա-սաւորացն, որք ձեռնատու եղեն մեզ եւ աւժանդակ ի յաշխատութեան գրոցս, ողորմեսցի Քրիստոս Աստուած եւ տացէ վարձս բարեաց աստ եւ ի հանդերձելումն։ Նաեւ առհասարակ յիշողացդ եւ յիշեցելոցս ողորմեսցի Քրիստոս. ամէն։ Մեծաւ աշխատութեամբ գրեցի առանց աւգնականի, զի Հոգին Սուրբ եհաս յաւգնակա-նութիւն եւ ետ հասուցանել յաւարտ գրոցս։

Ջգանձ //////

Մի՛ դանդաղէք քննել զսա,
Ջի ո՛չ երկրի է սա լոմա,
Ո՛չ մամոնայ, որ ո՛չ մնա,
Այլ որ հոգւով քննէ զսա,
Յերկնից խորանան բնակէ նա։

2. 21ա (Լուսանցագրութիւնք գրչի) Աւա՛ղ քնոյս (նման՝ 121բ, 304ա, 389բ, 869ա)։

117բ Շփոթեցաւ միտքս, մի՛ մեղադրել։

162բ Աւա՛ղ դառնութեանց աւուրցս. Տէր, աւգնեա մեզ (նման՝ 635ա)։

196ա Աւա՛ղ դառնութեան աւուրցս, որ հասաք, այլ աչք մեր առ Տէր է։

278բ Մ գեղեցիկ խնծորիս, զոր եբեր եղբայրս մեր Մարտիրոս։ Տէր, տուր նմա զքո պտուղդ. ամէն։

354ա Աւա՛ղ աւուրցս դառնութեանցս, որ էհաս մեզ, զի ահ պաշարեաց զամենեսեան։

378ա Աւա՛ղ դառն եւ ծանր գործոյս։ Տէր, գործակից լեր, զի զերծայց ի սմանէ։

399ա Ջաւրացոյ զտկարս զաւրութեամբ քով, ո՛վ ամենասուրբ Հոգի Աստուած։

420ա Եղու՛կ վատ քարտիզիս, իմ մեղ չկայ (նման՝ 526բ, 584բ, 769բ)։

462ա Աւա՛ղ նեղեաց ճանճս եւ հապս։

501բ Աւա՛ղ քնոյս, տաւթիս եւ ճանճիս, եւս առաւել չարաժանի լուիս։

610բ Վշտացաւ եւ տկարացաւ գաւրութիւն իմ (նման՝ 726ա, 822ա)։

623ա Աւա՛ղ զմոլորեալքս եւ զմոլորեցուցիչքս ի ճշմարիտ եւ յուղիղ շաւղացն Քրիստոսի կամաւ եւ ոչ ակամա։

661բ Մվ թշուառացե[ա]լ անձանցս, զի՞արդ կարասցուք տանել զփորձանացս, զոր ընկա[լաք]։ Տէր Յիսուս, մի՛ իսպառ մատներ զմեզ։

700բ Աւա՛ղ, զի աւր քան զաւր ահս, եւ ի զնդանի գրեցաւ մեծ վշտաւք, այլ Տեառն ակն ունիմ ողորմութենէ բարի առնել։

749բ Մվ եղբայր. տես զգրեալսս աւրինացն Աստուծոյ, եւ մի վայրապար ծախեր զսակաւ կեանսս ընդ անյաւգուտ ումանդ, զի անպտուղ ասէ սուրբս եւ անբանից իմաստ, եւ ոչ մտաւորաց։

760բ Աւա՛ղ, գլխոյս ցաւիս նեղեցա. զերծո զիս, Տէր։

876բ Մվ սուրբ գաւրութիւնք, յարուցէք զանկեալս եւ կանգնեցէք զգլորեալս մեղաւք։

888ա Աւա՛ղ բազմութեան ճանճիս եւ լվիս, բայց ի վերջս է, համբերեմ։

ՅԻՇԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

625ա (Կազմողի) Ջաfարիայ։

907ա Շնորհօք եւ ողորմութեամբ Հոգւոյն Աստուծոյ եղեւ վերստին նորոգումն աստուածաշունչ մատենիս աստուածահօրն Դաւթի մարգարէին, որ կոչի Սաղմոս, մեկնեալ ի սուրբ հօրէն մերմէ Ներսիսէ *դիտապետէ, եւ կազմեցաւ սա ի յերկրիս* Արարատեան, *ի գաւառս* Անբերդու, *ի սուրբ եւ մեծափառ մենաստանս* Յոհաննու վանից, *ընդ հովանեաւ* Սուրբ Կարապետիս, *ի թվականիս Հայոց*

ՌՃԺԶ (1667), ի թագաւորութեանն պարսից Շահ Սաֆոյ *երկրորդի նորոգ թագաւորի առաջի ամին, եւ յամիրայութեան տանս* Աւարատեաց Սաֆիղուլի *խանին, ի կաթողիկոսութեան* Սուրբ Էջմիածնի *տեառն* Յակոբայ Ջուղայեցւոյ *Հայոց հեղինակի, եւ առաջնորդութեան սուրբ մենաստանիս* Յոհաննու *վանից՝ սրբազան եւ եռագով, հեզահոգի եւ մաքրամիտ* Յօհաննէս *րաբունապետի* Կարբեցւոյ, *ձեռամբ ամենաթշուառ եւ վատահամբաւ* Զաքարիա *եւեթ կենդանի մարմնով, որ եւ կազմեալ նորոգեցի տըխեղծ մատամբս, եւ աւանդեցի ի դուռն* Սուրբ Կարապետիս*: Արդ, որք օգտիք ի սմանէ, զմեզ մի՛ մոռանայք, աղաչեմ, եւ ընդ նոսին զԱֆթանաս գրիչս աղաչեմ յիշել, եւ դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ. ամէն:*


ԳՐՉԱՓՈՐՉ (ԺԸ դ., Նոտրգիր) 63ա Փլիոս ես գրեցի: 161ա Կալաշմարդ կատակ: 381ա Շատ հան բերեայ:

1527
ՆԵՐՍԷՍ ԼԱՄԲՐՈՆԱՑԻ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՍԱՂՄՈՍԱՑ


Մաշկեւոր ՁԺ–ՁՄԲ–1301–1303

ԳՐԻՉ՝ Թորիկ Քհյ. Հռոմկլայեցի (2ա–298բ), Վարդան գրագիր (299ա–667ա): ՍՏԱՑՈՂ՝ Բարսեղ Քհյ. Լեռնկցի, Գրիգոր սրկ.: ԿԱՋՄՈՂ՝ Ներսէս:

ԹԵՐԹ՝ 668+1 (կրկ. 1). չգրուած՝ 1աբ, 7բ, 668աբ: ՊՐԱԿ՝ Ա–ԺԶx12 (ԺԲ 11, ՄԲ 10): ՆԻՒԹ՝ թուղթ, աւեւելեան: ՄԵՄՈՒԹԻՒՆ՝ 47x31,6: ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն: ԳԻՐ՝ բոլորգիր (տարբեր, ԺԷ դ., նոտրգողի՝ 1գդ եւ 2ա–4բ աւտաֆիճ սիւնակները): ՏՈՂ՝ 37: ԿԱՋՄ՝ դրոշմազարդ շագանակագոյն կաշի, միջուկը՝ տախտակ, աստառը՝ սպիտակ ծաղիկներով սեագոյն կտաւ:



Նմուշ՝ 5ա



Նմուշ՝ 73ա

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ– Կ ի ս ա խ ո ր ա ն՝ 8ա (Յիսուսի, Սողոմոնի, Դաւթի, Սահակի եւ Ներսէսի նկարներով, մակագրուած): Ճ ա կ ա տ ա գ ա ր դ՝ 129բ, 223ա, 299ա, 372ա, 440ա, 506բ, 608ա: Լ ու ս ա ն ց ա գ ա ր դ՝ բուսական, թռչնային, տաճար: Զ ա ր դ ա գ ի ր՝ թռչնագիր, հանգուցագիր: Գ ո յ ն ե ր՝ կարմիր, կապոյտ, դեղին:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. լուսանցային մասերը կարկատուած, տեղ–տեղ զանազան բծեր, խոնաւութեան հետեւեր, թանաքի ճապաղումներ: Կազմի կաշին՝ ճեղծուած, եզրերը՝ մաշուած: ԺԷ դ. վերջերին նորոգուած եւ լրացուած թերին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1գ–667ա [Ներսիսի Լամբրոնացւոյ Մեկնութիւն Սաղմոսաց]

Տե՛ս ձեռ. 990, 2ա–730բ. *Նխ./1գ–7ա: (սկ. «Ապաւինեալ յայն որ տայ»): Ֆա/8ա–129ա: բ/129բ–223ա: գ/223ա–98բ (չիք՝ ՄԲ): դ/299ա–372ա: ե/372ա–439բ: զ/440ա–506ա: է/506բ–608ա (չիք՝ ձէ): ը/608ա–67ա: Յիշատակրն Ներսիսի Լամբրոնացւոյ՝ 667ա:*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

1. 25բ (Թորիկ գրչի) Լուսաւորեա, Տէր Աստուած, զհոգի տէր Յովհաննէս *արքեպիսկոպոսին:*

58բ Հայրական աջոյն տնկեալ ուռք ողկոյզս բերք... ի բոլոր սրտէ հայցեցէք թողութիւն եւ հանգիստ գտանել ի Քրիստոսէ՝ պատուեալ քահանային Բարսղի*, որ աղագաւ սկիզբն եղեւ գրոցս, եւ աշխատեցաւ ի սմա յոյժ, նաեւ մեղապարտ գրչիս՝* Թոր[իկ] *եւ ծնողաց մերոց, եւ դուք յիշեալ լիջիք ի Տէր:*

75բ Տէր Աստուած, ողորմեա աշխատողացն ի տառս եւ բնակչաց սուրբ անապատիս Մաշկեւորի*...*

78բ Ջմեղապարտ գրիչս եւ զծնողսն մեր աղաչեմ յիշել ի Տէր, եւ զԲարսեղ քահանայ, որ աշխատեցաւ յոյժ ի սմա (նման՝ 298բ):

141ա Ամենագութ, քաղցր եւ ողորմած Աստուած, ողորմեա մեղապարտ գրչիս՝ Թոր[իկ] *եւ ծնաւղաց իմոց ծնաւղիւքն իւրեանց եւ ծննդովք նոցին զարմիւքն եւ համացեղիւքն, եւ ի բոլոր սրտէ աղաչեմ յիշել ի Տէր զպատուելի, զաստուածահաճոյ եւ հոգէմաքուր զառաջնորդ սուրբ ուխտիս* Մաշկեւորի՝ *զրաբանին* Յովաննէս*, եւ ծերունին* Բարսեղ Լեռնկցի *եւ զեղբայր իւր՝ զՍարգիս քահանայ, եւ զազգատոհմն իւրեանց, որք բազում աշխատեցան ի սմա եւ կոկեցին զնիւթ գրոցս եւ յարդեանց իւրեանց գնեցին զթուղթս գրոցս:*

210բ Զպատուելի ծերունին՝ զԲարսեղ քահանայ եւ զերկուս սարկաւագունսն՝ զԳրիգոր եւ զմիւս Գրիգոր *եւ զպատանեակն* Թորոս *աղաչեմ յիշել ի բարին Քրիստոս, որք բազում աշխատեցան ի սմա ամենայն իրաւք, ի յաւրինակին բերելն եւ ի թղթին շինելն, եւ զամենայն պատրաստութիւն գրոցս անյապաղ արարին յարդեանց իւրեանց, նաեւ ինձ մեղապարտ գրչիս ձեռնտու եւ աւգնական եղեն…*

223ա Զերջանիկ եւ զսրբազան րաբունին Յովաննէս, *զառաջնորդ սուրբ ուխտիս* Մաշկեւտրի, *աղաչեմ յիշել ի Տէր: Ընդ նմին եւ զտէր* Ստեփանոս, *զԲարսեղ ծերունի… նաեւ զամենամեղ ոգիս՝ զԹորիկ սուտանուն քահանայ Հոռոմկլայեցի, եւ զծնողսն մեր եւ զեղբարս, աղաչեմ յիշել…*

253բ Ո՛վ աստուածասէր եւ սրբազան դասք քահանայից… յիշեսջիք… զբազմամեղ գրող սորին՝ զԹորիկ*… (նման՝ 273բ):*

277բ Զվերջացեալս յամենայն բարեաց գործոց զԹորիկ *սուտանուն քահանայ, եւ զծնաւղսն իմ եւ զեղբարս աղաչեմ յիշել ի Տէր: Ընդ նմին եւ զԲարսեղ քահանայ եւ զեղբայր իւր՝* զՍարգիս *քահանայ, եւ զերկուս հոմանուն սարկաւագունսն…*

*2. 307բ (Վարդան գրչի) Զ*Բարսեղ *քահանա՝ ստացող սուրբ գրոցս, աղաչեմ յիշել ի Տէր: Ընդ նմին եւ զամենայն եղբայրութիւնս, նաեւ զ*Վարդան *փցուն գրիչ… (նման՝ 317ա, 320բ, 325բ, 336ա, 377բ, 383բ, 414ա):*

341բ Ո՛վ եղբայր նշայն խիստ է եփած նա չոր, վասն այնոր է, նիւթս ես չեմ եփել (նման՝ 437բ):

350ա Տէր Յիսուս Քրիստոս, տուր յաղթութիւն մերոյ պարոնաց պարոնին Աւշինի՝ *թագաւորորդոյն* Լեւոնի, *եւ զաւրացոյ զնա առաւել քան զառաւել ի փառս քո. ամէն: Յիշեսջիք եւ զ*Բարսեղ *քահանա՝ զստացաւղ սուրբ գրոցս աղաւթիւք եւ զամենայն եղբայրութիւնս, այլեւ զ*Վարդան *փցուն…*

372ա Տէր Աստուած Յիսուս Քրիստոս, զաւրացո զաւրութեամբ քո զպարոնաց պարոնն մեր՝ զարքաորդին զԱւշին *հանդերձ եղբարբքն իւրովք. ամէն: Յիշեցէք ի Քրիստոս եւ զ*Բարսեղ *քահանայ՝ զստացաւղ գրոցս, եւ զամենայն եղբայրութիւնս, այլեւ զ*Վարդան *գրագիր, եւ զքոյսն իմ՝* Թեֆանօ *եւ Աստուած զձեզ, եւ նմա փա՛ռք յաւիտեան. ամէն:*

390ա Զպարոնն Հայոց՝ Աւշին *թագաւորորդիի եւ իշխեցաւղ սուրբ ուխտիս* Մաշկեւտրի *յիշեցէք առաջի Քրիստոսի, որպէսզի տացէ նմա Քրիստոս յաղթութիւն եւ կարողութիւն եւ ժամանակ երկայն ամբիծ եւ ուղղափառութեամբ քաղաքավարելով եւ ի հանդերձեալն ընդ սրբոց թագաւորացն թագ[աւոր]եսցէ անթառամ պսակաւն: Յիշեսջիք ի Քրիստոս եւ զ*Բարսեղ *քահանա՝ զստացաւղ գրոցս, եւ զքուերորդին իւր՝* զԳրիգոր *եւ զամենայն եղբայրութիւնս, եւ զմեղաւոր գրիչս՝* Վարդան*…*

*397ա Զ*Բարսեղ *քահանա… յիշեսջիք ի Քրիստոս… եւ զ*Գրիգոր *սարկաւագ՝ քւերորդի իւր, եւ զիս…* Վարդան *գրագիրս…*

*409բ Աղաչեմ յիշել զ*Բարսեղ *քահանա:*

418բ Տէր Յիսուս Քրիստոս, ողորմեա ստացողի գրոցս՝ Բարսեղ *քահանայի, եւ բնաւին զարմի նորա հարց եւ եղբարց, եւ ազգականաց, եւ ամենայն եղբայրութեանս ուխտիս, եւ որք թելադրեցին մեզ ի գրչութիւն սուրբ գրոցս՝ սրբազան եպիսկոպոսս տէր* Թորոսնին, *եւ պատուելի քահանայ* Թորոս *փակակալն, ողորմեացի նոցա Քրիստոս Աստուած: Ընդ նոսին եւ ինձ՝ մեղաւոր գրչիս* Վարդանա *եւ իմոց ծնաւղացն, եւ որոց Ամէն ասեն:*

*439բ Զպարոնն մեր զ*Աւշին *արքաորդի ամենայն Հայոց աղաչեմ յիշել եւ զ*Բարսեղ *քահանայ՝ ստացող գրոցս ի Քրիստոս, զի յոյժ աշխատի ծերունի տիոք, այլեւ անպիտան ծառայիս Տեառն՝* Վարդանա *փցուն գրչի… եւ քաւր մերո* Թեֆանի, *եւ որդւո նորա՝* Աւշնի *դպրի ողորմեացի Տէր… (նման՝ 608ա):*

501բ Տէր Աստուած Յիսուս Քրիստոս ողորմեայ ստացաւղի սուրբ գրոցս՝ Բարսեղ *քահանայի… եւ հարազ[ատ]ին իւրոյ՝ Սարգիս քահանայի, որ ի յայսմ ամի հանկեաւ ի Քրիստոս… եւ* Գրիգորի՝ *քուերորդոյն* Բարսղի, *որ եւ նա յոյժ աշխատի ի գիրքս բերելով եւ տանելով աւրինակին եւ կոկելով զնիւթ գրոցս… Ընդ սոսին եւ զիմս անարժանութիւն* Վարդանա*…*

506ա Մարգասէր Քրիստոս ողորմեայ ստացողի գրոցս՝ Բարսղի *քահանայի… եւ մեղաւոր գրչիս* Վարդանա*…եւ* Կոստանդեա *հաւրեղբաւր իմոյ եւ* Թեֆանօի՝ *հոգեւոր քաւր իմոյ, որ յոյժ սպասաւորէ մեզ, եւ* Աւշնի *դպրի…*

516բ Ո՛վ մանկունք Սիոնի նորոյ, թողութիւն մեղաց հայցեցէք՝ Բարսղի *քահանայի… հարազատին իւրոյ՝* Սարգսի *քահանայի… եւ* Վարդան *գրչի… (նման՝ 523բ)*

616ա Յայսմ ամի ՉՇ (1301) մեծ թուականիս Հայոց յապրիելի ամսոյ ի յերկու աւուրն, ի Մեծի Զատկի յարութեան կիւրակէին հանգեաւ ի Քրիստոս Բարսեղ Լեռնկցին՝ *ստացաւղ սուրբ գրոցս, ոչ ժամանեալ յաւարտ գրչութեանս, որոյ ողորմեացի նմա Քրիստոս եւ թողցէ զամենայն զսխալանս նորա, զի ո՞վ է մարդ, որ կեցցէ եւ ոչ մեղիցէ, այլեւ զախտապաշար, անպիտան ծառայի Տեառն՝* Վարդանա *գրագրի…*

667ա Կատարեցաւ Մեկնութիւն Սաղմոսացըս, արարեալ տեառն Ներսէսի Տարսոնի *եպիսկոպոսի* Լամբուենցւոյ, *սրբազան առն եւ հանճարեղ վարդա-*

պետի, ի թուականիս Հայոց ՉԾԲ (1303), ի հայրապետութեանն Գրիգորի եւ ի թագաւորութեանն Հեթմոյ եւ Լեւոնի, ծախիւք եւ հրամանաւ Բարսղի քահանայի, որ ոչ ժամանեալ ի կատարումն գրչութեանս, զորոյ զփափագ նորա ելից քուերորդին իւր՝ Գրիգոր եւ ստիպեաց զմեզ յաւարտ հանել զաստուածապատում տառս. որոյ ողորմեսցի Քրիստոս որդին Աստուծոյ յառջասացեալ՝ ծերունի քահանային Բարսղի Լեռն[կցոյն], եւ ցողեսցէ ցաւղ ողորմութեան ի յոսկերսն ///եւ թողութիւն արասցէ գաղտնեաց կ///նորա եւ վայելել տացէ զսայ Գ[րիգորի սարկաւ]ագի, որ զպակասութիւն գրոցս/// յաւժարութեամբ, եւ բնաւին զար[մից իւրեան]ց ի Տէր, հարց եւ եղբարց եւ որք [մասն ինչ ունին] տրաւք ողորմութեան ի գիրքս, [աղաւթիւք ամենայն եղ]բայրութեան սրբոյ անապատ[իս Մաշկեւտրի, առաջ]նորդաց եւ միեղէն եղբայր[ց]///: Նաեւ անարժանի՝ Վարդ[անայ գրագրի ողո]րմեսցի Քրիստոս, ծնողաց եւ եղ[բարց] /// եւ Աւշնի դպրի, եւ որք յաւժար///տացէ նոցա Քրիստոս ըստ կամաց ի[ւրեանց յաւիտեանս] յաւիտե[նից. ամէն]:

667ա (Կազմողի, կարմրագիր, յետագայում ընդգծուած տառերի վրայով սեւով անցած) Ձկազմող սորայ զՆերսէս աղաչեմ յիշել ի Տէր:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

1. (1379 թ., բոլորգիր) 7ա Փա՛ռք... Ի թվականիս Հայոց ՊԻՀ (1379), կարողութեամբ Սուրբ Հոգոյն գնաց երջանիկն ի հայրս տէր Յոհաննէս ի մեծ դիտապետն Հայոց ի տէր Կոստընդին եւ ձեռնադրեցաւ արքեպիսկոպոս ամենայն ՀՒսաց եւ Ալպախաց աշխարհին, եւ մեծաւ աշխատութեամբ եւ ծանր ծախիւք եբեր զայս գիրքս, որ է Սաղմոսին Մեկնիչ մեծ ընծայ եւ լուսաւորիչ այսմ աշխարհի: Որպէս սուրբն Գրիգոր որ եբեր զնշ[խ]արք սուրբ Կարապետին եւ զԱթանագինեայ, նոյնպէս եւ տէրս մեր, աստուածարեալ տէր Յոհաննէս արքեպիսկոպոս եբեր զմեծ գանձս զայս, ի յիշատակ հոգոյ իւրոյ եւ ի լուսաւորութիւն մանկանց Սիոնի: Արդ, ողորմածն Աստուած յիշեսցէ զպարոն Նաւարատինն եւ զհեզահոգի տիկինն իւր՝ զՆուրշայ խաթունն եւ հանկուսցէ ընդ արդարս իւր զհոգիս նոցա, որ է ծնաւղք տէր Յոհաննիսին: Նաեւ զհարազատ եղբայրսն իւր՝ զսրբասէր կրօնաւորն զտէր Աւաք, եւ զհեզահոգի քահանայն զԱւետիսն, եւ զպարոն Ոլոպէյն, հանդերձ ընդանօքն իւր: Ճշմարիտն Աստուած ընդ երկայն աւուրս արասցէ. ամէն:

667բ Փա՛ռ[ք]... Ի թվականին Հայոց ՊԻՀ (1379) կոչեցաւ ի մեծ դիտապետէն Հայոց/// (բաց) տէր Յովաննէս սրբասէր կրօնաւոր քահանայն, եւ սուրբ Յակոբայ պահոցն նաւեցաւ ու գնաց ի մայ[րա]քաղաքն ի Սիս: Եւ ձեռնադրեցաւ ի մեծ [դիտապե]տէն տէր Կոստընդնոյ արքեպիսկոպոս [ամենայն Հ]ասց աշխարհի եւ Վլախաց: Եւ ի [դա]ռնալն իւրում յաշխարհն, տէր Յոհաննէս արքեպիսկոպոսն եբեր զգիրքս զայս, որ է Սաղ[մոսին Մ]եկնիչ, մեծ նվերք աշխարհիս Հսաց ///անորութիւն մանկանց Սիոնի: Որպէս [սուրբն] Գրիգոր Լուսաւորիչն մեր եբեր մեծ պարգեւք զնշխարք մեծին Յովաննու եւ Աթանագինէ ի լուսաւորութիւն Հայաստան աշխարհին, սոյնպէս եւ տէրս մեր տէր Յոհաննէս զար հոգիաբուխ մատեանս եբեր ի լուսաւորութիւն եւ ի պայծառութիւն սուրբ եկեղեցոյ եւ յիշատակ իւր եւ պարեն ի այնմ աշխարհին, նայեւ ծնողաց իւրոց հանկուցելոցն առ Քրիստոս՝ պարոն [Նա]ւսրատինին եւ հեզահոգի կենակց[ին իւրոյ՝ Նու[ռչա խաթունին եւ հարազ]ատ եղբայրսն իւր՝ տէր Աւաք սրբասէր կրօ[նաւորին եւ զհեզահոգի] Աւետիք քահանային եւ պարոն Ոլ[ուպէյին հանդերձ ընտա]նեացն իւր. Քրիստոս Աստուած ընդ [երկայն աւուրս] արասցէ: Եւ հանկուցելոց /// [ողոր]մեսցի Քրիստոս Աստուած մեր պարոն Էսանին, /// Սովունչին, եւ այլ ամենայն /// ամէն: Եւ գծողի յիշատակ [Կիր]ա[կ]ոս աբեղիս, որ եմ սպասաւոր /// [տէր Յով]հաննէս արքեպիսկոպոսիս:

2. 129ա (1648 թ., նօտրգիր) Յիշատակ է սուրբ գիրքս Ղալաթիու բոլոր ժողովրդեանն, որ ստացան զսա միաբանութեամբ եւ եդին ի Սուրբ Մայրն Լուսաւորիչ, ի վայելումն անձանց իւրեանց, հրամանաւ իշխանացն Դաւթի եւ այլ ծերոցս, ձեռամբ եկեղեցական մահտեսի Մանկին եւ աթոռակալ Սողոմոնին, յորդորմամբ աւագերեց տէր Կարապետին, թվին ՌՂԷ (1648): Եւ որ հանդիպիք սուրբ տառիս, աստուածարեալ վեհիմաստք, յիշեցէք ի Քրիստոս եւ Աստուած ողորմի ասացէք զվերոյգրեալ համակամ եւ միախորհուրդ ժողովուրդն, զծնողսն [ամենես]եան, եւ ձեզ ողորմեսցի Աստուած. ամէն:

223ա Ընդ վերոգրելոցն եւ զվերջին ստացողքն՝ զՂալաթու միաբան ժողովուրդքն, որ ստացան զգրեանքս՝ զմեկնիչս, Աւետարան մի, Նարեկգիրք, Կանոնգիրք, Խորհրդատետր, եւ այլ յեկեղեցական անաւթ եւ եդին յիշատակ ի Սուրբ Լուսաւորիչ, ի վայելումն անձանց իւրեանց, յորդորմամբ տէր Կարապետին, Մկրտչին, Մուրատին, Կիրակոսին, մահտեսի Պուտախին, Նատօզին, Աստուածատուրին, Կիրակոսին, մահտեսի Ներսէսին, մահտեսի Զիրաքին, մահտեսի Կիրակոսին եւ որդոյն Նատօզին, մահտեսի Արիճանին, Ազնատուրին եւ Միհնասին: Եւ որք հանդիպիք սուրբ տառիս, աստուածարեալ վեհիմաստք...

3. (1657 թ., նօտրգիր) 666բ են՝ Ջուղայեցի բազար Սաֆարս *եղայ սորա առնելն պատճառ, զիս մեղաւորս յիշեսջիք ի մաքրափայլ աղօթս ձեր, յիշ[ե]ալ լիջիք ի Քրիստոսէ. ամէն: Թվին ՌՃՉ (1657):*

4. 667բ (1670 թ., նօտրգիր) Դարձեալ յիշեցէք ՀՊապայհան[ցի] Թորոսի *որդի՝* Յոհան, *որ* Իզմիր[էն] *էս Սաղմոս Մեկնիցն* Ս[տ]եփանոս *պետն երեսս* Յոհաննիսի, *որ հաս[ուցանէ] էջմիածին ի Յակոբ կաթող[իկոսի] ձեռն: Ով որ կարդայ, Աստուծոյ խաթեր, ըզմեզ յիշ[ե]այ: Գրեցօ ի ք[աղաքն]* Ազրումն, *թվին ՌՃԺԹ (1670), սեկտեմբերի Ը (8):*

5. 667ա (ժէ դ.) Մ վ սուրբ ընթերցօղք, յիշեցէք ի Քրիստոս զետին մշակս տէրունի՝ զՍտեփանոս Ոռոտնեցի, *յորժամ կարդայք զմեկնիչս Սաղմոսի: Որ յիշէք, յիշեալ [լիջ]իք յաւրն ատենի. ամէն:*

ԿՆՔԱԴՐՈՇՄ 8ա, 439բ, 663բ Գիրքս սուրբ էջմիածնա է:


1528
ՆԵՐՍԷՍ ԼԱՄԲՐՈՆԱՑԻ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՍԱՂՄՈՍԱՑ

Շոռոթ ՌՂԸ–ՌՃ 1649–1651

ԳՐԻՉ՝ Բագարատ դպիր: Ծաղկող եւ սրբագրող՝ Նահապետ: ՍՏԱՑՈՂ՝ Հայրապետ Նազուրենց Շոռոթեցի:

ԹԵՐԹ՝ 583: ՊՐԱԿ՝ Ա–ԽԹx12 (Ա, Ը 13, Ժ 11, Լե 8, ԽԹ 10): ՆԻԻ՝ թուղթ, արեւելեան: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 40x26: ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն: ԳԻՐ՝ բոլորգիր: ՏՈՂ՝ 39: ԿԱՉՄ՝ դրոշմազարդ շագանակագոյն կաշի, միջուկը՝ տախտակ, աստառը՝ թուղթ, մասն տպագիր Մաշտոցի (տե՛ս Պատառիկ–պահպանակ):

ՊԱՏԱՌԻԿ–ՊԱՀՊԱՆԱԿ – Մաշտոց հնատիպ: Կաճոն Նաւակատեաց եկեղեցի օրհնելոյ: ԺԸ դ.: 1(Ա)+1(Բ), իւրաքանչիւր 8 էջ՝ 17–24(Բ), 25–32(Ա): Կարդալ՝ էջ 17–32 «///Եւ եպիսկոպոսն ասէ զԱղօթս Դանիէլի Մարգարէն. Տէր Աստուած մեծդ եւ սքանչելի... եւ գոչիք հանգիստ ան///»:



Նմուշ՝ 6ա

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ – Ճ ա կ ա տ ա գ ա ր դ՝ 3ա, 8բ, 105բ, 186ա, 250բ, 311բ, 368ա, 423բ, 515բ: Լ ո ւ ս ա ն ց ա գ ա ր դ՝ բուսական: Զ ա ր դ ա գ ի ր՝ թոչնագիր, հանգուցագիր: Գ ո յ ն ե ր՝ կարմիր, կապոյտ, կանաչ, դեղին:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. տեղ–տեղ խոնաւութեան հետեւեր, թանաքի ճապաղում, փոորիկ պատռուածքներ, զանազան բծեր: Կազմի կաշին՝ ճերմակած, եզրերը՝ մաշուած: ԺԸ դ. նորոգուած եւ այլ կաշուով կարկատուած:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Ա. *3ա–581բ* [Ներսիսի Լամբրոնացւոյ Մեկնութիւն Սաղմոսաց]

Տե՛ս ձեռ. 990, *2ա–730բ. Նխ./3ա–8ա (սկ. «Ապաւինեալ յայն որ տա ամենայնի...») § ա/8բ–105ա: բ/105բ–86ա: գ/186ա–250ա: դ/250բ–311ա: ե/311բ–67բ: զ/368ա–423բ: է/423բ–515բ (չիք՝ Սաղմոսէն ճէ: ճԹ փխ. ճՀ): ը/515բ–581բ: Յիշտկրն Ներսիսի Լամբրոնացւոյ՝ չիք:*

Բ. [Բանիւ զանազանիւ]

Տե՛ս ձեռ. 990, 731ա–46ա. *§1–3/չիք: 4/581բ–3ա:*

Գ. [Յաւելագրութիւն ԺԷ դ.]

–1ա–2բ [Թարգմանութիւն բառից մատենիս ի Նահապետ ծաղկողէ՝ Ա–Ք] – *Գիտասցէ եղբայրութիւնդ ձեր, ո՛վ ընթերցօղք գրոցս, զի ես՝ մեղաւոր* Նահապետս *ըստ իմում նուաստութեանս չափու սրբագրեցի զգիրքս, եւ զոր ինչ բառ որ յօտար լեզուաց կայր ի մէջ սորա, զամենայն հաւաքեալ եւ աստ եդեալ թարգմանութեամբ հանդերձ, զի յընթեռնուլն ձեր եթէ դիպեսցի բառ ինչ, զոր ոչ կարէք գիտել, եկեալ աստ գտանիցէք:*

Անբարհաւաճ – անբարին հաճող... Քեցել–ի բաց ընկենուլ:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

1. 105ա եւ ինձ՝ մեղապարտ Բագարատ *գրչի շնորհեալ զթողութիւն մեղաց... Թվին ՌՂԸ (1649):*

186ա Մ վ հայրք եւ եղբարք իմ, սուրբ միանձուք, աղաչեմ զձեզ, որ զիս՝ մեղաւոր Բագարատ *դպիրս յիշեսջիք... Գրեցաւ Թվին ՌՂԹ (1650):*

250ա Որ ողորմի Քրիստոս Աստուած... եւ ինձ անարժան գրչիս, եւ հօրն իմոյ՝ Յովանիսիսի, *որ բազում աշխատեցաւ ի սուրբ գրիս Թուխտ կոկելն:*

311բ Ով աստուածասէր անձինք... յիշեսջիք... եւ զիս՝ զմեղաւոր գծող՝ Բագարատս, *եւ զհայրն իմ՝* Յովաննէս, *որ բազում աշխատեցաւ Թղթին կոկելն... Գրեցաւ Թվին ՌՂԹ (1650), ի գեօղաքաղաքն* Շոռոթ:

583ա Յիշատակարան սուրբ տարիս եւ աստուածախօս մատենիս – *Փա՜ռք... Աստուած բանն իւր անհաս գիտութեամբն եւ գործակցութեամբ Հօր եւ Սուրբ Հոգւոյն ստեղծագործեալ զերկինս եւ զերկիր... // (583բ)... Յետ փառաւորեալ առաքելոցն, յարեան սուրբ հայրապետքն եւ դարձեալ հաստատեցին զառաքելական սահմանս, կանոնս ուղղափառ հաւատոյ, ի փառս Սուրբ Երրորդութեանն:*

Գրեցաւ սուրբ Սաղմոսի Մեկնիչս ի գեօղաքաղաքս Շոռոթ, *ընդ հովանեաւ* Սուրբ Աստուածածնին *եւ* Սուրբ Լուսաւոր[չ]ին *եւ* Սուրբ Յակոբ *հայրապետին, թվին ՌՃ (1651)–ին։*

583բ Դարձեալ խնդրեմ ի ձէնջ, ո՛վ աստուածասէրք հայրք եւ եղբայրք, յորժամ հանդիպիք յայսմն տառիս, կարդալով կամ օրինակելով, յիշեսջիք ի մաքրափայլ յաղօթս ձեր գմեղաւոր գրչիս՝ Բագարատս, *եւ հայրն իմ* Յովաննէս, *որ բազում աշխատեաց ի սուրբ գրիս թղթին կոկելն, եւ լի բերանով Աստուած ողորմի ասացէք, ի միւսանգամ գալըստեանն Քրիստոս Աստուած զձեզ յիշեւ եւ ողորմի, եւ ձեր ննջեցեալոցն. ամէն։*

2. 515բ (Ծաղկոզի) Քրիստոս Աստուած ողորմեայ... նաեւ յոհնամեղ՝ Նահապետիս, *որ ըստ կարի իմում եւ ըստ չափու սրբագրեցի եւ ծաղկեցի, եթէ Տէրդ հաճեալ հաւանեսցի։*

3. 14ա (Նահապետ ծաղկոզի) Ողորմի Քրիստոս Աստուած ստացողի գրոցս՝ Նազուէնց Հայրապետին *եւ կենակցին իւրոյ (նման՝ 24ա)։*

39ա Որ ողոր[մի] ստացողի գրոցս՝ Նազուէնց Հայրապետին *եւ կողակցին իւրոյ՝* Խունդիկին։

458բ Ողորմեսցի Քրիստոս Աստուած ստացողի գրոյց՝ Շոռոթեցի Նազուէնց *մահդասի* Հայրապետին *եւ իւրոցն ամենայնի. ամէն։*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

583բ (1748 թ., նօտրգիր) Քաղցրաբարբառ եւ համեղաքարօզ գիրքս է Մեկնութիւն Սաղմոսացն մեծի մարգարէին Դաւթի, զոր մեկնեալ է սրբազան վարդապետն մեր Ներսէս Լամբրօնացին, *զոր կոչի Մեկնութիւն* Լամբրօնացւոց, *զոր ոչ գտանի ի սմանէ ամենայն տեղիս, բայց որ գտեալ է աստ, պարտիք լաւ եւ ընտիր պահել այ[ս], եւ զիս՝ մեղսամած* Ղեւոնդեանըս յիշել։ *Ի թուին ՌՃՂԷ (1748), յուլիսի ամսոյ Ժ (10) օրն գրեցաւ։*

583բ (ԺԸ դ., նօտրգիր, անանուն) աւրհնեալ միասնական Սուրբ Երրորդութիւն/// ողորմեայ/// ամէն։


ԿՆՔԱԴՐՈՆՇՄ 169բ, 170բ (անընթեռնելի)։ 170ա (Այլ տեղից կտրուած եւ սոսնձուած այստեղ, բոլորշի, կենտրոնում Մկրտչի գլուխը զոյգ հրեշտակների ձեռքում, շուրջը մակագրութիւն) Կնիքս Մ[ու]բ Գլխ[ա]դրին է Աթոռի Ամ[ենայն] Հայոց։

1529
ՍԱՐԳԻՍ ՇՆՈՐՀԱԼԻ
ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԵՕԹԱՆՅ ԹՂԹՈՅՆ ԿԱԹՈՂԻԿԷԻՅ

Ալնոց վանք ԺԴ–XIV


ԳՐԻՉ՝ Նաաեր։ ԾԱՂԿՈՂ՝ Առաքել։ ՍՏԱՅՈՂ՝ Ստեփանոս, Սիմէոն (Ա.), Սիմէոն (Բ), Առաքել, Յովաննէս, Յակոբ, Կոստանդ, Տիրատուր կրճ. (միաբանիք Ալնոցի վանից)։

ԹԵՐԹ՝ 501. չգրուած՝ 1ա–2բ, 287ա–91բ, 492ա–501բ։ ՊՐԱԿ՝ Ա–ԽԲx12 (Ը, ԻԵ 11, ԺԱ 10, ԽԲ 13)։ ՆԻՒԹ՝ թուղթ (1668 թ. յաւելում՝ 1–2, 287–291, 492–501)։ ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 48,5x32,5։ ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն։ ԳԻՐ՝ բոլորգիր։ ՏՈՂ՝ 35։ ԿԱՋՄ՝ դրշմազարդ բալագոյն կաշի՝ դռնակով, միջուկը՝ տախտակ, աստառը՝ շագանակագոյն կտաւ։



Նմուշ՝ 14ա

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ–Յիսուս, Յակոբ առաքեալ եւ ալնոցի վանքի երեք կրօնաւորներ՝ 5բ։ Կիսադրան՝ 6ա, 364ա (կենտրոնի բոլորակի մէջ՝ Յիսուս)։ Ճակատազարդ՝ 450բ։ Լուսանցազարդ՝ բուսական, թռչնային։ Զարդագիր՝ թռչնագիր, հանգուցագիր։ Գոյներ՝ կարմիր, կապոյտ, դեղին, վարդագոյն, շագանակագոյն։



Նմուշ՝ Աա

ՊԱՏԱՌԻԿ–ՊԱՀՊԱՆԱԿ – Եւթաղ, «Բովանդակութիւն աստուածային վկայութեանց [թղթոցն Պաւղոսի առաքելոյ]։ Թ–Ժ դդ.։ 2(Ա–Բ)+2(Գ–Դ), ստացուած կից զոյգ թերթերից։ Մագաղաթ, երկսիւն, ուղղագիծ երկաթագիր։ Կարդալ՝ Գաբ, Աաբ, Բաբ, Դաբ «///Եւ կրկնաբանեցան յայլ եւ յայլ թուղթսն որպէս ի ներոն... ի վաթսներորդի///»։ Տե՛ս «Մատենագիտութիւմ եւթաղի», Վիեննա, 1930, էջ 113-114. Պատառիկ–պահպանակ, տպ. ՀԱ., 1983, էջ 13-22։

ՎԻՃԱԿ՝ բաւարար. սկզբից, միջից եւ վերջից պակասաւոր։ Տեղ–տեղ խոնաւութեան հետեւր, փոխրիկ պատռուածքներ, զանազան բծեր։ Կազմի կաշին թեթեւակի ներծուած, կապիչներն ընկած։ 1668–ին նորոգուած. լուսանցային մասերը կարկատուած, թերին լրացնելու համար աւելացուած ազատ թերթեր եւ վերակազմուած։

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Ա. *3ա–491բ* [Սարգսի Շնորհալւոյ Մեկնութիւն եօթանց թղթոցն Կաթուղիկէից]

Տե՛ս ձեռ. 1530, 1ա–461բ. *Յոչբ. (Վարք)/ 3ա–5ա (սկ. «[Ամենայն ոք... բերան առաքելական] մեզ պարգեւեցաւ...»): §1. Նխ. / 6ա–7բ: ա/7բ–12ա: բ/12ա–20բ: գ/20բ–7բ: դ/27բ–42ա: ե/42բ–54ա: զ/54բ–65բ: է/65բ–75ա: ը/75ա–86բ: թ/86բ–102ա: ժ/102բ–14ա: ժա/114ա–29ա: 2. Նխ./129բ–30բ (սկ. «Բանք... առ ծնունդս] իսկապէս բարւոյն...»): ա/130բ–3բ: բ/133բ–54ա: գ/154ա–70բ: դ/170բ–89բ: ե/190ա–8բ: զ/198բ–212ա: է/212ա–30ա: ը/230բ–46բ: թ/246բ–64ա: ժ/264ա–74բ: ժա/274բ–84բ: ժբ/284բ–94բ (միջից պակասում է «հաստատեալք: [եթէ հաստատեալ էք... խռովութեամբ լնուն] եւ զմարմինն» հատուածը իսկ վրջ.՝ «յուսամ [զի թուականս ես... ամէն]»): 3. Նխ./295ա–6ա (սկ. «Յիսուս Քրիստոս անշփոթելի») ա/296ա–309ա: բ/309ա–19բ: գ/319բ–32բ: դ/332բ–43բ: ե/343բ–51բ: զ/351բ–63բ: 4. Նխ./364ա–6ա: ա/366ա–74ա: բ/374ա–83ա: գ/383ա–9բ: դ/390ա–401բ: ե/401բ–11ա: զ/411ա–24ա: է/424բ–32բ: ը/433ա–42բ: թ/442բ–50ա: 5. Նխ. /450բ–1բ: ա/451բ–62ա: 6. Նխ./ 462բ–3բ (սկ. «/// պատճառաւ եւ որպիսի ինչ պատճառք...»): ա/463բ–72բ: 7. Նխ./473ա–4ա (սկ. «իւքն քարոզեցան...»): ա/474ա–85բ: բ/485բ–91բ (վրջ. «Ըստ նմին աւրինակի եւ///», չիք նաեւ յորդորակ: 492ա–501բ ազատ): գ/չիք:*

Բ. *42բ–3ա* [Գիր պահպանութեան, յաւելագրութիւն ԺԵ–ԺԶ դդ.] – *Կենդանայմէլ, կենդանմէլ, դուք էք լուպասաւորք Քրիստոսի, եւ երթալ ի ճանապարհ...*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

1. 5ա Տէր Աստուած մեր, զգործս ձեռաց մերոց ուղղեա, եւ զհոգիս մեր իմաստնացո քոյին ամենակարաւղ զաւրութեամբդ եւ աղաւթիւք սուրբ վարդապետիս, զի հասից ի կատարումն:

154ա Զամէներջանիկ եւ մաքրազարդեալ կուսակրաւն քահանայք՝ զԱռաքելն, զՍտեփաննոսն, զՍիմէոնն, եւ զմիւս Սիմէոն, զՅովաննէսն, զԿոստանդն, եւ զՅոհաննէս միակեցն եւ զայլսն, որք աւգնականք եղեն ի գինս սուրբ տառիս լուսաւորիչ կտակիս: Որք հանդիպիք սմա ընթերցմամբ կամ ապացուցիւ ով սուրբք եւ սիրելիք Աստուծոյ, ի մեղաց թողութեան վասն, յիշեցէք առ Տէր Յիսուս Հարբ եւ Հոգւովն, զի թողցէ զսխալանս ինչ, որ տկար բնութեամբ պատահեալ իցէ, զի չիք մարդ որ կեցցէ եւ ոչ մեղիցէ... (նման՝ 129ա, 450ա)

170բ Զապիրատ եւ զչետին գրիչս զնատ[եր] յիշեցէք առ Տէր Յիսուս, զի գթա եւ թողցէ զմեղս իմ, նա եւ զհայրն իմ՝ զԳրիգոր, որ յայսմ ամի փոխեցաւ յաստեացս, եւ դուք յիշիք:

189բ («Նատեր գրիչ չե»)

Ներ իմաստիւք հոգւով լեցեալ սուրբ բանական,
Աւրեգական քատակ զտեալ ճահողական,
Տրոհել զլաւն ի վատթարէն ստոյգ ցուցական,
Երանութեան տուրն արժան այցելութեան
Բամել խրատ տառիւս ողջամբ որդւոց մարդկան,
Գոչէ բողոք դէտ բարձրական գորովական,
Բապաղ թիւ եւ գարշական որք չեն արժան,
Ի յիմաստնոյն ցուցմունքն կան վկայական:
Զար երեւի յաչս պղծոց վարք սրբական,
Զւառ գծողս ուժգին ողբամ վասն յարութեան
Եւ աղաչեմ զսուրբ ընթերցողդ վասն յիշման:
246բ Ի պարգից աննիւթից,
Յերից եռահիւսից,
Տադփից լուսերամից,
Սրբաբանից երկիւղալից.
Անսկիզբն վեհից,
Երից ի մի եւ մի յերից,
Արարչին բնաւից,
Միրոյն անհասից,
Լերուք կապակից,
Հոյլք քահանայից,
Միրով հոգէկից,
Կամաւք բաղձալից,
Գործով պտղալից,
Խնկովք անուշից,
Ընծայ ի բանից,
Գովեստ յամէնից,
Հայցմամբ ի վեհից,
Մեզ հեղի յերկնից,
Յարգեալ ի յարփից,
Եւ ձեզ արժանից,
Գրոյս կտակից,
Մասն բարէլից,
Ի խորանսն անմահից:

332բ Քրիստոս Աստուած... ողորմեա Տիրատուր *միայնակեցի, որ ըստ տկար մարմնոյ վասն փրկութեան հոգւոյ իւրոյ ետ աւգնութիւն ի պէտս այսմ տառի...*

343բ... Յիշեսջիք ի Տէր զՅովհաննէս կրաւնաւոր, որ աւժանդակեաց ընչիւք ի պէտս սուրբ եւ ոգէշահ մատենիս...

351բ Հայր ամենակալ... փրկեա ի սպառնալեաց գեհենոյն զկուսակրաւն եւ զհեզահոգի քահանայ՝ զԱռաքեալն զկամեցաւղ բարութեան այսմ գեղեցկազարդ եւ լուսաշաւիղ մատենիս, որ ետ գրել զսա սակս հաւատոյն եւ սիրոյն, որ ունի առ քեզ...

363բ Որ անգիտելիդ ես ի բնաւից... յիշեա... որք ծախեցին զմարմնոց ինչս ի չքաւորութենէ իւրեանց ի պէտս այսմ մատենիս, զմիաբան կրաւնաւորքն եւ զամենայն աշխատաւղքն, որք աւգնեցին ըստ իւրաքնչիւր կարեաց ի սա...

383ա Ջստացաւղք մատենիս՝ զառաքինասէր կրաւնաւորքն՝ զՍտեփաննոս, զՍիմէոն, զԱռաքել, զՅովաննէս, զՍիմէոն, զՅակովբ, զԿոստանդ, *եւ զայլ աւժանդակիչք, եւ զՏիրատուր միայնակեաց, եւ որք առիթք եւ աւգնականք, եւ որք զաւրինակն շնորհեցին, եւ այն եղեւ հիմն շինուածոյ անճառելի քաղաքիս: Հանդիպեալքդ սորայ, յիշեցէք առ Տէր Յիսուս վասն Թողութեան մեղաց:*

389բ Որք հանդիպիք լուսերանգիս,
Եւ ընթեռնոյք զփափագելիս,
Դասք լուսերամ յեկեղեցիս,
Յիշման արժան արարէք զիս՝
Նուաստ ծրողիս, փրկել զԴոգիս,
Նաեւ զընտրեալն՝ զատացօղ գրիս,
Ջհամաբնակիչք մենաստանիս՝
զԱլնոց *վանից աբեղանիս:*

424ա Յիշեցէք ի Տէր... զմիեղեն եղբայրութիւնն... Անլոց *վանից, որք եռափափագ սիրով եւտուն գրել զլուսաւոր վարդապետութիւնս...*

*432բ Ջ*Վարդան *քահանայ յիշեցէք ի Տէր, որ զաւրինակս շնորհեաց:*

*442բ Զմիեղէն եղբայրութիւն աբեղայիցս կուսազարդից եւ միայնակեցաք սուրբ ուխտիս, որք ստացաւղք են մատենիս, յիշեցէք առ Յիսուս Տէրն: Նաեւ զ*Յովհաննէս *կրաւնաւոր, որ ետ ինձ տեղի հանգստեան ի խցի իւրում յայսմ աւուր, զի չանգ աւարտեսցի տառս սուրբ, զինչ զի փախստեամբ եկաք վասն հարկի:*

462ա Ջհայրն մեր հոգեւոր եւ զհարազատ եղբայրն ըստ մարմնոյ՝ զդիտապետ Նահանգիս մերոյ զտէր Դաւիթ յիշեցէք առ Տէր Յիսուս, ո՛վ սուրբ ընթերցաւղք, եւ զանխմաստ գրիչս՝ զՆատեր, *եւ զծնօղսն իմ, զփոխեալսն ի կենացս առ Քրիստոս,* զԳրիգորն *եւ* զՏիկնաց *տիկինն, եւ որք յիշէքդ, յիշեալ լիջիք ի Քրիստոսէ ըստ աւազակին:*

*472բ Ջ*Յովաննէս *աբեղա եւ* զՏիրատուր *միայնեաց յիշեցէք ի Տէր, ո՛վ սուրբ դասք, զի շատ ծառայեցին եւ ետուն ի կերակուր ինձ զպիտանին:*

*485բ Ջ*Յակոբ *կրաւնաւորն,* զԿոստանդն, զԳրիգորն, *մականուն՝* Պապա, *զսրբագործ քահանայքն, եւ որք աշխատեն տարազաւ իւիք, յիշեսցին առաջի արդար դատաստանին Քրիստոսի...*

5բ (ծաղկողի) /// [ա]ղաչեմ յիշել անմոռաց ի մեղսաքաւիչ [յաղաւթս ձեր] /// զԱռաքել *ծաղկաւղս:*

364ա (Կիսախորանի ձախակողմեան բոլորակի շուրջ) Սուրբ տեսանաւղք զԱռաքել *ծաղկողս աղաչեմ յիշել ի Տէր: (Կիսախորանի աջակողմեան բոլորակի շուրջ)եւ աշխատողք ի սմա յիշեջիք յաղաւթս:*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

1. 5ա (ԺՋ դ., բոլորգիր) Յիշատակ է Սարգիս *գիրքս խոճայ* Պակիին *եւ իւր եղբաւրն՝ տէր* Մելիխէթին *///: Որք կարդայք կամ աւգտիք ի սմանէ, յիշեցէք ի Քրիստոս՝ զխոճայ* Պակին *յԱմասիոյ, եւ զեղբայրն իւր՝ զտէր* Մելիխէթն, *եւ զհայրն իւրեանց՝ զխոճայ* Սուլթանշան, *եւ զմայրն յիշեցէք ի Տէր, եւ Աստուած զձեզ յիշէ. ամէն:*

129ա Յիշատակ է գիրքս խոճայ Պակէ *եւ* Մելիխէթ *քահանային ի դուռն* Սուրբ Սէրոբէից: *Սարգիս գիր է: [Ով հանէ զգր]անէ նորա, զմասն Յուդայի եւ զԱաշահանուացն առցէ:*

2.(1543 թ., բոլորգիր) 5ա Եւ ի թվականին ՋՂԲ (1543), ես՝ Գր[իգոր *զա]ռած[ե]ալս մե[զաւ]ք, խաբեբայ եւ ոչ աբեղայ, հանդիպեցի* Սեբաստիայ *եւ զգիրքս գայս տեսայ, որ /// բազում աղաչանաւք եւ աշխատանաւք առի եւ բերի /// որ գերեզման է սուրբ /// յիշ[ատակ ինձ եւ ծնաւղաց] իմ՝* Մկրտ[չին] *///ին: Զի որ առատն է ի տուրս պարգեւաց, ձեզ եւ մեզ ողորմեսցի. ամէն: Հայր:*

3. 5ա (1668 թ., նօտրգիր, եղծուած) Ի թվականիս մերոյ ՌՃ եւ ԺԷ (1668) ես՝ տէր Յակոբս, *որ մականուամբ* Ղաւիծապասմաս *կոչիմ, բազում աշխատութեամբ եւ չերմեռանդ սրտիւ նորոգեցի եւ կազմեցի զսուրբ գիրգս ի գեղեցկաշէն մայրաքաղաքս* Թէոդուպօլիս, *որ այժմ* Աւզրում *կոչի: Որք հանդիպիք, մէկ լի սրտիւ ասացէք Քրիստոս Որդի, եւ ի վերայն՝ Հայր մեղայ մի:*

4. 490ա (ԺԷ դ., շղագիր) Ես՝ Ղազար *վարդապետս տուի սուրբ Սարգիսս* Խաչի[կ] հօրն *վանացն յիշատակ, որ է առաջնորդ, տէր* Աւրիստաֆի *որդի տէր* Յակոբին: *Ով ոք կրաւ դնէ կամ ծախէ, մասն եւ բաժին ընդ Յուդայի առցէ, ով ոք կարդայ, աւգտէ, Ողորմի ասացէք, Աստուած զիւրեանց մեղք ոչ յիշէ: Հայր մեր յերկինս, սուրբ: Վերջ առաքելոց, մարգարէից, հայրապետաց անէծք իւրեան վերայ լինի,* Խաչիկ հօրն *վանացն հանէ:*

5. Պատառիկ—պահպանակ Ա՛ա (1702 թ.) Քօրթեցի Միտիջի *որդի եղիկ մոթ՛մ գարի: Բաղտայսարն՝ ս[ո]մառ Ս(Ա): Թվին ՌՃՄԱ (1702)–ին* Կակուղ Տեփաննոսին Քամիլի *որդի Աճմադ պաջին հաղէն տվի մոթ՛մ գարի: Մանուկն՝ Բ մոթ գարի: ՅԱւէտիք՝ մոթ Ա հաց: Ղուպաթն՝ Թ սոմառ: Մանուկն՝ Ա սոմառ: Ներսէսէն՝ Գ սոմար ու կէս:*


ԿՆՔԱԴՐՈՇՄ 5բ, 6ա, 485բ Գիրքս Սուրբ էջմիածնա է:

1530
ՍԱՐԳԻՍ ՇՆՈՐՀԱԼԻ
ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԵՕԹԱՆՑ ԹՂԹՈՑՆ ԿԱԹՈՂԻԿԷԻՑ


Երգնկա **ՁԼԸ — 1289**

ԳՐԻՉ՝ ՇԱՂԿՈՂ՝ Յովսէփ սրկ. (1ա–317բ), Ումեկ սրկ. (318ա–463բ): ՍՏԱՑՈՂ՝ Թորոս Հուսամատին:


ԹԵՐԹ՝ 463: ՊՐԱԿ՝ Ա—Խx12(Ա, Է, ԺԲ, Լ 10, Ը, ԺԳ 11, Խ 5): ՆԻՒԹ՝ թուղթ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 28,5x39: ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն: ԳԻՐ՝ բոլորգիր: ՏՈՂ՝ 30–31: ԿԱՋՄ՝ դրոշմազարդ շագանակագոյն կաշի, միջուկը՝ տախտակ, աստառը՝ ծաղկադրոշմ սպիտակ կտաւ:



Նմուշ՝ 20ա



Նմուշ՝ 366ա



Նմուշ՝ Բա

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ– Կ ի ս ա խ ո ր ա ն՝ 1ա, 4ա, 424բ, 434բ: Ճ ա կ ա տ ա զ ա ր դ՝ 120բ, 267բ, 330բ: Լ ո ւ ս ա ն ց ա զ ա ր դ՝ բուսական: Զ ա ր դ ա գ ի ր՝ թոչնագիր, ճանգուցագիր: Գ ո յ ն ե ր՝ կարմիր, կապոյտ, կանաչ, դեղին, մոխրագոյն: ԾՆԾ. Ծաղկազարդումները որոշակիորեն տարբերւում են իրարից: Ըստ երեւոյթին գրիչներից իւրաքանչիւրը ծաղկազարդել է իր բաժինը:

ՊԱՏԱՌԻԿ–ՊԱՀՊԱՆԱԿ–Աւետարան Մատթէոսի: Թ–Ժ դդ. 2(Ա–Բ)+2(Գ–Դ) ստացուած 4 ամբողջական թերթերից: Մագաղաթ, երկսիւն, բոլորագիծ երկաթագիր: ՄԱՆՐԱՆԿԱՐ-ԶՈՒԹԻՒՆ– Լ ո ւ ս ա ն ց ա զ ա ր դ՝ Աա, Բա, Դբ: Կարդալ՝ Աա–Բբ «Աւետարան ըստ Մաթեոսի–Գիրք ծննդեան... եւ կոչեցեալ զանուն///» (Ա, 1–21), Գա–Դբ «///ի ձեռին իւրում... լոյս ծագեաց///» (Գ, 12–Դ, 16):

ՎԻՃԱԿ՝ բաւարար. միջից եւ վերջից պակասաւոր, խոնաւութիւնից գրադաշտը գունափոխուած եւ լուսանցազարդերի գոյները դրոշմուած դիմացի էջերին, տեղ–տեղ փորիկ պատռուածքներ, զանազն բծեր եւ ցեցակեր: 340բ եւ 341ա թերթերի միջեւ 2 թերթ կտրուած ընկած: 135բ եւ 136ա–ի միջեւ 2 թերթ ընկած: Կազմի կաշին ճեղծուած, եզրերը՝ մաշուած, կապիչներն՝ ընկած: ԺԸ դ. նորոգուած, լուսանցային մասերը կոպիտ թղթով կարկատուած եւ կրկին կազմուած:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

–1ա–3բ [Յառաջաբանութիւն վասն սուրբ վարդապետին Սարգսի...] – *Ամենայն ոք որ զգիրս աստուածային ի ձեռն առնուցուն...:*

1. *4ա–120բ* Երանելոյն Սարգսի վարդապետի է ասացեալ Մեկնութիւն Կաթողիկէից թղթոյն Յակովբա – 4ա–5բ [Նախերգան] – *Աստուածային տեսութեանց եւ իրողութեանց պարապել...*

ա. *5բ–9ա [Ա 1]* – *Յակովբոս Աստուծոյ եւ տեառն Յիսուսի Քրիստոսի ծառայ: [Մեկնութ.] Իմաստք Հոգոյն շնորհաց...–9ա–10ա [Յորդորակ]* – *Արդ, եւ մեք զանձինս մեր արժանիս արասցուք...*

բ. *10ա–6ա [Ա 2–11]* – *Ամենայն ուրախութեան արժանի համարիջիք... [Մեկնութ.]. Ամենեքեան՝ որք միանգամ յաղքատութեան իցեն... – 16ա–7բ [Յորդորակ]* – *Եւ արդ, մեք զայսոսիկ գիտելով, մի՛ զարմասցուք...*

գ. *18ա–22բ [Ա 12–15]* – *Երանեալ է այր, որ համբերիցէ... [Մեկնութիւն]. Բազմապատիկ եւ բազմաւրինակ առաքինութեանցս յաղթանակի...–22բ–5ա [Յորդորակ]* – *Եւ զայսոսիկ լսելով, սիրելիք, զարհուրեսցուք...*

դ. *25ա–36բ [Ա 16–20]* – *Մի՛ խաբիք, եղբարք իմ սիրելիք... [Մեկնութ.]. Ասաց թէ երանելիք են, որ փորձանաց համբերեն...–36բ–40ա [Յորդորակ]* – *Եւ արդ, մեք, սիրելիք, զայս ամենայն գիտելով...*

ե. *40ա–9ա [Ա 21–27]* – *Որով ի բաց թողեալ զամենայն աղտեղութիւնս... [Մեկնութ.]. Որք միանգամ սիրողք մարմնական ընչից են...–49ա–52բ [Յորդորակ]* – *Զայս լսելով, սիրելիք, երկիցուք...*

զ. *52բ–61ա [Բ 1–13]* – *Եղբարք իմ, մի՛ աչառութեամբ ունիցիք... [Մեկնութ.]. Զար է մարդահաճութիւնն...–61ա–3բ [Յորդորակ[* – *Եւ*

արդ, զի այսպիսի յոյս կա մեր առաջի, մի՛ վերջասցուք…

է. *63բ–71բ [Բ 14–16] – Ջի՞նչ օգուտ է, եղբարք իմ… [Մեկնութ.]. Զոր աւրինակ, եթէ ոք յերկրագործաց…–71բ–2բ [Յորդորակ] – Այլ վա՛յ է ինձ եւ եղո՛ւկ եմ ես…*

ը. *72բ–80բ [Գ 1–16] – Մի՛ բազում վարդապետք լինիք… [Մեկնութ.]. Շնորհք պարգեւացն Քրիստոսի ի ձեռս առաքելոցն բազմանան… եւ դիւական է /// (շար. թափուած)։ – 81ա–2ա [Յորդորակ – եւ արդ, մեք, սիրելիք, զայսոսիկ գիտելով, զգուշութեամբ ընտրութիւնս արասցուք… տգիտութիւնս]։ Այլ երանի՝ եթէ իմաստուն էաք…*

թ. *82ա–94ա [Գ 17–Դ 12] – Իսկ վերին իմաստութիւնն, նախ՝ զի սուրբ է… [Մեկնութ.]. Ասաց զերկրաւոր իմաստութիւնս…–94ա–7ա [Յորդորակ] – Զայսպիսի ահագին բան ասես լսելով…*

ժ. *97բ–105բ [Դ 13–Ե 9] – Ահաւասիկ են որ ասեն՝ այսաւր եւ վաղիւն երթիցուք… [Մեկնութ.]. Բազում անգամ յեղանակաց գմարդկան անմտութիւն…–195բ–7բ [Յորդորակ] – Եւ արդ, զի եւ մեք ընդ այսպիսի դատաստանաւք եմք…*

ժա. *108ա–16բ [Ե 10–20] – Աւրինակ առէք, եղբարք, չարչարանաց… [Մեկնութ.]. Իբրեւ ամաչեցոյց քաջ իսկ…–116բ–20բ [Յորդորակ] – Եւ արդ, զմեզ ով ոք խրատեսցէ…։*

2. *120բ–267բ* Երանելոյն Սարգսի վարդապետի ասացեալ Մեկնութիւն Կաթուղիկեաց առաջնում թղթոյն Պետրոսի– *120բ–2ա* [Նախերգան] – *Բանք աստուածայինք ամենայնք արդիւնագործ են…*

ա. *122ա – 8ա [Ա. 1–2] – Պետրոս առաքեալ Յիսուսի Քրիստոսի։ [Մեկնութ.]. Ըստ կարգի եւ յարմարապէս սկիզբն առնէ… – 128ա – 9ա [Յորդորակ] – Այլ վա՛յ է ինձ եւ եղո՛ւկ եմ ես…*

բ. *129ա – 39ա [Ա. 3–12] – Աւրհնեալ է Աստուած եւ Հայր Տեառն մերոյ… [Մեկնութ.]. Կարգաւորաբար ասաց զաստուածային շնորհն… աստուածապաշտո[///(135բ շար. թերթերը պատռուած) … զոր]դի Հոգւոյն/// (շար. թափուած)։*

–139ա–41ա [Յորդորակ] – Եւ արդ, մեք զայս ամենայն տիրապէս գիտելով, նախանձաւոր լիցուք…

մանկանցն Բեթղէհէմի», 490բ «Վկյբ. սրբոյն Թէոդոսի*»)։* 275/*492բ–3բ (չիք՝ եսայի։ յաւելեալ՝ 492բ «Վկյբ. սրբոյն* Մուկիմայ *քհին»)։* 276/*493բ–5ա։* 277/*495ա–6ա։* 278/*496ա–7բ (Միւռոպ փխ. Միտոս։ Չիք՝ Պօլինեա)։* 279/*497բ–500ա (յաւելեալ՝ 498բ «կատարեցան... Պօլինէ, Իրակլիոս եւ Բենեդիմոս», 498բ «Վկյբ. սրբոյն* Վարդանայ *նոր նահատակին որ ի Բաղեշ»)։* 280/*500ա–1ա։* 281/*501ա–2ա։* 282/*502ա–3ա (յաւելեալ՝ 502բ «Տօն է եսայեայ մարգարէին»)։* 283/*503աբ։* 284/*504ա–5ա։*285/*505ա–6ա։* 286/*506ա–8բ։* 287/*508բ–10ա։* 288/*510ա–1ա։* 289/*511ա–2 ա։* 290/*512բ–3բ (յաւելեալ՝ 513ա «Ի ԺԳ ամին* Աբասայ *թագաւորին եղաւ կթղկս տէր* Անանէ Մոկացին*»)։* 291/*513բ–4բ (յաւելեալ՝ 514բ «Տօն է երկրորդ մահուանն Ղազարու», 514բ «Տօն է ԳՃ եւ ԺՐ հայրապետացն»)։* 292/*514բ–5ա (չիք՝ Մարկիանոս)։* 293/*515ա–7ա։* 294/*517ա–8ա։* 295/*518ա–9ա։* 296/*519ա–20ա (չիք՝ Յասոն եւ Սոսիպատրոս։ Յաւելեալ՝ 520ա «Վկյբ. սրբոյն Դորոթէոսի եպսին»)։* 297/*520ա–1ա (յաւելեալ՝ 520բ «Վկյբ. Աստիոսի», 521ա «Մարկոս եւ Մոկիանոս...կատարեցան»)։* 298/*521ա–2ա (չիք՝ Նիկիոյ ժողով)։* 299/*522աբ։* 300/*522բ–4ա։* 301/*524աբ։* 302/*524բ–6բ։* 303/*526բ–7բ։* 304/*527բ–8բ (յաւելեալ՝ 528ա «Վկյբ. սրբոյն* Ակակիոսի*»)։* 305/*528բ–9բ (չիք՝ Ակակիոս։ Յաւելեալ՝ 529ա «Վկյբ. Եւտաֆէոսի առաքելոյն»)։* 306/*529բ–30բ։* 307/*530բ–1ա (չիք Անտոնինէա։ Յաւելեալ՝ 531ա «Վկյբ. սրբոյ կուսին* Ակիվինեայ*»)։* 308/*531ա–2բ (չիք՝ Եւտաքէոս, Ակիւղինա։ Փխ.՝ 531ա «Վկյբ. սրբոյն* Քրիստափորի Շանագլխոյ*»)։* 309/*533ա–4բ։* 311/*534բ–6ա։* 312/*536բ–7բ։* 313/*537բ–8 ա։* 314/*538ա–9ա (յաւելեալ՝ «Մարկոս եւ Մովկիանոս... կատարեցան»)։* 315/*539ա–40ա։*316/*540ա–1ա։* 317/*541ա–2բ։* 318/*542բ–3ա։* 319/*543ա–4բ։* 320/*534բ–5ա։* 321/*535ա–6ա։* 322/*546աբ։* 323/*546բ–8բ։*324/*548բ–50ա։* 325/*550ա–1ա։* 326/*551ա–2ա։* 327/*552աբ (յաւելեալ՝ 552ա «Վկյբ. սրբոյն* Խոսրովու Գանձակեցւոյ*»)։* 328/*552բ–3բ (յաւելեալ՝ 553ա «Վկյբ. սրբոցն* Պապիլայ *եւ* Պօղոսի... Վաղէնիտայ *եւ* Թէխարայ*»)։* 329/*553բ–4ա (չիք՝ Աստիոս, Մարկոս եւ Մոկիանոս։ Յաւելեալ՝ 554ա «Վկյբ. Եւտաֆէոսի Անկիւրացւոյն»,*554ա «Յշտկ. է...Մարինայ*»)։* 330/*554բ–5ա (չիք՝ Պրոկոպոս։ Փխ.՝ 554բ «Վկյբ. սրբոյն* Սրապիոնի*», 554բ «Վկյբ. սրբոյն* Պռոկղի *եւ* Իլարիոնի*», 555ա «Վկյբ. սրբոցն* Պերիգրինայ *եւ* Լուկիանու, Պռոմպիոյ, Եւսիփինոյ, Պապիոյ, Սատորնիլոյ *եւ* Գերմանոսի*»)։* 331/*555ա–6ա (չիք՝ Եւ վկայք։ Փխ.՝ 555ա «Վկյբ. սրբոյն* Պռոկոպոսի*»)։* 332/*556ա–8ա։* 333/*556ա–8ա։* 333/*558ա–9ա (չիք՝ Մելքիսեթ եւ Կարապետ)։* 334/*559ա–60ա (յաւելեալ՝ 559ա «Վկյբ. Նոր վկայիցն* Մելիխսեդեկի *եւ* Կարապետի*»)։* 335/*560ա–1բ (չիք՝ Սրապիոն, Մարիամ Մագդանեղացի։ Փխ.՝ 560ա «Տօն է ծննդեան Յուաննու Կարապետին»)։* 336/*561բ–2բ (յաւելեալ՝ 562ա «Վկյբ. Եւ վկայիցն»)։* 337/*562բ–4ա։* 338/*564ա–7ա։* 339/*567ա–8ա։* 340/*568աբ (յաւելեալ՝ 568բ «Յշտկ. է Մարիամու Մագդաղենացւոյն»)։* 341/*568բ–70ա (յաւելեալ՝ 569բ «Յշտկ. է սրբոյն* Ներսէսի Լամբրոնացւոյն*»)։* 342/*570աբ։* 343/*570բ–1բ (յաւելեալ՝ 571ա «Յշտկ. ... Ոլինպիա», 571բ «Յշտկ. սրբոյն* Մարթայի՝ *մօրն* Սիմէոնի Սիւնակեցւոյն*»)։* 344/*571բ–2բ (յաւելեալ՝ 572ա «Յշտկ. է... [ե]պրակսեայ»)։* 345/*572բ–4ա։* 346/*574ա–5ա (յաւելեալ՝ 574բ «Յշտկ. սրբոյն* Ապօղոնոսի*»)։* 347/*575աբ (չիք՝ Ստեփաննոս։ Յաւելեալ՝ 575ա «Վկյբ. սրբուհոյ կուսին* Քրիստինեայ*»)։* 348/*575բ–6բ (յաւելեալ՝ 575բ «Յշտկ. սրբոյն* Ստեփաննոսի *հայրապետին»)։* 349/*576բ–7ա։* 350/*577ա–8բ։ 351 /578բ–9ա (չիք՝ Թէոդոտէա)։* 352/*579ա–80ա։* 353/*580աբ։* 354/*580բ–2ա (յաւելեալ՝ 582ա «փոխեցաւ... վրդն* Գէորգ Մեղրիկն*»)։* 355/*582ա–3բ։* 356/*583բ–4բ։* 357/*584բ–5բ։* 358/*585բ–6ա։* 359/*586բ–7ա։* 360/*587ա–8բ (յաւելեալ՝ 588ա «Յշտկ. շնորհաց տէր* Ներսէսին Կլայեցւոյն*»)։* 361/*588բ–9բ։* 362/*589բ–92ա։* 363/*592բ–3բ (յաւելեալ՝ 593ա «Վկյբ. սրբոյն* Մարինոսի*»)։* 364/*593բ–4բ (չիք՝ Մարինոս։ Յաւելեալ՝ 593բ «Յշտկ. ... Միտոնա»)։* 365/*չիք։* 366/*594բ–608ա (դրուած Աւելեաց ե–ի տակ)։*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

1. 608բ [3]իշատակարան եւ ծանուցումն պայծառ եւ սուրբ ընթերցողացդ – *Փառք... // (609ա)... Ըստ այմ յարացուցի ամենագովելի եւ երջանկամեծար, ընտրեալ եւ պատուեալ, աստուածահաճոյ եւ ամենայն գովասանութեանց արժանաւորեալն վեհափառ կաթողիկոսն տէր* Նահապետ՝ *ստա // (609բ) ցօղ սուրբ գրոցս...*

Արդ, եղեւ զրաւ գրչութեան այսմ աստուածաշունչ մատենի եւ ծաղկափթիթ բուրաստանի եւ թուաշահոտութեան Փրկչին հազարերորդի, վեցհարիւրորդի ինսներորդի ի հինգերորդի ամի, յօգոստոսի ամսոյ հինգետասանօրորդի, իսկ ըստ Հայկազեանս սեռի՝ հազարերորդի հարիւրերորդի եւ չորից տասանց եւ քառաթուոյ յարաբարդելոյ (1695), ընդ հովանեաւ երկնահանգէտ եւ գերագահ լուսազարդ տաճարիս Սրբոյ ՅԱթոռոյս Մեծի Սուրբ Էջմիածնի *եւ դամբարանացն սրբոց կուսանացն՝* Հռիփսիմեանցն *եւ* Գայիանեանցն*, ի հայրապետութեան վեհափառ Աթոռոյս* Սրբոյ Էջմիածնի *երիցս երանեալ եւ երջանկափառ հայրապետի նոյնոյ տեառն* Նահապետի *կաթողիկոսի, եւ ի թագաւորութեանն Պարսից* Շահ Սուլթան Հուսէինի*, իսկ ի թագաւորութեան Օսմանցւոց սուլտան Ահմատի, ի հարկէ եւ ի հրամանէ վեհափառ հայրապետի տեառն* Նահապետի*, առ որ մեծաւ փափագմամբ ցանկացող եղեւ այսմ հոգեւոր գանձի*

երկնաւորի եւ անգին մարգարտի,որ է գիրք մարտիրոզոք եւ կոչի՝ Այսմաւուրք: Իսկ ի սկ[ի]զբն Փոքր տարէմտին Հայոց, մինչեւ ի լրումն կատարման բովանդակ տարոյն երկոտասան ամսոյն եւ հինգ աւելոցն, յորում պարունակեալ կայ զպատմութիւնս համօրէն սրբոցն Աստուծոյ... Իսկ պատուականս այս ի հայրապետաց յուսալով ի բան մարգարէին, որ ասէ. Երանի որ ունիցի զաւակ ի Սիոն եւ ընտանի յերուսաղէմ, նաեւ ի բան Տեառն, որ ասէ. Գանձեցէք ձեզ գանձ ի // (610ա) յերկինս: Ըստ այսմ յուսոյ ի վերայ ամենայն բարեգործութեանց իւրոց, ստացաւ եւ զայս հոգելի բուրաստանս՝ յիշատակ հոգւոյ իւրոյ եւ ամենագով անուան իւրոյ առաջի Աստուծոյ, ի միջի լուսազարդ տաճարիս եւ Մեծի Սուրբ Էջմիածնի *եւ նախնեաց իւրոց հոգեւորաց եւ մարմնաւորաց, որովք մասնակից լինելով պսակաց համագումար սրբոցն Աստուծոյ, որ ի սմա: Յաղագս որոյ աղաչեմք զամենեսեան, որք լուսաւորիք սովաւ կարդալով եւ հոգեւոր խրախճութեամբ, յիշեցէք ի մաքրափայլ աղօթս ձեր ի տօնս տէրունականս եւ ի սուրբսն Աստուծոյ, զոր սովաւ կատարէք զերջանկափառ հայրապետս այս՝ ստացօղ այսմ անջրելի մատենի՝ զտէր* Նահապետ *կաթողիկոս Ամենայն Հայոց* Աթոռ Սուրբ Էջմիածնի, *նաեւ զբարեպաշտ ծնո[ղ]ան իւր՝ զհոգեւորս եւ զմարմնաւորսն, զհոգեւոր ծնօղն եւ զդաստիարակն՝ զտէր եղիազար կաթողիկոսն, զոր երկամք աստուածայնօք դաստիարակեալ հասոյց յարբունս հասակի իւրոյ, որով եւ արժանաժառանգ գտաւ առաքելական Աթոռոյս մեծի, եւ զմարմնաւոր ծնօղսն իւր՝ զԴաւիթ աստուածընտիր քահանայն եւ զմայրն՝ եաղութ, եւ զեղբարսն իւր եւ զամենայն արեան մերձաւորսն, խնդրելով ի Տեառնէ զթողութիւն մեղաց, եւ անջինջ յիշատակաւ գրել ի գիրն կենաց եւ դասակից լինել յաջակողմեան դասուն եւ անթառամ պսակին լսել զերանելւէտ բարբառն///*

Եւ արդ, յիշատակաւ ճառեցից զբազմաշխատ երախտիս երջանկափառ կաթողիկոսացս, զոր արարին ի վերայ Սրբոյ Աթոռոյս Էջմիածնի, *մանաւանդ թէ առ ազգս Հայոց եւ յամենայն եկեղեցիս Քրիստոսի ի հիմանէ կառուցանելով եւ վերստին նորոգելով, քանզի ծագեցան որպես արեգակն եւ լուսաւորեցին համայնգամայն զաշխարհս ամենայն:*

Նախ կառուցին ի միջի լուսազարդ տաճարիս Սրբոյ Էջմիածնի *ի վերայ իջման տեղւոյն գըմբէթ երկնանման ի վերայ չորից սեանց, յօրինելով ի նմա Սեղան Անմահ Գառին Աստուծոյ՝ զարդարեալ եւ պայծառացուցեալ ամենայնիւ սխրալի տեսռագաւ: Նաեւ խորան սուրբ պատարագամատոյց ի միջի հիւսիսային բրգոյն՝ յանուն* Սուրբ Ստեփաննոսի Նախավկային: *Ըստ այնմ սարասի եւ խորան սուրբ ի միջի հարաւային բրգոյն՝ յանուն* Սրբոյն Յովհաննու *// (610բ)* Մկ[ր]տչին, *եւ սահմանեալ հաստատեցին տարին ի բոլոր, զատ ի Պահոցն, Ծնընդեան եւ յԱռաջաւորին եւ յԱռաջաւորին եւ Աղուհացին, եւ զայլ ամենայն աւուրսն, թէ պահոցն եւ թէ ուտոց՝ պատարագ մատուցանել, բաց զչորեքշաբաթին, ի Հոիփսիմէն, եւ զուրբաթին, որ ի Գայիանէն: Այլեւ գկաթուղիկէն* Սուրբ Էջմիածնի, *որ հարեալ էր ի կայծականց, վերստին նոր[ո]գեցին եւ խաչ ոսկէզօծ կառոցին ի գլուխ կաթուղիկէին, ըստ նմանութեան նախկին լուսոյն տեսլեան* Սրբոյ Լուսաւորչին: *Այլեւ կրկնապատիկ պարսպեալ յօրինեցին ի նմա սարայս եւ դարպասս եւ բուրաստանս, նաեւ մոմատունս, եւ համամս եւ լուալիս: Այլեւ քարվանսարայն հուպ ի պարսպին: Նաեւ զեկեղեցին* Սրբոյն Գայանիեայ *ամենայնիւ նորոգեցին եւ պայծառացուցին, եւ կառուցին յարեւմտեան դրան տաճարին գաւիթ հրաշալի եւ երկրուց անկեանց յօրինեցին տաճարք զարմանալի: Եւ շուրջ զեկեղեցեաւն սայլատակ (=Սալայատակ) ֆարշեցին եւ կանգնեցին յարեւելեան խաչս բազումս, եւ հաստատահեղոյս պարսպեցին, եւ տնկեցին հուպ այգիս, եւ կարգեցին միաբանս բազումս: Ըստ այնմ սարասի զարդարեցին եւ զեկեղեցին* Սրբոյն Հոիփսիմեայ, *եւ կառուցին յարեւմտեան դրան տաճարին զանկակատունս եւ հաստատեցին ի նմա միաբանս բազումս՝ ի պաշտօն փառաբանութեանցն Աստուծոյ: Այլ եւ նոր ի հիմանէ հաստատեցին զանապատն* Զորագեղու. *եւ կառուցին երկուս տաճարս հրաշագեղս յանուն* Սրբոյն Գեւորգեայ *զօրավարին եւ* Սրբոյն Յակոբայ Մ[ծ]բնայ հայրապետին, *եւ յօրինեցին անդ եւս շինուածս բազումս, եւ հաստատեցին միաբանս եւ այլ բազում շինուածս աշխատանս արարին յամենայն տեղիս: Իսկ ի թուին ՌՃԽ (1691) վաղճանեցաւ սուրբ հայրն հոգեւոր* եղիազար *կաթողիկոսն եւ յաջորդեաց զԱթոռոն հայրապետական երջանկամեծար եւ սրբազան հայրապետս տէր* Նահապետ *կաթողիկոս, որ եւ ջանք ի վերայ եդեալ՝ արար աշխատանս եւ շինուածս բազումս ի վերայ առաջնոց շինուածոցն, թէ* Սրբոյ Աթոռոյս *եւ թէ ամենայն եկեղեցեաց Քրիստոսի: Իսկ ի վերայ յառաջնոց շինուածոցն* Սրբոյ Աթոռոյս *յաւել եւ զսայլատակ ֆարշն յարեւելից կուսէ տաճարին եւ կանգնեաց ի վերայ խաշէրս բազումս եւ արդիւնաւորեաց* Սրբոյ Աթոռեյս *բազում շահեկան արդիւնս եւ այգեստանս եւ շինուածս բազումս: //(611ա) Այլեւ շինեաց ի միջի գեղջին* Սուրբ Էջմիածնի *նոր ի հիմանէ եկեղեցիս ժողովրդականաց անուն* Սուրբ Աստուածածնին: *Այլեւ զտաճարն* Անապատին Անանիայի առաքելոյն, *որ ի միջի այգեացն* Երեւանայ

քաղաքին, նոր վերստին ի հիմանէ կառոյց ամենայն շինուածօքն, որ ի նմա: Նաեւ զերկու եկեղեցիսն քաղաքին Երեւանայ, *այսինքն զերկու երեսին կոչեցեալ եւ զԿաթուղիկէ անուանեալ, որք ի շաժմանէն ի հիմանէն իսպառ բլեալք էին, վերստին ի հիմանէ կառոյց գեղեցիկ շինուածօք: Այլ եւ շինեաց յՈւշականայ կարմունջն եւ վերստին կառոյց ի հիմանէ: Իսկ թուականիս Հայոց ՌՃԽԴ (1695), նոր ի հիմանէ վերստին նորոգեալ կառոյց գեղեցկատիպ յօրինուածովք զտաճարն* Շողակաթին *բազում շինուածօք եւ կարգեալ հաստատեաց ի նմա միաբանս ի փառաբանութիւն Աստուծոյ: Եւ այլ բազում աշխատանս եւ արդիւնս հոգեւորս արար* Սրբոյ Աթոռոյս *եւ ամենայն եկեղեցիս Քրիստոսի եւ առ ազգս Հայոց, զոր ոչ ոք երբէք արար առաջնոյ հայրապետացն սրբոյ աթոռոյս: Այլեւ ի վերայ ամենայն բարեգործութեանցն յաւել եւ զայս բարեգործութիւնս անանցական՝ ստանալ զգիրքս բազումս յիշատակ յաւիտենական առաջի Աստուծոյ ի միջի եկեղեցեացս Քրիստոսի: Որոց տացէ Տէր Աստուած զվարձս բարեաց առատապէս ըստ վաստակոց իւրոց ամենայնի եւ դասակից եւ պսակակից արասցէ ընդ սրբոց հայրապետացն յե[ր]կնաւոր յառագաստին յանպատում փառացն եւ յանտրտում ուրախութեանցն, եւ յիշատակ օրհնութեամբ եղիցի յամենայն ժամ. ամէն...*

Նահապետ կաթողիկոսի անունը յիշատակւում է բոլոր վկայաբանութիւնների վերջաւորութեան:

272բ Որոյ շնորհօք... Քրիստոս Աստուած, լուսաւորեա զհոգի ստացողի գրոցս՝ տեառն Նահապետ կաթողիկոսիս, *վեհազարդ* Աթոռոյն Սուրբ Էջմիածնի *եւ իւր բարեսէր ծնողացն, եւ* Գրիգոր *գրչի եւ իւրայնոցն:*

2. 274ա (կիսախորանի մեջ՝ ծաղկողի՞) Յիսուս Քրիստոսի ծառայ տէր Յովհաննէսիս:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

1. 611բ (1702թ., նուիրաբերման, նոյն ձեռք) Դարձեալ սուղ ինչ յիշատակարան այլ իմն. *այլեւ քաղցրասցի սիրտ ամենագութ, ամենաողորմ եւ ամենասուրբ երրորդութեանն՝ Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ ի վերայ սրբազան եւ գերերջանիկ հօրն հասարակաց՝ տեառն* Նահապետ կաթողիկոսն Ամենայն Հայոց, *որ եւ եռափափակ սիրով եւ յղղձալի տենջմամբ եւ մեծաւ հաւատով ստացաւ Յայսմաւուրքս զայս եւ վիճակեալ սեպհականեաց մեծահռչակ վանից* Ամենասրբուհոյ Աստուածածնին, *որ ի Բջնի՝ կառուցեալոյ իշխանաց իշխանի* Գրիգորի Մագիստրոսի՝ *որդւոյ* Վասակայ, *որ եւ նախակարգեալ գոլով Աթոռ եւ արքեպիսկոպոսարան, եւ ետ ընծայ սմին տաճարի՝ իբրու յիշատակ անմահ առաջի Տեառն ամենակալի եւ արձան յաւիտենական հաստատեալ ի գաւթի երկնից արքայի, եւ խոսուն նշան կանգնեալ ի սրահի անդովանդակելոյն յարկի, զի թերեւս քաւեսցի, թողցի եւ ջնջեսցի յանցունք եւ մեղանք ստացողի գրոցս՝* Նահապետ կաթողիկոսին... *եւ հանձնեաց զսա ի ձեռն սիրելի եւ հարազատ հոգեւոր որդւոյն իւրոյ՝* Յովհաննէս վարդապետին, *որ էր նա յերկրէն* Ծաղկունեաց ձորոյ, *ի գեղջէն* Ըղընդալամայ, *որդի մեծատուն եւ բարեպաշտեն ծնօղաց, եւ ի մանկութենէ սնեալ եւ վարժեալ մեծաւ հաւատարմութեամբ եւ մտերմութեամբ առ ոտս երկուց գերափառ եւ երիցս երանեալ կաթողիկոսացն, այսինքն՝ մեծի եւ սրբազանի տեառն* Եղիազարի *եւ տեառն* Նահապետի, *որպես զարդ ու զաւակ հոգւով եռացեալ եւ սրտով սիրեցեալ ի նոցունց, իսկ եւ ձեռնասուն եւ սրտանունդ յոյժ խորհրդական եւ գեր ի վերոյ քան զամենայն ի մերձակայ խորհրդականս, թշնամի ընդդէմ թշնամեացն եւ ճշմարիտ սիրելի ընդ սիրելիս նոցա, եւ միշտ եւ հանապազ վառեալ ի սէր եւ ի հոգս ճշմարիտ եւ անեղծ սիրով՝ տուէ եւ ի [գի]շերի կալով զուարթ առաջի երեսաց սրբոց հայապետացս եւ միշտ պատրաստ ի հաճոյս կամաց սրտից նոցա: Եւ էր լցեալ եւ զարդարեալ ամենայն շնորհօք եւ ումամբ, մանաւանդ յոյժ հմուտ եւ տեղեակ երաժշտական արուեստից եւ քաղցրաձայն եւ համեղաբարբառ, ախորժ ամենայն լսօղաց, ընդունելի յաչաց տեսողաց եւ յառաջադեմ եւ ատենախօս ամենայնիւ, մինչ զի բազում անգամ առաքեալ եղեւ ի քաղաքն արքունի, այսինքն՝ Իսպահան, ի գործ ինչ հարկաւորք հրամանաւ վեհին մեծի անթե // (612ա)րի կատարեալ ի գլուխ հասոյց, եւ երկնաշահ քանքարաց գտեալ առաջի տեառն իւրոյ՝ որպէս ծառայ բարի եւ հաւատարիմ ըստ հրամանի Փրկչին Յիսուսի: Վասն որոյ եւ ընկալեալ եղեւ ի նոցանէ զտրիտուրն շնորհի՝ զկրկին քաղաքաց իշխել արժանաւորեցաւ թելադրութեամբն հոգեւորն ճշմարտի, այսինքն՝ շնորհեաց սմայ զմեծափառ Աթոռս եպիսկոպոսութեան, որ անուն Սուրբ Աստուածածնին որ ի Բջնի, հանդերձ բոլոր թեմիւ եւ վիճակաւ, յորս սահմանեալ կայր ի յառաջնոց, ընդ նմին եւ զայս Յայսմաւուրքս, որ ստացեալ էր վասն փրկութեան հոգւոյ իւրոյ եւ իւրայնոցն ամենայնի: Եւ ի թվականիս Հայոց ՌՃԾ եւ մէկին (1702) ետ զմատեանս զայս սիրելի որդեկին իւրոյ՝* Յովհաննէս վարդապետին *ի նշան անխզելի սիրոյ իւրոյ, որ առ նմա, եւ յիշատակ ի տաճարի եւ յաթոռոյ մօր Տեառնս: Եւ բարձր հրամանաւ կարգեաց յայսմ Աթոռոյս առաջնորդ եւ վերատեսուչ, յորոյ Տէր Յիսուս բարեաւ վայելումն*

տացէ ուղիղ վարդապետութեամբ եւ անամօթ մշակութեամբ առաջի Տեառն: Եւ այլ բազում բարիս եւ շահեկան արթիւնս արար այսմ Աթոռոյս ի ձեռն սիրելի որդւոյն իւրոյ՝ Յովաննէս *վարդապետին բարելի հայրապետըն Ամենայն Հայոց՝ զտէր* Նահապետ *կաթողիկոսն: Յորոյ Տէր Աստուած պարգեւեսցէ կեանս անվաղճան իշխանութեամբ... ամէն: Հայր մեր...:*

2. 612ա Զվերջին ըստացողի յիշատակարան սուրբ մատենիս, որ եկն ի վերայ յերկրին Պարսից վասն ծովացեալ մեղաց մերոց—*Ի թվականիս Հայոց ՌՃ եւ Հ (1721) ամին եղեւ յարուցմունք ի վերայ* Պարսից *յերկրին: Իսմայելացիք, որ կոչի օսմանցիք, հեծելազօրօքն իւրեանց, ոչ իւրեանց զօրութեամբն, որպէս ասէ մարգարէն. Ջարմանք մի մեծ այս են, զի՞արդ մինն զհազարս հալածեսցէ եւ կամ երկուք՝ զբիւրս շարժեսցեն: Այս բանն կատարեցաւ ի վերայ յերկրին* Պարսից. *եթէ ոչ Տեառն Աստուծոյ մատնեալ էր զնոսա ի ձեռս թշնամեաց նոցա. իրաւի որ մատնեաց ի ձեռս: Ոմն* Միրվէիս *գող անուն, եկեալ կոծանեաց զթագաւորութիւն* Պարսից, *որ հաստատ էր զթագաւորութիւն նորա ի կրակապաշտ ժամանակէն, եւ օսմանցոցն չարացեալ // (612բ)վասն բանիցն անիծեալ* Միրվէիսին, *թէ մի գող շուն ելեալ առցէ զթագաւորութիւն* Պարսից *արքայի, եւ նորա նախանձուն շարժեցան օսմանցիքն, եւ ելեալ յարեցան ի վերայ յերկրին* Պարսից, *առին զբազում քաղաքս եւ գիւղս եւ յագարակս, եւ քանդեալ կործանեցին ամուր ապարանք, եւ գերի վարեցաւ ազգս Հայոց մեծէ եւ մինչեւ ի փոքունս, եւ եկեղեցիք եւ վանորայք, յանապատի մտեալ բազում սրբութիւնս՝ գիրք եւ պատուական խաչեր եւ Աւետարանք եւ այլ ամենայն սպասք զարդուց սուրբ եկեղեցեաց եւ վանորէից աւար եւ գերի տարեալ, եւ շատ վարդապետք եւ կարգաւոր քահանայք նոցա անկան ի սուր, եւ զայրիս նոցա ոչ ոք էր, որ լայր: Այս եղեւ վասն ծովացեալ մեղաց մերոց: Եւ մինն այլ այս սուրբ գրոյս, որ կոչի Յայսմաւուր, որ յիշատակ էր եդեալ լուսահոգի* Նահապետ *կաթողիկոսն ի վարքն* Սուրբ Աստուածածնին, *որ կոչի Բջնի: Եւ անկեալ սա ի ձեռն անօրինաց, եւ բերեալ* Ղարս *քաղաքն, եւ տեսեալ ոմն քրիստոնեայ* Մելիոն *եւ* Պապիճան *անուն, ի ղ[ո]ուշ դրամ տուեալ՝ գնեցին եւ եդին յիշատակ իւրեանց հոգուն, ծնօղացն՝* Վարդումին *եւ մօրն՝* Խանբեկուն, *որդոցն եւ թոռնացն, դստերացն եւ հարսից, զարմից եւ զաւականացն, եւ ամենայն մերձաւորքն յիշեցէք ի Քրիստոս յորժամ ընթեռնոյք միով Հայր մեղայիւ: Եւ գմեղապարտ՝* Երեմիայ *գրիչս, որ էի Ղարս քաղաքի, մեղօք լցեալ քահանայ յորջորջի, եւ զհայրն իւր՝ գվարպետ տէր* Աթանասն *եւ գմայրն իմ՝ զԴօլվաթն, որ են հանգուցեալ, խնդրեմ ընթերցողացդ ամենեցուն յիշեսջիք միով Ողորմեայիւ, զի եւ դուք յիշեալ լիջիք յառաջի Աստուծոյ. ամէն: Հայր մեր որ երկինս:*

Վերջին ստացողների հարազատների անունները կրկնւում են բոլոր վկայաբանութիւնների վերջաւորութեան՝ հետեւեալ հերթականութեամբ:

ա. *9ա Զվերջին ըստացողի գրոյս՝* Գամրիսեցի Վարդումին, *կնոջն՝* Խանբէկուն, *որդւոցն՝* Գասպարին, Բաղտասարին, Մելոնին, *եւ ամենայն մերձաւորացն:*

բ. *10բ Զվերջին ըստացողի գրոյս՝* Գամրիսեցի Վարդումին, *կնոջն՝* Խանբէկուն, *հարսներն՝* Եղիսաբեթին, Մարիամին, Հօռոմսիմին...

գ. *11բ Զվերջին ըստացողի գրոյս՝* Գամրիսեցի Վարդումին, *կնոջն՝* Խանբէկուն, *դստերացն՝* Ղզլարին, Նուպարին, Ջարդարին...

դ. *15ա Զվերջին ըստացողի գրոյս՝* Վարդումին, *կենակցին՝* Խանբէկուն, *թոռնացն՝* Պապիճանին, Եղիազարին, Մկրտչին, Գալուստին, Վարդազարին, Շահնազարին, Սաֆրազին...

ե. *17ա Զվերջին ըստացողի գրոյս՝* Վարդումին, *հարսներուն՝* Շահրիգուլին, Խօսրովին, Անանային, Եղիսաբեթին...

զ. *18բ Զվերջին ըստացողի գրոյս՝* Վարդումին, *կեն[ա]կցին՝* Խանբէկուն, *դստերացն՝* Հօռոմին, Զիլֆումին, Համամպազին, Գուլումին...

է. *20ա Զվերջին ըստացողի գրոյս՝* Վարդումին, *դստերացն՝* Եազըլխանին, Սուսամպարին, Անանային, Խանաղին, Գուլբազային...

3. *367ա (նօտրգիր) Ռ վայ մեղացն: ՌՄԼԱ (1782) թվին* Երեւանայ *բերթըն Ուսէին Ալի խանըն բազում նեղութիւն ածաւ ի վերայ ժող[ով]ուրդե[ա]նըն, որ չալթուկըն ամբարէն բերել էտուր, մէկմէկ ջոկել տվաւ, որ սերմն արաւ, ուրիշ որակ-որակ նեղութիւն անթինս (անթի՛ւս) էտ. էլ գրելօվ էլ պատվելօվ չի հատնիլ:*


4. 613աբ, Աստառ Բ (լուացուած եւ անընթեռնելի շղագիր գրութիւն):

1535
ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ
ԲԱՆՔ ՁԱՓԱԽ


Սեթով ՌԼ—1581

ԳՐԻՉ՝ Յովաննէս սրկ.: ՍՏԱՅՈՂ՝ Դաւիթ եպս.:


ԹԵՐԹ՝ 180+1 (կրկ. 4). չգրուած՝ 1ա, 4դ: ՊՐԱԿ՝ 1x5+Ա—ԺԴx12 (Ա 8, ԺԴ 11)+1x12: ՆԻՒԹ՝ թուղթ, լուսագծերով եւ վարազանշան լուսադրոշմով (տարբեր՝ 1—5, 169—180): ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն: ԳԻՐ՝ բոլորգիր (ԺՁ—ԺԷ դդ. յաւելագրողների նօտրգիր՝ 1բ—4գ, 5բ, 157բ—80բ): ՏՈՂ՝ 16 (յաւելագրողների՝ 14—27): ԿԱՋՄ՝ դրոշմազարդ շագանակագոյն կաշի՝ դռնակով, միջուկը տախտակ, աստառը՝ զարդաճիւս ոսկեթել կանաչ գործուածք (Ա.), դրոշմազարդ կարմիր կտաւ (Բ):



Նմուշ՝ 38ա



Նմուշ՝ 118ա



Նմուշ՝ 158ա

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ — Ճ ա կ ա տ ա գ ա ր դ՝ 71բ: Լ ու ս ա ն ց ա գ ա ր դ՝ բուսական, թռչնային: Ջ ա ր դ ա գ ի ր՝ հանգուցագիր: Գ ո յ ն ե ր՝ սեւ ուռուագծային:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. միջից պակասաւոր (պրակ Ա): Թուղթը խումացած, լուսանցային մասերում փոորիկ պատռուածքներ, զանազան բծեր: Կազմի կաշին՝ թեթեւակի ճեռծուած, ցեցակեր, եզրերը՝ մաշուած, թիկունքը՝ ճեղքուած, կապիչներն՝ ընկած: ԺԷ դ. նորոգուած, թերին լրացուած (5բ) եւ յաւելագրուած:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Ա. *5բ—156բ* [Ներսիսի Շնորհալւոյ Բանք չափաւ]

Տե՛ս ձեռ. 1540, 3ա—376ա. *§ 1/5բ—71ա (քաղուածոյ. § բ տեղափոխուած՝ 151բ—6բ)* 2/*71բ —118բ (չիք § գ): 3—6/չիք:* 7/*128բ—31բ (§ 8—ից յետոյ):* 8/*119ա—28բ (§ 7—ից առաջ)* 9/*131բ—41ա:* 10/*141ա—6ա:* 11/*146բ—51բ (151բ—6բ, տե՛ս § 1. բ): 12—*23/չիք:

Բ. [Յաւելագրութիւնք ԺՁ—ԺԷ դդ.]

1. *1բ—3բ* Վասն Թանատեա վանիցն եւ հաւրն Մխիթարայ—*Յայնժամ ժամանակի պայծառանայր սուրբ երկնայհրաշ կարգաւք գերափառ եւ հրչակելի ուխտն Թանայիատի... (տե՛ս Ստեփաննոս Օրբէլեան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 160—161):*

—§ 1 յաւելագրուած եսայի գրչի ձեռքով, ԺԷ դ.:

2. *4աբ* Կանոն հանդերձեղէն եւ սպաս աւրհնելոյ—*Տանին եկեղեցին՝ առաջի բեմին, եւ սարկաւագն ի վեր ունելով, ասեն Սաղմոս ԺԷ. Սիրեցից զքեզ...*

3. *4բգ* Կանոն խունկ աւրհնելոյ— *Ի վեր ունելով քահանային, եւ ասէ զաղօթս. Ամենակալ Տէր Աստուած մեր...*

4. *157բ—61բ* Այս է խրատ վասն դռնաբացի Ծառազարդարին—*Ով տունասէր, յորժամ կամիցիս դռնայբացէք առնել...*

5. *162աբ* [Կցորդիք], Ի Հայր— *Հայր անըսկիզբն եւ գթածական, յանոխակալ եւ ողորմած...*

6. *163ա—6բ* Կանովն մոնոզոն հարկատուութեան եգիպտացւոցն եւ Սրբոյ Լերինն եւ Պաղեստին, արանց եւ կանանց, որ զկուսութիւն յանձն առնուն. կարգն այս է— *Աստուածեն զնուիրեալն ի դուռն եկեղեցոյն, եւ ասեն Սաղմոսն ի թիւ. Առ քեզ. Տէր, համբարձի...*

—§ 4—6 յաւելագրուած Թումայ եպիսկոպոսի ձեռքով, ԺՁ դ.:

7. *167բ—8ա* Աւրհնութիւն վերարկու զգեստից, վեղարի եւ փիլոնի— *Ազաչեմք զքեզ, Տէր Յիսուս Քրիստոս, եւ խնդրեմք յառատ ողորմութեանդ...*

§ 7 յաւելագրուած անանուն գրչի ձեռքով, ԺԷ դ.:

8. *169ա—80բ* [Ի Յիսուս Որդի գրոց Ներսիսի Շնորհալւոյ. տպ. 1830, էջ 47—63]—*Շնորհեա եւ ինձ զանթվելին.../ Աներեւոյթ բըռնաւորին:*

—§ 8 յաւելագրուած Բարսեղ գրչի ձեռքով, 1641թ.: Նոյն ձեռքով կատարուած են սրբագրութիւններ:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

118բ եւ ինձ՝ յետնեալ գրչիս եւ մեղուցեալ յոգոյս, Յովաննէս *սուտանուն սարկաւաքու, հայցմամբ խնդրել թողութիւն մեղաց, եւ դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ. ամէն:*

157ա Ռվ քրիստոսազգեաց մանկունք, որք ի լուսաւոր եւ աստուածային հոգիաշահ պատուիրանացս աւգտիք ընթերցմամբ եւ կամ յօրինակելով, զստացաւղս սորայ՝ զԴաւիթ եպիսկոպոս եւ զեղբայրն իւր եւ զայլ ամենայն ազգայինս իւր եւ զծնաւղսն իւր զկենդանիս եւ զհանգուցեալս յիշեցէք մեղաց թողութեամբ ի Տէր: Ընդ նմին եւ զսուտանուն գրչակս՝ Յովաննէս, *հանդերձ ծնա[ւ]ղօք եւ ամենայն արեան մերձակայիւք յիշեսջիք, եւ Աստուած զձեզ յիշէ երկնից արքայութիւն. ամէն:*

Յամի Ռև (1581) թվի, յամսեանն յուլիսի Ի (20) եղեւ զրաւ գրչութեան աղաւթական բանիցս սրբոյն Ներսէսի Կլայեցոյն, *ի գաւառս* Եկեղեցայց, *ի մայր//(157բ)աքաղաքիս* Սեջովայ, *ընդ հովանեաւ* Սուրբ Աստուածածնայ *եւ այլ բազում նշխարացս, որ աստ կան, եւ են բարեխաւս վասն մեր ի Քրիստոս ի տէր մեր, որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն:*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

1. 156բ (ԺԶ դ., § 4–6 յաւելագրողի) Թումայ *եպիսկոպոս, հանդերձ ծնաւղօք, յիշեցէք, եւ Աստուած զձեզ յիշէ:*

167ա Մտացող լուսազարդ տառիս՝ Թումայ *եպիսկոպոսն եւ այլ միաբանք իւր յիշեցէք ի Քրիստոս:*

2. 1ա (1641 թ., §8–ի յաւելագրողի, գրչափորձութեան մէջ) Այս Յիսուս Որդիս՝ Բարսեղիմ *է. թվիս ՌՂ (1641):*

4բ Բարսեղիմ *է այս Յիսուս Որդիս, այլ ոչ ում բան չկայ:*

3. 3բ (ԺԷ դ., §1 յաւելագրողի)... Որոյ բարեխոսութեամբ գթասցէ Քրիստոս յաշխարհս յայս եւ ի մեզ՝ եւ ին թշուառացեալք, Եսայի *գրիչ:*

4. 4բ (ԺԷ դ., գրչափորձութեան մէջ) Այս Յիսուս Որդիս Սուխիասիշ *էաց:*

5. 168բ (ԺԷ դ. գրչափորձութեան մէջ) Վայ եղկելի Եղիճար, *որ կաս մեղօք տատանած, անկեալ երեսաղաչս:*

6. 168բ (1591 թ., գրչափորձութեան մէջ)... ի Յարզրում, *ի Ռխ (1591):*

ԿՆՔԱԴՐՈՇՄ 9բ, 125բ, 166բ Գիրքս Սուրբ Էջմիածնա *է:*


ԳՐՉԱՓՈՐՁ 1ա Աստուած անուան քում...: 168բ Ի տէր Մելիքսէթ *կաթողիկոս Ամենայն Հայոց եւ պատրիարգ...*

1536
Ժ Ո Ղ Ո Վ Ա Ծ Ո Յ


ԺԴ—XIV

ԳՐԻՉ՝ Վարդան:

ԹԵՐԹ՝ 209: ՊՐԱԿ՝ Ա—ԺԸx12 (Ա 4, Գ, ԺԸ 11, է, Ժ 10)+1x7: ՆԻՒԹ՝ թուղթ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 17x12: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն: ԳԻՐ՝ բոլորգիր (ժեդ. նուռգողի՝ 203ա—9բ), նօտրգիր (ԺԷ դ. 70աբ): ՏՈՂ՝ 20: ԿԱՋՄ՝ սեւ կաշի, միջուկը՝ տախտակ, աստառ՝ թուղթ: ՊԱՀՊԱՆԱԿ՝ 1+1 թուղթ (մասն աստառի):



Նմուշ՝ 38ա



Նմուշ՝ 70ա

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ — Ճ ա կ ա տ ա գ ա ր դ՝ 121բ, 175ա: Լ ու ս ա ն ց ա գ ա ր դ՝ բուսական: Զ ա ր դ ա գ ի ր՝ հանգուցագիր: Գ ո յ ն՝ կարմիր:

ՎԻՃԱԿ — Սկզբից, միջից եւ վերջից պակասաւոր, թերթահան եւ ցեցակեր, թուլացած եւ բամբակակալած, տեղ—տեղ հայհոյած, Բ պրակի վերջին թերթը տեղաշարժուած եւ ընկած ԺԱ պրակի մէջ (117): Կազմի կաշին՝ ճեռնուած, եզրերը՝ մաշուած: Քանիցս նորոգուած, ԺԵ դ. աւելացուած 203—209, ԺԷ դ. 70, ԺԸ դ. կարկատուած 83—ը՝ լրացուած:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Ա. *1ա–121ա* [Ներսէսի Շնորհալւոյ Բանք չափաւ]

Տե՛ս ձեռ. 1540, 2ա—376ա. *§1/1ա–15բ, 117աբ, 16ա–66բ (սկ. «[Թափառէ]ցայ յանվայր վայրին...»): 2/66բ–96բ (չիք՝ § գ): 9–6/չիք: 7/96բ–7բ (թափուած՝ «իթար բժիշկ ընկալ ի ներս» ծայրակապային տները: 8/97բ–104ա: 9/104ա–9ա: 10/109ա–12բ: 11/112բ–5բ: 12/չիք: 13/115բ–6բ, 118ա: 14/118ա–9բ: 15/119բ–20բ: 16/120բ–1ա: 17–2/չիք:*

Բ. *1. 121բ–75ա* Թուղթ տեառն Գրիգորիսի կաթողիկոսի Հայոց, գրեալ եղբաւր նորին Ներսիսի

եպիսկոպոսի հրամանաւ նորուն ի Միջագետս Ասորոց... ի խնդրոյ ումեմն աստուածասիրի Առիւծ կոչեցելոյ իշխանի Թլկուրանն աւանի–*Թէպէտ եւ տերունական հրամանն յորդորէ զմարդիկ քննել զգիրս...*

2. *175ա–200ա* Թուղթ խոստովանութեան հաւատոյ, դարձեալ նոյն իսկն Հայաստանեացս եկեղեցւոյ, գրեալ տեառն Ներսէսի Հայոց կաթողիկոսի, զոր խնդրեաց ի նմանէ սիրով թագաւորն Յունաց Մանիլ, հանդերձ պատրիարգաւն եւ բոլոր պաղատաւն... – *Թէպէտ եւ աղքատութիւն մտաց եւ բանի ոչ տայ թոյլ ի բարձրագոյնոց քան զմեզ համարձակել ձեռնարկութիւնք արկանել ի համատարած ծով գիտութեան ձերոյ...///(176բ) խոստովանիմք որպես ուսաք ի հարցն սրբոց...*

3. *200ա–2ա* Թուղթ առաջին թագաւորին Հոռոմոց Մանուէլի առ Ներսէս կաթողիկոս Հայոց՝ յաղագս խնդրելոյ զմիաբանութիւն երկաքանչիւր ազանց – Մանուիլ՝ *Քրիստոսի Աստուծոյ հաւատարիմ թագաւոր, Միրանածին, աստուածապսակեալ արքա...*

4. *202ա–9բ* Պատասխանի թղթոյ մեծի թագաւորին Հոռոմոց Կիր Մանուէլի, գրեալ Ներսիսի կաթողիկոսի Հայոց վասն ճշմարիտ դաւանութեան հաւատոյ Հայաստանեաց եկեղեցւոյ – *Հրաման ինքնակալութեան ձերոյ, ով քրիստոսապսակեալ արքայ... սակայն միաւորելն վասն Բանին Աստուծոյ ընդ մարդ ///(շար. թափուած)*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

65բ Ռվ եղբայր, յիշեա:

121ա Ռվ եղբարք, որք մխիթարիք սովաւ, յիշեցէք ի սուրբ աղաւթս ձեր՝ զՎարդան գրիչ եւ զծնողսն մեր, եւ զեղբարն զհանգուցեալն ի Քրիստոս, եւ Աստուած զձեզ յիշէ:

199բ Ռվ մանկունք սուրբ եկեղեցւոյ, որք աւգտիք եւ լուսաւորիք յաստուածեղէն բանիցս, յիշեցէք ի սուրբ աղաւթս ձեր զեղկելի գրիչս եւ զծնողսն մեր, եւ Աստուած զձեզ յիշեսցէ:


1537
ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ
ԲԱՆՔ ՋԱՓԱԻ

Սանահին ԺԴ—XIV

ԳՐԻՉ՝ Յովհաննէս (ուսուցիչ), Յոհաննէս (աշակերտ): ՍՏԱՅՈՂ՝ Յովաննէս (ուսուցիչ):

ԹԵՐԹ՝ 191: ՊՐԱԿ՝ Ա—ԺՉx12 (Ա 7, ԺԵ 16): ՆԻՒԹ՝ թուղթ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 15,7x11,5: ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն (միասիւն՝ 191բ): ԳԻՐ՝ բոլորգիր: ՏՈՂ՝ 19: ԿԱՉՄ՝ դրոշմազարդ բալագոյն կաշի՝ դռնակով միջուկը՝ տախտակ, աստառը՝ կապոյտ կտաւ: ՊԱՀՊԱՆԱԿ՝ 1, թուղթ, վերջից:

ՊԱՏԱՌԻԿ—ՊԱՀՊԱՆԱԿ — Աւետարան Մարկոսի: ԺԴ.: 2 (Ա—Բ)+2 (Գ—Դ), ստացուած ամբողջական թերթի ընդլայնակի հատումից եւ հատուած մասերի ընդերկայնակի ծալումից, եզրահատուած: Մազաղաթ, երկսիւն, բոլորագիծ երկաթագիր: Կարդալ՝ Գա—Դբ, Աա—Բբ, Դա—Գբ, Բա—Աբ «[///հոէի]ց եւ նո[ւա դարձե]ալ աղաղա[կէին յու]զեալ... եւ ընդ [նմա հանին ի] խաչ///» (ԺԵ, 13—27):



Նմուշ՝ 8ա



Նմուշ՝ Աա

ՄԱՆՐԱՆԿԱՐԳՈՒԹԻՒՆ — Կիսախոշոր՝ 1ա: Ճակատագիր՝ 35բ, 123բ, 143ա, 176ա: Լուսագծագիր՝ բուսական: Ձարդագիր՝ թռնչագիր եւ հանգուցագիր: Գոյներ՝ կարմիր, կապոյտ:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. խոնավութիւնից գրադաշտը գունափոխուած, կարմրագիր տողերը վնասուած, տեղ—տեղ ցեցակեր, ԺԷ դ. նորոգուած, առանձին թերթեր կարկատուած եւ վերակազմուած:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. *1–189բ* [Ներսիսի Շնորհալւոյ Բանք չափաւ]

Տե՛ս ձեռ. 1540, 3ա—376ա. §1/*122բ:* 2/*1ա–35ա (չիք §գ):* 3/*143ա–75բ:* 4–5/*չիք:* 6/*176ա–89բ:* 7/*129բ–31ա:* 8/*123բ–9բ:* 9/*137բ–43ա:* 10/*134բ–7բ:* 11/*131բ–4բ:* 12–23/*չիք:*

Խառն հերթականութեամբ

Բ. *122բ–3ա* Գրիգորիս [Տղայ] կաթողիկոսի ասացեալ – *է յիս գիտութիւն, բայց համրացեալ է, /Գոյ երկիւղ բարեաց, այլ շիջանիմ միշտ…*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

35ա (Կարմրագիր) Ջստացող խոստովանութեան եւ դաւանութեան ոտանաւորացս տեառն Ներսէսիս՝ զՅովաննէս *յիշեսջիք, ընդ նմին եւ զՈհաննէս ծրողս՝ աշակերտ սորայ, աղաչեմ, աղաչեմ։*

48բ Մ՛հ, ո՛հ, զթափուրս ի բարեաց աղաչեմ յիշել ի Տէր։

55ա Մ՛հ յանդիմանած, քունաւ արեցիր։

115բ (Կարմրագիր) Յիշեցեք զԴաւի[թ] որդեակս մեր, երբեր մեզ ախորժ կերակուր։

143ա (Կարմրագիր) Ջաստուածատես (՛) եւ զլուսատու դիտապետս մեր՝ զԳրիգոր *վարդապետ յիշեսջիք ի Քրիստոս, [ը]նդ նմին եւ զանարժան ծրողս՝* զՅոհաննէս *աղաչեմ։*

149ա ԻԳ (23) շահի առի։

175բ (Կարմրագիր) Յիշեցէք զերջանիկ զդիապետս մեր։

184ա (Կարմրագիր) Ի հոսանուտ կեանը [հ]մախչ/

Քաղցր եւ ախորժ զնոյն յարդարիչ։
189բ Փա՛ռք անմահին եւ միշտ էին,
Երրեակ անձին եւ մի բնութեան աստուածային՝
Հօր անհասի եւ անեղի,
Որդի ծնունդ անճառելի,
Հոգին բխող անպատմելի։
190ա Յիսական բարոյն էացեալ՝
Աշխարհ լրիւ մըշտակացեալ.
Յարփոյն լուսոյ լոյս գոյացեալ՝
Իննեակ դասիւ տարորոշեալ։
Մշտաբարբառ վարuատրեալ,
Փառաբանիչս իւր անուանեալ.
Զքառանիւթեա բնութիւնս պատուեալ՝
Բանականաւն զարդարեալ։
Անմահութեանցըն հաղորդեալ
Եւ անձնիշխան զնա յօրինեալ.
Զար իշխանըն մախացեալ
Եւ նենգութեամբըն տարագրեալ։
Զհոգին շնորհացըն մերկացեալ՝
Յանիծաբեր երկիր անկեալ
Աբելիւըն տատանեալ
Եւ կայենիւն կըսկծեալ։
Մխիթարիչըն մա[րդ] դարձեալ՝
Ետուր ըզՍէթն արիացեալ.
Յազգաց սորին որ աճեցեալ՝
Հոգիք յոլովք շրջագայեալ։
Զկուսական փառըս ստացեալ՝
Զամս երկերիւր անդ պահեցեալ.
Իսկ հակառակն գործեցեալ՝
Պոռընկական մեղաւք վարեալ։
Զրահոսան սահանք բացեալ՝
Յերկրորդ դարուն ապականեալ.
190բ ՅԱբրահամեան շառաւեղեալ՝
Կայծ հաւատոյ ի նա սերեալ։
Նահապետացըն զարգացեալ,
Զհոգի շնորհացն որ վերացեալ,
Կրկին տալով մեզ խոստացեալ.
Առ ի Դաւիթն կատարեալ՝
Որ ի Յեսսեայն եղեւ ծաղկեալ
Ի Բեթղէէմ ազգէ ձայնեալ՝
Զքնար հոգւոյն արագ հընչեալ։
Լեզուն գրիչ եղեւ արեալ՝
Որձահոսուն աղբրիւրացեալ.
Ի տասանագին պարաշարեալ՝
Սաղմոս էրգէր ընդելուզեալ։
Ըստ Հոմերա շարայեռեալ
Եւ ճարտասանոտն արարեալ,
Այլեւ սմին համեմատեալ
Վարդապետաց հմտագունեալ։
Արիական հոգով լցեալ՝
Առաքելոցըն հետեւեալ,
Ներսէս *անուն քաջասնեալ՝*
Յետին դարիս ըսգաստացեալ։
Ի Պալունեաց յազգե սերեալ,
Աւշականի *ցեղապետեալ,*
Կաթողիկոս Հայոց եղեալ
Եւ Շնորհ *անուն վերաձայնեալ։*
191ա Մաղթողական բանս խոսեցեալ՝
Ոտից տաղիւք չափաբերեալ.
Քաղցրաճաշակ համեղացեալ՝
Մանկանցն որոց վարժապետեալ։
Երկակի տառ կատարեալ՝
Յազգաց ազանց գովասանեալ.
Յերկոցունց հոգեզարդարեալ,
Կատակ երկուս ի մի շարեալ։
Հնոց եւ ՛ւ ի նորոց եզրաբանեալ՝
Ադենական քառահոսեալ։
Արդ, ի սպառել ժամանակի
Եւ ի վերջին այսմ դարի
Դեպ եւ մ՛եղեւ փոփոխելի
Գալ բնակիլ ի սմին տեղի։
Ի դրան քաւանի,
Աստուածաբնակ այս տաճարի,
Երկնահանգէտ տանս պանծալի,
Ջոր Սանահին *վերաձայնի։*

Տկար ոգւով ի պանդխտի,
Յաւեալ անձամբ ողորմելի
Փարատելոյ ճարակ չլինի
Ու ոչ մխիթար ի սոյն վշտի։
Արդ, զամենայն վիշտս եւ զաղէտս կսկծելիս
Ո՛ կարէ պատմել զերկնահանգէտ սուրբ Ա֊ծոռիս.
Զսպառեալն յիշխանաց եւ ի հոգեկիր արանց,
Թափուր եւ դատարկ ի փարթամ արգասեաց։

191բ Եւ մեք ի նոյն ժամանակի եկեալ բնակեցաք ըն[դ հովան]եաւ Աստուածածնիս *երկու եղբարքս հարազատ՝* Յովաննէս *աբեղա եւ* Ղազար *սոսկանուն վարդապետ՝ եւ այլ միեղէն եղբայրութեամբ։ Եւ այս ոչ ըստ արժանեաց մերոց, այլ թէ ինքս կամեցաւ, զի աւտար եւ հե[ռո՞ւ] էաք յայսմ գաւառէ կոչեցեալ յես/// ին սպասաւոր այս գերահռչակ սուրբ ուխտիս եւ սկսաք շարագրել զերկուս կտակս ի մի տփեակ։ Այլ եւ յուսացաք ի զօրացուցիչն Քրիստոս եւ գրեցաք շնորհիւ Տեառն զսա անջինջ յիշատակ նախնեաց եւ հոգւոյ մերոյ։ Արդ, գրեալ եղեւ սա ի ժամանակս թագաւորութեան* Վրաց Գէորգեա *որդւոյ* Բագրատ *յաղթող եւ հզոր արքայի, զի յաւուրս սորա եղեւ խորին խաղաղութիւն կողմանն* Վրաց, *ձեռամբ* Յովաննէսի *եւ* Յոհաննիսի *սիրանունդ աշակերտի։ Արդ աղաչեմք ձեզ հեզաբար սիրով, զի որք աւգտիք ի սմանէ, յիշեցէք ի գերամաքուր յաղթօղս ձեր գծրողքս եւ զայլ աշխատակից եղբարքս՝ զԿիրակոս եւ զՄաթէոս, եւ զվերոյգրեալքդ եւ զկողկողագին դիմօք ծնաւղիկն մեր, որ է սպասաւոր այս միարա////(շար. թափուած)։*


ԳՐՁԱՓՈՐՁ 140ա,185բ, 186ա Քրիստոս Յիսուս Աստուած...

1538
ԺՈՂՈՎԱԾՈՅ

Անանիա առաքեալ (Երեւան) **ՌՀԴ—1625**

ԳՐԻՉ՝ Եսայի սրկ. (վրդ.)։

ԹԵՐԹ՝ 321. չգրուած՝ 1ա—2ա, 320բ—1բ։ ՊՐԱԿ՝ Ա—ԻԸx12 (Է 14, Թ 11, ԻԱ, ԻԲ 10)։ ՆԻԻԹ՝ թուղթ, լուսագծերով։ ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 15,5x10,7։ ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն։ ԳԻՐ՝ նօտրգիր։ ՏՈՂ՝ 19։ ԿԱՋՄ՝ դրոշմազարդ շագականագոյն կաշի՝ դռնակով, միջուկը՝ տախտակ, աստառը՝ Ա դրոշմազարդ կարմիր, Բ՝ վանդակաւոր կտաւ։



Նմուշ՝ 87ա



Նմուշ՝ Աա

ՄԱՆՐԱՆԿՐՁՈՒԹԻՒՆ —Յիսուս՝ 2բ, Ներսէս Շնորհալի՝ 194բ։ Ճ ա կ ա տ ա գ ա ր դ՝ 3ա, 110ա, 150բ,195ա, 259ա, 288ա։ Լ ո ւ ս ա ն ց ա գ ա ր դ՝ բուսական։ Ջ ա ր դ ա գ ի ր՝ հանգուցագիր, թոչնագիր։ Գ ո յ ն ե ր՝ կարմիր, կապոյտ, կանաչ, դեղին, վարդագոյն։

ՊԱՏԱՌԻԿ—ՊԱՀՊԱՆԱԿ — Թուղթ Պօղոսի առ Հռովմայեցիս։ ԺԴ։ 1(Ա)+1(Բ), ստացուած եզրաճատուած թերթի ընդլայնակի ճատումից։ Մագաղաթ, երկսիւն, ուղղագիծ երկաթագիր։ Կարդալ՝ Աա, Բբ, Բա, Աբ «///Փառս նորա... փրկութեանն որ ի Քրիստոս Յիսուս զոր յառաջն///» (Գ 7—25)։

ՎԻՃԱԿ՝ բաւարար. լուսանցակողի ստորին անկիւնային մասերը թեթեւակի վնասուած։ Կազմի եզրերը՝ մաշուած, Ա փեղկի ստորին անկիւնը՝ այրուած, կապիչներն ու փականները՝ ընկած։ Պատառիկ պահպանակները՝ ցեցակեր։

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Ա. *3ա—258բ* [Ներսիսի Շնորհալւոյ Բանք չափաւ]

Տե՛ս ձեռ. 1540, 3ա—376ա. *§1/3ա—108ա։ 2/110ա—50ա (չիք §գ)։ 3/195ա—240ա։ 4—5/չիք։ 6/240բ—58բ։ 7/187ա—9բ։ 8/179ա—87ա։ 9/150բ—8բ։ 10/158բ—63 ա։ 11/163ա—7ա։ 12/169ա—72բ։ 13/172բ—4բ։ 14/174բ—6բ։ 15/176բ—8ա։ 16/178ա—9ա (§ 15—16 խորագրերը՝ միացեալ)։* 17—19/*չիք։* 20/*191բ—4ա։* 21/*189բ—91բ։* 22/*167ա—9ա։* 23/*չիք։*

Խառն հերթականութեամբ։

Բ. [Այլ չափաբերականք]

1. *ա. 108բ* Զորս են կարգը գիտութեան գիտնականացն—*Ա. Նախ. որ գիտէ, եւ թէպէտ գիտէ՝ զի գիտէ, ասէ չեմ բաւական խաւսելոյ...*

բ. *108բ—9բ* Ոտանաւոր յաղագս վերոյասացեալ բանիցդ [Աւետիքէ Ավգոստինէ]—*Քանզի գիտունն ընդ անգիտին /ի միասին մարդիկք կոչին.../Սայ* Աւետիքն *է* Աւգոստին.../ *Յամի ծնընդեան մերոյ Փրկչին՝ /Որ Յի 2ա (1380) ի թվականին...*

2. ա. *258բ—71ա* Առտաւոյ թուցս ի սոյն կարգ յարմարեալ. Բան բարառնական ոգեալ դիմառնաբար ի դիմաց Վաղարշապատու Սուրբ Կաթուղիկէին. Ողբ աւաղականք եւ ձայն աշխարականք լեալ անհուն հեծեծանաւք վասն աւերման աշխարհիս Հայոց եւ բնաւին սպառելոյ հայրապետութեանն եւ թագաւորութեանն համագունդ իշխանութեան, շարեալ չափաբան բերմամբ հոմերական արհեստիւ ի

Ստեփաննոսէ Սիւնեաց այցելուէ, ի խնդրոյ շնորհազարդ վարդապետի Խաչատրոյ Կեչառեցի– *Զայն բարձր գուժ եւ ահագին, /Նման աւգոցտ որոտացին…*

բ. *271ա–2բ* Յիշատակ բանի ըստ անուան ոգողին («Ստեփաննոս»)–*Սիւնդ լուսոյ ի սկզբանէ, /Խորան փառաց կանգնեալ յերկրէ…/Այժմ եւ յաւէտ եւ անվախճան: Զտէր* Ստափաննոս *արարող բանիս յիշեցէք ի Տէր Յիսուս. ամէն:*

3. *272բ–80բ* Կարապետի եռամեծի վարդապետի ասացեալ խրատս պիտանի մանկանց եկեղեցոյ ոտանաւոր տաղիւ («Ա—Ք Կարապետէ»)– *Ամենայնի ըսկիզբն ես եմ, /Դուք լուարուք, զոր ինչ ասեմ…*

4. *280բ–4բ* Խրատ մանկանց տղայոց յուսումնասիրաց, ասացեալ Առաքելէ վարդապետէ ոտանաւոր տաղիւ չափ այբուբենից («Ա—Ք յԱռաքելէ»)–*Այբն՝ Աստուծոյ է աւրինակ, /Ուսուցանէ զքեզ համարձակ…*

5. *284բ–6բ* Տաղ գեղեցիկ եւ անուշ– *Կայթեա, սուրբ Կաթուղիկէ եկեղեցի եւ պարէ…*

6. *286բ–7ա* Տաղ անուշ տապանակին–*Մայր հաւատո սուրբ հարսնարան / Եւ առագաստ գերադրական…*

7. *287աբ* Տաղ ի տէր Առաքելէ Սիւնեաց ասացեալ («Տէր Առ»)–*Տաճար լուսոյ, տուն արքային, /Տեղի զենման անմահ Գառին…*

8. *288ա–314ա* Գովեստ ներբողական պատմագրական բանս յաղագս վարուց մեծի հայրապետին տեառն Ներսէսի Կլայեցւոյ Հայոց կաթողիկոսի եւ տիեզերալոյս վարդապետի, ասացեալ տեառն Ներսէսի Լամբրունոյ եպիսկոպոսի Տարսոնի Կիլիկեցոյ եւ սորին հարազատի. որդոյ դստեր եղբօր–*Շարժել ստիպէ հարկ տէրունի /Ըզյարդումն իմըս բանի…*

9. *314բ–6ա* …երգ Աստուածածնին տօնին պաշտաման («Ա—Ք»)–*[Աստուած]ածին մայր Քրիստոսի, /Իմ յոյսըն դու աւուր մեծի…/Աստուածածին, բարեխաւսեայ:*

Գ. [Յաւելագրութիւնք ժէ դ.]

1. *319ա* Բառէ –*Աղտոր՝ որ է թաթրին կամ սումախ… քիշնիշ՞ Ճամանին հունդն է:*

2. *319բ* Եւթն խորհուրդ եկեղեցոյ–*Մկրտութիւն…:* Եւթն խորհուրդ առաքինութեան–*Հաւատ…:* Եւթն մահուչափ մեղքն–*Հպարտութիւն…* Եւթն զգայարանքն – *Աչքն…:* Տասն պատիժն եգիպտոսի–*Ջուրն արիւն փոխի…:* Տասն բան օրինացն–*Առաջինն. Մի ունիցիս Աստուածս օտարս…:* *320բ* Զորս են առաքինութիւնք– *Խոհեմութիւն…:* Երկոտասան անդամք մարդոյ–*Գլուխն…:* Երկոտասանք դրունք մարդոյ– *Բ աչք…:* Երեք են մասունք հոգւոյ– *Բան…: Սոփոնիա՝ տեսող…: Սագայէլ՝ աջ Աստուծոյ…*

3. *1ա* Վասն էսմի–*Առ ըղտու շեռն եւ խմէ: Աստուծով բժշկի:*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

1ա Սա յիշատակ անջինջ լիցի՝
Տէր Եսայեայ *վարդապետի:*
105ա Գրեցաւ թվին ՌՀԴ (1625) ամին:
150ա Գրեցաւ ձեռամբ Եսայեայ *վարդապետի, ի թվին ՌՀԴ (1625) ամին (նման՝ 194ա):*
240ա Գրեցաւ ձեռամբ Եսայեայ *վարդապետի՝*
Աշակերտի տեառն Մովսէս *կաթողիկոսի՝*
Հանուրց Հայաստանեայց երկրորդ Լուսաւորչի,
Ի թվահաշուութեան Արամեանս ազգի՝
ՌՀ քառ աւելի (1625):

*287ա Զ*Եսաի *տառապեալս յիշեսջիք աղաչեմ, նայեւ զտէր Բ. Զ. Գ. Մ. Զ. Մ. («Մովսէս») րաբունին իմ յիշեցէք ի Քրիստոս. ամէն:*

316բ Փա՛ռք… Որ ետ կարողութիւն տկար եւ մեղսամակարթ եւ փծուն գրչի՝ Յեսայեայ *սարկաւագի եւ լոկ անուամբ կրաւնաւորի հասանել ի յաւարտ եւ ի զրաւ սուրբ մատենիս որ կոչի Յիսուս Որդի: Արդ, կայ ի հաւաքեալ ի սմայ զՅիսուս Որդին բոանդակ իւր դաւանութեամբն եւ ոտանաւորաւքն, եւ ազգացեղութիւնն յԱբեթեանս տոհմի, թէ որպիսի եւ կամ ոյք էին թագաւորք եւ իշխանք Հայկազեան զարմի, ի կռապաշտութեանն եւ կամ ի հաւատալն յԱստուածն ամենայնի բարեպաշտ եւ սրբասէր թագաւորք եւ իշխանք եւ հայրապետք ի ցեղէն Լուսաւորչին, զոր արարեալ է տեառն* Ներսէսի *Հայ// (317ա)ոց կաթողիկոսք ոտանաւոր չափեալ, զի մի ծուլասցին ընթերցաւղք, այլեւ Գովասանութիւն Սուրբ Խաչին որ ի* Կոստանդինուպաւլիս՝ Դավիթ Անյաղթ *փիլիսոփայն ասացեալ է ի դէմ կենաց փայտին, զոր ոտն հանեալ ի նոյն* Ներսիսէ Կլայեցոյ, *այլեւ Գովասանութիւն ասացեալ* Ներսէսի Լամբրաւնացոյ *արհեպիսկոպոսի Վասն վարուց եւ քաղաքավարութեան եւ մահուանն սրբոյն* Ներսէսի Կլայեցոյ, *զի եւ եղբօր դստեր որդի էր* Կլայեցոնն, *այլեւ Ողբանք* Էջմիածնա Սուրբ Կաթուղիկէին *ի Վաղարշապատ քաղաքի, ասացեալ տէր* Ստեփաննոս Սիւնեաց *դիտողի եւ մետրապալիտ ամենայն Հայոց, եւ այլ բազում ոտանաւորք ասացեալ այլ վարդապետաց, զոր բազում փափաքանաւք եւ աշխատութեամբ ժողովեալ հաւաքեցի ի մի տեղ՝ // (317բ) յիշատակ ինձ եւ ծնաւղաց իմոց:*

Արդ, գրեցաւ սուրբ տառս ի դառն եւ նեղ ժամանակի, յորում փայլէ վարդապետս մեր տէր

Մովսէս *քաջ րաբունին, ի աշխարհին* Սիսական, *յերկըրէն որ կոչի* Աճանան, *ի գեղջէն* Խոտանանու *եւ յաթոռոյն* Ստաթէի, *որ այժմ կոչի* Տաթեւ, *որ լուսաւորէ զազգս Հայկազեան: Եւ ժողովեալ կրօնաւորական դասս եւ նորոգեաց զվանորայս եւ յանպատս կրկին հաստատեալ պայծառացոյց: Եւ ապա բազում աշակերտաւք գնացեալ* Այրարատեանն *գաւառ, որ եւ անդ տիրեալ էր իշխան ոմն ազգաւ պարսիկ* Ամիրզօնայ *անուն կոչեցեալ քաջ եւ արի, հմուտ ի պատերազմ, մինչ զի յահէ նորայ սարսէին ազգն իսմաէլական, որ չկայր նման նմայ: // (318ա) Թեպէտ կրօնիւք այլազգի էր, սակայն բարեպաշտ եւ երկիւղած էր եւ Քրիստոնեասէր ասէր: Մինչ զի հանդիպել սրբոյս անդ, յոյժ փափաճանաւք ընկալեալ եւ բազում սիրելիութիւնս ցուցեալ եւ տուեալ տեղի մի, որ կոչի* Անանիայ առաքեալ, *գեղեցիկ եւ վայելուչ ի մէջ այգաստանեաց: Եւ գնացեալ անդ վարդապետս, նորոգեաց, եւ ժողովեալ բազում աշակերտս եւ կրօնաւորս եւ միայնակեացս, եւ կարգեաց դպրոցս, այլեւ բազում կարգս եւ կրաւնս հաստատեաց: Յորում ժամանակի էր թագաւորն* Պարսից Սպասն *կոչեցեալ, որ տիրեալ էր յԱրեւելից կողմանէ Հրմիզն կոչեցեալ կղզի, անդի մինչեւ ի* Բաբելոն *եւ Հայաստան եւ* Վրացտունն *մինչեւ ի ծովն* Կազբից: *Եւ էր թվականն Հայոց ՌՀԴ (1625). բազում նեղութիւն եղեւ աշխարհին* Վրաց *կո//(318բ)տորմամբ սրոյ եւ գերութեամբ: Մկարէ պատմել զաղէտս նոցա: Ժամանեսցուք յաւարտ բանիս: Գրեցաւ գիրքս ձեռամբ յԵսայեայ սարկաւագի, յերկիրն* Աւարատեան, *ի գաւառն* Կոտայ, *ի մայրաքաղաքն* Երեւան, *ի դուռն* Սուրբ Ովխտին Անանիայ *կոչեցեալ, առ ոտս քաջ րաբունոյն* Մովսէսի, *որ եւ ծառայ եւ տրուպ աշակերտաց իսկ եմ, աշխարհին* Սիսական, *յերկրէն* Գուռհամու, *գեղջէն որ կոչի* Կարճաւան: *Արդ, աղաչեմ զամենեսինդ, որք հանդիպիք սմայ կարդալով կամ օրինակելով, յիշեցէք ի մաքրափայլ աղօթս ձեր յԵսայիաս հանդերձ ծնօղօքս իմ, եւս առաւել զրաբունին իմ զտէր* Մովսէս, *եւ դուք յիշեալք լիջիք առաջի աւետին Քրիստոսի հանդերձ ննջեցելովք ձերովք. ամէն: Թողութիւն արարէք, եղբարք, սխալութեան գրոյս, խիստ շատ աւրինակ բերի մէկ տեղ 1 ապայ գրեցի. կար որ կարգին է, կայ որ լուսացն է:*

ԿՆՔԱԴՐՈՇՄ 3բ Գիրքս Սուրբ Էջմիածնա է:


ԳՐՉԱՓՈՐՉ Աբ : 1բ (փակագիր) Յովճաննէս *աբեղայ: Պատառիկ–պահպանակ Բա Այսօր անճառ... աբգ.... եւ օֆ:*

1539
ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ
ԲԱՆՔ ՉԱՓԱՒ

Մարզուան, Սբ. Աստուածածին Ռճե—1656

ԳՐԻՉ՝ Միխայէլ երէց: ՍՏԱՑՈՂ՝ Թորոս:

ԹԵՐԹ՝ 383. չգրուած՝ 235ա—7բ: ՊՐԱԿ՝ Ա—ԼԲx12 (Ա 9)+1x2: ՆԻՒԹ՝ թուղթ, լուսագծերով: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 15,2x10,3: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն: ԳԻՐ՝ բոլորգիր: ՏՈՂ՝ 16: ԿԱՋՄ՝ սեւ կաշի, միջուկը՝ տախտակ, աստառը կապոյտ կտաւ (Ա փեղկը պատռուած թղթով, Բ փեղկը՝ մագաղաթով):



Նմուշ՝ 10ա

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ—Ճ ա կ ա զ ա ր դ՝ 126բ, 176ա, 303ա: Լ ո ւ ս ա ն ց ա զ ա ր դ՝ բուսական, թռչնային: Զ ա ր դ ա գ ի ր՝ թռչնագիր, հաճգուցագիր: Գ ո յ ն ե ր՝ կարմիր, կապոյտ:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. սկզբից եւ վերջից պակասաւոր: Կազմի կաշին՝ ճեռծուած: ԺԸդ. նորոգուած եւ վերակազմուած:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Ա. *1ա–379բ* [Ներսիսի Շնորհալւոյ Բանք չափաւ]

Տե՛ս ձեռ. 1540, 3ա—376ա. §1/*1ա–126 ա:* 2/*126բ–75բ(չիք §գ):* 3/*176ա–228ա:* 4/*228ա–34բ*5/*238ա–302բ:* 6/*303ա–25բ:* 7/*326ա–9ա:* 8/*329ա–38բ (338բ–9ա տե՛ս Բ, §1):* 9/*339ա–48բ:* 10/*348բ–53բ:* 11/*354ա–9ա:* 12/*359ա–63ա:* 13/*363ա–5ա:* 14/*365ա–7բ:* 15/*367բ–9բ:* 16/*369բ–70ա:* 17/*370աբ:* 18/*370բ–1ա:* 19/*371աբ:* 19/*371աբ:* 20/*371բ–4ա:* 21/*374ա–6բ:* 22/*376բ–9ա:* 23/*379աբ:*

Բ. [Բանք զանազանք]

1. *338բ–9ա* Գովասանութիւն Ներսէսի – *Սուրբ հայրապետ, տէր րաբունի, համանըման / Հաւրըն Մեծի* Լուսաւորչին Պարթեւական...

2. *379բ–81բ* Բանիւ խրատականիւ յԱռաքել վարդապետի Բաղիշեցոյ Յաղագս մանկան («Ա—Զ») — *Այբն՝ Աստուածոյ է աւրինակ,/ Ուսուցանէ զքեզ համարձակ.../ Ուսիր զերկիւղըն տիրական /// (շար. թափուած)։*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

328ա Ի վ գաղափարողք, յիշեցէք զգծող սորա՝ զՄիխայէլ *երեցս, եւ դուք յիշողքդ յիշեալ լիջիք ի Քրիստոսէ Աստուծոյն մերոյ։*

382ա [Փ]առք... [Շ]նորհիւ եւ ողորմութեամբ, կարողութեամբ եւ առաջնորդութեամբ ամենազաւրին Աստուծոյ յանգ ելեալ աւարտեցաւ աստուածաշունչ եւ հոգիաբուղխ երգս՝ ասացեալ է հոգելից եւ լուսատուն Հայոց հայրապետին մերոյ սրբոյն Ներսէսի Կլայեցւոյ, *սա որ կոչի Յիսուս Որդի, լաւ ընտիր աւրինակէ, ճոխ եւ յաճախ ըստ կարգի գըրեալ կան։ Վասն որոյ եւ ես անպիտան ծառայս՝* Միխայէլ *երէցս յաւժա//(382բ)րեցայ եւ գրեցի ի խնդրոյ որդեակին իմոյ՝ նորահաս մանկանն* Թորոսի, *այլեւ ընդերցասէր մանկանց Սիովնի։ Ով հանդիպողք այս սուրբ տառիս եւ ընդերցողք այս սուրբ կտակիս, հայրք եւ եղբայրք եւ որդիք, յիշեցէք զիս՝ զմեղաւք զառածեալս, զվերոյգրեալ* Միխայէլ *երէցս՝ հանդերձ ծընաւղիւք, զհայրն իմ՝* զԱռաքելն, *եւ զմայրն իմ՝* զնազլուն, *եւ քւերքն իմ՝* զխասխաթունն *եւ* զՏիրուհին *եւ* զՍուլթանն, *եւ* զՄարիամն, *եւ զաւակաց իմոց՝ ուստերաց եւ դստերաց, որ հանգուցեալ են առ Քրիստոս՝* Առաք*//(383ա)*ելն, Գէորգն, *եւ դստերքն իմ՝* զնազլուն, Հեղինէն *եւ միւս* Հեղինէն, Մարիամն, Կատարինէն, *որ եւ փոխեալ են աստի կենացս եւ ժամենեալ են յերկիրն կենդանեաց, եւ որք կան աշխարհի եւ էն ի մարմնի՝* Թորոսն *եւ* Սարգիսն *եւ* Աննայն *յիշեցէք լի սրտիւ, եւ Աստուած զձեզ յիշէ իւր արքայութիւն, եւ դուք յիշողքդ յիշեալ լիջիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ։*

Գրեցաւ թվին Հայոց ՌՃե (1656), ի քաղաքն Մարզուան, *ընդ հովանեաւ* Սուրբ Աստուածածնի *տաճարիս, ի հայրապետութեանն տէր* Յակոբին, *եւ թագաւորութեանն սուլ//(383բ)*տան Մէհէմմատ *խանին։ Քրիստոս Աստուած մեր որ առատն է ի տուրըս բարեաց, գծողի սորա եւ երգեցողի առհասարակ ողորմեսցի ի միւսանգամ գալստեանն. ամէն։ Հայր մեր որ յե[րկինս]։*

1540
ԺՈՂՈՎԱԾՈՅ

Ամասիա ՌՋԲ — 1633

ԳՐԻՉ՝ Միխայէլ դպիր։ ՍՏԱՅՈՂ՝ Զաքարիա դպիր։

ԹԵՐԹ՝ 387. չգրուած՝ 1աբ, 2բ, 125բ, 175բ, 381աբ։ ՊՐԱԿ՝ 1x2 + Ա—ԼԳ (Ա. 7, ԼԳ 6)։ ՆԻՒԹ՝ թուղթ։ ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 15x10,5։ ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն։ ԳԻՐ՝ բոլորգիր։ ՏՈՂ՝ 16։ ԿԱՋՄ՝ շագանակագոյն կաշի՝ դոնակով, միջուկը՝ տախտակ, աստառը՝ կարմիր կտաւ։

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ — Ճ ա կ ա տ ա զ ա ր դ՝ 126ա, 176ա, 300բ։ Լ ո ւ ս ա ն ց ա զ ա ր դ՝ բուսական։ Զ ա ր դ ա գ ի ր՝ հանգուցագիր, Գ ո յ ն ե ր՝ կարմիր, կապոյտ։

ՊԱՏԱՒԻԿ—ՊԱՀՊԱՆԱԿ — Աւետարան Ղուկասու։ Թ—ԺԴ դդ.։ 2 (Ա—Բ) + 2 (Գ—Դ), ստացուած 3/4—ական թերթից։ Մագաղաթ, երկսիւն, բոլորագիծ երկաթագիր։ Կարդալ՝ Դա, Գբ, Ա*ա*, Բբ, Գա, Ա*բ*, Բա, Դբ «///[Սի]մովն... եւ իբրեւ կատարե[ցին]///» (Բ 25—39)։

ՎԻՃԱԿ՝ բաւարար. սկզբից թերի։ Կազմի կաշին՝ ճերմուած, եզրերը՝ մաշուած, թիկունքը՝ վերից վար ճեղքուած, դոնակը՝ վնասուած, կապիչներն ու փականները՝ ընկած։

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Ա. *3ա–376ա* [Ներսիսի Շնորհալւոյ Բանիւ չափաւ]

1. ա. *3ա–120բ* [Ողբերգութիւն վիպասանական ի տառից սրբոց — *Յիսուս, Որդի Հօր Միածին / եւ ճառագայթ կերպարանին... / Փայտին մահու մերձ զիս ածին,] / Ձեռն իմ ձգեալ յուղէշ ծառին...*

բ. *120բ–5ա* Յիշատակարան է այս — *Ի վեց հարիւր Հայոց թուականի / եւ առաջին սկըսեալ նոր ամ...*

–97ա (Գրչից) «Հրճուիմ Քրիստոսին ձայնն ասայ»։ 97բ «Աստուածածին անպարագիծ ձայնն ասայ»։

2. ա. *126ա–68բ* [Ն]երսէսի Հայոց կաթողիկոսի ասացեալ բան Հաւատոյ դաւանութեան — *Խոստովանիմ Աստուած ըզՀայր, / Անձին անեղ եւ անըսկզբան...*

բ. *168բ–73ա* Յիշատակարան նորին Ներս[էսի] — *Վասն Աստուծոյ խաւսել զայս բան / Ինձ ոչ էր անկ եւ ոչ նըման...*

գ. *173ա–5ա* Յիշատակարան երգողի երգոյս —

[Ի] հինկ հարիւրս թըւականի,
Ինընտասին նոյն միակի
Շարադրեցաւ բանըս տաղի
Եւ եղանակս երաժըշտի։

Ի դառնագոյն ժամանակի՝
Ջար եւ գըժնեա եւ անբարի,
Յորում Մասուտն *յԻկոնացի,*
173բ Մելիք *սուլթան հագարացի։*
Վասըն մեղաց մեր որ լինի,
Ի բարկութեանց Տեառըն շարժի,
Որպէս երբեմն Իսրայելի,
Արքան հրգաւր Բաբելոնի։
Յառաջագոյն անցեալն ամի
Առեալ գքաղաքըն Գեռմանի,
Բազում աւանս արար գերի,
Անթիւ եհեղ արիւն յերկրի։
Իսկ ի միուսում հասեալ տարի
Կրկին եհաս յայնմ աշխարհի,
Էառ զամուրըն Պէհեսնի,
Տալով վատացն առանց մարտի։
Եւ ըզՔեսուն քաղաք բարի,
Եւ զըՒապան վարժ ըստ կարգի,
Ի Թլպաշար *հասեալ լինի,//*
174ա Եւ բնակեալ շուրջանակի։
Յոր մարտ եդեալ պատերազմի,
Իբր ամսաւեայ ժամանակի,
Եւ ոչ յաղթեալ քաջանցն ի նմայ։
Դարձեալ ունայն յետ նահանջի։
Մեք ի դղեկէն, որ Ծով կոչի,
Որ սեփհական մեր էր տեղի,
Վասն ասացեալըդ պատճառի,
Անցաք ի յայս կոյս Տորոսի։
Բնակեալք հանդէպ ամրականի,
Որ այլասեռ Քար անուանի,
Ի կառուցեալ տաղաւարի,
Իբր ի յայգոջ մըրգայպահի։
Որպէս խորանն Աբրահամի,
Որ առ կաղնոջն Մամբրէի,
Եւ կամ որդոցն Իսրայէլի
Ի յանապատըն Սինայի։
174բ Առ բարեպաշտ մեծ իշխանի,
Որոյ Թորոս *վերայձայնի,*
Որդի յաղթողըն Լեւոնի
Եւ Կոստանդեա *եւ* Ռուբենի։
Տաղս երգեցաք քաղցր ձայնիւ՝
Դաշնակելով յիմաստ բանի,
Վերափոխման Աստուածածնի
Եւ կենսունակ Սրբոյ խաչի։
Որոց եւ հուպ եղաք տաւնի,
Ընծա եդաք զայս առաջի,
Արթուն հոգոց խրախճանալի
Որդոց վերինըն Սիովնի։
Յորոց յիշման զիս արժանի
Մաղթեմ առնել յայն նըւագի՝
Ներսէս *եղբայր հայրապետի*
Հայոց Մեծաց Գրիգորիսի։//
175ա Այն որ զաւղեալ յայսմ երկիւղի,
Ցեփրատականըն նահանգի,
Նըստի ի Կլայն Հռոմականի
Հանդերձ սրբովքն որովք պահի։
ԵՒս որս մաղթանըք փարելի,
Ի մէնջ յաւէժ մատուցանի,
Փըրկել յայժմոյս հասեալ չարի
Եւ յամենայն ժամանակի։

Տպ. չունի այս յիշատակարանը։

3. ա. *176ա–8ա* Շարագրութիւն հռոմեական վիպասանութեամբ սակս Հայկազեան սեռի եւ Աւշակունեացն զարմի, ի սկզբանցն մինչեւ ի վաղճան, ասացեալ Ներսէսի եղբաւր կաթուղիկոսի Հայոց տեառն Գրիգորիսի, յիւրականոն նախնիս, ի համբակութեանն ելով տիս – *Պարտական է հաւր որդի / Հատուցանել վարձ ծնաւղի…*

բ. *178ա–228ա* Վիպասանութիւն նախնի ըստ Հոմերի ըսկըսեալ ի վերուստ – *Աստանաւր սկըզբնաւորեալ / Բանիս ըզբանն ըսկիզբն եղեալ…*

4. ա. *228ա–34բ* Տեառն Ներսէսի ասացեալ Մաղթանք առ հրեշտակապետն Գաբրիէլ եւ Միխայէլ եւ ամենայն զաւս երկնաւորացն. հարիւր տուն ըստ թվոյ ճ (100) ոչխարին – *Արդ, պաղատիմք առ հոգաղէննդ, / Մեք որ տկարքս եւ հողեղէնքս…*

բ. *234բ* [Յիշատակարան երգողիս] – *Ջանծին բարեաց ծընաւղ բանիս, / Մի մոռանայք, տաւնողք վեհիցս…*

5. *235ա–300ա* Երգ տեառն Ներսէսի սըրբազան կաթողիկոսի եղբաւր սըրբոյն Գրիգորիսի Հայոց մեծի հայրապետի։ Բան բարառնական, տաղիւ չափեալ հռոմեական, խաւսել բանիւ ողբերգական վասն եղեսեայ մեծի առման։ Ի թուականիս հինգ հարիւրի եւ իննըսուն ընդ երրեկի, իսան ՚ւ երեք դեկտեմբերի, յերորդ ժամու աւր շաբաթի – *Ողբացէք եկեղեցիք, հարսունք վերին առագաստի, / Քոյրք եւ եղբայրք եւ սիրելիք, որ ընդհանուր կողմ աշխարհի…*

6. *300բ–22բ* Ներբողեանի կենսատու խաչին, առ ի սուրբ հաւրէն մերմէ Դաւթի Անյաղթ փիլիսոփայի ասացեալ, զոր մեծ հաճանայապետն Աստուծոյ եւ հովիւնըն հաջ [տէր] Ներսէս Տարսոնեան շարայ[արեաց] ոտանաւոր չափ[ով] – *Բարձրացուցէք զՏէր Աստուած մեր միաբան, / Մարգարէն յառաջ ձայնեալ՝ տայ քեզ հրաման…*

7. *323ա–5բ* Նորին Այլաչափ տաղ ի խնդրոյ անուան նախագից տաղիս տանց («Միխիթար բժիշկ

ընկալ ի Ներսէսէ զայն բան») — *Միշտ էիդ անեղ բնութիւն բնաւորեցան, / Անեղիդ անմահութիւն հետեւեցան…*

8. *326ա–35ա* Տեառն Ներսէսի Յաղագս երկնի եւ զարդուց նորա, բարառնայբար ի [դի]մաց նո[րին], ի չափ երկոյտասանիցն պարզեալ ոտից, ի խնդրոյ առն բժշկապետի եւ աստղագիտի Մխ[իթարայ] — *Իմ եղական գոլով բնութեամբ եւ զկզբնական, / Յանեղէն ձրգեալ կամար անզուգական…*

9. *336ա–45ա* Նորին Բան ներտաղական, ի դիմաց մերոյին տառից յիւրաքանչիւրսն ֆառից («Ա—Ք, Ներսէս») — *Այբն՝ Աստուծոյ զքեզ մերձակա / Խրատէ լինել՝ թէ հաւատայ…*

10. *345բ–50բ* [Բան հաւատոյ վասն անեղին եւ եղելոց… «Ա—Ք, Ներսեսի է զա»] — *Այբն՝ անըսկիզբն ասէ զԱստուած, / Անեղ բնութիւն՝ ոչ յարարած…*

11. *350բ–5բ* Տեառն Ներսէսի Խրատ ուսումնականաց մանկանց, ի դիմաց այբեւբենից ոտանաւոր տաղիւ չափոյ («Ա—Ք, Ներսեսի ե») — *Այբն՝ առաջին ըզքեզ տղայ / Հանէ իմաստըն գերակա…*

12. *355բ–9բ* Թուխթ մխիթարական տեառն Ներսէսի հայոց կաթողիկոսի առ ոմն իշխան առեւելեան՝ վասն որդւոյ իւրոյ տարաժամ մեռելոյ («Ա—Ք, Ներսէսի ե կաթողիկոսի Հայոց») — *Անտես է յոյսն աստուածային / Լստ առաքելոյ անսուտ բանին…*

13. *359բ–61բ* Տեառն Ներսիսի Յիշատակարան առակացն Սողովմոնի, զոր իւր ձեռվ ձեռաւն գըրեաց («Ա—Ք») — *Աստուածեղէն հոգոյն ի սմա, / Խաղաղութեան անուն արքայ…*

14. *361բ–4ա* Անդրադարձութիւն տառից յիշատակի («Ք—Ա») — *Քաղցրագունիս այս բաղձանաւք / Ընդեալ հոգիս մեռեալ մեղաւ[ք]…*

15. *364ա–6ա* Նորին Ի Սողովմոն առիայն («Սողոմոն») — *Սայ մարգարէ աստուածաբան / Եւ իմաստուն յոյժ խոհական…*

16. *366աբ* Նորին ի ժողովող անուն («Ներսէսի բանս է») — *Նմանաբար խորհուրդ խորին / Յայտնէ եւ միւս անուն նորին…*

17. *366բ–7ա* Առակ Սողովմոնի (= Յիշատակարան Որդի իմաստուն գլխոյն. «Ներսէս») — *Նորոգ ծնունդ որ յերկրի գաս/ Եւ յերկարեալ կենաւք մընաս…*

18. *367աբ* Երգ Երգոցին («Ներսէսի է») — *Նորոգելոյս ի քէն [Յիսուս] / Եւ ի մեղաց խաւարեալոյս…*

19. *367բ–8ա* Որդի իմաստուն առնէ ըզհայր գլխոյ (Յիշատակարան փառ Աստուծոյ գլխոյն. «Բան Ներսէսի») — *Բանիդ ընդ Հաւր էականի / Եւ ճըշմարիդ Սողովմոնի…*

20. *368ա–70բ* Նորին Ներսէսի ոգեալ Յաղագս հսկման գիշերային («Ա—Ք») — *Առաւաւտ լուսոյ, արեգակն արդար, առ իս լոյս ծագեայ…*

21. *370բ–3ա* Նորին Մաղթանք հսկման («Ա—Ք») — *Աշխարհ ամենայն առ իս նայեցեալ, ախտակից լերուք…*

22. *373ա–5ա* Նորին Ներսէսի բան մաղթանաց («Ա—Ք») — *Աստուած անեղ, անհասական, / Հայր գթութեանց, ինձ ողորմեայ…*

23. *375ա–6ա* Տեառն Ներսէսի Աշխարհ ամենայնին եւ Առաւաւտ լուսոյին («Ներսիսի է») — *Նորոգաւղ հնութեան մարգկան, / Զիս նորոգեայ ի կեանս անմահ…*

Բ. [Այլ բնագիրք]

1. *335բ–6ա* Գովասանութիւն Ներսէսի — *Սուրբ հայրապետ տէր բարունի, համանըմանի / Հաւրըն մեծի Լուսաւորչին պարթեւական…*

2. *376ա–80բ* Բանք խրատականք յԱռաքել վարդապետ Բաղիշեցոյ Յաղագս մանկան տաղ («Ա—Ք, Առաքել») — *Այբն Աստուծոյ է աւրինակ, /Ուսուցանէ զքեզ համարձակ…/ Է՞ին լուսոյ անճառելի։*

Գ. [Յաւելագրութիւնք ԺԸ դ.]

1. *384բ* [Ոտանաւոր] — *Ասի՝ պինայիս էք ամէն, / Նատանայտաշ՝ դռան ի դէմ… (6 տող)։*

2. *385ա* [Տաղ դպիր Պաղտասարի. («Քվիստոս…), ձեռ. 6998, 54ա] — *Քեզ, ո՛վ փեսայդ եկեղեցոյ, / Երգեմք հոգով ալէլո[ւ]իայ…*

3. *385բ* Ոտանաւոր ի վերայ ԲԺ—ն յառաքելոց — *Յամպոց երկնից ցօղք անձրեւաց, / Պողաբերիչք մեր պարտիզաց… / Ի Յակոբ պատրիարքէ Կոստանուպոլսեցոյ ի վերայ Ա ճառին առաքելոց։*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

228ա Ի վ գաղափարողք, յիշեցէք ըզձեր ծառայն Միքայել *գպիրս՝ գծող սորայ։*

382ա [Փ]առք… [Շ]նորհիւ եւ ողորմութեամբ, կարողութեամբ եւ առաջնորդութեամբ ամենազաւրին Աստուծոյ յանգ ելեալ աւարտեցաւ աստուածաշունչ եւ հոգիաբուղխ երգս, ասացեալ է հոգէլից լուսատուն Հայոց հայրապետին մերոյ Ներսէսի Կլայեցոյ, *սա որ կոչի Յիսուս Որդի, լաւ եւ ընտիր աւրինակէ, ճոխ եւ յաճախ ըստ կարգի գըրեալ կան։ Արդ, ցանկացող եղեալ յայսմ հոգելից մատենիս եւ աստուածաշունչ տառիս, կորովամիտ եւ հանճարեղ այր այս՝* Զաքարիայ *գպիրն ի միտ ածեալ զասաց//(382)եալն ի մարգարէէն, թէ. երանի որ ուննիցի զաւակ ի Սիովն եւ*

ՊԱՏԱՌԻԿ—ՊԱՀՊԱՆԱԿ — 1. Յովհան Ոսկէբերանի Մեկնութիւն Մատթէի։ Ժ—ԺԱ դդ.։ 1 (1) + 1 (340), ստացուած թերթի վերին կէսի ընդերկայնակի ճատումից։ Մագաղաթ, նախապէս երկսիւն, միասիւն, մանր ուղղագիծ երկաթագիր։ Կարդալ՝ 1ա «///տեսանես զի ամենայն ինչ վասն առն եղեւ...», 1բ «այդ եւ անհաս մեծաւ խորհրդիւ ներգործեալ ըստ ամենայն նմանութեան...», 340բ «զաչ ձեռն յաւելուցու, զի ուսանիցիս եթե ոչ վասն անդամոց ինչ են բանք...», 340ա «ձգեաց զնետսն, այդ դու անձամբ յանձն առեր///»։

2. Գրիգորի Նարեկացւոյ Մատեան ողբերգութեան (բան ԼԱ—ԼԲ)։ Ժ դ.։ 4 (2—5)։ Թուղթ, միասիւն, արեւելեան բոլորգիր։ Կարդալ՝ 2ա «///[տար]ածանելն բան յշտեմարանելն... սահման փրկութեան///»։ Այս չորս թերթերը գրուած են նոյն Մարտիրոս գրչի ձեռով մի այլ մատեանից։

ՎԻՃԱԿ՝ բաւարար. խումացած, գրադաշտը գունափոխուած, տեղ—տեղ ցեցակեր (յատկապէս 316—340), փորիկ պատառուածքներ, զանազան բծեր, լուսանցային մասերը

թուլացած եւ բամբակակալած: Կազմի Ա փեղկի կաշին ցեցակեր, եզրերը՝ մաշուած, դռնակն ու կապիչներն ընկած, աստառը ցեցակեր: Ժե դ. նորոգուած Թադէոսի ձեռով, ամուանաթերթը (6) կարկատուած գծուած ճակատազարդ, լուսանցազարդ եւ գրուած սկզբնատողը՝ «Զայն հառաչանց հեծու»:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Ա. *6ա–336բ* Դրումբ յոմնաթախանձ բանից աւգտակարաց... Ասացեալ Մատեան ողբերգութեան Գրիգորի Նարեկաց վարդապետի

Տե՛ս ձեռ. 1568, 5բ—341բ. § ա/*6բ–8բ*: բ/*8բ–13ա*: գ/*13ա–8բ (19աբ տե՛ս Բ § 1)*: դ/*20ա–1բ*: ե/*21բ–4բ*: զ/*24բ–6բ*: է/*26բ–8բ*: ը/*28բ–30ա*: թ/*325բ–7բ (§ ղգ–ից յետոյ)*: ժ/*327բ–9ա*: ժա/*329ա–32բ*: ժբ/*30ա–2ա*: ժգ/*332բ–4ա*: ժդ/*334ա–6բ*: ժե/*32ա–4բ*: ժզ/*34բ–6ա*: ժէ/*36ա–8ա*: ժը/*38ա–41բ*: ժթ/*41բ–7բ*: ի/*չիք*: իա/*47բ–9բ*: իբ/*49բ–51բ*: իգ/*51բ–4ա*: իդ/*54ա–6բ*: իե/*56բ–61ա*: իզ/*60ա–2բ*: իէ/*62բ–6ա*: իը/*66ա–70բ*: իթ/*70բ–4ա*: լ/*74ա–7բ*: լա/*77բ–80բ*: լբ/*80բ–4ա*: լգ/*84ա–9բ*: լդ/*89բ–97ա*: լե/*97ա–100ա*: լզ/*100ա–3ա*: լէ/*չիք*: լը/*103ա–5ա*: լթ/*105ա–7ա*: խ/*107ա–8բ*: խա/*109բ–10բ (§ խբ–ից յետոյ)*: խբ/*108բ–9բ (109բ–10բ տե՛ս խա)*: խգ/*110բ–1բ*: խդ/*111բ–3բ*: խե/*113բ–7բ*: խզ/*117բ–20ա*: խէ/*120ա–1բ*: խը/*121բ–30ա*: խթ/*130ա–3բ*: ծ/*134ա–8ա*: ծա/*138ա–43ա*: ծբ/*143ա–5բ*: ծգ/*145բ–50բ*: ծդ/*150բ–3բ*: ծե/*153բ–8ա*: ծզ/*158ա–61ա*: ծէ/*161ա–4ա*: ծը/*164ա–6բ*: ծթ/*166բ–8բ*: կ/*168բ–76բ*: կա/*176բ–82ա*: կբ/*182ա–6բ*: կգ/*187ա–8բ*: կդ/*189ա–91բ*: կե/*191բ–5բ*: կզ/*195բ–202ա*: կէ/*202ա–4բ*: կը/*204բ–8բ*: կթ/*208բ–11ա*: հ/*211ա–4ա*: հա/*214ա–20ա*: հբ/*220ա–3ա*: հգ/*223ա–6ա*: հդ/*226ա–30ա*: հե/*230ա–43բ*: հզ/*243բ–6ա*: հէ/*246ա–8բ*: հը/*248բ–52բ*: հթ/*252բ–7ա*: ձ/*257ա–9բ*: ձա/*259բ–62ա*: ձգ/*267ա–72ա*: ձդ/*272ա–3բ*: ձե/*273բ–5բ*: ձզ/*275բ–7ա*: ձէ/*277ա–9բ*: ձը/*279բ–81բ*: ձթ/*281բ–2ա*: ղ/*282ա–6բ*: ղա/*286բ–90բ*: ղբ/*293ա–302բ*: ղգ/*302բ–25բ*: ղդ/*290բ–1բ*: ղե/*291բ–1բ*: ղե/*291բ–3ա (293ա–302բ տե՛ս § ղբ: 302բ–25բ տե՛ս §ղգ: 325բ–7բ տե՛ս §թ: 327բ–9ա տե՛ս § ժ: 329ա–32բ տե՛ս § ժա: 332բ–4ա տե՛ս ժգ: 334ա–6բ տե՛ս §ժդ: 337ա–9ա տե՛ս Բ, § 2)*: Յիշատակարան մատենիս դրութեան՝ չիք: Ցունի գլխահամար: Մի քան լուսանցքներում (*241ա, 289ա եւլն*) կան գրիչ ձեռքով գծուած խազագրութիւններ:

—տե՛ս տպ. Գրիգոր Նարեկացի, Մատեան ողբերգութեան, եր., 1985, N:

Բ. [Բանիմ զանազանիմ]

1. *19աբ* Սարգիս վարդապետի ասացեալ Յաղագս խոստովանութիւն[եան] — *խոստովան լերուք, ասե, միմեանց զմեղս: Եւ դու տե՛ս զզիջանելոյն աւրինաին...*

2. *337ա–9ա* [Ի Յակոբայ թղթոյ մեկնութէնէ Սարգսի Շնորհալւոյ] — *Մեծ են հաւատք, եղբարք, մեծ եւ կարեւոր եւ գլուխ ամենայն բարեաց... խոստովանութեամբ եւ ապաշխարութեամբ (հմմտ. «Մեկնութիւն եօթանց թղթոց կաթուղիկայց», 1828, կ. Պոլիս, էջ 104–106):*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

*133 Ջ*Մարտիրոս:
246ա Ամենամեղ Մ[ար]տ[իրոս]:
336բ Ի Ջլբ (1283) թվիս գրեցաւ
Գիրքս Գրիգորի Նարիկեցի,
Աղաւթք եւ հառաչանք եւ պաղատանք [ո]ղոծմագին,
Ի վասն Վանական *վարդապետ[ի]*,
Առաջ[նո]րդ [գոլ]ով Պետրոս վարդապետի,
Ջեռամբ [Մա]տիրոսի *բազմամեղ ծառայի*,
Ի ծերութեան ժամանակի,
Ահայ արտասաբուխ աղաւթ անի,
Ով որ ունի խոցուած հո[գի],
Կամ մարմին մեռեալ մեղաւք ի լի,
[Ո]ր [դ]եղ ո[ւ]զե վասն իւր հոգոյ
Աստ գտանե զիւր պիտանի:
Ով կարդա կամ ում պիտի,
Աստուած ողորմի թող ինձ ասի:
Նմա փառք յամե[նայնի]:

ՅԻՇԱՏԱԿԱՐՆ ՅԵՏԱԳԱՅԻ


7ա (ժե դ.) Ջմեղաւք լցեալ ոգի՝ զթաղէոսս յիշեցէք, ով սուրբ եղբարք:

339բ (ԺՀ դ.) Ես՝ *տէր* Սարգիսըս այս Նարեկացիս վեր բերի Սաղմուսավանից Վերնատանէն: Ով ոք որ կարդա, այլվի տեղն հասուցանէ, օրհ[ու]ի Աստուծոյ:

339բ Կարկատեցի 1896, 12 փետ. եւ օգտուեցի իւր «Աղաւթք ժամահարի» գրուածքից: Սահակ վ. Ամատ[ունի]:

1564
Ժ Ո Ղ Ո Վ Ա Ծ Ո Յ

ՈՒՃԸՐ — 1709



Նմուշ՝ 15ա

ՍՏԱՅՈՂ՝ Միհաս վրդ. Ջուղայեցի:

ԹԵՐԹ՝ 430. չգրուած՝ 199բ: ՊՐԱԿ՝ 1x2 + Ա—ԺԷ (Բ, ե, է 10, ԺԷ 11)+Ա—ԺԱx12 (Ա 13, Դ 10): ՆԻՒԹ՝ թուղթ, լուսագծերով եւ «RG» լուսադրոշմով: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 16,7x11,1: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն: ԳԻՐ՝ նօտրգիր: ՏՈՂ՝ 18: ԿԱՋՄ՝ դրոշմազարդ շագանակագոյն կաշի, միջուկը՝ տախտակ, աստառը՝ թուղթ: ՊԱՀՊԱՆԱԿ՝ 7 + 4, թուղթ:

ՄԱՆՐԱՆԿԱՐԳՈՒԹԻՒՆ — Ձ ա կ ա տ ա գ ա ր դ՝ յա: Լ ու ս ա ն ց ա գ ա ր դ՝ բուսական, թոչնային: Ջ ա ր դ ա գ ի ր՝ թոչնագիր, հանգուցագիր: Գ ո յ ն ե ր՝ կարմիր, կապոյտ, դեղին, շագանակագոյն:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. լուսանցային մասերում փոխրիկ պատռուածքներ, զանազան բծեր, խոնաւութեան հետեր: Թանաքից գրադաշտը գունափոխուած: Կարմրագիր խորագրերն ու սկզբնատողերը գունաթափուած եւ հազիւ նշմարելի: Կազմի կաշին՝ ճերծուած, եզրերը՝ մաշուած, պահպանակները՝ ցեցակեր: Նախկինում նորոգուած եւ մի շարք թերթեր կարկատուած:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

— *1ա—2բ* Յանկ է գրուկիս

ա. *1ա—2ա* [Յանկ Նարեկ գրոց] — *Ա. Տէր իմ, Տէր տուիչ... Խոր. Արեգակն արդար ճառագայթ (բնագիրը՝ ԽԳ):*

բ. *2ա* [Յանկ Աղօթից Բեննկայ] — *Ա. Տէր ահաւոր եւ սքանչելի... Ժ. Անկանիմ առաջի քո:*

գ. *2բ* [Յանկ Աղօթից զանազանից] — *Ա. Հայր Տեառն մերոյ... Ժէ. Օրհնեալ է մարդասիրութիւն:*

Ա. *3ա—170ա* [Գրիգորի Նարեկացւոյ Մատեան Ողբերգութեան]

Տե՛ս ձեռ. 1568, 5բ—341ա. § ա—բ/չիք: գ/*3ա—7բ:* դ/*7բ—9բ:* ե/*9բ—12բ:* զ/չիք: է/*12բ—5ա:* ը/*15ա—6բ:* թ/*16բ—9ա:* ժ/չիք: ժա/*19ա—23բ:* ժբ/*23բ—6ա:* ժգ/չիք: ժդ/*26ա—9ա:* ժե/*29ա—33ա:* ժզ/չիք: ժէ/*33ա—6բ:* ը/*36բ—41ա:* ը/*41ա—5ա:* ի—իբ/չիք: իգ/*45ա—9ա:* իդ/չիք: իե/*49ա—54բ:* իզ/չիք: իէ/*54բ—60ա:* իը/*60ա—6ա:* իթ/*66ա—71ա:* լ/*71ա—6ա:* լա—լբ/չիք: լգ/*76ա—80ա:* լդ—լթ/չիք: խ/*80ա—2ա:* խա/*82ա—3ա:* խբ/*83ա—4բ:* խգ—խզ/չիք: խէ/*84բ—6բ:* խը—ծէ/չիք: ծը/*86բ—9բ:* ծթ/*89բ—92ա:* կ—կդ/*97ա—105ա:* կէ/չիք: կը/*105ա—10ա:* կթ—հ/չիք: հա/*110ա—7բ:* հբ/չիք: հգ/*117բ—21բ:* հդ/*121բ—6ա:* հե—հզ/չիք: հէ/*126ա—9ա:* հը/*129ա—33բ:* հթ/*133բ—8բ:* ձ/*138բ—41բ:* ձա/*142ա—4բ:* ձբ/*144բ—50բ:* ձգ/*150բ—6ա:* ձդ—ձթ/չիք: ղ/*156ա—61բ:* ղա/*161ա—6բ:* ղբ—ղգ/չիք: ղդ/*168բ—70ա:* ղէ/*166բ—8բ (§ ղդ—իգ առաջ): Յիշատակարան մատենիս գրութեան՝ չիք: Առկայ *43* բաներըը, անկախ Մատեանի գլխահամարներից, համարակալուած են հերթական համարներով՝ ա—խգ:

Բ. *170ա—98ա* Լուծմունք եւ բացայայտութիւնք բառից եւ բանից խըթանածածուկ խորոց աղօթից երանելի սուրբ հօրն Գրիգորի Նարեկացւոյ

Տե՛ս ձեռ. 622, 11բ—331ա. *Միայն 40 գլխի լուծմունք.* § գ/*170ա—1ա:* դ/*171ա:* ե/*171աբ:* է/*171բ—2ա:* ը/*172ա:* թ/*172աբ:* ժա/*172բ—4ա:* ժբ/*174ա—5բ:* ժգ/*175բ—6բ:* ժե/*176բ—7ա:* ժէ/*177ա (սկ. «Բան. Որ մինչ անձուք»):* ժը/*177ա—8ա:* ժթ/*178ա—9ա:* իգ/*179ա—80ա:* իե/*180ա—1ա:* իէ/*181բ—4բ:* իը/*184բ—5ա:* իթ/*185աբ:* լ/*185բ—6բ:* լգ/*186բ—8բ:* խ/*188բ—9ա:* խա—խզ/չիք: խէ/*189աբ:* խը—ծէ/չիք: ծը/*189բ—90ա:* ծթ/*190աբ:* կ—կդ/չիք: կե/*190բ:* կզ/*190բ—1ա:* կը/*191բ:* կթ—հ/չիք: հա/*191բ—2բ:* հբ/չիք: հգ/*192բ—3ա:* հդ/*193աբ:* հե—հզ/չիք: հէ/*193բ—4բ:* հը/չիք *(1 տող բաց):* հթ/*194բ:* ձ/*195ա:* ձա/*195ա:* ձբ/*195աբ:* ձգ/*195բ:* ձդ—ձթ/չիք: ղ/*195բ—6ա:* ղա/*196աբ:* ղբ/*196բ—8ա:* Առկայ *40* գլուխները համարակալուած են ա—խբ, որովհետեւ նկատի են առնուած նաեւ Մատեանի խա եւ խբ գլուխները, որոնք լուծմունք չունեն *(«Լուծմունք ոչ գոյ»: Համմտ. ձեռ. 1572, 110ա—22ա:*

Գ. *200ա—41ա* Սրբոյն Եփրեմի ասացեալ խօսք ընդ Աստուծոյ եւ մաղթանք (Ա—ձԼէ) — *[Ա]. Տէ՛ս, Տէր, զտառապանս իմ եւ ցաւս հոգոյ բազմամեղիս...*

Դ. *241ա—309ա* [Աղօթք Բենիկ վարդապետի]

Տե՛ս ձեռ. 1572, 133բ—246բ. § ա/*241ա—54ա:* բ/*254ա—61բ:* գ/չիք: դ/*261բ—8ա:* ե/*268բ—74բ:* զ/*274բ—82ա:* է/*282ա—4ա:* ը/*284ա—7:* թ/*287ա—96բ:* ժ—ժե/չիք: ժզ/*296բ—308ա:* ժէ/*308բ—9ա: Առկայ 10* աղօթքները համարակալուած են Ա—ժ:

Ե. *309բ—30բ* [Աղօթք զանազանք]

ա. *309բ—12բ* Աղօթք Յովաննու Հայոց վարդապետի, որ մականուն Սարկաւագ կոչի: Աղօթք առ Հայր: Գլուխ առաջին — *Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի...*

բ. *312բ—4բ* Նորին Աղօթք... առ Որդի: Գլուխ երկրորդ — *Որդի եւ Բան Հօր, Աստուած ճշմարիտ...*

գ. *314բ—6բ* Նորին Աղօթք առ Հոգին Սուրբ (առ Որդին): Գլուխ չորրորդ (երրորդ) — *Անստուէր լոյս եւ գոյացուցիչ բնութեան լուսոյ...*

դ. *316բ—8ա Դ.* Աղօթք Մովսիսի ճերթողի սուրբ հօրն արարեալ — *Ազաչեմ զքեզ, Տէր, թող ինձ, թող ինձ զմեղս իմ որպէս կամիս...*

ե. *318աբ* Ե. Դարձեալ Աղօթք Մովսիսի ճերթողի սուրբ հօր — *Ազաչեմ զքեզ, Տէր, թող ինձ զ[մ]եղս իմ եւ կամ եթէ ասես մեղար...*

զ. *318բ—9բ* Զ. Աղօթք Կիւրղի Աղէքսանդրացւոյ ասացեալ: Աղօթք զղջման — *Ամենակալ Տէր, Արարիչ ամենայն համայնից...*

է. *319բ—21ա* Է. [Աղօթք] սրբոյն Մեսրոպայ վարդապետի է ասացեալ — *Ով որ անեղդ ես եւ անսկիզբն...*

ը. *321ա—2ա* Ը. Աղօթք սուրբ հօրն Յոհաննու է ասացեալ — *Ի քեզ յուսամ, Քրիստոս Աստուած...*

թ. *322աբ* Թ. Աղօթք սուրբ հօրն Յոհաննու է ասացեալ — *Տաճար Աստուծոյ բանական սուրբ...*

ժ. *323ա—4բ* Ժ. Յոհաննու Գառնեցւոյ... — *Տէր Հայր եւ Աստուած, Աստուած կենաց իմոց...*

ժա. *324բ—5բ* ԺԱ. Նորին Աղօթք — *Գառն Աստուծոյ Տէր իմ եւ Աստուած...*

ժբ. *326ա—7ա* ԺԲ. [Նորին Աղօթք] — *Աստուածածին մայր Քրիստոսի եւ Ծնօղ...*

ժգ. *327աբ* ԺԳ. Նորին Աղօթք ի Տէր Յիսուս Քրիստոս... — *Ոհո՛ լուսոյ եւ ճշմարիտ ճանապարհ...*

ժդ. *327բ—8ա* ԺԴ. Նորին Աղօթք առ սուրբ... — *Նայեա, Տէր, քաղցրութեամբ առ դառնացուցիչս...*

ժե. *328աբ* ԺԵ. Աղօթք նորին — *Երկնաւոր Թագաւոր, որ վասն միոյ մեղաւորի գտանելոյ*

§ժ—ժե համմտ. ձեռ. 42, 41բ–61բ։

ժզ. *328բ–9բ* ԺԶ. Աղօթք սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մեռոյ է ասացեալ — *Աղաչեմ զքեզ, Փրկիչ աշխարհի...*

ժէ. *329բ–30բ* ԺԷ. Նորին Աղօթք յորժամ յորոգայթ անկանի ոք, ասես — *Աւրհնեալ է մարդասիրութիւնը քո, Տէր իմ եւ Փրկիչ Յիսուս Քրիստոս... ամէն։*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՁՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

133բ ՁՋուղայեցի Մինաս *վարդապետ՝ զստացօղ սուրբ գրքուկիս յիշեսջիք ի Քրիստոս կրկին ծնօղիւք, ով հարք եւ եղբարք մեր ըստ հոգւոյ, աղաչեմ զձեզ (նման՝ 141բ, 161բ)։*

198ա Վերջ։ Աւարտեցաւ թվին ՌՃԾԸ (1709)։

198բ Փա՛ռք... Որ ետ կարողութիւն տկնր եւ չնչին անձին՝ Մինասի *յետնոյ ի կարգ քարոզչաց մարմնացեալոյ Բանին Աստուծոյ, որ եւ աստի եւ անտի ժողովեալ ի բանից աստուածաբան վարդապետաց, ուր եւ գրեալ փանք աղօթական եւ գղջականի խօսք ընդ Աստուծոյ եւ ճանապարհ կենաց մտին, եւ ջերմեռանդ սիրով եւ ըղձալի տենչմամբ, ի հալալ արդեանց իւրոց տուեալ, ետ գրել եւ կազմել ի մի տուփ, ի վայելումն անձին իւրոյ եւ հոգեւոր հարց եւ եղբարց եւ որդւոց, ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ օրհնելոյն յաւիտեանս. ամէն։ Արդ, երես անկեալ աղաչեմ զձեզ, ո՛վ հարք եւ եղբարք եւ որդիք մեր ըստ հոգւոյ, որք հանդիպիք սմա եւ ընթեռնուք, ասացէք. Քրիստոս Որդի Աստուծոյ կենդանւոյ, ողորմեա* Ջուղայեցի Մինաս *վարդապետին, եւ թող զամենայն յանցանս նորա, եւ ջնջեա զձեռագիր յանցանաց նորա, եւ փրկեա յաւիտենից տանջանացն, եւ // (199ա) արժանի արա անճառ լուսոյդ երկնից արքայութեանդ անմահ կենաց եւ անթառամ պսակացդ կրկին ծնօղիւք հանդերձ, եւ քեզ փառք յաւիտեանս. ամէն։*

Շնորհօքն Քրիստոսի աւարտեաւ կազմեցաւ թուականիս Հայոց ՌՃԾԸ (1709), ի հայրապետութեան Սուրբ էջմիածնայ *վեհափառ* Աթոռոյն Յովաննէս *վարդապետի, որոց Տէր Աստուած ընդ երկայն աւուրս արասցէ ուղիղ վարդապետութեամբ ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ. ամէն։ Հայր մեր... անուն քո։*


ԿՆՔԱԴՐՈՇՄ 1ա Գիրքս Սուրբ էջմածնա *է։*

1565
ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ
ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ

Հերմոնի վանք ՋՂԸ — 1349

ԳՐԻՋ՝ Մովսէս վրդ։ ՍՏԱՑՈՂ՝ Մովսէս վրդ (նվիրել է Նահապետ արքյ.ին)։

ԹԵՐԹ՝ 216 + 1 (կրկ. 1). չգրուած՝ 1բ, 213բ, 215ա—6ա։ ՊՐԱԿ՝ 1x2+Ա.—ԺԸx12 (ԺԸ 11)։ ՆԻՒԹ՝ թուղթ։ ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 16,5x11,8։ ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն։ ԳԻՐ՝ բոլորգիր (յաւելագրողի՝ 1գ—2բ, 214աբ)։ ՏՈՂ՝ 23։ ԿԱՋՄ՝ սեւ կաշի, միջուկը՝ տախտակ, աստառը՝ մագաղաթ։ ՊԱՀՊԱՆԱԿ՝ 1, սկզբից, մագաղաթ, մասն աստառի (ԺԹ դ. վերակազմութիւն)։



Նմուշ՝ 38ա

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ — Ճ ա կ ա տ ա գ ա ր դ՝ 3ա։ Լ ու ս ան ց ագ ա ր դ՝ բուսական (3ա)։ Ջ ա ր դ ագ իր՝ հանգուցագիր (3ա)։ Գ ոյ ն ե ր՝ կարմիր, կապոյտ, շագանակագոյն։

ՎԻՃԱԿ՝ բաւարար. լուսանցային մասերը թուլացած եւ բամբակակալած, առանձին բառեր եղծուած, տեղ—տեղ փոքրիկ պատռուածքներ, զանազան բծեր, ցեցակեր։ Կազմի կաշին՝ ճեղծուած, եզրերը՝ մաշուած։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. *3ա–212բ* Դրումբ յոքնաթախանձ բանից աւգտակարաց... Ասացեալ Մատեան ողբերգութեան Գրիգորի Նարեկա վանից վանականի հոգեմատեան հոետորի եւ Հայոց փիլիսոփայի

Տե՛ս ձեռ. 1568. 5բ—341բ. *§ ա/3ա–4բ։ բ/4բ–7ա։ գ/7ա–10բ։ ե/11բ–3բ։ զ/13բ–5բ։ է/15բ–7ա։ ը/17ա–8ա։ թ/18ա–9բ։ ժ/19բ–21ա։ ժա/21ա–3բ։ ժբ/23բ–5ա։ ժգ/25ա–6ա։ ժդ/26ա–8ա։ ժե/28ա–30ա։ ժզ/30ա–1ա։ ժէ/31ա–2բ։ ժը/32բ–5բ։ ժթ/35բ–7բ։ ի/37բ–40ա։ իա/40ա–1բ։ իբ/41բ–3ա։ իգ/43ա–5ա։ իդ/45ա–7ա։ իե/47ա–9ա։ իզ/49բ–51բ։ իէ/51բ–4բ։ իը/54բ–7բ։ իթ/58ա–60բ։ լ/60բ–2բ։ լա/62բ–5ա։ լբ/65ա–7բ։ լգ/67բ–71բ։ լդ/71բ–6բ։ լե/76բ–8բ։ լզ/78բ–9բ։ լէ/79բ–81ա։ լը/81ա–2բ։ լթ/82բ–3բ։ խ/83բ–4բ։ խա/84բ–5ա։ խբ/85աբ։ խգ/85բ–6բ։ խդ/86բ–7բ։ խե/87բ–90ա։ խզ/90ա–2ա։ խէ/92ա–3ա։ խը/93ա–8ա։ խթ/98ա–100ա։ ծ/100ա–2ա։ ծա/102ա–4բ։ ծբ/102ա–4բ։ ծգ/104բ–6ա։ ծզ/106ա–8բ։ ծդ/108բ–10ա։ ծե/110ա–2բ։ ծզ/112բ–4ա։ ծէ/114ա–5ա։ ծը/115ա–6բ։ ծթ/116բ–7բ։ կ/117բ–21բ։ կա/121ա–4բ։ կբ/124ա–5բ։ կգ/125բ–8ա։ կդ/128ա–9բ։ կե/129բ–31բ։ կզ/131բ–5ա։ կէ/135ա–6բ։ կը/135ա–6բ։ կը/136բ–8բ։ կթ/138բ–40ա։ հ/140ա–1բ։ հա/141բ–5ա։ հբ/145ա–6բ։ հգ/146բ–8ա։ հդ/148բ–50բ։ հե/150բ–8բ։ հզ/158բ–60ա։ հէ/160ա–1բ։ հը/161բ–3բ։ հթ/163բ–6ա։ ձ/166ա–7բ։ ձա/167բ–9ա։ ձբ/169ա–72ա։*

ձգ/172ա–4բ: ձդ/175աբ: ձե/175բ–6բ: ձզ/177աբ: ձէ/177բ–9ա: ձը/179ա–80բ: ձթ/180բ: ղ/181ա–4ա: ղա/184ա–6ա: ղբ/186բ–92բ: ղգ/192բ–208բ: ղդ/208բ–9բ: ղե/209բ–10բ: Յիշատակարան մատենիս գրութեան՝ 210բ–1ա: Ունի.

–Տե՛ս տպ. Գրիգոր Նարեկացի, Մատեան ողբերգութեան, Երևան, 1985, c:

Բ. *211ա–2բ* [Վարք Գրիգորի Նարեկացւոյ] – *Ի թուականին Հայոց ՆԼԲ, ի հայրապետութիւն տեառն* Վահանայ *եւ ի թագաւորութիւն* Վասլի *եւ* Կոստանդեայ, *իսկ թագաւոր* Վասպուրականի Սինէրեհիմ *յԱրծրունեաց. ի սոցա ժամանակս էր երիցս երանեալ սուրբ հայրս մեր եւ աստուածաշնորհ մեծ վարդապետս* Գրիգորիոս... *մարմինն անարատ եդեալ կայ ի նոյն վանս* Նարեկայ... *ամէն*

Գ. [Յաւելագրութիւնք]

1. *1ա* [Գիր բժշկութեան (ԺԸ դ., շղագիր)] – *Ընդ արեւուտ հարկանելոյ եւ արեգական բացելո, բացաւ դուռն երկնից առ ձայն լալո, եւ ասէ. Ալիա, Արամիա, Արաւիթ, Կէսոնիա, Կէսարիա: Եղիցի բժշկութիւն:*

2. *1գ–2բ* Պատճէն եւ ցանկ համառօտ՝ առ ի ցուցանել զնշանաւոր ճառերսն, վասն դիւրաւ գտանելոյ զոր պիտոյն լինի (ԺԹ—ԺԵ դդ., բոլորգիր) – *Առաջին ճառն՝ քաղցր եւ բազմախորհուրդ... ՁԲ. Վասն սրբոց առաքելոցն/// (շար. թափուած)*

3. *214աբ* [Աղօթք (ԺԵ դ. բոլորգիր, գրչափոխութեամբ)] – *Աւրհնեալ Հայր սուրբ Աստուած ճշմարիտ: Սրբեայ զմեզ յամենայն մեղաց... եւ օրհնեսցէ զամենեսեան. ամէն:*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

184ա ՁՄովսէս գծողս յիշեա:

212բ Գրեցաւ աստուածային եւ հոգէբուխ մատեանս... ի նահանգիս Սիւնեաց, *ի ձորս Վայոց, ի վանս Հերմոնի, ընդ հովանաւ սուրբ քաւարանիս Գրիգորի, առ ոտս մեծ վարժապետիս* Տիրատուր *կոչեցեալ, կամօք եւ ձեռնտուութեամբ սորին, ձեռամբ* Մովսէս *կրաւնաւորի անարժան քահանայի, յետին եւ տկարի սպասաւորս բանի, ի թուականութեան Յաբեթեան տոհմիս տասմարի, մերձ // (213ա) ի կատարման վեշտասան յոբելինին, պակաս երկու ամ՝ ՁՂԸ (1349): Արդ, աղաչեմ զամենեսեան, որք ճաշակէք յանմահական սեղանոյս, յիշեսջիք սեռն սիրով ի միտ բարիս եւ ի պատկանաւոր խնդրուածս զսուրբ վարդապետն իմ եւ զհայրն ըստ հոգւոյ՝ զվերոյասացեալդ, այլեւ զՍամուէլ կուսակրաւն քահանայ, եւ զՅոհաննէս, ընդ որս եւ զծնողսն իմ, եւ զերախտաւորսն ըստ հոգւոյ եւ ըստ մարմնոյ, այլեւ զկրսեր եղբայրս իմ՝ Ներսէս, որ սպասաւորէր ինձ պղերգութեամբ եւ յոչ կամաց, եւ զիս բազմամեղ գրիչս, զի ի փափագմանէ սրտի, գրեցի ի վայելումն անձին իմոյ, եւ նիւթս ոչ պատահեաց որպէս կամէի, բայց բանիցն ճշմարտութենէ ոչ ինչ նուազեալ ի փառս երրեակ եւ միաստուածութեանն՝ Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, բնաւից հաստողի եւ յաւիրինաւղի յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

Ես՝ Մովսէս վարդապետ, զիմ ձեռագիր տվի Նահապետ աբեղին՝ յիշատ[ակ] ինձ եւ ծնօղաց իմոց: Ով ոք յիմոց կամ յաւտարաց դաւի առնէ, անէծք Յուդային առնու եւ զայլ խաչահանուացն:


ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

216բ (ԺԵ դ.) Ընպատահեալքդ համեղ երգոյս,
Անուշարար քաղցըր գինոյս,
Ջմայլիք հոգւով աստուածայնւոյս,
Միշտ խաւսելով առ նոյն Քրիստոս,
Ընտառապեալ անձըն գերոյս,
Որ տատանիմ ի կենցաղոյս,
Յիշել մաղթեմ փափաքելոյս,
Ի գութ շարժել զԱստուած հոգւոյս:
[Ծածկագիր]
Ղչսժվբտ հ. լբշզմ. ժվմ.
(«Թումային է գիրքս այս»):


ԳՐՉԱՓՈՐՁ 216բ (ԺԷ դ., նօտրգիր, ծածկագիր՞) ձապվթս արկ իառոճ:

1566
Ժ Ո Ղ Ո Վ Ա Ծ Ո Յ
(Բաղկացած է 2 տարբեր ձեռագրերից)

ԹԵՐԹ՝ 381: ԿԱՋՄ՝ դրոշմազարդ շագանակագոյն կաշի՝ դռնակով, միջուկը՝ տախտակ, աստառը՝ դրոշմազարդ կարմիր կտաւ: ՊԱՀՊԱՆԱԿ՝ 1, թուղթ, սկզբից:



Նմուշ՝ 17ա



Նմուշ՝ 373ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմի կաշին թեթեւակի ճերմուած, եզրերը՝ մաշուած, թիկունքը՝ ցեցակեր, կապիչներն ընկած, դռնակը՝ մկնակեր, Ա փեղկի վրա՝ թանաքի բիծ:

Ջ Ե Ռ Ա Գ Ի Ր Ս

Մաղաղավանք ՊԼ — 1381

ԳՐԻՉ Ատոմ: ՍՏԱՅՈՂ՝ Սիմէոն:

ԹԵՐԹ՝ 335—1 (թուիչ՝ 122) + 1 (կրկ. 141). չգրուած՝ 1ա: ՊՐԱԿ՝ Ա—ԻԲx16 (ԺԳ 15, ԺԴ 8, ԺԵ 18, ԺԷ, ԻԲ 12): ՆԻՒԹ՝ թուղթ (1674 թ. նոռոգողի՝ 1—2, 89, 159, 174—175, 190—191, 204—232): ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 15,8x12,5: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն: ԳԻՐ՝ բոլորգիր (1674 թ. նոռոգողի՝ 2աբ, 89աբ, 159աբ, 174ա—5բ, 190ա—1բ, 204ա—32բ, նոռոգողի նօտրգիր՝ 1բ):

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ — Կ ի ս ա խ ո ր ա ն՝ 2ա: Լ ու ս ա ն ց ա զ ա ր դ՝ բուսական (2ա): Ջ ա ր դ ա գ ի ր՝ թռչնագիր (2ա), հանգուցագիր: Գ ոյ ն ե ր՝ կարմիր, շագանակագոյն:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. 1674թ. էջմիածնում Յովաննէս Կարճաւանցու ձեռով նոռոգուած, թերթերը կրկին օսլայուած, թերին լրացուած (տե՛ս Գիր), միացուած Բ ձեռագրին եւ վերակազմուած:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Ա. *1բ—332ա* Դրումբ յոգնաթախանձ բանից օգտակարաց... Ասացեալ Մատեան ողբերգութեան Գրիգոր Նարեկայ վանից վանականի հոգեմատեան հոետոր եւ Հայոց փիլիսոփայի

Տե՛ս ձեռ. 1568, 5բ—341բ. *§ ա/2ա—4բ: բ/4բ—9ա: գ/9ա—14ա: դ/14ա—6բ: ե/16բ—20ա: զ/20ա—3ա: է/23ա—5բ: ը/25բ—7ա: թ/27ա—9բ: ժ/29բ—31բ: ժա/31բ—6ա: ժբ/36ա—8բ: ժգ/38բ—40բ: ժդ/40բ—3բ: ժե/43բ—7ա: ժզ/47ա—8բ: ժէ/48բ—51բ: ժը/51բ—6ա: ժթ/56ա—9բ: ի/59բ—63բ: իա/63բ—6բ: իբ/66բ—9ա: իգ/69ա—72բ: իդ/72բ—5բ: իե/75բ—80ա: իզ/80բ—3բ: իէ/83բ—8բ: իը/88բ—94ա: իթ/94ա—8ա: լ/98ա—102ա: լա/102ա—6ա: լբ/106ա—10բ: լգ/110բ—6բ: լդ/116բ—25բ: լե/125բ—8բ: լզ/128բ—30բ: լէ/130բ—3բ: լը/133բ—5բ: լթ/135բ—7բ: խ/137բ—9ա: խա/139ա—40ա: խբ/140ա—1ա: խգ/141ա—1դ: խդ/141դ—3բ: խե/143բ—7բ: խզ/147բ—50բ: խէ/150բ—2ա: խը/152ա—60ա: խթ/160ա—3ա: ծ/163ա—6բ: ծա/166բ—70բ: ծբ/179ա—83ա: ծգ/173—6բ: ծդ/176բ—9ա: ծե/179ա՝ 82բ: ծզ/182բ—5ա: ծէ/185ա—7ա: ծը/187բ—9բ: ծթ/189բ—91բ: կ/191բ—8ա: կա/198ա—202ա: կբ/չիք (գրչից՝ 204ա «Աստ մի պակաս է՝ Բարերար եւ»): կգ/202ա—4ա (§ կբ—ից առաջ): կդ/204ա—6ա: կե/206ա—9բ: կզ/209բ—15բ: կէ/215բ—7ա: կը/217ա—20բ: կթ/220բ—3ա: հ/223ա—5ա: հա/225ա—9բ: հբ/229բ—31բ: հգ/231բ—4բ: հդ/234բ—8ա: հե/238ա—50բ: հզ/250բ—2բ: հէ/252բ—5ա: հը/255ա—8ա: հթ/258ա—61բ: ձ/262ա—4ա: ձա/264ա—6բ: ձբ/266բ—71ա: ձգ/271ա—5բ: ձդ/275բ—7ա (գրչից՝ 275բ «[Քու՞նս] տարաւ, տողն մնաց. դու ժիր կաց»): ձե/277ա—8բ: ձզ/278բ—80ա: ձէ/280ա—2բ: ձը/282բ—4բ: ձթ/284բ—5ա: ղ/285ա—9բ: ղա/289բ—93ա: ղբ/293ա—302բ: ղգ/302բ—27բ: ղդ/328ա—9ա: ղե/329ա—31բ: Յիշատակարան մատենիս դրութեան՝ 330բ—2ա:*

—Տե՛ս տպ. Գրիգոր Նարեկացի, Մատեան Ողբերգութեան, Երեւան, 1985, c:

Բ. *332ա—4ա* [Վարք Գրիգորի Նարեկացւոյ] *— Ի թուականին Հայոց ՆԼԲ, ի հայրապետութեան* Վահանա *եւ ի թագաւորութեանն* Վասլի... *մարմինն անարատ եդեալ կայ ի նոյն վանս* Նարեկա... *ամէն:*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

334ա Փա՛ռք... Ողորմութեամբ հզաւրին Յիսուսի սկսա եւ աւգնութեամբ նորին կատարեցի ես՝ անարժանս եւ մեղաւք զառածեալս եւ զտրուպս ի յեղբարց՝ Ատոմ, *որ ամաչիմ գրիչ կոչիլ, զկտակ մաղթանաց ամենագով սուրբ եւ հանճարեղ, գերդ ականաւոր մեծանուն հաւր՝* Գրիգորի Նարեկացոյ, *զոր Հոգին Սուրբ մարդասիրաբար սակս կենաց ամենից իւրային յորդայորձան հոսանաւքն առատգոյն լցեալ զսա սահման եւ կնիք երկնագնաց ճանապարհին հաստատեաց մեզ բարեգործն եւ դուռն մտից կենաց՝ սովաւ վարժելոցն: Արդ, որ քո աւգտի ի սմանէ, յիշեսջիք // (334բ) նախ եւ առաջին զմեծ բ[աբ]ունապետն՝* Սարգիս, *որ զաւրինակս շնորհեաց եւ զստացող սուրբ գրոյս՝* զՍիմէոն *եւ զիւրսն ամենայն ծնողաւքն հանդերձ: Բայց գրեցաւ ի թուա[կա]նիս Հայոց ՊԼ (1381), ի մեծ եւ հռչակաւոր վանքս* Մաղարդու, *ընդ հովանեաւ* Սուրբ Ստեփաննոս Նախավկաիս *եւ* Սուրբ Աստուածածնիս *եւ* Սուրբ Գէորգա զաւավարիս *եւ այլ բազում մասանց որ կա ի սմայ, ի յառաջնորդութեան տէր* Գրիգորի: *Աղաչեմ զամենիսեան, որք լուսաւորիք յայսմ աստուածանին պատուիրանէ, յիշեսջիք զվերոյգրեալս ի սմայ ի սուրբ եւ ի մաքրափայլ յաղաւթս ձեր եւ զիս՝ զեղկելի փցուն գրիչս եւ զիմսն ամենայն, եւ զ[ա]մենայն երախտաւորսն մեր, եւ զհանգուցիչսն, եւ Քրիստոս, որ առատն է ի տուրս բարեաց, մեզ եւ ձեզ առհասարակ ողորմեսցի, եւ որ զամէնն ասէ: Եղբայր, խոշորութեան գիրս անմեղադիր լեր. տեղս շռի էր ու ես անձամբ տկար, լուր (զո՞ր) հանապազ գելն տեսանի:*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

1. *335ա (ԺԴ դ.)* Յուսովն Աստուծոյ ես՝ հոգեւոր հովիւ *գնեցի զկտակս մախթանաց ամենայգով եւ հանճարեղ, մեծանուն հաւր* Գրիգորի Նարեկացոյ, *հաստատեաց զմեզ բարէգործն եւ դուռն կենաց մտից սովաւ վարժելոցն: Պ (800) դեկան մեծ սպիտակն. այս պատճառանաւք գնեցի* Սարգիս *աբեղայն, ոչ ունէր դրամ տայր զինքն աւրհնելոյ, էառ փոխ յիմանէ Պ (800) դեկան մեծ սպիտակ, զինք աւրհնել էրեսս, իմ պարտուցս ուղուհ արար զաստուածաշունչ կտակս: ԵՒոի յիշատակ ինձ եւ ծնողաց իմոց եւ ամենայն յարեան մերձաւորաց: Որք աւմոիք ի սմանէ՝ աւրինակելով, կարդալով յիշեցէք զիս եւ զծնաւղս իմ, եւ զամենայն որ ի Քրիստոս են փոխեցեալ մահուամբ եւ // (335բ) ի ձեռս անաւրինաց նահատակեալ, Ողորմի ասացէք լի բերանաւք եւ պարզ մտաւք եւ ուղիղ սրտիւ, եւ որք յիշէք՝ յիշեալ լիցիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն: Երբ գնեցի թվին ՊԷ* (1358) էր:*

* *Վստահաբար թուականից դուրս է մնացել տասնաւորը: Թերեւս պետք է կարդալ՝ ՊԼԷ (1388):*

2. *335բ (1496 թ.) Ջվերջին կազմող սուրբ մատենիս՝* զԳրիգոր *սուտանուն կրաւնաւոր, որ անուամբ միայն կոչիմ եւ գործով ոչինչ եւ մեղօք զազրացեալ: Աղաչեմ զձեզ, ո՛վ ոք հանդիպիք աստուածաշունչ սուրբ բուրաստանիս Նարեկացի կոչեցեալ, յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զանպիտանս՝* զԳրիգոր *կազմող սուրբ տառիս, եւ զծնաւղսն իմ եւ զամենայն արեան մերձաւորս, եւ դուք յիշեալ լիջիք առաջի Քրիստոսի: Թվական ՋԽԵ (1496):*

3. (Տե՛ս Բ ձեռագիր վերջում):

Ջ Ե Ռ Ա Գ Ի Ր Բ

ԺԴ — XIV

ԹԵՐԹ՝ 46 (336+381). չգրուած՝ 381բ: ՊՐԱԿ՝ Ա—Եx12 (Բ 2, Դ—Ե 10): ՆԻՒԹ՝ թուղթ (1674—ի՝ 381): ՄԵԶՈՒԹԻՒՆ՝ 15,8x12,5: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն: ԳԻՐ՝ բոլորգիր (1674 թ. նորոգողի՝ 381ա): ՏՈՂ՝ 27:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. վերջից պակասաւոր, եզրահատուած: 1674 թ. էջմիածնում Յոհաննէս Կարճաւանցու ձեռով նորոգուած, թերթերը կրկին օսլայուած եւ կցուած Ա ձեռագրին:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

–336ա–80բ [Լուծմունք Նարեկայ], Ե—երորդ ճառն — *Բան. Կաճառս: Լուծմունք. Հոյլս ասէ... [ՂԲ—երորդ ճառն] — Բան. Ի փայտն ժամհարին: Լուծմունք: Աղաչանս ընդ թարգմանութիւնս... ոչ մեղմ եւ աղօտ, զի այն ոչ /// (շար. թափուած):*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

381ա (1674 թ.) Արդ, վերստին՝ կրկին եւ կրկնակի նորոգեցաւ փտեալ եւ քայքայեալ մաքրազարդող հոգւոյ գիրքս այս ձեռամբ զառածեալ Յոհաննու Կարճաւանցոյ՝ *անձնամուտն բանի սպասաւորի եւ պղտորակենցաղի, եւ կազմեցաւ ի ձեռն, ի* Սուրբ Աթոռս էջմիածին, *ի թուականիս ՌՃԻԹ (1674), ի հայրապետութեան տեառն* Յակոբայ Ջուղայեցւոյ: *Ջաղօթօղսդ մաղթեմ յիշել զգրեալս եւ զամենայն միեղէն եղբարքս:*


ԿՆՔԱԴՐՈՇՄ 2ա, 381ա, Գիրքս Սուրբ էջմիածնա *է: 232բ (անընթեռնլի):*

1567
Ժ Ո Ղ Ո Վ Ա Ծ Ո Յ


ԺԴ — XIV

ԳՐԻՉ՝ Սարգիս:


ԹԵՐԹ՝ 369. չգրուած՝ 369աբ: ՊՐԱԿ՝ 30 (Ա—Վ)x12 (Ա, Ժ, Վ 10) + 1x10+1x5: ՆԻՒԹ՝ թուղթ (1647 թ. լրացնողի՝ 355—369): ՄԵԶՈՒԹԻՒՆ՝ 15,8x12: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն: ԳԻՐ՝ բոլորգիր (1647 թ. լրացնող Յոհան վրդ. Կարճաւանցու՝ 355ա—68բ): ՏՈՂ՝ 19—20: ԿԱՋՄ՝ դրոշմազարդ շագանակագոյն կաշի՝ դռնակով, միջուկը՝ տախտակ, աստառը՝ վանդակաւոր գործուածք, դռնակիկը՝ այլ: ՊԱՀԱՊԱՆԱԿ՝ 2, սկզբից, թուղթ:



Նմուշ՝ 354ա



Նմուշ՝ 355ա



Նմուշ՝ Բա

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ — Ճ ա կ ա տ ա գ ա ր դ՝ բուսական: Լ ու ս ա ն ց ա գ ա ր դ՝ բուսական: Ջ ա ր դ ա գ ի ր՝ հանգուցագիր: Գ ոյ ն ե ր՝ կարմիր, կանաչ:

ՊԱՏԱՌԻԿ—ՊԱՀՊԱՆԱԿ — Աւետարան Ղուկասու: Ժ—ԺԱ. դդ.: 2 (Ա—Բ) + 2 (Գ—Դ), ստացուած 1 թերթի ընդլայնակի հատումից եւ ընդերկայնակի երկտակումից: Մագաղաթ, երկսիւն, բոլորգիծ երկաթագիր: Ունի բազմագոյն Լ ու ս ա ն ց ա գ ա ր դ (Գբ—Բա): Կարդալ՝ Դբ—Գա, Բա—Աբ, Գբ—Բբ, Աա—Դա «[///հաճանա]յապետին...ի[այ]հոյութե[ամբ]///» (ԻԲ 54—65):

ՎԻՃԱԿ՝ բաւարար. լուսանցային մասերում փոխրիկ պատռուածքներ, զանազան բծեր, տեղ—տեղ խոնաւութեան հետքեր, ցեցակեր: Կազմի կաշին՝ ճեռնուած, եզրերը՝ մաշուած եւ այրուած, կապիչներն՝ ընկած: 1647—ին նորոգուած եւ լրացուած՝ 355—369 Յոհան վրդ. Կարճաւանեցու ձեռով:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Ա. [Բանիւ Գրիգորի Նարեկացւոյ]

1. *1ա–25բ* Բան նուիրական գովեստի առն որում իմաստասիրի առ մեծ եւ երջանիկ հայրապետն Քրիստոսի սուրբն Յակովբ եպիսկոպոս եւ վերադիտող սկզբնապատիւ երկնաճաճանգէտ աթոռոյն եկեղեցւոյն Մծբին քաղաքի — *Բարձրացիր Սիովն, հոգեւոր, դիմաւոր անձնաւոր, [խնկաւոր] եւ խորհրդաւոր... ամէն:*

2. *25բ–364բ* Դրումբ յոքնաթախանձ բանից աւգտակարաց... Ասացեալ Մատեան ողբերգութեան Գրիգորի Նարեկայ վանից վանականի հոգեմատեան հոետորի եւ Հայոց փիլիսոփայի

Տե՛ս ձեռ. 1568, 5բ—341բ. § ա/26ա—8բ: բ/28բ—36բ: գ/36բ—9բ: դ/39բ—42ա: ե/42ա—6բ: զ/46բ—50ա: է/50ա—3ա: ը/53ա—5ա: թ/55ա—8ա: ժ/58ա—60բ: ժա/61ա—5բ: ժբ/66ա—9ա: ժգ/69բ—71բ: ժդ/71բ—5ա: ժե/75ա—9բ: ժզ/79բ—81բ: ժէ/81բ—5ա: ժը/85ա—90բ: ժթ/90բ—4բ: ի/94բ—9բ: իա/99բ—103ա: իբ/103ա—5բ: իգ/105բ—10ա: իդ/110ա—3բ: իե/113բ—8բ: իզ/118բ—22ա: իէ/122ա—7ա: իը/127ա—33բ: իթ/133բ—8բ: լ/138բ—42բ: լա/142բ—6բ: լբ/146բ—51բ: լգ/151բ—8բ: լդ/158բ—68ա: լե/168ա—71բ: լզ/171բ—3բ: լէ/173բ—6բ: լը/176բ—8բ: լթ/178բ—80բ: խ/181ա—3ա: խա/183ա—4ա: խբ/184ա—5ա: խգ/185ա—6բ: խդ/186բ—9ա: խե/189ա—94բ: խզ/194բ—8ա: խէ/198ա—200ա: խը/200ա—9ա: խթ/209ա—12բ: ծ/212բ—6բ: ծա/216բ—21ա: ծբ/221ա—3բ: ծգ/223բ—8ա: ծդ/228ա—31ա: ծե/231ա—4բ: ծզ/234բ—7բ: ծէ/237բ—9բ: ծը/239բ—42ա: ծթ/242ա—4ա: կ/244ա—50բ: կա/250բ—5ա: կբ/257ա—61ա (կգ. փխ կբ): կգ/255ա—7ա (կբ փխ կգ): կդ/261ա—3բ: կե/263բ—7ա: կզ/267ա—73ա: կէ/273բ—5ա: կը/275բ—9ա: կթ/279ա—81բ: հ/281բ—4ա: հա/284ա—9բ: հբ/290ա—2բ: հգ/292բ—5բ: հդ/295բ—9բ: հե/299բ—311ա: հզ/311ա—3ա: հէ/313ա—5բ: հը/315բ—8բ: հթ/318բ—22ա: ձ/322բ—4բ: ձա/324բ—7ա: ձբ/327ա—31ա: ձգ/331ա—5բ: ձդ/335բ—6բ: ձե/236բ—8բ: ձզ/338բ—40ա: ձէ/340ա—2ա: ձը/342ա—4ա: ձթ/344աբ: ղ/344բ—9բ: ղա/349բ—50ա: ղբ—ղգ/չիք (գրչից 350ա «յայսմ տեղւոջ միջակի թողի զձառ պատմութեան ժամհարին եւ զմիռոնին»: 1647–ին նորոգող Յոհան վրդ. Կարճաւանցին աւելացրել է միայն § ղբ–ի՝ 356ա–64բ, նշելով «Բան ՂԴ»): ղդ/350ա–4բ: ղե/354բ–6ա (355ա–6ա 1647 թ. ընդօրինակութեամբ: 356ա–64բ տե՛ս § ղբ): Յիշատակարան մատենիս դրութեան չիք:

—տե՛ս տպ. Գրիգոր Նարեկացի, Մատեան ողբերգութեան, Երևան, 1985, 111:

Բ. 365ա–8բ Աղօթք արարեալ ի վարդապետաց սրբոց Հայոց (Գովեստ յամենասուրբ Աստուածածնին, ի գեռագով վարդապետէն Գրիգորէ Սկեւռացւոյն. ձեռ. 1521, 430ա) — *Բարեբանեալ ես ամենասրբուհի Աստուածածին, երկին վեհագոյն... եւ յոգնապտուղ վարուց առաքինութեան. ամէն (1647–ի յաւելում):*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

25բ Տէր Յիսուս բազմաողորմ, մաղթանաւք եւ բարէխաւսութեամբ սրբոյդ Յակոբայ, խնայեայ ի մեղուցեալ Սարգիս *գրիչ, ի ծնողսն իւր եւ յեղբարսն եւ զամենայն երախտաւորսն նմայ: Եւ դու անճառ վկայ Քրիստոսի, տէր սուրբ Յակոբ, միշտ եւ հանապազ բարեխաւսեայ վասն* Սարգիս *գրչի, եւ ի փառս տէրութեանդ քում կատարեայ զխնդիրս մեր (նման՝ 50ա, 55ա, 60բ, 66ա, 69ա, 71բ):*

39բ Ռվ բազմագութ ողորմած Տէր, թողութիւն մեղաց պարգեւեայ գրողի սորա եւ ծնողաց իւրոց. ամէն (նման՝ 42ա, 46բ, 58ա, 85ա, 261ա, 313ա, 331ա):

121բ Սուրբ առաքեալդ Պետրոս, վէմդ հաւատոյ, լեր բար//(122ա)էխաւս առ Յիսուս վասն Սարգսի *եւ իւր ծնողացն. ամէն (նմանիք ստորին լուսանցքներում, տարբեր սրբերի բարեխաւսութեամբ՝ 123բ–5ա, 127բ–8ա, 129բ–40ա, 141բ–52ա, 153բ–60ա, 161բ–4ա, 165բ–76ա, 177բ–88ա և այլուր):*

122ա Քրիստոս Աստուած, ողորմեայ Սարկաւագին. *ամէն (նման՝ 138բ, 151բ, 168ա, 171բ, 173բ և այլուր):*

127ա Քրիստոս Աստուած ողորմեայ Սարկաւագին՝ *եղբարւրն* Սարգսի *(նման՝ 216բ, 311ա):*

185ա Տէր Աստուած, ողորմեայ Աւետիսին *եւ* Սարկաւագին *(նման՝ 189բ, 353ա):*

*204բ Տէր Յիսուս, վասն արեան քո պատուականի, սրբեայ զ*Սարգ*//(205ա)*իսի *մեղաց պատեաց, եւ զընկեր իւր՝ զ*Մարտիրոս, *կեցո՛յ, Տէր:*

220բ Քրիստոս Աստուած, քաւեա զմեղս Սարգիս *գրչին, զ*Հայր*//(221ա)*ապետին *եւ զ*Յոհաննիսին, *կեցո՛յ, Տէր բարեար:*

255ա Քրիստոս Աստուած, ողորմեայ Աւետիսին՝ *հաւրն* Սարգսին *(նման՝ 279ա):*

257ա Քրիստոս Աստուած, ողորմեայ Գրիգորուն *(նման՝ 289բ):*

267ա Տէր Աստուած, ողորմեայ Աւետիսին *եւ* Սարկաւագին, *եւ աւրհնեա յողոյմութեամբդ քո, Տէր, զնոցին գերեզմանն:*

284ա Տէր Աստուած, ողորմեայ Աւետիսին *(նման՝ 318բ, 342ա):*

338բ Քրիստոս Աստուած... քաւեայ զմեղս Մաեմտուր *իրիցուն եւ ողորմեայ նմայ (նման՝ 344ա):*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

364բ (1647 թ., նորոգող Յոհան Կարճաւանից)
Ի հազար ևսուն ամի,
ԵՒյլ եւ թվոյ հնկեակ եւ մի (1647)
Եղեւ նորումն այս սոֆեստի
Ի գերայհրճաւ տանս մեծի:

Ջեսայի վարդապետն եւ զծընողսն մեր յիշել աղաչեմ:

*368բ Ջնորոգող սուրբ Նարեկիս՝ զ*Յոհան *վարդապետ* Կարճաւանցի *յիշեցէք: Թվին ՌՂ եւ Ջ (1647):*

ԿՆՔԱԴՐՈՇՄ 1բ, 122բ, 366բ Գիրքս Սուրբ Էջմիածնա *է:*


ԳՐՉԱՓՈՐՁ 2ա, 94բ, 103ա, 113բ–4ա, 182բ–3ա (շեղագիր տառեր ու բառեր):

1568
ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ
ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ

[Սկեւռա՞] ՈՒԲ — 1173

ԳՐԻՋ, ՇԱՂԿՈՊՂ՝ Գրիգոր [Սկևռացի: ՍՏԱՅՈՂ՝ Նեռսէս Լամբրոնացի:

ԹԵՐԹ՝ 343 չգռուած՝ 1ա—4ա, 5ա, 6բ—7ա, 55ա, 120ա, 178ա, 341բ—3բ: ՊՐԱԿ՝ 1x3 + Ա — ԼԷx 8 (ԺԳ 7, ԺԵ 10) + 1x 4 +4x8+1x7: ՆԻՒԹ՝ մագաղաթ: ՄԵՇՈՒԹԻՒՆ՝ 15,4x11,7: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասն: ԳԻՐ՝ երկաթագրախառն բոլորգիր: ՏՈՂ՝ 19: ԿԱՋՄ՝ սեւ կաշի՝ դռնակով (դռոշմազարդ շագանակագոյն կաշի), միջուկը՝ տախտակ, աստառը՝ դեղնագոյն, դռնակի աստառը՝ բազմագունի չեռտաւոր գործուածք:



Նմուշ՝ 75ա

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ՝ «Գրիգոր փիլիսոփա»՝ 7բ, «... Գրիգոր հսկող»՝ 55բ «Սուրբն Գրիգոր ճգնաւոր»՝ 120բ, Գրիգոր նաւեկացին «Յիսուս Քրիստոս»—ի ոտների մօտ գետնատարած՝ 178բ: հ ո ր ա ն՝ 5բ, 6ա: Կ ի ս ախ ո ր ա ն՝ 8ա, 179ա: ձ ա կ ա տ ա զ ա ր դ՝ 56ա: Լ ո ւ ս ա ն ց ա զ ա ր դ՝ բուսական, թռչնային, խաչ: Ջ ա ր դ ա գ ի ր՝ թռչնագիր (8ա), հանգուցագիր (56ա, 179ա) եւ ոսկեգիր երկաթագրեր:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. խոնաւութիւնից վերին լուսանցային մասերը թեթեւակի գունափոխուած, ժզ պրակից 1, եւ վերջին պրակից 3 թերթ ընկած: Կազմի կաշին՝ ճեղուած, եզերը՝ մաշուած, դռնակը՝ ճայճայուած եւ կիսով չափ ընկած, թիկունքի կաշին՝ փոխարինուած նորով (հին մնացորդներն ամրացուած նորին), աստառը՝ մաշուած, կապիչներն՝ ընկած: Նորոգուած ի դարում:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

–5բ–6ա Դրութիւմ յոքնաթախանձ բանից աւգտակարաց ապաշաւանաց ոգեշահ խրատուց անձին ըստգտանաց զղջականաց կանոնաց կենաց կամաւորական յանձնառութեանց աներեւութից յայտնութեանց մեղանաց խոստովանութեանց, ցուցմունք գաղտնեաց, տարածմունք ծածկելոց, յանդիմանութիւմ թաֆուցելոց, սրպեղանիք զաւաւոր վիրաց անբժշկականաց, դեղք ազդողականք ցաւոց անտեսականաց, // (6ա) ճնաւաւորութիւմ բազմամասնեայ երկանց վտանգից ի դիմաց կաւեաց ամենից բրնութեանց, առիթ արտասուաց, պատճառ աղաւթից, ի խնդրոյ հայցման հաց միանձանց եւ բազմաց անապատականաց

–8ա Ասացեալ Մատեան ողբերգութեան Գրիգոր Նարեկեայ վանաց վանականի, հոգեմատեան հոետորի եւ Հայոց փիլիսոփայի

ա. *8ա–10ա* Բան Ա. Ի խորոց սրտից խաւսք ընդ Աստուծոյ — *Ջայն հառաչանաց հեծութեան ողբոցս սրտի աղաղակի քեզ...*

բ. *10ա–4ա* Բան Բ. Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հսկողի առ նոյն աղերս մաղթանաց բանի. ի խորոց սրտից խաւսք ընդ Աստուծոյ — *Եւ արդ քանզի առ բարձրեալն Աստուած յաւդաւորական շրթամբք կարդաս...*

գ. *14բ–9ա* Բան Գ. Վերստին յաւելուած... խաւսք ընդ Աստուծոյ — *Տէր իմ, Տէր տուիչ պարգեւաց...*

դ. *19ա–21ա* [Բան Դ]. Վերստին յաւելուած... խաւսք ընդ Աստուծոյ — *Եւ քանզի սկիզբն կալայ խաւսել...*

ե. *21ա–4ա* Բան Ե. Վերստին յաւելուած... խաւսք ընդ Աստուծոյ — *Եւ արդ ես երկրածինս մարդ...*

զ. *24բ–7ա* Բան Զ. Վերստին յաւելուած... խաւսք ընդ Աստուծոյ — *Իսկ արդ զի՞նչ բարւոք գոյ առ այս...*

է. *27ա–9բ* Բան Է. Վերստին յաւելուած... խաւսք ընդ Աստուծոյ — *Եւ զի մի զփրկութեանն վստահութիւնն իսպառ կտրեցից...*

ը. *29բ–31ա* Բան Ը. Վերստին յաւելուած... խաւսք ընդ Աստուծոյ — *Եւ արդ, զի՞նչ գործեսցես անձն իմ կորուսեալ...*

թ. *31ա–3բ* Բան Թ. Վերստին յաւելուած... խաւսք ընդ Աստուծոյ — *Եւ արդ, զի՞նչ արժանաւոր ըստ քեզ բամբասանս շարակարգեցից...*

ժ. *33բ–5բ* Բան Ժ. Վերստին յաւելուած... խաւսք ընդ Աստուծոյ — *Եւ արդ, քանզի միապէս մատնէ կորստեան...*

ժա. *35բ–9բ* Բան ԺԱ. Վերստին յաւելուած... խաւսք ընդ Աստուծոյ — *Եւ արդ, ես յետինս դաւանողաց...*

ժբ. *39բ–42բ* Բան ԺԲ. Վերստին յաւելուած... խաւսք ընդ Աստուածոյ — *Եւ արդ, քանզի յաւէտ յառաջնումըն զղջմանն...*

ժգ. *42բ–4բ* Բան ԺԳ. Վերստին յաւելուած... խաւսք ընդ Աստուծոյ — *Աստուած բարերար հզաւր ահաւոր, Հայրդ բարեաց ողորմութեանց շնորհի...*

ժդ. *42բ–4բ* Բան ԺԴ. Վերստին յաւելուած... խաւսք ընդ Աստուածոյ — *Պաղատիմ առ քեզ, լուսոյ ճառագայթ...*

ժե. *47ա–50բ* Բան ԺԵ. Վերստին յաւելուած... խաւսք ընդ Աստուծոյ — *Իսկ դարձեալ աստուստ վերստին առ նոյն հեծութիւն սրտիս...*

ժզ. *50բ–2ա* Բան ԺԶ. Վերստին յաւելուած... խաւսք ընդ աստուծոյ – *Եւ արդ, դու միայն Աստուած երկնաւոր...*

ժէ. *52ա–4բ* Բան ԺԷ. Վերստին յաւելուած... խաւսք ընդ Աստուծոյ – *Արդ, աղաչեմ զխնամակալդ վըտանգաւորաց...*

ժը. *56ա–60ա* [Բան ԺԸ]. Վերստին յաւելուած... խաւսք ընդ Աստուծոյ – *Արդ, ես ծնունդս մեղաց, որդիս մահացու երկանց...*

ժթ. *60ա–3բ* Բան ԺԹ. Վերստին յաւելուած... խաւսք ընդ Աստուծոյ – *Նայեաց ամենահայեաց տեսութիւն կենաց...*

ի. *63բ–7բ* Բան Ի. Վերստին յաւելուած... խաւսք ընդ Աստուծոյ – *Տէր, Տէր անոխակալ եւ երկայնամիտ...*

իա. *67բ–70ա* Բան ԻԱ. Վերստին յաւելուած... խաւսք ընդ աստուծոյ – *Եւ քանզի ես ինձէն անձամբ իմով ինքնագրաւ ի մահ ոչ կացի...*

իբ. *70բ–2բ* Բան ԻԲ. Վերստին յաւելուած... խաւսք ընդ Աստուծոյ – *Դարձեալ այղաբանեցիք ի նոյն շարունակ...*

իգ. *72բ–6ա* Բան ԻԳ. Վերստին յաւելուած... խաւսք ընդ Աստուծոյ – *Տէր Աստուած ամենայնի, զաւրաւոր յամենայնի...*

իդ. *76ա–8բ* Բան ԻԴ. Վերստին յաւելուած... Խաւսք ընդ Աստուծոյ – *Եւ արդ, որո՞ց խնդրոց արժանաւոր վարկանելով զիս...*

իե. *78բ–83ա* Բան ԻԵ. Վերստին յաւելուած... խաւսք ընդ Աստուծոյ – *Բայց քանզի ի վերայ այսքանեաց գերութեանց...*

իզ. *83ա–6բ* Բան ԻԶ. Վերստին յաւելուած... խաւսք ընդ Աստուծոյ – *Եւ արդ, ստուգապէս եւ իրաւարար, ընդ որս որք...*

իէ. *86բ–92ա* Բան ԻԷ. Վերստին յաւելուած... խաւսք ընդ Աստուծոյ – *Եւ քանզի ընդ ողբաձայնիցն բանաստեղծութեանց...*

իը. *92ա–7բ* Բան ԻԸ. Վերստին յաւելուած... խաւսք ընդ Աստուծոյ – *Եւ արդ, զո՞րս յայտնեցիք եւ յաղագս ո՞յր նշանակեցիք...*

իթ. *95բ–101բ* Բան ԻԹ. Վերստին յաւելուած... խաւսք ընդ Աստուծոյ – *Եւ արդ, դու միայն սկիզբն բարեաց...*

լ. *101բ–5բ* Բան Լ. Վերստին յաւելուած... խաւսք ընդ Աստուծոյ – *Եւ արդ, ճշմարտեսցի բան քո, ողորմած բոլորից Աստուած...*

լա. *101բ–8ա* Բան ԼԱ. Վերստին յաւելուած... խաւսք ընդ Աստուծոյ – *Եւ արդ, քանզի բազմացուցի պայմանաւ բանիս...*

լբ. *108բ–12բ* Բան ԼԲ. Վերստին յաւելուած... խաւսք ընդ Աստուծոյ – *Եւ արդ, ես յետնեալս ի նախադրութեանց անարժանաւորաց...*

լգ. *112բ–8բ* Բան ԼԳ. Վերստին յաւելուած... խաւսք ընդ Աստուածոյ – *Արդ, զյարմարութիւն պաշտաման բանիս... (119աբ տե՛ս Բ)։*

լդ. *121ա–9ա* Բան ԼԴ. Վերստին յաւելուած... խաւսք ընդ Աստուծոյ – *Արդ, առ այսքիկ թշւառացեալ շնչոյս իմոյ...*

լե. *129ա–32ա* Բան ԼԵ. Վերստին յաւելուած... խաւսք ընդ Աստուծոյ – *Եւ արդ, Տէր զաւրութեանց, մեծութիւն ահեղ...*

լզ. *132բ–4ա* Բան ԼԶ. Վերստին յաւելուած կրկին։ Ի լման ասա – *Եւ քանզի անթիւ են յաճախեցեալ եւ գերազանցութեամբ...*

լէ. *134ա–7ա* Բան ԼԷ. Վերստին յաւելուած... խաւսք ընդ աստուծոյ – *Արդ, այդ գումարտակ վերադասացեալ բարեշնորհութեամբ...*

լը. *137ա–9ա* Բան ԼԸ. Վերստին յաւելուած... խաւսք ընդ Աստուծոյ – *Բայց արդ, որպէս երբեմն յայղ ընթերցուածի...*

լթ. *139ա–41ա* Բան ԼԹ. Վերստին յաւելուած կր[կին]։ Ի լման ասա – *Եւ քանզի զկերպարանն առաջին լքի...*

խ. *141ա–2բ* Բան Խ. Վերստին յաւելուած... խաւսք ընդ Աստուծոյ – *Ամենակալ Աստուած, բարեբար, ստեղծիչ բոլորից...*

խա. *142բ–3ա* Բան ԽԱ. Վերստին յաւելուած կր[կին]։ Ի լման ասա – *Որդի Աստուծոյ, աւրհնեալ ամենայնի, Հաւրդ ահաւորի...*

խբ. *143բ–4բ* Բան ԽԲ. Վերստին յաւելուած կրկին հեծութիւն նո[րին] – *Տէր Աստուած գթութեան, փրկութեան եւ ողորմութեան...*

խգ. *144բ–5բ* Բան ԽԳ. Վերստին յաւելուած կրկին հե[ծութեան]։ Ի լման – *Բժշկական կրթակատնութեան ամենափորձ հնարաւորութեամբ...*

խդ. *145բ–7բ* Բան ԽԴ. Վերստին յաւելուած կրկին հեծու[թեան] – *Աստուած անսահման, ծնունդ Աստուծոյ հարագատ...*

խե. *147բ–51բ* Բան Խե. Վերստին յաւելուած... խաւսք ընդ Աստուծոյ – *Եւ արդ, յոյս բարեաց տնկեալ ի սրտի...*

խզ. *152ա–4բ* Բան ԽԶ. Վերստին յաւելուած... խաւսք ընդ Աստուծոյ – *Արդ, վրիպեալս ես յաւէտ ամենապատիժ...*

խէ. *154բ–6ա* Բան ԽԷ. Վերստին յաւելուած... խաւսք ընդ Աստուծոյ – *Եւ արդ, զի՞նչ գոյ ասել ամաչեցելոյս...*

խը. *156բ–64ա* Բան ԽԸ. Վերստին յաւելուած... խաւսք ընդ Աստուծոյ է – *Բարձրեալ, հզաւր, անսկիզբն, անեղ...*

խթ. *164բ–7բ* Բան ԽԸ (=ԽԹ). Վերստին յաւելուած... խաւսք ընդ Աստուծոյ – *Եւ արդ, մի տիրեսցեն...*

ծ. *167բ–71ա* Բան Ծ. Վերստին յաւելուած... խաւսք ընդ Աստուծոյ – *Այլ արդ, քանզի որպէս ոչ է առանց Քրիստոսի Աստուծոյ ոգւոց փրկութիւն...*

ծա. *171ա–5բ* Բան ԾԱ. Վերստին յաւելուած... խաւսք ընդ Աստուծոյ – *Եւ արդ, առ երկրածին ոք պաղատեցայ...*

ծբ. *175բ–7բ* Բան ԾԲ. Վերստին յաւելուած... խաւսք ընդ Աստուծոյ – *Աւրհնեալ տիրաբար ի քումդ էութեան...*

ծգ. *179ա–83ա* Բան ԾԳ. Վերստին յաւելուած... խաւսք ընդ Աստուծոյ – *Տէր, Տէր զաւրութեանց, բոլորից գոյից թագաւոր...*

ծդ. *183ա–5բ* Բան ԾԴ. Վերստին յաւելուած... խաւսք ընդ Աստուծոյ – *Եւ արդ, յամենայնի առ ամենայն ակնկալութիւն քո է...*

ծե. *185բ–8բ* Բան ԾԵ. Վերստին յաւելուած... խաւսք ընդ Աստուծոյ – *Եւ վասն զի սլացեալ ոգւոցս թեւաւք ի թիւս անբաւից...*

ծզ. *188բ–91ա* Բան ԾԶ. Վերստին յաւելուած... խաւսք ընդ Աստուծոյ – *Իսկ զառիթեան մահու դիպուածս դժոխարմատ ծառոյս...*

ծէ. *191բ–3բ* Բան ԾԷ. Վերստին յաւելուած... խաւսք ընդ Աստուծոյ – *Քրիստոս Աստուած, անուն ահաւոր, մեծութեան տեսակ...*

ծը. *193բ–5բ* Բան ԾԸ. Վերստին յաւելուած... խաւսք ընդ Աստուծոյ – *Աւրհնեալ Տէր Յիսուս ընդ Հաւր, ի կամս հաճութեան Հոգւոյդ քո Սրբոյ...*

ծթ. *195բ–7բ* Բան ԾԹ. Վերստին յաւելուած... խաւսք ընդ Աստուծոյ – *Հաւատամ եւ վկայեմ մտաց գիտութեամբ...*

կ. *197բ–203բ* Բան Կ. Վերստին յաւելուած... խաւսք ընդ Աստուծոյ – *Եւ արդ, որպէս զի ոչ վայելէ աւրհնաբանութիւն...*

կա. *203բ–8ա* Բան ԿԱ. Վերստին յաւելուած... խաւսք ընդ Աստուծոյ – *Եւ ընդէ՞ր է ինձ բնաւն, որ ի Սաղմոսին...*

կբ. *208ա–12ա* Բան ԿԲ. Վերստին յաւելուած... խաւսք ընդ Աստուծոյ – *Բարերար եւ բազմագութ, մարդասէր եւ երկայնամիտ...*

կգ. *212ա–3բ* Բան ԿԳ. Վերստին յաւելուած... խաւսք ընդ Աստուծոյ – *Այդ, արդ, ընդէր ոչ ի վերայգրեցեալն Սաղմոս...*

կդ. *214ա–6ա* Բան ԿԴ. Վերստին յաւելուած... խաւսք ընդ Աստուծոյ – *Եւ արդ, առ ամենայն բան յամենայնի ուղիղ ես, Աստուած...*

կե. *216ա–20ա* Բան ԿԵ. Վերստին յաւելուած... խաւսք ընդ Աստուծոյ – *Եւ արդ, ես նախնիս ամպարշտաց...*

կզ. *220ա–6ա* Բան ԿԶ. Վերստին յաւելուած... խաւսք ընդ Աստուծոյ – *Արդ, որ ոք եւ առցէ զայս դեղ մաղթանաց...*

կէ. *226ա–8ա* Բան ԿԷ. Վերստին յաւելուած... խաւսք ընդ Աստուծոյ – *Բայց քանզի յոյժ արդար է բան իրաւանաց...*

կը. *228բ–32ա* Բան ԿԸ. Վերստին յաւելուած... խաւսք ընդ Աստուծոյ – *Եւ արդ, յիշատակ ահարկութեան վերայգրեցելոցդ...*

կթ. *232ա–4ա* Բան ԿԹ. Վերստին յաւելուած... խաւսք ընդ Աստուծոյ – *Եւ արդ, վասն զի ի ձեռն մեծիդ եւ ամենահնար արուեստաւորիդ...*

հ. *234բ–7ա* Բան Հ. Վերստին յաւելուած... խաւսք ընդ Աստուծոյ – *Եւ քանզի համբարձեալ զընթացս բանիս ի յոքունց աստիս...*

հա. *237ա–42ա* Բան ՀԱ. Վերստին յաւելուած... խաւսք ընդ Աստուծոյ – *Եւ քանզի երջանիկքն եւ փառաւորեալքն...*

հբ. *242բ–5ա* Բան ՀԲ. Վերստին յաւելուած... խաւսք ընդ Աստուծոյ – *Այդ, ահա, ձեզ ասեմ, ո՛վ եկեղեցիք միանձանց...*

հգ. *245ա–8ա* Բան ՀԳ. Վերստին յաւելուած... խաւսք ընդ Աստուծոյ – *Թագաւոր բարձրեալ, հզաւր, ահաւոր...*

հդ. *248ա–51բ* Բան ՀԴ. Վերստին յաւելուած... խաւսք ընդ Աստուծոյ – *Արքայ երկնաւոր, Տէր բոլորեցուցց...*

հե. *251բ–64բ* Բան ՀԵ. Վերստին յաւելուած... խաւսք ընդ Աստուծոյ – *Եւ արդ, ընգղմեալ, զմայլեալ եւ իսպառ կործանեալ...*

հզ. *264բ–6բ* Բան ՀԶ. Վերստին յաւելուած... խաւսք ընդ Աստուծոյ – *Աստուած ողորմած, բազմագութ, հզաւր, ահաւոր, մարդասէր...*

հէ. *266բ–ղբ* Բան ՀԷ. Վերստին յաւելուած... խաւսք ընդ Աստուծոյ – *Եւ քանզի աւր է աւրհնաբանեալ...*

հը. *269ա–72ա* Բան ՀԸ. Վերստին յաւելուած... խաւսք ընդ Աստուծոյ – *Եւ արդ, անկեալ հերեսս հողանիւթ կերպիւս...*

հթ. *272ա–5բ* Բան ՀԹ. Վերստին յաւելուած... խաւսք ընդ Աստուծոյ – *Յիշեա, Տէր գթութեանց, սիրողդ իրաւանաց...*

ձ. *275բ–8ա* Բան Զ. Վերսդին յաւելուած... խաւսք ընդ Աստուծոյ – *Եւ արդ, ի վերայ այսքանեաց յուսահատութեանց...*

ձա. *278ա–80ա* Բան ԶԱ. Վերստին յաւելուած... խաւսք ընդ Աստուծոյ – *Ընդ Աստուածածնին մաղթանաց՝ ահա եւ զվերնոցն անմահ հրեշտակացն...*

ձբ. *280ա–4ա* Բան ԶԲ. Վերստին յաւելուած... խաւսք ընդ Աստուծոյ – *Տէր Աստուած բարերար, բազմապարգեւ թագաւոր...*

ձգ. *284ա–8բ* Բան ԶԳ. Վերստին յաւելուած... խաւսք ընդ Աստուծոյ – *Հարձրեալ անքնին, զաւրութիւն ահեղ...*

ձդ. *288բ–9բ* Բան ԶԴ. Վերստին յաւելուած... խաւսք ընդ Աստուծոյ – *Արքայ երկնաւոր, թագաւոր բարձրեալ...*

ձե. *289բ–91ա* Բան ԶԵ. վերստին յաւելուած... ի խորոց սրտի – *Իսկ արդ, վասն զի արթնականն մեր զուարթութիւն...*

ձզ. *291բ–2բ* Բան ԶԶ. Վերստին յաւելուած կրկին ճեծութեան: Ի լման ասա – *Ընդ այս հառաչանաց թախծութեան ողբոց...*

ձէ. *292բ–4բ* Բան ԶԷ. Վերստին յաւելուած... ևորին – *Եւ արդ, քանզի ի գլուխ կատարման հասեալ...*

ձը. *295ա–6բ* Բան ԶԸ Վերստին յաւելուած... խաւսք ընդ Աստուծոյ – *Եւ արդ, ջուր կամաց եւ կաթ արտասուաց...*

ձթ. *296բ–7ա* Բան ԶԹ. Վերստին յաւելուած կրկին ճեծութեան – *Աստուած եւ Տէր, կեանք եւ Արարիչ...*

ղ. *297ա–301բ* Բան Ղ. Վերստին յաւելուած... խաւսք ընդ Աստուծոյ – *Բարեբանեալ Աստուած երկնաւոր, միայն Արարիչ...*

ղա. *301բ–5ա* Բան ՂԱ. Վերստին յաւելուած... խաւսք ընդ Աստուծոյ – *Տէր, Տէր գթութեանց եւ Աստուած ողորմութեանց...*

ղբ. *305բ–14բ* [Բան] ՂԲ. Ի փայտն երջանիկ բարեբաստութեան ժամահարին խոռհրդածութեան աղաչանս եդեալ ընդ կերպարանս թարգմանութեան – *Գոհանամ զքէն, բարեգութ, միայն մարդասէր...*

ղգ. *314բ–37բ* [Բան] ՂԳ. Վերստին յաւելուած... մաղթանաց բանի: Աղաւթք թարգմանաւէն վասն սրբալոյս եղոյն միւռովվնի: ՂԹ – *Սուրբ ահաւոր անուն բարձրեալ անպատում...*

ղդ. *338ա–9ա* [Բան] ՂԴ. Վերստին յաւելուած... խաւսք ընդ Աստուծոյ – *Աստուած յաւիտենական, բարերար եւ ամենակալ...*

ղե. *339աբ* [Բան] ՂԵ. Վերստին յաւելուած... խաւսք ընդ Աստուծոյ – *Արգեակն արդար, ճառագայթ աւրհնեալ... ընդ իմ պարտաւորիս միշտ աղաւթելով [ազգակցաւ մարմնոյդ... ամէն]:*

– *340ա–1ա* Յիշատակարան մատենիս դրութեան – *Ըստ հոլովման ընթացից ամանակաց յառաջ շարժութեան, որ ըստ լրապատարն նշուղագեղն արփիաճաճանչ լուսակիրն աւրակշիռն մղտափարատն ակնապարար ականն արեւու՝ ստեղծականն արուսեկի, որ համբարէ, կուտէ ամաց յոլովութին ի չափս դրուց շնչասպառ եւ կենդանանորոգ առուղեկան յաւիտենիս, ի յաւարտումն կատարման իններեակ յոբէղինին, ի սկիզբն պսակելոյ մտի տասնեկին յաբեթեական տոհմիս տումարի, յետ երից ամաց անցելոց՝ որ զկնի գալստեան ի կայս եւ ի կոյս կողմանց հիսիսոյ դիմաց արեւելից՝ յաղթող եւ մեծ կայսերն Հոռովմոց Բասլի, յորժամ ընդարձակ եւ մա//(340բ)կագաւիթ կանոնաւ սփիւռ տարածէր՝ լիասահման եւ անխտրոց ի ստուարակարկառ կոթողս կարծր արձանաց՝ ի ձգումն ձեռին եւ յանխզելի լարս պարանաց երկարագունից՝ անթարթափ ի նոյն վերասացեալ ի յաջ եւ յահեակ՝ սեփականել յաւելուլ բաժինս մասանց վիճակաց խմբից աշխարհաց ի ծոց իւր: Արդ, յայնմ անդորրութեան միջոցի, յորում եգերեալ ընդոտնեցաւ թշնամիք եկեղեցւոյ, ստացեալ հիմնեցի, կառուցի, կարգեցի, կուտեցի, արձանացուցի, դիզի, բարդեցի, կացուցի, ցուցի, հաստատելով ի հրաշակերտութիւն միագոյ իրի զբազմաստեղնեան դրուագս դրութեան այսմ սոփորի արգասաւորի, ես՝ Գրիգոր կրաւնաւոր քահանայ, յետին բանահիւսաց եւ կրտսեր վարժապետաց, գոր//(341ա)ծակցութեամբ եղբաւր իմոյ ընտրելոյ Յովանէս կոչեցելոյ՝ Նարեկայ մեծափառ եւ բարձրապատիւ ուխտի վանականի, որք իսրեւ զմի մարմին բանական ի յերկուց առ մի կերպարան շինելոյ դիմաց կենցաղակեցելով ոչ միայն հարազատք, այղ եւ միաշունչք, միակրաւնք համապատիւք զուգահաւանք, ի քառից աչաց առ մի եւ նոյն շաւիղ խորհրդոյ տեսեալք:

Արդ, հայցեմք ի ճաշակողացդ յայսմ սեղանոյ յոքնաւրէն եւ ախորժահամ հանդերձեցելոյ՝ յիշատակել զմեզ ի մաղթանս ուղիղս եւ ի պատկանաւոր խնդրուածս, սեռն սիրով ի միտս բարիս, որով եւ դուք եղիջիք գրեալ ի մատեանս կենաց վերին դպրութեանն:

Տպ. եր., 1985, Ա:

Ծնթ. Վրիպակները ուղղուած են եւ յատուկ նշանով նշուած լուսանցքներում: Երեւում է 3 ձեռք՝ գրչի, Ներսէս Լամբրոնացու, Անանունի:

Բ. [Յաւելագրութիւնք Ներսիսի Լամբրոնացւոյ]

1. *114բ* Բանք նշանաւորք որ ի գիրս յայս *(ցանկ)* – *ԺԲ. Վասն արհաւրաց գիշերայնոց... ՂԳ. Ի Սուրբ միւռ[ոնն]:*

2. *119աբ* Վարք սրբոյ առնն Աստուծոյ Գրիգորի Նարեկացւոյ — *Սուրբ հայրս մեր, աստուածաշնորհ քահանայս եւ կրաւնաւոր* Գրիգոր *էր ի* Նարեկայ *վանից... մարմինն եդեալ կայ ի նոյն* Նարեկայ *վանս... ամէն։*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

24ա Ջմեղապարտ գրիչս յիշեա, ո՛վ Տէր իմ, Ներսէս։

*54բ Ստացաւղ սորա զ*Ներսէս՝ *զորդի մեծազաւր սեւաստաւսի* Աւշնի, *յիշեսջիք ի Քրիստոս։*

— (Այլ ձեռք) Սուրբ Նէրսէս *քղւեր որդի էր տէր* Գրիգորիոսի *կաթողիկոսի Ամենայն Հայոց։*

108ա Ջմեղաւք դատապարտեալս աղաչեմ յիշել։

*118բ Ստացաւղ սորա՝ զ*Ներսէս *աստուածամերձ քահանայ յիշեսջիք, եւ զգրիչս աղաչեմ։*

*132ա Զ*Վարդան *աստուածամերձ քահանայ, որ բարիոք ծերութեամբ հանգեաւ ի Քրիստոս յիշեսջիք. թու[ին] ՈՒԲ (1173)։*

177բ Զաստուածամերձ քահանայ Ներսէս՝ *զորդի մեծազաւր սեւաստաւսի* Աւշնի, *յիշեսջիք ի Քրիստոս, որդիք լուսոյ։*

191ա Մեղաւք դատապարտելոյս Գրի[գորի] *թողութիւն հայցել աղաչեմ (նման՝ 242ա)։*

213բ Զողորմելի գրիչս աղաչեմ յիշել ի Տէր։

220ա Ջմեղապարտս գրիչ աղաչեմ յիշել։

228ա Մ՛վ սուրբք Աստուծոյ, որք աղաւթէք լուսաիղձ մատենիւս, զողորմելիս յիշեսջիք։

284ա Զողորմելի գրիչս՝ Գրիգոր *աղաչեմ յիշել ի Տէր։*

341ա Փա՛ռք ամենասուրբ երրորդութեանն յաւիտեանս յաւիտենից։

ԿՆՔԱԴՐՈՇՄ 8բ, 139բ, 337բ Գիրքս Սուրբ *էջմիածնա է։*


1569
ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ
ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ

Անկեղակոյտ


ՊՋ — 1431

ԳՐԻՋ՝ Մաթէոս (Մաթոս) երէց։ ՍՏԱՑՈՂ՝ Յովաննէս Վարագեցի։


ԹԵՐԹ՝ 300. չզրուած՝ 3ա։ ՊՐԱԿ՝ 1x 2 + Ա—ԻԶx12 (ԻԳ 11, ԻԴ 8, ԻԶ 3)։ ՆԻՒԹ՝ թուղթ։ ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 16 դ 11։ ԴՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն։ ԳԻՐ՝ բոլորգիր (ԺԶ—ԺէԴդ. նուռզողի՝ 15աբ, 50ա—1բ, 284ա—300բ), նօտրգիր (1ա—2բ)։ ՏՈՂ՝ 23։ ԿԱԶՄ՝ դռոշմազարդ շագանակագոյն կաշի՝ դռնակով, միջուկը՝ տախտակ, աստառը՝ ծաղկազարդ շերտաւոր, դռնակինը՝ ծաղկազարդ կտաւ։



Նմուշ՝ 14ա



Նմուշ՝ 296բ



Նմուշ՝ Աա

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ — Գրիգոր Նարեկացի՝ 4բ։ Ճ ա կ ա տ ա գ ա ր դ՝ 5ա։ Լ ու ս ա ն ց ա գ ա ր դ՝ բուսական։ Ջ ա ր դ ագ իր՝ հանգուցագիր, թոյնագիր։ Գ ոյ ն ե ր՝ կարմիր, կապոյտ, շագանակագոյն։

ՊԱՏԱՌԻԿ—ՊԱՀՊԱՆԱԿ — Ճառընտիր։ ԺԷ—ԺԸ դդ.։ 2 (Ա—Բ) + 2 (Գ—Դ), ստացուած եզրաճատուած երկու թերթերի ընդերկայնակի երկտակումից։ Մագաղաթ, երկսիւն, բոլորագիծ երկաթագիր։ Կարդալ՝ Դա—Գբ, Գա—Դբ «///[Վ]ասն սրբոյն Գրիգորի... Հայոց Մեծաց։ Իսկ մեծ արեւ///» (Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1909, էջ 449, տող 14, էջ 453, տող 4)։ Աա—Բբ «///[եկ]եղեցւոջն, կամեցաւ կանգն[ել], զոր յափշտակեալ սրբոյն Յուսկանէ... Այսպէս վկայութեամբ փոխեցան... ամէն///» («Վկայաբանութիւն սուրբ հայրապետացն Հայոց՝ որոց սրբոյն Գրիգորի... եւ Դանիէլի հաճանայի». տե՛ս Յասմատուրմ, Կ. Պոլիս, 1834, Բ, էջ 267։ Ունի զգալի տարբերութիւն)։ Բբ—Բա «///Յերկրող թղթոյն որ առ Տիմոտեոս — Վասն որոյ յիշեցուցանեմ... բնակելոյ///» (Ա, 6—14)։

ՎԻՃԱԿ՝ բաւարար. խոնաւութիւնից գրադաշտը գունափոխուած, ցեցակեր։ Կազմի կաշին՝ ճերմուած, եզրերը՝ մաշուած, կապիչներն՝ ընկած։ ԺԶ—ԺէԴդ. նուռզուած, լրացուած թերին (տե՛ս Գիր) եւ լուսանցազարդերը։

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Ա. *3ա—289բ* Դրումբ յոգնաթախանձ բանից աւգտակարաց... Ասացեալ Մատեան ողբերգութեան Գրիգորի Նարեկայ վանից վանականի հոգեմտեան հոետորի եւ Հայոց փիլիսոփայի

Տե՛ս նեւ. 1568, 5բ—341բ. § ա/*5ա—7ա*։ բ/*7ա—11ա*։ գ/*11ա—5բ*։ դ/*15բ—7ա*։ ե/*17ա—20ա*։ զ/*20ա—2բ*։ է/*22բ—4բ*։ ը/*25ա—6ա*։ թ/*26ա—8բ*։ ժ/*28բ—30ա*։ ժա/*30ա—3բ*։ ժբ/*33բ—*

6ա: ժզ/36ա–7բ: ժդ/37բ–40ա: ժե/40ա–3ա: ժզ/43ա–4ա: ժէ/44բ–7ա: ժը/47ա–50բ: ժթ/50բ–3բ: ի/53բ–6բ: իա/57ա–9ա: իբ/59ա–61ա: իգ/61ա–4ա: իդ/64ա–6ա: իե/66ա–70ա: իզ/70ա–3ա: իէ/73ա–7ա: իը/77ա–81բ: իթ/81բ–5ա: լ/85բ–8բ: լա/88բ–92ա: լբ/92ա–6ա: լգ/96ա–101բ: լդ/102ա–9բ: լե/109բ–12ա: լզ/112ա–3բ: լէ/113բ–6ա: լը/116ա–8ա: լթ/118ա–9բ: խ/119բ–21ա: խա/121ա–2ա: խբ/122ա–3ա: խգ/123ա–4ա: խդ/124ա–6ա: խե/126ա–9բ: խզ/130ա–2բ: խէ/132բ–4ա: խը/134ա–41ա: խթ/141ա–4ա: ծ/144ա–7բ: ծա/147բ–51ա: ծբ/151բ–3ա: ծգ/153բ–7ա: ծդ/157ա–9ա: ծե/159ա–62ա: ծզ/162ա–4բ: ծէ/164բ–6բ: ծը/166բ–9ա: ծթ/169ա–70բ: կ/170բ–6բ: կա/176բ–80բ (180բ–2ա տե՛ս կգ): կբ/182ա–6ա (§ կգ–ից յետոյ): կգ/180բ–2ա (§ կբ–ից առաջ): կդ/186ա–8ա: կե/188ա–91բ: կզ/191բ–6բ: կէ/196բ–8բ: կը/198բ–201բ: կթ/201բ–3բ: հ/203բ–5բ: հա/205բ–10ա: հբ/210ա–2բ: հգ/212բ–4բ: հդ/214բ–8ա: հե/218ա–29ա: հզ/229ա–30բ: հէ/230բ–2բ: հը/232բ–5բ: հթ/235բ–9ա: ձ/239ա–41ա: ձա/241ա–3ա: ձբ/243ա–7ա: ձգ/247ա–51ա: ձդ/251ա–2բ: ձե/252բ–4ա: ձզ/254ա–5բ: ձէ/255բ–7բ: ձը/257բ–9բ: ձթ/259բ–60ա: ղ/260ա–4ա: ղա/264ա–7բ: ղբ/267բ–75բ: ղգ/284ա–300բ (վերջում, վերանորոգողի ձեռքով, առանց գլխահամարի): ղդ/275բ–7ա (նշուած՝ ղգ): ղե/277ա–8ա (նշուած՝ ղդ): Յիշատակարան մատենիս գրութեան՝ 278բ–9բ (նշուած՝ ղե):

— տե՛ս տպ. Գրիգոր Նարեկացի, Մատեան ողբերգութեան, Երեւան, 1985, բ:

Ունի.

3. *218ա Մանաւանդ եւ ինձ՝* անարժան Յովանիսի՝ *գրոցս ստացաւղի եւ վերստին նորոգաւղի մասն բարիաց պարգեւհոգի...*

— *1ա–2բ* Յանկ [սկզբնատողից բանից] մատենիս — *Ա. Զայն հառաչանաց... Ղե. Ըստ հոլովման ընթացից ամանակաց:*

Բ. *279բ–81բ* [Վարք Գրիգորի Նարեկացւոյ] — *ի թուականին Հայոց ՆԼԲ, ի հայրապետութեանն տեառն* Վահանայ *եւ ի թագաւորութեանն* Յունաց Վասլի... *եդեալ կայ ի նոյն վանս* Նարեկայ... *ամէն:*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

*2բ (նօտրգիր, ցանկ վերջում) կարդա հեծծեա եւ զ*Մաթէոս *գծողս յիշեա:*

24բ ե[ւ վ]ա՛յ է ինձ գծողիս՝ յաւուրն յայնմիկ:

101բ Քրիստոս Աստուած, քո սուրբ մարմնով եւ արեամբդ որ միշտ պատարագիս անծախապէս, ողորմեա տառապեալ ոգւոյ գծողի սորա՝ Մաթէոսի *անարժան իրիցի, եւ ծնաւղացն իմ, նաեւ գեղեցիկ պատանոյն իմ* Ղուզիջան *կոչեցելոյն, որ եւ յայսմ ամսոյն առ քեզ կոչեցեր, Տէր, յարքայութիւնդ երկնից: //(102ա) Ընդ նոսին եւ ինձ՝ մեղաւոր եւ անարժան* Վարագեցի Յովանիսիս, *որ զանուանս ունիմ եւ զգործս՝ ոչ: Ընդ նոսին եւ ձեզ՝ յիշողաց զմեզ թողութեան մասն պարգեւի. ամէն:*

129բ Եւ ինձ հնարեա ելս փրկութեան, Տէր:

153ա Եւ զիս քաւեա, Տէր:

217բ Քրիստոս Աստուած... ողորմեա եւ ինձ՝ անողորմելի անձին գծողիս՝ Մաթէոսի, *բիւր քանքարոյ պարտականի...*

229ա Այն՝ իմ հաւատոյ երրորդութիւն, եւ այս՝ ի մայրն իմ լուսափառ խոստովանեալ դաւանութիւն:

281բ Աւրհնեալ—աւրհնեալ, որ այսպիսի շնորհս պարգեւէ մարդկան, որպէս երիցս երանեալ սուրբ վարդապետիս Գրիգորի՝ Նարեկայ վանաց վանականի, *հոգիըննկալ մաքրագունի եւ խարագնազգեաց դարձեալ ճգնաւորի: Քրիստոսի Աստուծոյ մերոյ փա՛ռք իմովս ձայնիւ, յամենայն սրբոց եւ սիրողաց իւրոց. ամէն:*

282ա Փա՛ռք... Արդ, գրեցաւ նարեկա սուրբ վարժապետի աղաւթից կըտակս այս ի թվականութեանս Հայոց ՊՁ (1431), ի գեաւղաքաղաքս, որ Անկեղակոյտ *յորջորջի, ընդ հովանեաւ* Սուրբ Գրիգորի Լուսաւորչիս *եւ* Սուրբ թագաւորիս Սիմովնի,

Ձեռամբ անարհեստ եւ փցուն գրչի՝
Մաթոս *[սուտան]նուն իրիցի,*
Որ պարտականս եմ բիւր քանքարի,
Ձի զտաղանդ Տեառն չյարգիցի,
Այլ յանիրաւ գործի կացի:
Վասն այն է վա՛յ ինձ գէթուորի,
Որ մոռացայ զաւր վախճանի,
Եւ զգալուստ Տեառն չյիշեցի:
Ի մեծի [աւ]ուր դատաստանի,
Որ երկիր ու երկինք գալարի,
Յայնժամ ողբամ հառաչալի
Եւ կսկծամ մորմոքալի // (282բ)
Եամ դառնապէս արտասուալի,
Ձեղկելի անձն իմ տուժելի,
Ձոր մատնեցի չար գազանի
Յիմարութեամբս իմ եղկելի:
Անհուն չարիս վաստակեցի,
Մինչեւ ի մահ անդարձ մնացի,
Եւ զժամանակս զոր անցուցի,
Ձամէն խաբող եւ սուտ տացի:
Ձսատանայի կամքն արարի,
Եւ ինձ տանջանք վաստակեցի,
Ըզհուր գեհեանն վառեցի,
Ու սառնամանիք մըթերեցի:
Կամ եւ այրիմ անշիջելի,
Եամ ու ատամունքս իմ կափկափի,
Այս ամենայն ինձ պատահի
Յաւր սատակմանն իմ գարշելի:
Հազար բերան վ[ա՛յ ի[ն]ձ լինի,
Ձի յիմ գործոցըս հանդիպի,
Որ զատարին կամքն արարի,

Ու յիմ Արարչէն ամօթ մնացի։
Ըզհրեշտակաց կարգս որ առի,
Ու այլ գեր ի վեր քան զոր գրեցի,
Յիմարութեամբ տգիտալի
Ընդ խոզին ի տիղմ շաղախեցի։
Եւ զորս առեալ ինչս Արարչին,
Գնացի ի տար աշխար հեռի,
Եւ վատնեցի զայն հետ չարի,
Ու ի հայրական գթոցն ելի։ // (283ա)
Վասն այնորիկ խորհուրդ արի՝
Գրել զմատեանս այս ցանգալի,
Որ է աղաւթք զամանալի,
Ոգեալ սրբոյն Գրիգորի։
Զսա ըստացայ ինձ գանձ յերկրի,
Զի յոյս բարեացն չունէի,
Վասն այն ըզսա գծագրեցի,
Զի ապաւէն ինձ եղիցի։
Այլ յետ աստեացս իմ երբ լինի,
Յորժամ նիրհիմ ի տապանի,
Զի յիշատակ սա ինձ լիցի,
Եւ ծնաւղացն իմ գովելի։
Ազա Սուլդան *անուն կոչի,*
Ու մօրն իմ դէգայ՝ մեծ Թուխթէնի
Բարի կենաւք կացեալ յերկրի
Եւ /// կալեալ զաւր վախճանի։
[Ասագ] եղբարձ իմ կենդանի,
Զոր Փա[ո]ուխշահ *կու անուանի,*
Կրսեր եղբաւր հեզահոգի՝
Սալուխ *անուն քաջ մշակի։*
Եւ հաւրեղբաւրն իմ անորդի՝
Իկիթաղայ *գործովք բարի,*
Ու ամուսնոյն իւր՝ Թուխծամի,
Որք են ննջեալ ի տապանի։
Եղբաւրորդոյն իմ Սալթանշի,
Քաջ կարդացաւղ սարկաւագի,
Խիստ սրբասնե[ա]լ քահանայի,
Աւրհնուած աջովն Գրիգորի,
Ի Սիս *քաղաք թագաւորի,*
Գոված ամէն քրիստոնէի,
Ճ (100) տարի թող ինքն ապրի,
Անամաթ մշակ Աստուածածնի,
Շատ երախտաւոր Տիրացուի՝
Գրող գրոցս Վարդանի:
Ո՛վ զիս յիշէք ի յատենի,
Թող ձեր մեղաց գիրն ջնջի:

45բ Զսրբասնեալ անձն եւ զվկաեալն յամենեցունց՝ զտէր Սիմեոն *աւագէրեցն մեր՝ զառաջնորդ* Սուրբ Աստուածածնիս, *որ* Շահանշահի *կոչի, ի մայրաքաղաքս* Խրիմ, *յիշեցէք անմոռաց, ով դասք լուսեբամից կարդացող, եւ զմեղապարտ գրիչ* Տիրացուս *եւ զծնողսն իմ:*

61ա Ով պատուական քահանայք եւ քրիստոսասէր ժողովուրդք, որ կարդաք կամ օրինակէք, զերգող գրոցս Վարդան, *եւ զանարժան սուտանուն քահանաս՝* Տիրացուս *եւ զծնողն իմ՝* Սարգիս *յիշեցէք ի Քրիստոս Աստուած մեր:*

71ա…եւ ինձ անպիտան գրչիս՝ սուտանուն քահանայիս՝ Տէրտիրիս, *եւ Քրիստոսի փա՛ռք յաւիտեանս:*

89ա Ո՛վ լուսերամ դասք, յորժամ ընթեռնուք, մի՛//(89բ) մեղ դրէք անարհեստ գրչիս, զի ես գրագիր չէի, այլ բազում սէր գրոցս Վարդանա *կու նեղէր զիս, եւ գրեցի: Որք կարդայք կամ օրինակէք, սրտի մտաւք զմեղաւոր՝* Տիրացուս *գրիչ յիշեցէք առ Քրիստոս, եւ ծնողքն իմ, եւ Աստուած զձեզ յիշէ յիւր արքայութիւնն:*

95բ Մեղաց թողութիւն խնդրեցէք յԱստուծոյ՝
Երգողի գրոցս Վարդան *վարդապետի,*
Եւ կրաւնաւորի՝ Զաքարէի,
Նման Պաւղա եւ Անդի
Եւ Գրիգորին Նարեկացի,
Որ յաշխարհէ Իւրեն *կոչի,*
Եկեալ յերկիրս Մուղալի,
Ի Ղրիմ քաղաքս այս անուանի,
Սպասաւոր է Աստուածածնի,
Որ շինած է պարոն Շահանշահի,
Եւ իր խնամոյն՝ պարոն Սարգսի,
Որք որ ուսման էք արժանի
Եւ քահանայ մեր Քրիստոսի,
Պատարագէք ի տունս Յիսուսի,
Ուր անմահից Արքայն բազմի,
Աղաչեցէք զՏէրն ամէնի,
Որ ողորմի՝ Զաքարէի
Եկեղեցպանին պարոն Շահանշի
Եւ մեղապարտ քահանայի՝
Տիրացուի՝ *փցուն գրչի*
Եւ ծնողին իմ՝ Սարգսի
Դուք յիշեցէք վանց Քրիստոսի:

105բ Եւ ինձ մեղապարտ գրչիս՝ Տիր//(106ա)րացու *քահանաիս, եւ ծնողացն իմ՝* Սարգիս *եւ* Գոհարմելիհին, *եւ քվերացն իմ՝* Խատէրեսին *եւ* Սարախաթունին, *եւ ամենայն ազգականաց իմոց եւ երախտաւորաց, կարդացողաց եւ լսողաց, արանց եւ կանանց:*

119ա Զմեղապարտ եւ զանարժան, սուտանուն քահանայս՝ գրող//(120ա) գրոց յիշեցէք ի Քրիստոս, եւ Աստուած զձեզ:

*189բ Զ*Տիրացու *գրիչս յիշէ:*

200ա Փառք… Որ ետ կարողութիւն նաստուեանս իմո հասանիլ ի վերջին գիծ երգոյս Վարդան

վարդապետի եւ Աթանասի*: Արդ, գրեցաւ ի թվականիս Հայոց ՉՁԵ (1336), ի մայրաքաղաքս ի* Սուրխաթս*, որ* Ղրիմ *կոչի, ընդ հովանեաւ* Սուրբ Աստուածածնիս *պարոն* Շահնշահի *շինած, ձեռամբ անպիտան եւ փցուն գրչի՝* Տէրտէր *սուտանուն քահանայի, [ի] խնդրոյ անձին իմոյ եւ յիշատակ ինձ, եւ ծնողաց իմոց՝* Սարգիս *քահանայի եւ* Գոհարմելիքին *եւ քվերացն իմ՝* Խատէրեսին *եւ* Մամայխաթունին*, //(200բ) եւ զ*Սարայխաթունն *եւ զամէնաւրհնեալ զաւակն իւր՝ զպարոն* Ամիրն *եւ զէլդեմիրն եւ զհայրն իւրեանց՝ զպարոն* Սուճանին*, եւ զպարոն* Շրվանն*, եւ զմրութխաթունն, եւ զսրբասնեալ հաւատ[աւ]որքն, որ հետ ինձ շատ աշխատեցան եւ մայրութիւն արին՝ զՀոռոմսիմէն եւ զՋուհարն, եւ զՏաւնիէլն: Արդ, աղաչեմ զամէնիսե[ա]ն որք կարդայք եւ աւետիք ի սմանէ, Աստուածածինն ձեզ բարէխաւս, յիշեցէք ի Քրիստոս, եւ դուք յիշե[ա]լ լիջիք ի նմանէ:*

200բ եա՝ Տիրացուս*, անձն անարժան*
Ծոյլ քահանայ թշուառական,
Որ եմ անկարգ խիստ ու անսահման,
Եւ յԱստուածոյ ամաւթական,
Սատանայի ճորտ բանական.
Զծուլութիւնն արի ինձ բան,
Զագահութիւնն խիստ անխոտան,
Հրոյն անզերծ ես կու մնամ,
Ի (1000) եղուկ անձինս ես տամ,
201ա Սաղմոս// չա[ս]ցի առանձնական,
Ոչ հե[տ ընկ]երացն միաբան:
Յերկրէն եկի ա[յն] Վրացտան
Ի քաղաքէն այն պատուական,
Որ իր անունն է Էրեւան,
Խոր Վիրապի *նա հարեւան:*
Ի ծուխս անցայ այս անսահման,
Ի քաղաքս ելայ ի Ֆռանկ Կաֆան
Զգիրքս գրեցի զայս՝ զՎարդան:
Որք ուսման էլնիք արժան,
Ի քահանայութիւնն աստուածական,
Պատարագէք ի Սուրբ սեղան՝
Ու զՊրաւսխումէն ասէք ի լման,
*Զ*Տիրացուս *յոյժ անպիտան,*
Դուք յիշեցէք, թող չեմ արժան,
Եւ Քրիստոսի փառք յաւիտեան:

ԿՆՔԱԴՐՈՇՄ 5բ, 134բ, Գիրքս Սուրբ Էջմիածնա *է:*

ԳՐՉԱՓՈՐՁ 1ա Ասաց երկնից...

Ձ Ե Ռ Ա Գ Ի Ր Բ

ԺԷ — XVII

ԹԵՐԹ՝ 60(205—264). չգրուած՝ 262բ—4բ: ՊՐԱԿ՝ Գ—Էx12: ՆԻՒԹ՝ թուղթ, լուսագծերով: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 16,1x 11,5: ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն: ԳԻՐ՝ բոլորգիր (295ա—6ա), նօտրգիր (206բ—62ա): ՏՈՂ՝ 25:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. սկզբից պակասաւոր: Խոնաւութիւնից գրադաշտը կիսով չափ գունափոխուած:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

1. *203ա—53ա* [Բառք ճերթողականք — *Աստուածազարդ...] Ապաքանել՝ պատասխանել կամ ամբաստանել... Քքել՝ թշնամանել:*

2. *253ա—60ա* Հանդէս բանաստեղծաց, փաղանունաբար ստորոգիլ նորավարժին սակս. բառ է գեղջուկ — *[Պ]արտ՝ պատշաճ, ի դէպ, ի ճահ... Գիծք՝ տառք, գծաւորք:*

3. *260ա—1ա* Թարգմանութիւն պարսիկ բառից ի Վարդան գրոց — *Զրադաշտական՝ զբուն բան կամ զկարեւոր ուխտ... Զառաջին ճառ ընթերցեալ՝ գտի երիս բառս, զոր պարթեւ ոչ գիտաց, ասելով՝ չէ պարսիկ. եւ այլն այս է բովանդակ:*

4. *261ա* Շաղկապ — *եթէ, զի, ոչ, մինչ... զոր ինչ:*

5. *261ա* Հոլովք անուանց — *Աստուած՝ ուղղական... է Աստուած՝ հոշական:*

6. *261ա—2ա* [Անուանք Աստուածաշունչ գրոց] — *Արդ, թուին եբրայեցիքն զգիրս զայս ձեւ աւրինակի: Զառաջինն անուանեն Բրէսիթ, զոր մեք Արարածս կոչեմք... Սրբագրացն՝ ինն:*

—263բ (ԺԷ դ.) Բառգիրքս Էջմիածնայ *է:*


ԿՆՔԱԴՐՈՇՄ 262ա Գիրքս Սուրբ Էջմիածնա *է:*

ԳՐՉԱՓՈՐՁ 263բ Հոգեւոր տէր, հրաման քո է: 264բ Այսաւր անճառ լոյսոյն...

1655
ՊԵՏՐՈՍ ԹԻՓԼԻՉԵՑԻ
ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ

ՌՄԳ — 1754

ԹՈՒՂԹ՝ 94. չգրուած՝ 1բ: ՊՐԱԿ՝ 8x12 (Ջ 10): ՆԻՒԹ՝ թուղթ, լուսագծերով: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 17x11: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն: ԳԻՐ՝ նօտրգիր: ՏՈՂ՝ 18: ԿԱՋՄ՝ ճնշագծերով սեւ կաշի, միջուկը՝ ստուարաթուղթ, աստառը՝ թուղթ: ՊԱՀՊԱՆԱԿ՝ 1+1, թուղթ, մասն աստառի:



Նմուշ՝ 11ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. միջից պակասաւոր (ըստ գրչի էջակալման՝ 23—42)։ Թանաքից գրադաշտը գունափոխուած։ Կազմի կաշին՝ ճաճճած, եզրերը՝ մաշուած։

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

—1ա Վարդապետութիւն ճշմարտութեան, որով իմաստնանալով, ճանաչէ զմոլութիւն իւր եւ եղանի իմաստուն եւ զգաստ։ Շարադրեցեալ ի Պետրոսէ վարդապետէ Թիֆլիզեցւոյ յամի Տեառն 1722, ի Վէնետիկ։ Իսկ այժմ նորապէս օրինակեցեալ յամի Փրկչին մերոյ 1754։ Յայտնութիւն բանից ſոց լուսաւոր առնէ եւ զիմաստութիւն տայ տղայոց

— 2ա Բան առ ընթերցօղսն — *Զամս ոմանս կացայ ի քաղաքին* Բօլոնիեայ, *ուր իշխան ոմն տեսանելով զիս օտարական եւ պանդուխտ ի քաղաքին այնմիկ, կամեցաւ, զի յաւուրս կիրակէից ճաշիցէի ընդ նմա։ Եւ ես, նախքան զբազմիլ ի սեղան, խօսէի զբանս հոգեւորս. եւ սոյնպէս արարի ըստ հրամանի նորա։ Զայն զոր անդ ասացի իտալիական բառիւ, զնոյն է ասա, զոր հայկական գրեցի բառիւ...*

1. *3ա—12բ* Վարդապետութիւն առաջնեւորդ. Ընդդէմ նոցա, որ զինեւեանս երջանիկ համարին՝ վասն ունելոյ զյաջողութիւն աշխարհիս այսմիկ — *[Ո]չ գոյ աշխարհի այնպիսի մարդ, որ ոչ ցանկանայցէ... Մեծ նշան Աստուծոյ բարկութեան է///(շար. թափուած)։*

2. *13ա—4բ* [Վարդապետութիւն երկրորդ. Որով ծանուցեալ լինի մոլութիւնն այնոցիկ, որ մեղանչեն — *եւ առ անմեղադիր առնել զանձինս, դնեն զմեղսն ի սատանայի... ես զբոլոր.* ձեռ. 1937, 5ա—7ա] ///*աշխարհս ընդ քեզ...*

3. *15ա—26ա* Վարդապետութիւն երորդ. Որով մերժի մոլորութիւնն եւ պատրանքն նոցա, որ ոչ կամին լսել զխարազ, ասելով. Գիտեմ ես, թէ զինչ պարտ է առնել առ ի փրկիլ — *[Յ]աւուր միում խօսելով Որդին Աստուծոյ ընդ հրէայսն...*

4. *26ա—34բ* Վարդապետութիւն չորրորդ. Որով ի բաց մերժի մոլութիւն նոցա, որ ոչ հաւատան զհաւատն ուղղափառ, զի ոչ տեսանեն աչօք զայն, զոր հաւատան — *[Ո]վ քրիստոնեայ, դու որ ասես, թէ...*

5. *34բ—44բ* Վարդապետութիւն հինգերորդ. Որով ի բաց հերիք մոլութիւնն նոցա, որ զանց առնեն զպատուիրանաւն Աստուծոյ, ասելով, թէ. Ոչ կարէ պահիլ — *[Կ]արծիքս այս, թէ անհնարին իցէ...*

6. *45ա—55ա* Վարդապետութիւն վեցերորդ. Որով յայտնի կուրութիւն նոցա, որ վասն կորուստեան ոսկոյ եւ արծաթոյ, եւ ոչ հոգան վասն կորստեան հոգւոյ — *[Կ]այր մեծ պատերազմ ի մէջ թագաւորաց...*

7. *55ա—65բ* Վարդապետութիւն եօթներորդ. Որով յայտնի խաբիլն նոցա, որ գոլով ժըլատ ընդ Աստուծոյ, տոնչեն զԱստուած, որպէս թէ ոչ իցէ ազատական եւ առատաձեռն ընդ ինեւեանց — *[Ի]մաստնագոյնն եւ սրբագոյնն* Սալուփաոնս *եպիսկոպոսն* Սասիլիոն...

8. *66ա—74բ* Վարդապետութիւն ութերորդ. Ընդդէմ նոցա, որ խաբեցեալք, հաւատան, թէ կարիցեն գտանել զՔրիստոս անդ, ուր կորուսին զնա մեղօք — *[Կ]արի ճշմարիտ է այս, թէ...*

9. *74բ—84բ* Վարդապետութիւն իններորդ. Որով ցուցանի տգիտութիւնն եւ մոլութիւնն նոցա, որ ոչ կամին առնել զբարիս... — *[Գ]ոն բազում քրիստոնեայք, որք կամելով կալ եւ մնալ ի մեղս...*

10. *84բ—94ա* Վարդապետութիւն տասներորդ. Ընդդէմ նոցա, որ առնելով զօրինակ ի սուրբ աւազակէն, կամին կեալ չարաբար եւ կամին մեռանիլ բարեաւ մահուամբ — *[Ա]յնքան մեծ էր համբաւն* Թերթուլիանոսի *առ սրբագոյնն* Կիկրիանոս... *զղջալ ոչ կամեցար, ասէ սուրբ* Օգոստինոս։

— *94աբ* Յանկ գրոյս — *1. Ընդդէմ նոցա, որք ունելով զերջանկութիւնս... 10. Ընդդէմ նոցա, որք առնելով...վերջ։*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ


1ա Տէ՛ս խորագիրը։

1656
ԲԱՐԴՈՂԻՄԵՈՍ ՄԱՐԱՂԱՑԻ
ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՎԵՑՕՐԷՅ

ՊՂԱ — 1382

ԳՐԻՉ՝ Մխիթար։

ԹԵՐԹ՝ 111։ ՊՐԱԿ՝ Ա—ԺԽ12 (Ժ 3)։ ՆԻՒԹ՝ թուղթ։ ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 16,9x13,8։ ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն։ ԳԻՐ՝ բոլորգիր։ ՏՈՂ՝ 30—35)։ ԿԱՋՄ՝ դրոշմազարդ բալագոյն կաշի, միջուկը՝ տախտակ, աստառը՝ բազմագունի ծաղկաթուղթ։ Պահպանակ՝ 2(Ա—Բ)+2(Գ—Դ), թուղթ լուսագծերով եւ «IAC» լուսադրոշմով։



Նմուշ՝ 13ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. խոնաւութիւնից վերին լուսանցային մասերը գունափոխուած, բամբակալած, տեղ—տեղ փորիկ

պատուծաճներ: ԺԸ դ. նորոգուած, 1—3 լուսանցքները կարկատուած, աւելացուած պահպանակները եւ վերակազմուած:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

—1ա—111բ Գիրք յաղագս Վեցօրեայ գործոց արարչութեան

Տես 1659, 1ա—350ա. *Յանկ/լիք նխ./1ա—2բ: § 1. ա/2բ—15ա: բ/15ա—24բ: 2/25ա—36ա: 3/36ա—41ա: 4/41ա—54բ(բոլորակի տեղը բաց՝ 43ա): 5/54բ—8բ: 6/58բ—76ա: 7/76ա—9բ: 8/79բ—111ա: Յիշ. թղթ. 111աբ(տարբեր. տե՛ս ստորեւ).*

— 111ա [Յիշատակարան թարգմանութեան] — *Արդ, կատարեցաւ Գիրք Վեցօրեայ գործոց արարչութեանն կամօք եւ ծախիւք տեառն* Յակոբայ *կաթողիկոսի Հայոց, թարգմանելով ի լադին բարբառոյ ի հայ լեզու, ի փառս Սուրբ Երրորդութեանն եւ յաւգտութիւն եղբարց: Վասն որոյ որք ընթեռնոյք զսայ եւ կամ հանդիպիք օգտութեան, //(111բ) շնորհք Աստուծոյ տուք, զի ի նմանէ են ամենայն բարիք, եւ թէ պակասութիւն ինչ լինիցի՝ այն ի կողմանէ տկարութեանս մերում է, եւ Քրիստոսի փառք յաւիտեանս:*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

76ա Զանբաժս ի բարեաց՝ զմեղսասէր ոգի եւ զչանարդիս ի բանի սպասաւորաց, զվեց տառիւ շաղկապեալս ի մի կոչումն՝ զՄխիթար, *զվեցակոյս շարժողս խոտորմամբ ի բարոյն, զվեցերորդ ի կազմուածս եւ զվեցերորդիս շարագրողս մաղթամ հայցել ներողութիւն անթիւ սխալանացն: ՊԼԱ(1382) գիշերի գծեցաւ:*

111բ Զաղքատս եւ զունայնս ի մարմնոյ արդեանց եւ առաւել ի բարի գործոց՝ զՄխիթար *բանի սպասաւոր յիշման արժանի մաղթեմ, բանի սիրողք, զի ի գիշերի եւ ի տլուընջեան թաննաբար եւ երկիւղիւ սեւագրեցի, վասն տառապանաց աղքատութեանց, որ կայ յերկար ի մարմինս սեւեռաբար: Եւ անմեղադրութիւն խնդրեմ խոշորութեան եւ սխալանաց, զի վասն կարեաց եւ անձեռնահաս լինելոյ՝ այս չափս ժամանեցի ի թվին ՊԼԱ(1382), Լ (30) օր:*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

1. *Պահպանակ Բբ (1773 թ.) ես՝* Աստապատցի Աբրահամ *վարդապետս, միաբան սուրբ* Աթոռոյն Էջմիածնի, *զՎեցօրէից գիրքս ստացեալ արդեամբ իմով, շնորհեցի հոգեւոր որդւոյ իմոյ եւ աշակերտի՝* Յովակիմ *վարդապետին, զի ընթերցեալ եւ վայելեալ զսա՝ յիշեսցէ զհոգի իմ առաջի անմահ Գառին Քրիստոսի: Եղեւ ի Ռմիբ (1773) թուին Հայոց, հոկ[տեմբերի] մուտն:*

2. *111բ (1781—1782 թթ.) ես՝* Ընկեղակոթեցի Յովակիմ *վարդապետս, դիտեղ սրբոյ* Աթոռոյս Ստաթեի, *զգիրքս զայս, զոր ընկալեալ էի ի հոգեւոր հօրէս եւ ի դաստիարակէս՝ լուսաւորեալ հոգի տեառն* Աբրահամ *վարդապետէն, եւ յետոյ շնորհեցի հոգեւոր որդւոյ իմոյ եւ աշակերտի՝* Պօղոս *վարդապետին, զի ընթերցեալ եւ վայելեալ զսա, յիշեսցէ զհոգի իմ առաջի անմահ Գառին Քրիստոսի: Եւ եղեւ այս ի Ռմլ (1781) թուոջ եւ յուլիսի ամսոյ ԺԴ (14):*

Իսկ յետ հանգստեան Պօղոս *վարդապետին, շնորհեցի հոգեւոր որդւոյ եւ աշակերտի իմում* Աստապատացի *տէր* Աբրահամուն, *զի ընթերցեալ՝ յիշեսցէ զիս հանդերձ ծնողօքս իմովք, ի Ռմկա (1782) թուոջս մերոյ եւ յամսեանն յուլիսի, ի վասն* Տաթեւու:

ԿՆՔԱԴՐՈՇՄ Պահպանակ Բբ Քրիստոսի ծառայ Աբրահամ *վարդապետ: 111բ* Յովակիմ *վարդապետ:*


1657
Ժ Ո Ղ Ո Վ Ա Ծ Ո Յ

ԺԴ — XIV

ԳՐԻՉ՝ Գրիգոր վրդ. Երզնկացի, Բասեղ երէց:

ԹԵՐԹ՝ 205. չգրուած՝ 1ա—3բ, 304բ—5բ: ՊՐԱԿ՝ Ա—Թx16 (Ա 14, Թ 15)+Ա—ԺԲx12 (Ա 11, Ը—ժ, ԺԲ 16, ԺԱ 17): ՆԻՒԹ՝ թուղթ (ԺԷ—ԺԸ դդ. յաւելում՝ 1—3, 305): ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 17x12,5: ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն: ԳԻՐ՝ բոլորգիր: ՏՈՂ՝ 27—29: ԿԱՋՄ՝ դրոշմազարդ շագանակագոյն կաշի՝ դռնակով, միջուկը՝ տախտակ, աստառը՝ աղիւսագոյն կտաւ:

ՊԱՏԱՌԻԿ—ՊԱՀՊԱՆԱԿ — Գրիգորի Աստուածաբանի ՅաղագսաղխատասիրութեանՀ: ժ—ԺԱ դդ.: 2(Ա—Բ)+2(Գ—Դ), ստացուած եզրաճատուած 2 թերթերի ընդլայնակի երկատկումից: Մագաղաթ, երկսիւն, բոլորագիծ երկաթագիր: Կարդալ՝ Բբ, Աա, Բա—Աբ «///ցան եւ ընդ նմին///զի եթե ախտա///են եւ փառատրես///ընդ նմին... սոխա յոլովագոյն եւս ման զորս ասացիս հիմագոյնք... թեպէտ եւ մեծա[գոյն աճ]ատրութեամ[բ]///»): Գբ, Դա, Գա, Դբ «///տանեմք զաղխատ[ասիր]ութիւն... զսէրն իմանալի///»:



Նմուշ՝ 49ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. սկզբից պակասաւոր, խոնաւութիւնից գրադաշտը գունափոխուած, ցեցակեր: Կազմի թիկունքի եւ դռնակի կաշին թեթեակի վնասուած, կապիչներն՝ ընկած: ԺԷ—ԺԸ դդ. նորոգուած, տեղ—տեղ կարկատուած եւ վերակազմուած:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Ա. *4ա—141բ* [Բարսղի եպիսկոպոսի Կեսարու Կապադովկացւոյ Մեկնութիւն վեցաւրէից]

Տե՛ս ձեռ. 620, 213ա—97բ. *Նխ./ չիք: § ա/4ա—14բ(սկ. «Մովսէս էր աւրինակագիր պատգամացն զոր լուաք»): բ/15ա—28բ: գ/29ա—44բ: դ/44բ—8բ, 60աբ, 50ա—6ա: ե/56ա—9բ, 49աբ, 61ա—74ա: զ/74բ—96ա: է/96ա—108բ: ը/108բ—26ա: թ/126ա—41բ:*

Տպ. եր., 1984, G:

ԺԷ—ԺՀ դդ. վերակազմութեան ժամանակ թերթերը խառնուած եւ նշուած՝ 49բ «զԺՍ թուղթս շրջելով յառաջ գնա, կարգն է» (նման՝ 59բ, 60բ):

Բ. *142ա—304ա* [Գրիգորի Աստուածաբանի Նազիանզացւոյ Ա՛ռ որս ճառ]

Տե՛ս ձեռ. 61, 3ա—205բ. *Յանկ/չիք: § ա/142ա—9ա(սկ. «///եւ զի գրոց սկսայց»): բ/149ա—57: գ/157ա—71բ: դ/171բ—82ա: ե/182ա—93բ: զ/193բ—207բ: է/208ա—27բ: ը/227բ—39բ (չիք՝ «Յանդգնութիւն հերետիկոսաց» եւ Յիշատակարան Ներսիսի Կլայեցւոյ): թ/239բ—45բ: ժ/245բ—8բ: ժա/248բ—54ա: ժբ/254բ—69ա: ժգ/269ա—82բ: ժդ/282բ—91ա: ժե/291ա—304ա:*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

96ա Որք հանդիպիք յայսմ գրի,
Քաղցրաբառ յայ[ս]մ տառի,
ԶԳրիգորէս եզբնկեցի
Դուք յիշեցէք Տեառն առաջի:

141բ Փա՛ռք... որ ետ զօրութիւն իմոց տկարութեանս գծագրել այսու փցուն գրչօ զՊատմութիւն արարածոց երկնի եւ երկրի:

182ա Յիշեա զԳրիգորէս աշակերտ գրոց, եւ զԲասեղ փցուն գրող սորին ծնողաւք հանդերձ:

227բ Յիշեցէք զԳրիգորէս վարդապետն իմ ողորմած,


Զիս՝ աշակերտ նորին խիստ ցած:

239բ Վա՛յ փցուն, քարտեզս վաղուն է:


1658
Ժ Ո Ղ Ո Վ Ա Ծ Ո Յ
(Բաղկացած է 2 տարբեր ձեռագրերից)

Թերթ՝ 222+1 (կրկ. 1): Կաշի՝ դրոշմազարդ շագանակագոյն կաշի՝ դոնակով, միջուկը՝ տախտակ, աստառը՝ վանդակաւոր կտաւ:


Պատռիկ—պաճպանակ — Բարսղի Կեսարացւոյ Գիրք Հարցողաց: Ժ—ԺԱ դդ.: 2(Ա—Բ)+2(Գ—Դ), ստացուած 1 թերթի ընդլայնակի հատումից եւ ընդերկայնակի երկտակումից: Մագաղաթ, երկսիւն, բոլորագիծ երկաթագիր, 23 տող (նմուշ՝ Աա): Կարդալ Դա, Աա, Գբ, Բբ, Գա, Բա, Դբ, Աբ «[///հարցողաց ՄԼՔ///] թեռեւս յերեսս Տեառն, զայս ասելով առանկ անուանելով///Հարցողաց ՄԽԱ/// ճշմարիտ կարծեմ լինել զանխառնն եւ զծայրն եւ զարբեալն յամենայն»: Տե՛ս տպ. Basilio di Cesarea. II. Libro Dell Domande, Lovanii, 1993, CSCO, v. 536, Scr. Armen. t. 19:



Նմուշ՝ 120ա



Նմուշ՝ 128ա



Նմուշ՝ Աա

Վիճակ՝ բաւարար. կազմի կաշին թեթեւակի ճեռծուած, եզրերը՝ մաշուած, ցեցակեր, կապիչներն՝ ընկած:

ՁԵՌԱԳԻՐ Ա

ԺԴ — XIV

Գրիչ, ծաղկող՝ ֆրա Յոհաննէս: Ստացող՝ ֆրա Մկրտիչ:

Թերթ՝ 125 + 1 (կրկ 1). չգրուած՝ 1աբ: Պրակ՝ Ա—ԺԱx12 (ԺԱ 7): Նիւթ՝ թուղթ (ԺԷ դ. յաւելում, 1, 120—22): Մեծութիւն՝ 16,8x13,5: Գրութիւն՝ երկսիւն: Գիր՝ բոլորգիր (ԺԷ դ. ճոռոգողի՝ 120ա—2բ): Տող՝ 31—33 (ճոռոգողի՝ 25):

Մանրանկարչութիւն — ճակատազարդ՝ 1ա, 19բ, 31բ, 46բ, 53ա, 69բ, 74ա: Լուսանցազարդ՝ բուսական: Զարդագիր՝ հանգուցագիր: Գոյներ՝ կարմիր, սեւ:

Վիճակ՝ բաւարար. խոնաւութիւնից գրադաշտը գունափոխուած, ցեցակեր, զանազան բծեր, փոռիկ պատռուածքներ: 1646 թ.—ին Մղոցի Սիմէոնի ձեռով ճոռոգուած, թերին լրացուած եւ կցուած Բ ձեռագրին:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

—1ա—125բ [Բարդողիմէոսի Մարաղացւոյ Մեկնութիւն Վեցօրէից]

Տե՛ս ձեռ. 1659, 1ա—350ա. *Յանկ/չիք: Նխ./1ա—2բ: 1. ա/2բ—19բ: բ/19բ—31բ: 2/31բ—46ա: 3/46բ—53ա: 4/53ա—69բ (պատկեր Վիշապ աստեղատան՝ 55բ, բոլորակ աստեղաց եւ մոլորակաց՝ 61բ): 5/69բ—74ա: 6/74ա—94ա: 7/94ա—7ա: 8/97ա—125բ: Յիշ. թրգմ. 125բ(կրկ. 219բ, ԺԷ դ. նօտրգիր):*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

1ա (Ճակատազարդի մէջ հանգուցագրով) Ֆրա Մկ[րտիչ]:

19բ (Ճակատազարդի մէջ բոլորգրով) Յոհաննէս:

53ա Խոշորութեան անմեղադիր լեր, զի խամ էի: Զֆրա Մկրտիչ, որ ըստացաւ զգիրքս, յիշեցէք ի Քրիստոս Յիսուս Աստուած:

74ա (Ճակատազարդի մէջ բոլորգրով) Ֆր[ա] Յոհաննէս գրի[չ]: Ֆր[ա] Մկրտիչն է:

125բ Ջտառապեալ եւ զաղքատ ոգի՝ զֆրա Յոհաննէս յիշեցէք ի Քրիստոս, որ կամի ծօվ աշխարհի, եւ սպասեմ արքայութեան Տեառն իմոյ, եւ Փրկիչն Քրիստոս զձեզ յիշէ ի յիւր միւսանգամ գալուստն, եւ նմա փառք յաւիտեանս. ամէն:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

125բ (Կարմրագիր՝ գրչի քերուած յիշատակարանի վրայ) Փա՛ռք... Արդ, գրեցաւ սուրբ մատեանս ի գաւառ ի Մեղրի միջումն, ի խնգրոյ տէր Ոհանիսի ի յազգէն Պարոնեա՛ն, որ բնակի Սուրբ Յովհաննու Մկըրտչին, որ ռամկօր [է] ///(126ա)ն կոչի Աղու[///] էր: Եւ ես՝ տէր Սիմէ՛ոն մեղաւոր Մեղրից վեր առի ս[ուրբ] մատ[եան]ս սուրբ առ[ի ի] թուին ՌՂԵ (1646):

Ջ Ե Ռ Ա Գ Ի Ր Բ

ԺԴ — XIV

Թերթ՝ 97 (126—222). չգրուած՝ 126բ, 148բ, 220ա—2բ: Պրակ՝ Ա—ԸՀ12 (Ա 10, Բ 13, Դ 14): Նիւթ՝ թուղթ (ժէ դ. յաւելում՝ 216—22): Մեծութիւն՝ 16,8x13,5: Գրութիւն՝ երկսիւն (միասիւն՝ 127աբ, 134ա—5բ): Գիր՝ բոլորգիր (ժե—ԺԶ դդ. լրացնողների՝ 127ա—48ա, ԺԷ դ. լրացնողի՝ 216ա—9ա): Տող՝ 33 (լրացնողների՝ 26—36):

Վիճակ՝ բաւարար. խոնաւութիւնից գրադաշտը գունափոխուած, ցեցակեր, զանազան բծեր, փոխրիկ պատառուածքներ: ԺԵ—ԺԶ դդ. նորոգուած եւ տարբեր ձեռերով լրացուած՝ 127ա—48ա, իսկ 1646 թ.—ին Մղրցի Սիմէոնի ձեռով՝ 216ա—9ա եւ կցուած Ա ձեռագրին:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

1. *127ա—54ա* Համառօտ հաւաքումն Յաղագս հոգո եւ զօրութեանց նորին (հին թրգմ.)

Տե՛ս ձեռ. 868, 193ա—244ա. *Նխ./127ա: §§ ա—ծ/127ա—54ա: §§ ա—բ, իա—իդ, լ—լդ առանց գլխահամարների, իսկ իե—ծ նշանակուած՝ ԻԶ—ՇՄ:*

2. *154ա—79բ* Յաղագս առաքինութեանց Հոգոյն (հին թրգմ.)

Տե՛ս ձեռ. 930. 256բ— 76ա. *Նխ./154բ—5բ: §§ ա—իգ/155ա—79բ: Ունի.*

— *154ա* [Յանկ] — *Ա. Յաղագս չորից կարտինաբական առաքինութեանց... Իգ. Թէ սէրն մնասցէ յետ աստի կենացս:*

3. *179բ—219ա* Համառօտ հաւաքումն Յաղագս հրեշտակաց (հին թրգմ.)

Տե՛ս ձեռ. 930, 226ա—56բ. *Նխ/179բ: §§ ա—իե/180ա—219ա:*

4. *219ա* [Յաւելագրութիւն՝ ԺԷ դ.]: Օրհնութիւն վեղարի — *Աղաչեմք զքեզ, Տէր Յիսուս Քրիստոս...*


1659
ԲԱՐԹՈՂԻՄԷՈՍ ՄԱՐԱՂԱՑԻ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՎԵՑՕՐԷՅՑ

ԺԴ — XIV


Գրիչ՝ եփրեմ: ՍՏԱՅՈՂ՝ Յովհաննէս Ոռոմնեցի:

Թերթ՝ 350: Պրակ՝ Ա—ԻԱ (կրկ. Գ)x12 (Ա 10, Բ 14, ժե—ԺԶ, ԺԹ 18): Նիւթ՝ թուղթ (եւ 30 թերթ մագաղաթ՝ 1—24, 27, 29, 36, 38, 222, 227): Մեծութիւն՝ 11,8x9: Գրութիւն՝ միասիւն: Գիր՝ բոլորգիր (1371թ. լրացնող Դրիգոր Տաթեացւոյ՝ 1ա—24բ, 27աբ, 29աբ, 36աբ, 38աբ, 222աբ, 227աբ, 350աբ, ժէ դ. անանուն նորոգողի՝ 25աբ, 104աբ): Տող՝ 21 (լրացնողների՝ 20—21): Կազմ՝ դրոշմազարդ բալագոյն կաշի՝ դռնակով, միջուկը՝ տախտակ, աստառը՝ բազմագունի վանդակաւոր կտաւ, դռնակինը՝ բազմագունի շերտաւոր մետաքս:


Պատնիկ—Պաշպանակ — ճաշոց. (ընթերցում Հին Կտակարանից=Պռոփետոլոգիոն) (վրացերէն): ԺԳ դ.: 2(Ա—Բ)+2(Գ—Դ), ստացուած եզրաճատուած 2 թերթերի ընդլայնակի երկսակումից: Մագաղաթ, միասիւն: Նուախուռի: Կարդալ՝ Դա—Դբ—Դբ—Դա—Աա—Բբ—Աբ—Բա (վերծանեց՝ Բ. Ութիե):




Նմուշ՝ 24ա



Նմուշ՝ 26ա



Նմուշ՝ 227ա



Նմուշ՝ Աա

Վիճակ՝ բաւարար. լուսանցային մասերը թղլացած, տեղ—տեղ փոխրիկ պատռուածքներ (143—ի ստորին մասից 3 տող թափուած), ցեցակեր: Կազմի եզրերը՝ մաշուած, կապիչներն՝ ընկած: 1371 թ.—ին Գրիգոր Տաթեւացու եւ ժէ դ. անանուն մէկի կողմից նորոգուած եւ կազմուած:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

— *1ա—6ա* Ցանկ Զ—աւրէի — *Առաջին աւրն է Գժ հարցումն*

— *7ա—13բ* [Նախերգան]. Սմանչելի եղեւ գիտութիւն fո, ասէ սաղմոսերգուն Դաւիթ — *Աստ վարդապետք, թէ. Մարդն է բաղադրեալ...(13բ) Վասն այնորիկ ի զանազան մեկնութեանց սրբոց հաւաքեցի զսակաւ բանքս զայսոսիկ եւ կարգեցի ի մի, եա՝* Բարդողիմէոս *աղքատ էպիսկոպոս, ազգաւ հռոմայեցի, թարգմանելով ի լատին բարբարոյն ի հայ լեզու, ի փառս Քրիստոսի Աստուծոյ եւ ի յաւգտութիւն ընթերցողաց:*

1. ա. *13բ—61ա* Եւ արդ, սկսանիմք նախ զսկիզբն բանից Ծննդոց գրոց, որ ասէ. Ի սկզբանէ ստեղծեաց Աստուած զերկին եւ զերկիր (Գժ հարցմունք) — *[Վ]արդապետք ասեն, թէ. Աստուած ի սկիզբն...*

բ. *61ա—93ա* [Ե]երկրորդ. Այժմ ասելի է ի գործոյ առաջին աւուրն, այսինքն՝ ի յառնելոյ լուսոյն (ժԲ հարցմունք): Եւ առաջին հարցումն է այս, թէ լոյսն յատկապէս առեալ լինի՞ ի վերայ հոգեւորաց, թէ՞ միայն ըստ նմանութեան — *Երեւի թէ այոյ: Վասն...*

2. *93ա—132ա* [Բ]այց ի գործոյ երկրորդ աւուրն (ԺԲ հարցմունք): Նախ եւ առաջին հարցումն է այս. Եթէ հաստատութիւն եղեա՞լ է յերկրորդ օրն — *Եւ երեւի թէ ոչ, զի ի Ծննդոցն յառաջին գլուխ ասէ...*

3. *132ա—49ա* [Բ]այց վասն գործոյ երրորդ աւուրն (Զ հարցմունք): Առաջին հարցումն է այս. Թէ ժողովումն ջուրցն պատշա՞ճ էր, որ եղեւ յերրորդ օրն — *Եւ երեւի թէ ոչ, զի ի գործ յառաջին...*

4. *149ա—91բ* Ի գործոյ չորրորդ աւուրն (Ժ հարցմունք): Առաջին հարցումն է այս. Թէ պա՞տ էր լուսատուացդ լինել ի չորրորդ աւուրն — *Երեւի թէ ոչ, զի լուսաւորքն են... (169ա բոլորակ աստեղաց եւ մոլորակաց):*

5. *191բ—202բ* [Բ]այց վասն գործոյ հինգերորդ աւուրն (Դ հարցմունք): Առաջին հարցումն է. Թէ գործ հինգերորդ աւուր պատշաճաբա՞ր պատմի ի Գիրս Սուրբս — *Երեւի թէ ոչ, զի միայն գօրութիւն ջուրցն...*

6. *202բ—54բ* [Ե]ւ արդ, այժմ սկիզբն արասցուք ճնութեան վեցերորդ աւուրն գործոյ (ԺԶ հարցմունք), որոյ առաջին հարցումն է այս. Թէ գործ վեցերորդ աւուրն պատշաճաբար դնի ի Գիրս Սուրբս — *Եւ երեւի թէ ոչ, զի որպէս ձկունք...*

7. *254բ—65ա* [Ա]ստանաւր սկիզբն արասցուք վասն հարցմանց եւթներորդ աւուրն (Գ հարցմունք), որոյ առաջինն է այս. Թէ կատարումն աստուածային գործոցն պիտո՞յ էր նշանակել ի յէ—երորդ օրն թէ՞ ոչ — *Եւ երեւի թէ ոչ, վասն զի ամենեքեան որ լինին յայսմ...*

8. *265ա—349բ* Բայց զի ի գործոց Վեցօրէիցն ասացաք ինչ, եւ զդրախտն տնկեցաւ ի յերրորդ օրն. վասն այնորիկ պարտ է ասել ինչ յաղագս նորա (Լե հարցմունք): Առաջին հարցումն է վասն դրախտին՝ գոլ զնա իմանալի՞, թէ՞ զգալի — *Եւ զտարակոյս զայս խնդրեսցես ի հարցմունս երրորդ աւուրն, բայց միայն գործի սատանայի:*

— *350ա* [Յիշատակարան թարգմանութեան] — *[Արդ կատար]եցաւ Գիրքս Վեցօրեա գործ[ոց] ար[արչութեան, հ]աւաքեալ ձեռամբ ֆրա* Բարդողեմեո[սի] *ի կարգէն քարոզչաց սրբոյն Դոմինիկոս[ի հռոմայ]եցի ազգաւ, եպիսկոպոս, քաղաքին* Մարաղոյ, *եւ թ[արգման]եց[աւ] ի լատին բարբառոյ ի հայ լեզու, որ էր [թարգմ]անն* Յակոբոս *վարդապետն, ազգաւ հայ, ի կարգէն սրբոցն* Դոմինիկոսի, *ի փառս Քրիստոսի Աստուծոյ իմոյ, եւ ի յօգտութիւն եղբարցն: Արդ եղեւ թարգմանութիւնս այս ընդ հովանեաւ* Սուրբ Աստուածածնին: *Իսկ որք ընթեռնուք զաս, թէ հանդիպիք օգտութեան, Աստուծոյ շնորհքն, զի ի նմանէ են ամենայն բարիք, եւ թէ պակասութիւն ինչ լինիցի՝ այն է ի կողմանէ տկարութեանս մեր: Եւ թարգմանեցաւ սա ի գե[աւղն]* Ք[ո]ն[այ] *որոց այսոցիկ եղեւ պատճառ եւ ձեռնտու վարդապետն* Յոհ[ան], *որ կոչի* Ք[ո]նեցի, *որոյ հատուսցէ Տէր զհատուցումն բ[արի]:*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

120ա ՈՀ [վշտ]ագին սրտիս եւ անբան տրտմութեանս:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

1. 350ա (1371 թ.) Փա՜ռք... Արդ, ո՛վ սուրբ ընթերցողք եւ գաղափարողք, որք օգտիք ի սմանէ, բարիական մտօք, զատացող գրոցս՝ զժրաջան եւ զտիեզե[ր]ալոյս վարժապետն մեծ՝ զՅովհաննէս Որոտնեցի, [յաղ]աւթս յիշեցէք առաջի զենմ[ան] //(350բ) Գառին եւ թողութիւն յանցանաց հայցեցէք հանդերձ իւրայոցն, ընդ նմին եւ ասացէք. զերանի ում թողութիւն. եւ Քրիստոս Որդի Աստուծոյ:

Աղաչեմ եւ զայլ ամենայն երախտաւորքս, որք հադիպեցան ի սմայ, առաջին գծագրին՝ եփրեմ վարդապետի, որ աշխատեալ եղեւ ի սմա հրամանաւ եւ արդեամբ վեհափառ տեառն իմ՝ վարդապետին Յոհաննու Որոտնեցոյ, որոյ յիշատակ սոցին անջնջելի մնասցէ այժմ եւ յառապայն: Եւ զիս զտրուպ զանար-

հեստ գրիչս զսպասաւոր նմին, որոյ հրամանաւ աշխատ եղէ սակաւ մի զառ ի նո[րոգ]ումն եղծելոցն ի սմա՝ զԳրիգոր սարկաւագ, մականուն Խութլուշա, *եւ զկազմող սմին, եւ զայլ երախտաւորքս յիշել անխարդախ մտօք ի բարի, զոր մեզ ընդ ձեզ [առ]հասարակ տացէ խնդրողացս եւ բանայցէ բախողացս զանճառն իւր խոստումն ստացիչն մեր կրկնակի ի գալստեանն իւրում, որ ամենակամն է եւ աննախանձ, եւ կարող [է] տալ ոչ երկմտելոց զցանկալին ի նմանէ, ընդ որում Հօր իւրում եւ Հոգոյն Սրբոյ վայել է փառք, իշխանութիւն, պատիւ՝ այժմ եւ ի միշտն յաւիտենից. ամէն: Թվ[ականին] ՊԻ(1371) նորոգեցաւ:*

2. *13բ(ԺԴ դ.)* Վեցօրէից գիրքս յիշատակ է /// գրոց աշակերտին ի դուռն ///

3. *350բ(ԺՀ դ.)* Վերջին ըստացող սորին /// Աւաքն *յիշեց[էք]:*

ԿՆՔԱԴՐՈՇՄ 7ա, 131ա, 347բ Գիրքս Սուրբ էջմիածնա *է:*

1660

Ժ Ո Ղ Ո Վ Ա Ծ Ո Յ

(բաղկացած է 2 տարբեր ձեռագրերից)


Թերթ՝ 208—2(տե՛ս Պահպանակ): Կազմ՝ դրոշմազարդ բաց շագանակագոյն կաշի, միջուկը՝ տախտակ, աստառը՝ բազմագունի ծաղկաձիւս շերտաւոր մետաքս: Պահպանակ՝ 1(1) + 1(208), թուղթ:

Վիճակ՝ բաւարար. կազմի կաշին թեթեւակի ճեռծուած, եզրերը՝ մաշուած, կապիչներն՝ ընկած:


Ջ Ե Ռ Ա Գ Ի Ր Ա

Յովհաննավանք ՌՃՁԳ — 1734

Թերթ՝ 194(2—169, 182—207). Չգրուած՝ 2աբ, 196ա: Պրակ՝ Ա—ԺէxԺ(Ժե տե՛ս ձեռ. Բ, ԺՁ 14): Նիւթ՝ թուղթ, լուսագծերով: Մեծութիւն՝ 16x10,5: Գրութիւն՝ միասիւն: Գիր՝ նօտրգիր: Տող՝ 24:



Նմուշ՝ 13ա



Նմուշ՝ 171ա

Մանրանկարզութիւն — Մատթէոս վրդ. Ջուղայեցի՝ 6բ: Կիսախորան՝ 7ա: Լուսանցագարդ՝ բուսական (7ա): Ջարդագիր՝ թոչնագիր: Գոյներ՝ սեւ ուռուագծային:

Վիճակ՝ բաւարար:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Ա. *3ա—138ա* [Մատթէոսի Ջուղայեցւոյ Մեկնութիւն Վեցօրէից]

Տե՛ս 774, 282ա—377բ. *Յանկ/3ա—6ա: Նխ/7ա—9ա: § ա/9ա—40ա: բ/40ա—50բ: գ/50բ—75ա: դ/75ա—98բ: ե/98բ—110բ: զ/110բ—6բ: է/116բ—7ա: Ունի.*

— *137բ—8ա* [Յիշատակարան աշխատողին». (ցանկից՝ 6ա)] — *Արդ, ես խոցոտեալ յոգի եւ ի մարմին տկարացեալ, եւ տարտամեալ մտօք եւ գիտութեամբ, վիրաւորեալ ի բանսարկուէն, մեռեալ ոգի՝ Մատթէոս քահանայ, սպասաւոր բանի, առի յանձն գաշխատութիւնս զայս ոչ զի կարողութիւն էր իմ, այլ հարկեցեալ ի խնդրոյ սրբազան եղբօր մերոյ՝* Սարգսի *քահանայի, որ փափաքեաց սմա: Հաւաքեցի ի բանից հարանց սրբոց պարզ եւ յատակ ի հասկացումն, զոր վայելել տացէ Տէր Աստուած սրբութեան գործով, մանաւանդ ի գուարճութիւն մանկանցդ եկեղեցեացդ Հայաստանեաց: Վասն որոյ յերես անկեալ աղաչեմ հանդիպողացդ սմա, զի մտադրութեամբ ընթերցջիք, զպակասն ուղղելով եւ գաւելորդն կշռելով, եւ սխալանացն ներել աղաչեմ, զի այսքան կարացի: Այլեւ աղաչեմ յիշել ի մաքրափայլ յաղօթս ձեր, թերեւս իջցէ շնորհ ողորմութեանն յԱստուծոյ ի յոսկերս մեռելոյս, եւ լուասցէ զաղտ հնութեան իմոյ: Արդ, եղեւ զրաւ Համառօտութեան բանիս ի թվականութեան Հայկազեան տումարի կրկին քառից հարիւրից եւ քառից տասանց եւ քառից թուոց (1395), ի ժամանակի նեղութեան, ուր աւերեալ քակեաց զաշխարհս ամենայն հուրն հարաւային՝* Թամար կոչեցեալ, *եւ մեք դեգերեալ ի դրունս* Սուրբ առաքելոյն Եւստաթէի *պանդխտական կենօք, առ ոտս երջանիկ րաբունապետին՝* Գրիգորի, *սպասեմք վերին խնամոցն: Եւ իմ առեալ աստանդեալ կենօք, ձեռնարկեցի յայս գործ տեսութեան: Եւ քանզի իմաստունք ոչ կարօտին սմա, զի նոցա ամենայն ինչ յայտնի է, այլ իմն ընկերակիցք ուսցին ի սմանէ, զի անգիտութեան խաւարն ամենեւին կուրացուսցէ զնոսա: Այլեւ աղաչեմ զգաղափարօղդ, զի զսակաւ յիշատակս մեր գրեսջիք ի կատարումն գրոցս, իսկ նախանձոտքն առցեն ըստ մտաց իւրեանց, եւ կատարօղք աղաչանաց մերոց օրհնին յԱստուծոյ եւ ամենայն սրբոց. ամէն:*

Բ. [Բաւիղ զանազանիւ]

1. *138ա—51ա* Յարարածոցն համառօտ — *Արար Աստուած զմարդն ի պատկեր իւր...*

2. *153բ–162բ* Յայլմէ Քարոզ Աստուածածնին, ի բանն Սողոմոնի. եղեւ նա իբրեւ զնաւ շահաբեր... – *Ամենապայծառ եւ պատուական գեղեցկութիւն...*

3. *162բ–9բ* Օրհնութիւնս վերջ խարոզի – *Օրհնսցէ զձեզ Տէր Աստուած մեր...*

170ա–81բ տե՛ս ձեռ. Բ:

4. *182աբ* [Այս հասարակաց է վարդապետի եւ աշակերտի. վերջնատող] – *Քաշալերութիւն գրոց աշակերտին որո՞վ լինի... Պատասխանի. գիտասցէ այնպիսին, զի ոչ թէ ծառայ է...*

5. *182բ–6բ* [Քաղուածք]

– *182բ* Տիտոս *թագաւոր գերեաց զերուսաղէմ եւ բրեաց... –183աբ Այր ոմն իջանէր յերուսաղէմ եւ անկաւ ի ձեռս աւազակաց... –183աբ Վասն այսորիկ գրեալ է, թէ սէր իբրեւ աղ համեմիչ է...–183բ–6ա Նաեւ գաւերումն եւ զտապալումն եւ զքայքայումն... – 186աբ Այլ գոնեայ թերեւս ծերութեան իմոյ գթայ եւ խնայեայ... –186բ Իբրեւ եռես թէ ոչ աստեք գոյ ակնկալութիւն փրկութեան... –186բ Իսկ ես մտածելով զգործս անցելոյն...*

6. *187աբ* Յոհաննու Մանդակունեցւոյ ասացեալ Յաղագս բամպասանաց – *Մթերք սգոյ եւ աղջամուղջ տրտմութեան դիզեալ...*

7. *188ա* Գիր գլխոյ ցաւի – *Յիշեայ սրբութեամբ զԱստուած եւ գրեա զայս բան...*

8. *188բ–90բ* [Իրպահոցի. գուշակողական խաղ]

ա. *188բ Խելքագլոր (բոլորակք իրպահոցի)*

բ. *189ա–90ա Ա. Այդ հողդ, որ յափիդ ունիս / Ու գաղտուկ կուչես որ պահես... ԼԱ. Ձեռքդ կայ պահած, /Վասն էր ես կասկած...*

գ. *190աբ Ա. Թէ շատ կաֆա չափես ի յաջ, / Գտցես ի ձախ, գա խիստ յաճախ... ԼՐ. Փըրփրեցաւ ցաւօք/եւ քարացաւ աւար ցաւօք:*

Համմ. ձեռ. 680, 248բ—50բ:

9. *190բ–3բ* Զայս յառաջակայ ոտանաւորս Վասն ննջեցելոց գերեզմանաց տապանի համար է, եւ յորոց որ հանոյ թուեցին, գրել տացեն

ա. *190բ Ա. Յօդուած քառից այնց որակաց...*

բ. *190բ Բ. Այս գանձարան մահարձանի...*

գ. *190բ–1ա Գ. Յորոց հայիք յիս առ աչօք...*

դ. *191ա Դ. Անցաւորք ճանապարհի...*

ե. *191աբ Ե. Աստուածասէր խոնարհ հոգի...*

զ. *191բ Զ. Յաշխարհըս չէ ձեզ մնացական*

է. *191բ Է. Նայեցարուք ծնունդք երկրի...*

ը. *191բ–2ա Ը. Որ վասն անչափ սիրոյ քոյին...*

թ. *192ա Թ. Ըստ վըճռոի անդարձական...*

ժ. *192ա Ժ. Ուստի առաւ, ի նոյն փոխի...*

ժա. *192ա ԺԱ. Մայ է տապան մարգկան սեռի...*

ժբ. *192բ ԺԲ. Շնորհօք Հոգւոյն Հօր ճշմարտի...*

ժգ. *192բ ԺԳ. Այս է տապան դիր հանգստի...*

10. *193աբ եւ գայս ոտանաւորքս է ի վերայ ճամ թասի գըրելոյ*

ա. *193ա Ա. Կարմիր բաժակ, մէջըն լընէ...*

բ. *193ա Բ. Կարմիր գինով դու լընանիս...*

գ. *193ա Գ. Դու կարմրագոյն որպէս ոսկի...*

դ. *193ա Դ. Ճամս այս գոչէ ձայն գեղեցիկ...*

ե. *193ա Ե. Թասըմ, սէնի փեք սեւերիմ...*

զ. *193աբ Զ. Ես վայելուչ սիրոյ եմ տաշտ...*

11. *193բ Վասն թուոյ ութ ձայն շարականաց եւ Հարցիցս – ԱԶ. ՃԹ շարականք եւ Հարցք՝ ԻԲ...*

12. *193բ–4ա* Վասն եկեղեցեացն Պետրոսի եւ Պօղոսի – Սրբոյ Պետրոսի *եկեղեցւոյ կաթուղիկէի բարձրութիւնն ՄՀԴ գազ է...*

13. *194ա* Այս են անուանք խաչապաշտիցն ամենայն – *Լատինք, Հայք, Հռոմք...* Նեստորն:

14. *194ա–5բ* Այսման բան, զորն որ ճեզ պատշաճ թուի ի վերայ ողջունի գրի՝ գրեայ – *Ժամանեսցի տոմսկիս անբաց...*

15. *196բ–8բ* [Վիճակացոյց ի վերայ անուանց առաքելոց եւ աւետարանչաց]

– *196բ– 7բ* [Բանալի աղիւսակի եւ բոլորակ]

ա. *198աբ* Բարդուղիմէոս – *Աւետիս քեզ մեծութեան...*

բ. *198բ–9ա* Յակոբոս – *Արի յաղօթս կացիր քեզէն...*

գ. *199ա* Փիլիպպոս – *Ահա տամ ես քեզ աւետիս...*

դ. *199բ–200ա* Սիմովն – *Աւետիս տուր եւ կանչէ...*

ե. *200ա–1ա* Պօղոս – *Աջող եւ շնահաւոր...*

զ. *201աբ* Թովմաս – *Աւետիս տամ քեզ, խնդայ...*

է. *201բ–2ա* Յոհաննէս – *Արքունանաս յամէն դիմաց...*

ը. *202աբ* Յակոբ – *Աստեղիս կաց, մի գնար...*

թ. *202բ–3ա* Տիտոս – *Ահա գայ այս քո գերիս...*

ժ. *203բ–4ա* Ղուկաս – *Արդարադատ քեզի լինի...*

ժա. *204աբ* Ստեփաննոս – *Արդ, լինի քեզ նոր որդի...*

ժբ. *204բ–5ա* Անդրէաս – *Աւրհնութիւն է քո, թագաւոր...*

ժգ. *205աբ* Թաթէոս – *Արի խնդրեա աստ՝ գտանես...*

ժդ. *206աբ* Մաթէոս – *Աւետիս երկար կենաց...*

ժե. *206բ–7ա* Պռոխորոն – *Ահա եկն առ քեզ իւր հեռաւոր...*

ժզ. *207աբ* Պետրոս — *Արա զայդ բանդ, զի կու լինիս…*

—208բ (Գրչից) «եղբայրք, զոր ինչ օրինակն կայր զայն գրեցի, ոչ մեղադրէք ինձ, թէ պակաս եւ աւելորդ գիր գոյ ի մէջ»։

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

151ա Արդ, եղկելիս եւ մեղօք դատապարտեալ գծօղս, որոյ իսկապէս չեմ արժանի զանունն իմ աստ մակագրել սակս անթիւ եւ անկշիռ անօրէնութեանց իմոց։ Տեղեաւ գոլով ի հռչակաւոր մենաստան///(151բ)էն, այսինքն Արղնու Բարձրաբաշխեաց Սուրբ Աստուածածնա*, եւ վասն անգութ, անխնամ եւ անողորմ առաջնորդին մերոյ, անտանելի վիշտք հասոյց մեղօք մեռելոյս, որոյ վատութեան եւ անաստուածութեան համբաւ նորա հռչակեալ է յամենայն տեղիս։ Եւ յետ յոճնակի նեղութեանց, զոր կրեցի ի նմանէ, այլ ոչ կարացի ժուժիլ, տարադէմ եղա յերկիրն* Արարատեան*, ի* Սուրբ Գահն էջմիածին*, առ սրբամիտ առն Աստուծոյ եւ ճշմարիտ աշակերտն Քրիստոսի՝* Տիգրանակերտցի Յոհան *վսեմազարդ վարդապետն, զի նա եւս այն առաջնորդի անուղղա վարուցն եւ անկարգ գնացիցն, թողեալ զբնիկ հայրենիսն, մանաւանդ զսուրբ վանքն, եւ գնացեալ էր ի* Սուրբ Աթոռն էջմիածին*։ Որոյ ի տեսանելն նորա զխղճութիւնս իմ, խաղաց շարժեցաւ գութ նորա ի վերայ իմ, որպէս եւ ունէր բնական սովորութիւն գթալ ի վերայ տրտմեցեալ անձանց, մանաւանդ աղքատաց ողորմիլ։ Վասն որոյ պատեաց զվէրս իմ ըստ հրամանի Փրկչին իւրոյ, զոր ոչ ճառել կարեմ զերախտիսն նորա՝ զոր եցոյց առ հեքս։ Զոր Տէր Յիսուս, զսրբազան վեհն իմ, այսինքն՝ զՅոհան մաքրակենցաղ վարդապետն, ընդ սրբոց հայրապետաց դասակից արասցէ. ամէն։*

Դարձեալ ի Սուրբ Աթոռն*, վասն անպատմելի մեղաց իմոց, ոմն սատան յարեաւ ի վերայ իմ ի նոյն ժպիրհ ազգէն առաջնորդին, եւ ///(152ա) բազում բանս անօրէնութեան բարդեաց ի վերայ իմ, մինչ զի անախորժ թուեցոյց զամենամեղ անձն իմ առաջի սրբազան հայրապետին։ Եւ անընդունակ եղայ նոցա, եւ զարմանք, զի այնքան միաւեղ հացկերութիւն արարեալն, մանաւանդ միմեանց խոստովանահայր բազում անգամ։ Այլ նա ոչ պատկառեաց զասացելոցս, այլ զի ազգն նոցա ամենեքեան նենգօղք են եւ ատեցօղ սիրելաց։ Վասն որոյ անող[ո]րմաբար զրպապատեաց զիս առաջի բազմանբոխ վարդապետաց։ Աստ կատարի բան մարգարէին, թէ. Թշնամին նախատեալ էր եւ այլն։ Համբերէի, իսկ սա ծանօթ զոր եւ Աստուած լիցի նմա վրէժխնդիր։ Վասն որոյ հրաման եղեւ ի վերայ հեքոյս, թէ. Ոչ է պարտ կենալ դմա աստ, այլ երթիցէ ուր եւ կամի։ Եւ թէպէտ վարդապետն իմ ոչ կամեցաւ զայս, սակայն թոյլ ետ ամիսս ինչ։ Եւ վերոյգրեալ վեհն իմ կոչեաց զիս առ ինքն եւ բանս մխիթարականս խօսեցաւ ընդ իս, եւ եբեր գրաստ, եւ առաքեաց գրով իւրով զեղկելիս ի* Սուրբ վանքն Յօհաննու *կոչեցեալ։ Զի թէպէտ վարդապետն իմ միշտ խնամէ զիս, եթէ բանիւ կամ թէ գանձով, սակայն անարգեալ եւ արհամարհեալ եղէ յայս ամենեցունց։ Իրաւապէս առ իս լցաւ բան նախատեսողին, թէ. Նայիցարուք անցօղք ճանապարհաց եւ տեսէք թէ իցեն երբէք ցաւք ըստ ցաւոցս լեալ, որ ի վերայ իմ հասին, քանզի ետուն ինձ մոռանալ զառօրեայ կենցաղս։ Վասն որոյ տատանեալ կենօք ձեռն արկի փոքրագոյն գր///(152բ)ոյս, զի ոչ էր իմ կարողութիւն, այլ ի չգոյէ առն եւ ի հասեալ ժամու անտէրունչ գոլով, սկայ շնորհօքն Քրիստոսի եւ ողորմութեամբ նորին կատարեցի։ Արդ, աղաչեմ զհանդիպօղսդ սուրբ գանձիս, մտատիւրութեամբ ընթեռնուլ, եւ զաւելորդն կշռել, եւ պակասութեան ներել, վասն Աստուծոյ, քանզի ոչ էի հմուտ եւ վարժ գրչութեան, որպէս եւ տեսանի ի գրի արհեստն։ Եւ ոչ թէ փքացեալ մտօք գրեցի, այլ վասն առ ի չգոյէ այսպիսի հոգիաբուղխ մատեան, վասն որոյ արարի զայս վասն իմ անձինս, առ ի մխիթարել սովաւ։ Եւ այս դառն եւ տաժանելի կրիւք, քանզի ոչ ունէի զարժանաւորութիւն հոգւոյ, որ դիւրաւ մտածէի, այլ չարչարելով եւ ժռելով տկարս ոգւո էած Աստուած յաւարտ առ ի փափաք սրտի իմոյ, զոր յառաջմէ ի վերայ սորին խանդաղատիւր հոգի իմ։ Այլեւ յիշեսջիք ըզսրբազնամաքուր՝ արհիպիսկոպոսն* Տիգրանակերտցի Յոհան *աստուածաբանութեան վարդապետութեան վարդապետն, որ Աստուծոյ է հաճելի եւ ամենայն տեսողաց, եւ զսիրելի եղբայրն իմ* Սպահանցի Խաչատուր *վարդապետն, եւ աչացս իմ լոյս եւ հոգւոյս բաղձալի եղբայրն իմ* Տիգրանակերտցի *տիրացու* Ալեքսանն*, զի սոքա եղեն ինձ սփոփիչ եւ ցաւոցս իմոյ ցաւակից։ Վասն որոյ աղաչեմ խնդրել զթողութիւն բազմավէպ յանցանաց իմոց, թերեւս իջցէ ///(153ա) աղօթք մաղթանաց ձերոց եւ ողորմութիւն Փրկչին ի շարաւալի ոգիս իմ, եւ լուացէ զաղտ հնութեան մեղօք մեռելոյս եւ արժանացուսցէ ողորմութեամբ մասին սրբոց, եւ կարգեսցէ ընդ յետին մշակացն։ Այլեւ անմեղադիր լինել աղաչեմ, զի դառնութիւն ժամանակիս եւ աղճատանք չար խորհրդոց շփոթեալ աղտեղացուցին զհոգի եւ զմարմին իմ, մանաւանդ անգութ եւ անողորմ արարմունք վերոյասացեալ առաջնորդին մերոյ իսպառ վիրաւորեաց զիս եւ յաւէտ վիշտք նորին, որ անհրաժեշտ վատթարութեամբ դառնացոյց զիս, վասն որոյ ոչ կարացի լիովին քննել զպակասն եւ զաւելորդն գրոց, որպէս եւ գիտակ էք, որ տրտմեցեալ*

սրտի միտքն ցնդեալ երեւի, վասն որոյ աղաչեմ ներել ինձ: Եւ կատարօղք աղաչանաց մերոց օրհնին յԱստուածոյ. ամէն: Արդ, եղեւ գրաւ գրոյս ի թուականիս Հայոց ՌՃՀԳ(1734) ամին, յերկիրն Ararատեան, ի սուրբ վանքն Յօհաննու Մկրտչին եւ ի Սուրբ Կաթողիկէն: Դարձեալ յերես անկեալ աղաչեմ յիշել ի Տէր զլուսաւարար հրաշազան տաճարիս՝ զքաղցրատես եւ զուարթերես զտէր Գալուստ սրբակրօն կրօնաւորն, զի նա միշտ ուրախացուցանէր զեղկելիս, որոյ Տէր Յիսուս լիցի նմա վարձահատո[յ]ց. ամէն:

Ջ Ե Ռ Ա Գ Ի Ր Ք

ԺԷ — XVII

Թերթ՝ 12(170—181): Պրակ՝ 1x12: Նիւթ՝ թուղթ, լուսագծերով: Մեծութիւն՝ 15,5x10,5: Գրութիւն՝ միասիւն: Գիր՝ նօտրգիր: Տող՝ 25:

Վիճակ՝ բաւարար:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

–170ա–81բ [Գրիգորի Աստուածաբանի Նազիանզացւոյ Առ nrus ճառք]

Տե՛ս ձեռ. 61, 3ա—205բ. *միայն՝ § գ/170ա–7ա(սկ. «////յայսցանէ ընդունիմ եւ զհարցուածան ասեմ անտեղի...»): դ/177ա–81բ(վրջ. «...հոգիս յօժար է, բայց մար[մինս՝ տկար]////»):*


1661
Տ Ա Ղ Ա Ր Ա Ն

ՌԽԳ — 1594


Գրիչ՝ Պետրոս դպիր: Ստացող՝ Յակոբ ֆիլ.:

Թերթ՝ 419. չգրուած՝ 1ա, 416ա, 417ա: Պրակ՝ Ա—ԻԹx12 + 17x12 (ԻԴ 4, ԺԷ 7): Նիւթ՝ թուղթ, լուսագծերով: Մեծութիւն՝ 15,7x10,6: Գրութիւն՝ միասիւն: Գիր՝ նօտրգիր (տարբեր, լրացնողի՝ 108աբ, 224բ—44բ, 330բ—64ա, 369ա—419բ): Տող՝ 17—22: Կազմ՝ ճնշագծերով շագանակագոյն կաշի, միջուկը՝ տախտակ, աստառը՝ վանդակաւոր կապոյտ կտաւ:


Մանրանկարչութիւն — Ջ ա ր դ ա գ ի ր՝ հանգուցագիր, թռչնագիր: Գ ո յ ն ե ր՝ կարմիր:




Նմուշ՝ 3ա




Նմուշ՝ 23ա




Նմուշ՝ 134ա



Նմուշ՝ 233ա



Նմուշ՝ 312ա



Նմուշ՝ 330ա

Վիճակ՝ բաւարար. միջից պակասաւոր, տեղ—տեղ զանազան բծեր, փոորիկ պատռուածքներ: Կազմի կաշին՝ ճեղծուած, եզրերը՝ մաշուած, դռնակն ու կապիչներն՝ ընկած: ԺԷ դ. նորոգուած, լրացուած եւ յաւելագրուած:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Ա. *3ա–98բ* [Ոտանաւորք Յովասափայ Սեբաստացւոյ]

– *3աբ* [Նախերգան] – *Յիսուս Միածին եւ Հայր երկնային, բխումն Սուրբ Հոգին...*

1. ա. *4բ–5ա* Յանուն Աստուծոյ: Ոտանաւոր վասն լինելութեան արարածոց, *ըստեղծման* երկնայնոց, փոխ ի շատէ յանհաս էից, վեցօրէից, ի տկար եւ տարտամ, անկիրթ եւ անվարժ, մեղաւոր, չարաչար ախտիւ վիրաւորեալ հոգով եւ մարմնով, Յովասափ անարհեստ, մեղաց գերի եւ ողորմելի – *Աւրհնեմք զանեղ բնութիւն անմահ Արարչին, / Ստեղծող հանուրց սեռից զՀայր կենտանին...*

բ. *5ա–6ա* Վասն երկոտասան կենդանակերպիցն եւ աշխարհաց նոցին ոտանաւոր – *երկոտա-*

սան տեղին ի պարունակին / Յիշէ Դէոնեսի Արիսպագացին…

գ. *6ա–9ա* Վասն է մոլական աստեղացն եւ բընութեանն – *Զիմաստն արտաքին վասըն է աստխին, / Սակօ մի յիշեսցուք ի մեծ տումարին…*

դ. *9բ–12ա* (Կրկ. 151ա—3բ) Ոտանաւոր վասն ըստեղծման դրախտին եւ յԱդամայ: ԻԳ տուն – *Ստեղծաւղն արարչագործ յէակ հրամանին, / Տնկեաց զդրախտն եդեմ իւր նախաստեղծին…*

ե. *12ա–5ա* Ոտանաւոր Ադամայ ոդոցն կարգօ, փոխ ի շատէ մինչեւ ի Նոյ եւ յաշտարակն: Տուն Լ – *Եկեալ բնակիր Ադամ ի դէմ դրախտին, / Տըրտմութեամբ վաստակէր զերկիր ի գործին…*

զ. *15ա–8ա* Ոտանաւոր Աբրահամու, Սահակա եւ Ղովտայ, Մելխիսեթեկի: Տուն ԻԴ: Աբրահամ – *Հայր Աբրահամ ասեմ զորդի Թարային, / Որ ի նմանէ եղեւ Աստուածպաշտութիւն…*

է. *18ա–20բ* Ոտանաւոր նահապետին Յակոբայ եւ Յովսէփ Գեղեցկին: Տուն ԻԴ (24) – *Կամիք եւ աստ յիշել զՍահակա որդին, / Սօուղ եւ փոքրն Յակոբ անուն կոչին…*

ը. *20բ–2ա* Ոտանաւոր վասն Յորայ: Տուն ԺԶ – *Բարին բարի բնութեամբ սիրէ զբարին, / Եւ Տէրն ուրախանայ ի վերայ նորին…*

թ. *22ա–6ա* Ոտանաւոր Մովսէսի մարգարէի: Տուն ԺէՆկուսիս մարգարէից, նախ և առաջին Մովսէս աստուածախաւսն յիշեմք ի կարգին…

ժ. *26ա–7ա* Ոտանաւոր Յեսուա, Սամսոնի: Տուն ԺԲ – *Ճշմարիտ կոյսն Յեսու, որ յետ Մովսէսին / Առաջնորդեալ եղեւ Իսրայէլ ազգին…*

ժա. *27ա–9բ* Ոտանաւոր Դօիթ մարգարէի: Տուն Ի – *Դաւիթ յիշել կամիմ յիշման արժանին, / Որդի Յեսսէ՝ որդոցն Աբրահամին…*

ժբ. *29բ–31ա* Ոտանաւոր վասն Սողոմոնի: Տուն ԺԸ – *Փառք տանք անեղ փառաց Հօրն երկնաւորին, / Որդոյ եւ Սուրբ Հոգոյն՝ շնորհաց բաշխողին…*

ժգ. *31ա–3ա* Ոտանաւոր մարգարէիցն Եսայիայ, Եղիայի եւ Եղիսէի: Տուն ԺԸ – *Զմարգարէքն յիշեմք ի յայսմ կարգին, / Որ զտնաւրէնութիւն Բանին ծանուցին…*

ժդ. *33ա–5ա* Ոտանաւոր Երեմիայի եւ աշակերտաց նորին: Տուն Ի – *Զերեմիայ յիշեմ ի կոյս խորհրդին, / Յոյժ դառնացեալ տրտում կայր ի տաճարին…*

ժե. *35ա–7ա* Ոտանաւոր Եզեկիէլի, Ամպակումայ, Յունանու: [Տուն] ԺԸ – *Եզեկիէլ եւս ըզՏէրն երկնային, / Ահեղակերպ տեսիլ ի Քոբար գետին…*

ժզ. *37բ–9ա* Ոտանաւոր ԲԺ—ան մարգարէից: Տուն ԺԹ – *Ովսեայ եւ Ամովսեայ քարոզ՝ վերըստին / Միօորիլ, խառնիլ Բանին ի մարմին…*

ժէ. *39ա–41բ* Վասն Ծնընդեան Մարիամու եւ Աւետմանն հրեշտակին զսուրբ կոյսն: Տուն Ի – *Յովակիմ եւ Աննայ յորդոց Յուդային, / Ողորմող եւ խոնարհ ի յարդարութիւն…*

ժը. *41բ–2բ* Վասն անճառ Ծնընդեանն Յիսուսի Քրիստոսի: Տուն ԺԲ – *Աւրհնեմք զանճառ ծընունդ Որդոյն Միածնին, / Փըրկիչըն բոլորից՝ Աստուած կուսածին…*

ժթ. *42բ–6ա* Վասն գնալոյ յԵգիպտոս եւ տղայութեանն Յիսուսի ըսքանչելիւ: Տուն ԼԲ – *Հրեշտակն երեւեցաւ Յովսէփայ հիւսին / Եւ մաքուր միշտ կուսի սուրբ Աստուածածնին… / Մարդացեալն Քրիստոս իւր ողորմեացի:*

– *46ա* [Յիշատակարան («Յովասափ»)]

Յերես անկեալ արտաստալի,
Մի՛ մեղադրէք յիմար գրչի,
Զի լինելոց ի յաշխարհի,
Ըսկիսբն եղեւ կարճ ի կարճի:
Որ նախայհարց նահապետի,
Մարգարէից, որ ի կարգի,
Մինչեւ Ծընունդն Յիսուսի
Եւ տղայութեան ըսքանչելի:
Վսեմացեալս ի բան բարի,
Եկեալ հասի յանհաս Բանի,
Յիսկզբընզբանսն Աւետարանի,
Մկըրտութեան Յիսուս Փրկչի:
Այլ մի քանի բան մի պիտի,
ՅԱետարան սուրբ Յոհաննի,
Կամիմ գրել ի յայս կարգի,
Բայց վախենամ, չեմ արժանի:
Սոսկալի է անարժանի
Պատմել զբանըս հրաշալի,
Խընտրեմ ի քէն, Տէր ըղձալի,
Արժան արայ զիս այս տառի:
Աղաղակեմ ըստ Անառակի,
Տէր, ողորմեայ քո ծառայի,
46բ //Ես եմ մեղօք մեռեալ ի լի,
Զքո սուրբ հրաշքտ ոնց յիշեցի:
Փառօորեմք զՏէր կենդանի,
Զհայր եւ զՈրդի եւ Սուրբ Հոգի,
Աստէն՝ չտալ ըզփորձի,
Յանտէնն՝ տալ անճառ բարի:

2. *46բ–57ա* Աւետարան է սմանչելեաց: Ճ տուն է ըստ Ճ(100) ոչխարաց: Մեղապարտ Յովասափի Սեբաստացոյ, Սուրբ Հոգի, ասգնեայ – *Աւրհնեմք*

ըզՀայր Աստուած անհաս, անքննին, / եւ զէակից Որդի՝ Քրիստոս կենդանին…

3. *57ա–60ա* Վասն արդայ դատաստանին / եւ հատուցման գործոց նոցին. / Վայ ինձ, զինոգիս իմ կորուսի, /եւ բան չունիմ պատասխանի («Այս Յովսաբի…») – *Արարչագործն Աստուած, ըստեղծօղ համայնին,/ Յորժամ գայ ի դատել զազգս հողածին…*

4. *60ա–2ա* Ոտանաւոր վասն ըսպարապետին Հայոց Ֆաջին Մուշեղայ: Տուն ԻԴ – *Աւրհնեալ անուն արարչական, / Որ ստեղծեց զազգս ամենայն…*

5. *62ա–3բ* Ոտանաւոր վասն հոգոյ: Տուն ԺԶ («Յովասափե սակավ բանս է») – *Յերես անկեալ արտասուալի, / Կոծեմ զանձն իմ սգալի…*

6. *63բ–5ա* Ոտանաւոր վասն Կոկճայի նահատակին ի Սեբաստիայ: Տուն ԺԷ («Յովասաբ…») – *Յինն հարիւր Հայոց թվին, / Ջե աւելորդին… (1536)*

7. *65ա–6ա* Կաֆայ վասն սուրբ Քառասնիցն: Տուն ԺԹ («Յովասաբի է բանս») – *Յիշեմք սքանչելի Մանկունք քառասնիցն ի Սեբաստիին, / Որ թողին զպաշտմունք կռոցն եւ եղան բաժին փըրկչին…*

8. *66աբ* Ոտանաւոր հոգեւոր («Յովասափի է այս բանս») – *Յիմաստասէր բժիշկ մի հարցայ ես բան, / Թէ գիտես դեղ ցաւու եւ վիրաց մարդկան…*

9. *67աբ* Վասն հօատոյ, յուսոյ եւ սիրոյ («Յովասաբէ») – *Յիշէ զգործս բարիս յամէն պատուիրան, / Սէր եւ հաւատ եւ յոյս, սոքայ երեքեան…*

10. *67բ–9ա* Վասն ողորմութեան («Ի Յվասափե բանս») – *Ի սկըզբանէ Քրիստոս յԱւետարանին, / Երանի տայ նոցա, որ խոնարհ լինին…*

11. *69ա–70ա* Վասն խոստովանութեան: Տուն ԺԱ – *Հաւատամք ի Քրիստոս՝ Որդին Միածին, / Եցոյց մեզ ճանապարհ եւ ճշմարտութիւն…*

12. *70ա–1ա* Վասն համբերութեան եւ խաղաղութեան – *Սուրբ հարքն մեզ աւանդեցին, / Թէ ունկնդիր լերուք սուրբ պատուիրանին…*

13. *71ա–2բ* Բանիւ վասն մեղաց: Տուն ԺԹ – *Յոյս եւ ապաւէն եւ կեանք Տէր Յիսուս, տըւող բարութեան, / Հայեայ մոլորեալ ծառայս եւ տուր ինձ ոգի սգաստութեան…*

14. *72բ–5ա* Տեսիլ տեառն Մեծին Ներսէսի, կարճ ի կարճոյ վասն վերջին ժամանակին, զի ի յայն ժամանակին ոչ էր եղեալ Մահմետն – *Տեսիլ տեառն Ներսէսի մարգարէական, / Վասն քրիստոնէից յազգէ հագարան…(74ա, նշանով անջատուած) Յետ այսոր անկանի դուռն հիւսուսական, / Զարքն յարիցեն Գոգ եւ Մագոգեան…*

15. *75բ–6ա* Անձինք Բ վասն անձին իւրոյ ասէ գրող բանիս: Անձն իմ արիւն. գոյնն ասէ («Ա—Ք») – *Անձն իմ չէ՞ր ի չարիս դու աղտեղեցար, ով անձն իմ, / Բարձրելոյն ի փառացըն խիստ հեռացար…*

16. *76ա–7բ* Ի էէն մինչեւ ի յայրն՝ նոյն անձին («Ք—Ա», 6 տուն) – *Քաղցր է Տէր եւ Աստուած, զվէրատ բժշկէ, ով անձն իմ, / Փութացիր առ Յիսուս, որ զքեզ նորոգէ… (77ա, նշանով անջատուած) Ըզքեզ զԱստուած խոստովանիմ, երկիրպագեմ եւ հօատամ, / Քեզ գոհութիւնս դրատեմ, թէ ասելոյ արժանանամ…*

17. *77բ–80ա* Կաֆայ է եւ հայերէն (ի լուսանցս 77բ «Ես եմ կորուսեալին. գոյն ասայ») – *Աշխարհիս սահմանն է հանց, հետ լիցւի ու հետ թերենայ, / Կու թեթեւցնէ զիր բեռն, որ ով գայ՝ շալկել կարենայ…*

18. *80ա–1բ* Կաֆայ ի նոյն բան («Յովասաբ մազամ» – *Յիշէ զբան Աւետարանին, իմաստուն կուսից ի նման, / Պատրաստ եւ արթուն կացին, լապտերօք մտին հարսնարան…*

19. ա. *81բ–3բ* Ոտանաւոր վասն տումարական արհեստին, եթէ ուստի՞ ըսկսաւ տումարն եւ ինչումն լրմանց, ի նոյն Յովասափ Սեբաստացւոյ: Տուն ԺԷ – *Փառք տանք եւ գոհութիւն առ Հայր եւ Որդին, / Աւրհնաբանեմք գշնորհս Հոգոյն ճշմարտին…*

բ. *83բ–7ա* Վասն տումարին ոտանաւոր Հռոմայեցոց, արհեստ եւ մակացութիւն: Տուն Լ – *Եղբայր, խիստ <խիստ> գեղեցիկ է բան տումարին, /Եւ հինն է հաստատուն ամէն արուեստին…*

գ. *87ա–9ա* Ոտանաւոր անփոփոխ եղականացն (=եղականացն) – *Այս փոփոխ եղանակս ի տեղն անշարժ է, / Քանզի յունվարի Ա(1)–ն տարէմուտ է…*

20. *89ա–98բ* Ոտանաւոր վարուց ըսհանչելեաց սուրբ կուսին Երինէ: Տուն ՃԻԲ – *Ստեղծիչ ամենայն գոյից, որ ըստեղծ զԱդամն առաջին, / Որ եւ աճեցէք ասաց եւ լցէք զաշխարհս որ ի սմին…*

Բ. [Բանիւ զանազանիւ]

1. *98բ–100ա* Ես եմ կորուսեալ ոչխարին. գոյնն: Խոստովանութեան ոտանաւոր – *Մեղայ, Տէր, ինձ ողորմեայ, / Տէր, մեղայ, Աստուած զիս քաւեայ…*

2. *100ա–3բ* Նընջումն երանելոյս եզնկայ ի յԱպահունեաց վանին եղեւ, որ այժմ Բթառիճի վանք ասի: Աւաչ գեղեցիկ եւ հոգեւոր ի Տաւօնեցի Մկրտիչ վարդապետէ ասացեալ – *Աւրհնեալ անմահ թագաւոր, / Դու միայն հընգաւր գաւրուօր…/ Ի Ռ թվականի եւ քսան ու վեց թիւ յաւելին (1577),/ Յարմարեցաւ բանս ըստ կարգին:*

3. *103բ–4ա* Տաղ ղարիպի – *Հոգի, մի՛ ասել ղարիպ, թէ չէ իմ սիրտս կ՚արունի, / Ղարիպն ի աւտար երկիր, ա՜խ, ամ խիստ դիժար կու լինի…*

4. *104բ–5ա* Տաղ ղարիպի է («Ի ղափպ Ջահարե») – *Ի քէն, Տէր, հայցեմ, Հայր գթական, / Պարգեւեայ ինձ իմաստ տեսական…*

5. ա. *105աբ* [ՅԱդամայ մինչեւ ի Գրիգոր Խլաթեցի] — *յԱդամայ մինչեւ ի Ծնունդն Քրիստոսի ՐՃՂԸ (5198) ամ է... ի* Ներսէս Կլայեցոյն *մինչեւ ի* Ծերենց Գրիգորն *յԼ (330) ամ:*

բ. *105բ* [Վասն վարդապետացն Հայոց] — Վանական *վարդապետն աշակերտ է* Մխիթար *վարդապետի... եւ նայ՝ եսայեայ վարդապետին... ամէն:*

գ. *106ա—7ա* Գիշեր պաշտման: Երբ ձայնն վիճարինայ, զայս ասայ (ԱՋ—ԴԿ) — *ԱՋ, ԳՋ. Յիշեսցէ բարէգութ եւ մարդասէրն Աստուած զհոգիս համաւրէն հօատացեալ ննջեցելոց...*

6. *107ա—8բ* Ոտանաւոր վասն աղօթից, Առաքել վարդապետէ («Այս Առաքել վարդապետի») — *Աւրհնեալ անուն անմահ սուրբ թագաւորին / Յիսուսի Քրիստոսի՝ Որդոյն Միածնին...*

Ծայրակապային հատուածը՝ այլ ձեռք:

7. *109ա—10ա* [Նորին Ֆրկանն ասացեալ Տաղ ի վերայ ծովացեալ մեղաց մարդոյ. Դիւան, 481] — *Յառաջն որ աշխարհս եկի, / Հանց ըստ ակի զինչ հայելի...*

8. *110աբ* [Տաղ ուրախութեան ի վրա ծովուն եւ նաւի. ձեռ. 3081, 77ա] — *Ահա, տեսէք թէ ինչ կայ ծովին, որ նաւն Ուտում գայր, / Տեսան որ վէմ կայր ի նաւին...*

9. *110բ—1բ* Տաղ Մարիամու Աստուածածնին («Ա—Ք») — *Արեւ լուսատու, տաճար Աստուծոյ, / Բանին բարունակ անթառամ վարդոյ...*

10. *111բ—3ա* [Զայս տաղս ի ժամ հաղորդութեանն ասա, ո՛վ եղբայր. ձեռ. 695. 254ա] — *Բաշխես ըզհացըտ մաքրական, / Զարիւնդ ըմպել տաս սոսկական...*

11. *113ա—36ա* Առաքել վարդապետի ասացեալ ոտանաւոր չափ տաղի ի պատմութենէ սրբոյն Գրիգորի մեր Լուսաւորչին (25 գլուխ)— *Աւրհնեալ Հայրն երկնաւոր լոյսն անճառական, / Գովեալ Որդին Աստուած ծընունդ իսկական...*

12. *136ա—51ա* Տաղ Աւետեաց հրեշտակապետին Մարիամայ եւ Ծնընդեան կուսին եւ սնընդեանն. փոխս ԺԳ — *Աւրհնեալ Հայր երկնաւոր՝ ծընաւղ Միածնին, / Գովեալ Որդին անճառ՝ Ծընունդ ծոցածին... / Ես՝* Առաքել *մեղօք լցեալ աշխարհի.../ ՃԼԹ տուն է Աստուածածնին տաղն:*

13. *151ա—3բ* Տաղ ի վերայ Ադամայ (կրկ. 9բ—12ա):

14. *153բ—60ա* Աստուածաշունչին Մեկնիչին յետեւն է այս օտանաւորս, զոր թուէ զսահանչելիին Մովսէսի — *Այս է մատեան աստուածային գերադրական եւ երկնային, / Ոգեալ յօէտ մատանցըն հին երկնագումար մըտաց նրբին... / ՃԽԴ տուն է այս:*

15. ա. *160ա—1բ* Նախերգանի է: Ո՛վ եղբայր իմացիր եւ ի միտ առ — *Բացից զբերան մտաց եւ առից զհոգի շնորհաց...*

բ. *161բ—2ա* Նախերգանի — *Ո՛վ անընտուեր լոյս իմանալի եւ փառաց ճառագայթ անճառելի...*

16. ա. *162ա—74ա* Քառոզ վասն պահոց. ուգնեա, Յիսուս: Յայնժամ վարեցաւ Յիսուս յանապատի... — *Մաթէոսի Դ գլուխն գրեալ է, թէ. Թագաւոր ոմն...*

բ. *174ա—83ա* Քառոզ այլ պահոց է: Յայնժամ վարեցաւ Յիսուս յանապատի... — *Իմաստունք ասեն, թէ. Գող ոմն...*

գ. *183բ—99ա* Քառոզ առաջ խոստովանութեան: Ապա՛յ թէ խոստովանիմ զմեղս մեր հաւատարիմ է, նայեւ արդար, առ ի թողուլ զմեղս մեր — *Ոմն կամեցաւ որսալ աղաւնի...*

17. ա. *199բ—203ա* Վարք եւ յիշատակ Պարսուտմայ ճգնաւորին — *Սուրբն Պարսամ, որ թարմանի՝ Որդի, էր նա ազգաւ ասորի...*

բ. *203բ—4ա* Պատմութիւն եւ այլ ճգնաւորաց — *Պատմեաց ոմն ի հարանցն, թէ. էր ի Թեսաղոնիկէ վանք մի...*

գ. *204ա—6ա* Յայսմաւուր վարք եւ յիշատակ Ճ եւ Կ կուսանացն — *Անտիոք որք էին ի վանք մի ամուր պարսպով...*

դ. *206աբ* [Ի Հարանց վարուց] — *Եւ էր ոմն կարի ճգնօր, աղօթէր...*

ե. *206բ Դաւիթ մարգարէն հրամայեց, թէ. Զարկամ ունիս, նայ սիրէ...*

18. *206բ—13ա* Նախերգանի է [եւ] աւհնութիւն վարդապետի — *Այժմ ժամանեալ յաւարտ եւ ի կատարումն թարգմանութեան առաջի...*

19. *213բ—4բ* Ողբ Առաքել վարդապետի ասացեալ («Առաքել գլժդապիի ե») — *Առ քեզ գոչեմ ձայնիւ մեղայ, / Ի սիրելեաց բաժանեցայ...*

20. *215ա—78բ, 285աբ, 333ա—64բ* Ի տէր Առաքել [Սիւն]եաց հռետոր Բանի զանազանի եւ պիտանիի եւ հարկօորի եւ գեղեցիկի, ասացեալ ոտանաւորաբար, հրամանօ մեծ եւ տիեզերալոյս վարդապետի Գրիգոր Ծերե[ն]ցի: Տունս ՌՄ (1200) (Ադամգիրք):

Տե՛ս ձեռ. 83, 2ա—138բ. *Քաղուածոյ եւ խառն. § 1.* ա/*215ա—7բ:* բ/*217բ—8բ:* գ/*218բ—29բ:* դ/*229բ—30բ:* ե/*230բ—3ա:* զ/*233ա—6ա:* է/*236ա—8ա:* ը/*238ա—42ա, 333ա—5ա:* թ/*335ա—6բ:* ժ/*246ա—8ա:* ժա/*337ա—8բ:* ժբ/*338բ—43ա:* ժգ/*243ա—5բ:* ժդ/*344բ—8բ:* ժե/*348բ—50բ:* ժզ/*351ա—2բ:* ժէ/*352բ—7ա:* ժը/*357ա—8բ:* ժթ/*358բ—60ա:* ի/*248բ—51բ:* իա/*360ա—1ա:* իբ/*251բ—7բ:* իգ/*257բ—64ա:* իդ/*264ա—71բ:* իե/*271բ—3ա:* իզ/*273ա—77ա:* *Յիշ. Ա հատորի՝ 277ա—8բ: § 2/չիք: § 3.* ա/*361ա—3բ:* բ—գ/*չիք:* դ/*285բ:* ե—զ/*չիք:* է/*285աբ:* ը/*242ա—3ա(կրկ. 363բ—4բ:* թ—ժ/*չիք): Յիշ. Գ հատորի՝ չիք:*

21. *278բ–84բ* Վասն Բժ—ան կենդանակերպից եւ Բժ—ան ազգաց եւ Բժ—անանդամոց: Տումբ Հ [«ի Առաքել վարդապետէ»]

Տե՛ս ձեռ. 739, 47բ—55բ. § ա/*278բ–9բ*: բ/*279բ–81բ*: գ/*281բ–2ա*: դ/*282աբ*: ե/*282բ–3ա*: զ/*283ա*: է/*283ա–4ա*: ը/*284ա*: թ/*284բ(285աբ տե՛ս Բ. § 20)*: ժ/*չիք*:

22. *286ա–313ա* Ես՝ Յովանէս նուաստ ոգի, / Որ մականուն Թուկուրացի, / Կամ*օ* իմով ի հոգ մտի, / Բանս ժողովել ինձ յիշելի, / Աստ կարճաբան հօտեցի / Առաքածոցն Մովսէսի, / Մեկնեալ Վարդան վարդապետի, / Քաղեալ ի հարցն հոգելի – *Ի սկը[ս]օղնէ սկիզբն ի սկզբ[գ]բան, / Արարիչն Աստուածն յօհտեան... / ՋԹուրկուրացիս միշտ յիշեցէք, հարք պատուական:*

23. *313ա–4բ* Բանք մաղթանաց յԱռաքել վարդապետէ առ երկնային զօրսն. ի Մեղականիենն. ձայնն («Ա—Ք») – *Անեղ ’ւ անմահ թագաւորին սուրբ զինօրք, / Ամենասուրբ երրորդութեանն ըսպասաօրք...*

24. *314բ–5բ* Նորին յորդորակ ի նոյն («Առաքելի Բաղիշեցո») – *Անմարմնական հոգեղինացըն վերնական / եւ ստորայնոց տեսականաց տէր եւ իշխան...*

25. ա. *315բ–22բ* Առաքել շնորհալից վարդպետի ասացեալ է գովասանօր ի սուրբ յԱստուածածինն. Յիսուս Որդոյն. ձայն – *Աստուածածին կոյս պատուական, / Հօր Աստուծոյ խորհրդական...: ՃԴ տուն է:*

բ. *322բ–3բ* Ի Մեղականին. ձայնն – *Աւրհնեալ ես սուրբ Աստուածածին, դուստր լուսոյ, / Որ ընդրեցար յազգէ մարդկան մայր Աստուծոյ...*

–323բ «Յարմարեցօ Գովեստս Աստուածածնին յԱռաքել *պիտակ վարդապետէ ի թվականիս Հայոց ՊՁ(1431)»:*

26. *323բ–4ա* [Մեղեդի սուրբ Աստուածածնին. ձեռ. 424, 201բ] – *Մեծացիր այսաւր, սուրբ Աստուածածնին, / Իչմամբ Միածնին առ քեզ հրեշտակօք...*

27. *324ա–6ա* Տաղ սուրբ Աստուածածնին ի Գրիգորիս կաթուղիկոսէ Ախթամարցոյ ասացեալ («Ա—Ք») – *Արքային փակեալ պարտէզ, / Մորենի վառեալ անկէզ...*

28. *326աբ* Գրիգորի կաթողիկոսի Աղթամարա սուրբ Աստուածածնին («Տեր Գրիգորիսէ») – *Տապանակ կազմեալ անփուտ, / Կըտակին փառաց անսուտ...*

29. *326բ–7բ* Տաղ Գրիգորի կաթուղիկոսի Աղթամար[ցւոյ] – *Արեգականափայլ գեղով, լի լուսին ի տանուտրընգէ, / Աչեր ծով ի ծով ունիս, սոսկալի վարսօր սրովբէ...*

30. *328աբ* [Ի Ներսէս Լամբրոնացւոյ. ձեռ. 2672, 24բ («Ա—Ք»)] – *Այսաւր երեւի անտեսն ի բարձանց, / Բանին բնութիւնք բոլոր եղական...(հմմտ. 1639, 188ա)*:

31. *328բ–30ա* [Տաղ աւետեաց Աստուածածնին ազնիւ(Ա—Ք). ձեռ. 1639, 183ա] – *Աւետիս քեզ, Մարիամ, զոր Գաբրիէլ սկզբնաւորեալ, / Աւետիս, աւետիս աւետիս քեզ Մարիամ Աստուածածնին, աւետիս...*

32. *330բ–1ա* Անեղ Որդին. ձայ[ն] է – *Իսկ դու ընդէ՞ր ես խըռովեալ, Երուսաղէմ, / Հակառակ քո փըրկութեանն՝ վարանիս...*

33. *331բ–2ա* Ի յելս արեւուն. ձայն է («Բան Ներսիսի ե») – *Բարբառ օետեաց ձայնիւ Գաբրիէլ գոչէր սրբոյհոյն, / [Ա]ո քեզ առաքիմ մաքուր պատրաստել տեղի տէրոյնոյն...*

34. *332աբ* Արեւագալին. գոյն է («Նրսեսի է այս բան») –*Նոյն ինքն անդրանիկն Հօր յառաջ քան զարեւ, եւ անդրանիկ...*

333ա–64բ տե՛ս Բ, § 20:

35. *364բ–71բ* Ներբողեանք կենսատու խաչին առ ի սուրբ հաւէն մեռմէ Դաւթի Անյաղթ փիլիսոփայի ասացեալ, զոր մեծ հանճայապետն Աստուծոյ եւ հովիւն հաջ տէր Ներսէս Տարսոնեան շարայարեալ ոտանաւոր չափով – *Բարձր արարէք ըզՏէր Աստուած մեր միայբան, / Մարգարէն յառաջ ձայնեալ տայ ձեզ հրաման... 371բ–80բ* [Նորին] – *Աւրհնեալ ես փայտ քրիստոսական, / Աստուածայգարդ սուրբըդ նըշան...*

417բ Յիշատակարան գրիս — *Փա՛ռք... Շնորհօք եւ ողորմութեամբ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի գրեալ եղեւ գիրքս, որ կոչի Պատմագիրք, ի Մեծ Թվականիս Հայոց ՌՃԺե (1666), ի մայրաքաղաքս* Երեւան, *ի դուռն սրբոյ եկեղեցոյս՝ որ անուանի* Կաթուղիկէ, *հոգաբարձութեամբ, ծախիւք եւ արդեամբք* Առաքել *վարդապետի, որ է նոյն ինքն այս Պատմագրքիս շինօղն եւ արարօղն՝* Թարվիզեցի Առաքել *վարդապետն, որ վասն զօրինակն բազ//(418ա)-մացուցանելոյ, եւ գրել զայս գիրքս, որ եւ այս հինգերորդ գիրք է, որ ինեան* Առաքել *վարդապետի ձեռացագիր օրինակէն գաղափարեցաւ: Որ յոլով ջանիւ եւ բազում հոգաբարձութեամբ ծախէ ինչս եւ ձեռամբ գրչաց գրել տայ, առաջին՝ վասն օրինակին բազմանալոյ, եւ երկրորդ՝ վասն առ Տէր յիշատակի: Արդ, որք հանդիպիք սմա կարդալով կամ օրինակելով, կամ զբօսնլով, սրտի մտօք յիշեցէք ի Քրիստոս զվերոյյիշեալ՝* զԱռաքել *վարդապետն, որ զանազան եւ պէս պէս կերպիւ բազում աշխատանս կրեաց վասն Պատմագիրքիս, եւ տակաւին եւս ի նոյն աշխատանս կայ: Վասն որոյ աղաչեմք յիշել ի Տէր զինքն իւրայօք, եւ զամենեսեան որք ունին աշխատանս ի սոյն գործառնութեանս: Ընդ սորցին, մաղթեմ յիշել ի Քրիստոս զիս՝ զփանաքի գրիչս* զԱւետիս *էրէցս, որ հարմանաւ* Առաքել *վարդապետին գրեցի զգիրքս վասն հասարակաց օգտի: Արդ, որք յիշէք զմեզ ի Քրիստոս եւ բաշխէք մեզ Աստուած ողորմի, եւ Քրիստոս Որդի, եւ Հայր մեր որ յերկինս, միոյն հազարապատիկ առնուցուք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ օրհնելոյն յաւիտեանս. ամէն: Հայր մեր...*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

1. 418բ Թվին ՌՃԺէ (1668), նոյեմբերի *մէկն,* Երեւան*: Ես՝* Արգուլեցի Քուրդումց *մղդսի* Աղամիրի *որդի* Զաքարիայ *այս Պատմագիրքս բերի* Ագուլիս *վասն օրինակելոյ: Աստուած ողորմէ աշխատաւորաց հոգոյն: Օրինակն գրել տվինք:*

2. 1ա Գիտեա, օվ հայր ցանկալի,
ազնուական եւ ամենեցուն սիրելի,
Արդ, առաքեցի զմխիթարական
Պատմագիրքս, զոր ի քէն խնդրեցի:
Բայց է սա ամենայն տեսողաց եւ լսողաց
յոյժ ըղձալի եւ փափագելի,
Զոր եւ հօլօվք տեսողաց ցանկացան
ընտանալ այսմ նորագոյն Պատմութեանցս գիր:
Երանի վայելչական եւ քեզ սիրելւոյդ
յոյժ պատշաճաւորի,
Որ սիրող լինիս յօժարութեամբ գեղեցիկ բանի
այսպիսի եւ մխիթարական մատենի:
Որ եւ նուաստս ի յանուն եւ հոգի, տեսանելօվ եւ ընթեռնլօվ սակաւ բանս ինչ որ բազում խնդութեամբ զուարճացա ի սիրտ եւ ըստ կարողութեան պատմուճանաւ զմխիթարիչ գիրքս այս խլաթեց: Նաեւ զմերում քաջ եւ արի մեծ վարդապետին եւս տեսանելով այսմ գիրք, յոյժ գոհութեամբ շնորհակալս եղեւ զծերունի հօր ընտիր վարդապետէն, որ զտկարութիւնն ի բաց ձգելօվ, յառաջ էա[ծ] այսքան պատշաճաւոր եւ պիտանի բան, զոր եւ մաղթանօք հայցեմք ի լեզւէ ամենեցունց մերում մարդասէր Տեառնէն, որ ընդ սրբոցն եւ ընդ երջանիկ վարդապետացն դասեսցէ զհոգիս նորա. ամէն, եղիցի, եղիցի: Զայս փոքր բանս գրեալ եղեւ յԱգուլիս եւ ի վանս Սուրբ Առաքելոյն Թումայի, *ի թվին ՌՃԺՀ(1720)—երորդումն եւ ի ԻԴ (24)—ն ապրիլ[ի]:*

3. 418բ (Շղագիր Համեմատութեամբ սորին տպեցաւ ի 1884 ամի, ըստ ձեռագիր օրինակի՝ Աթանաս *դպրի (1773), որ գտանի ի գրատան Ս. էջմիածնի: Սրբագրիչ՝* Սարգիս Գնունի Վանեցի*:*

ԿՆՔԱԴՐՈՇՄ 7ա, 213բ, 417բ Գիրքս Սուրբ էջմածնա *է:*

ԳՐՉԱՓՈՐՁ Չա[ւ]գնեա մեզ, Աստուած... Նախադրութիւն առաջիկայ գրոցս... ազգէն որք են: 419բ Այս եղեւ յերիցս...:


1773
ԱՌԱՔԵԼ ԴԱԻՐԻԺԵՑԻ
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Կարբի ՌՃԺԲ — 1663


ԳՐԻՉ՝ Աթանաս դպիր:

ԹԵՐԹ՝ 452 (3—441 թերթակալուած՝ Ա.—ՆԼԹ). չգրուած՝ 1բ—2բ, 6բ, 431ա—2բ, 436բ, 437բ—52բ: ՊՐԱԿ՝ Ա.—ԼԷx12 (ԼԷ 9)+1x11: ՆԻՒԹ՝ թուղթ, արեւելեան: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 20,2x15:


ԴՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն: ԳԻՐ՝ բոլորգիր, նօտրգիր (սրբագրող յաւելագրողի՝ 420ա—30բ): ՏՈՂ՝ 23: ԿԱՋՄ՝ դրոշմազարդ շագանակագոյն կաշի՝ դոնակով, միջուկը՝ տախտակ, աստառը՝ սեւ կտաւ:



Նմուշ՝ 121ա



Նմուշ՝ 420բ



Նմուշ՝ Աա

ՄԱՆՐԱՆԿԱՐԳՈՒԹԻՒՆ — Կ ի ս ա խ ո ր ա ն՝ 7ա: Ջ ա ր դ ա գ ի ր՝ թուղնագիր, հանգուցագիր, հանգուցագիր: Գ ոյ ն ե ր՝ կամիր:

ՊԱՏԱՒԻԿ—ՊԱՀՊԱՆԱԿ — Թէոդոռետոս Կիւրացի, Մեկնութիւն ԺԸ սաղմոսին (տուիմ 5—15): Ժ—ԺԱ դդ.: 1(Ա) + 2(Բ—Գ), ստացուած ընդլայնակի հատուած կէս (Ա) եւ ընդլայնակի երկտակուած 1 (Բ—Գ) թերթերի եզրահատումից: Մագաղաթ, երկսիւն, ուղղագիծ երկաթագիր: Կարդալ՝ Բբ, Գա, Բա, Գբ, Աա, Աբ «///[Ա՞]ռէնք Տեառն, ասէ. Ամ[բիծ են եւ դառնուցա]նեն զոգ[իս... Առդարութիւմ Տեառն] ուղիղ է, ուրախ առնէ զսիրտ... Աւէնք եւ վկայութիւմ///». տե՛ս REA, 1983, p. 242:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. լուսանցային մասերում զանազան բծեր, փոխրիկ պատռուածքներ: 450 չգրուած թերթի կէսը վերից վար մկրատուած: Կազմի կաշին՝ ճեղուած, եզերքը՝ մաշուած, դոնակը՝ վնասուած, կապիչներն՝ ընկած, դոնակի աստառը՝ խայխայուած:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Ա. *3ա–436ա* [Պատմութիւն ժամանակաց Առաքելի Դաւրիժեցւոյ]

— *3աբ* Նախադրութիւն առաջիկայ գրոցս Պատմութեան — *Պատմութիւն անցից հարուածոց...*

Խորագրից առաջ գրչից «Ւագնեա մեզ, Աստուած Փրկիչ մեր... ամէն»:

— *3բ–6ա* Աստուածով հանդերձ այս ինչ կայ կարգեալ ի Պատմութեան գիրս յայս — *Ա. Յաղագս տառապանաց՝ զոր ունէին կաթողիկոսքն... ԺԶ. Պատճառ առնելոյ զՊատմութեանց գիրս, յորում եւ յիշատակարան առնողին:*

–*7ա* Պատմութիւմ ժամանակաց, հաւաքեալ ումեմն Առաքեալ անուամբ վարդապետի, որում Տէր ողորմեսցի

ա. *7ա–8բ* [Ա. Յաղագս տառապանց, զոր ունէին կաթողիկոսք ի հարկապահանջութենէ բռնաւորաց. (ցանկից՝ 3բ)] — *Արդ, ի ժամանակս յետինս...*

բ. *8բ–12ա* Բ. Յաղագս գալստեան Սրապիոն վարդապետին ի Սուրբ Աթոռն Էջմիածին եւ լինելոյ կաթողիկոս — *Թէպէտ եղեն երկու կաթողիկոսք...*

գ. *12ա–26բ* Գ. Յաղագս գալստեան Շահ Աբասայ թագաւորին Պարսից յաշխարհս Հայոց եւ ունելոյ զամենայն, եւ վարդապետին Սրապիոնի դառնալոյ անդրէն ի տեղի իւր — *Իսկ կաթողիկոսքն երկոքին՝ Դաւիթ եւ Մելքիսէթ...*

դ. *26բ–39ա* Դ. Յաղագս առաջին գալոյ Ջղալօղլոյն, յորոյ պատճառէ ֆշեաց շահն բոլորովին բովանդակ զերկիրն Աւարատու, եւ զնորին մերձակայ սահմանակից երկիրսն ընդ նմին — *Եւ յետ կատարելոյ այս ամենայն գործոց...*

ե. *39ա–47բ* Ե. Յաղագս ֆշելոյ զամենափարթամ գիւղաքաղաքն Ջուղայոյ յերկիրն Պարսից — *Եւ արդ, յետ այսց ամենայնի, զոր պատմեցաք...*

զ. *47բ–52բ* Զ. Վասն երկրորդ անգամ գալոյն Ջղալօղլի սարդարին, եւ պարտեալ լինելոյն եւ դառնալոյն — *Եւ յորժամ եհաս Ջղալօղլի սարդարն ի Վան...*

է. *52բ–61բ* Է. Յաղագս յայտնելոյ Ջալալոցն եւ սաստիկ սովոյն եւ մարդակեր գայլոցն, եւ այլեւս աւարառութեանցն, որ ժամանեցին ի վերայ աշխարհի — *Եւ ի մէջ երկուց տիեզերակալացս...*

ը. *61բ–4ա* Ը. Յաղագս առման քաղաքացն Գանջայու եւ Շամախու — *Յետ երկրորդի գալստեան եւ դառնալոյ Ջղալօղլի սարդարին...*

թ. *64ա–6ա* Թ. թէ որպիսի պատճառանօք կոչեաց Շահ Աբաս զթագաւորսն Վրաց առ իմն, եւ հնարիւք դաւեաց զնոսա — *Ի ժամանակս թագաւորութեան Շահ Թահմազին...*

ժ. *66բ–8բ* Ժ. Միւս եւս պատմութիւն դաւաճանութեան Շահ Աբասին, զոր միւս անգամ արար ընդ թագաւորին Վրաց — *Վերոյասացեալ թագաւորն Կախէթու Աղէքսանդր...*

ժա. *68բ–92ա* ԺԱ. Պատմութիւն եւ պատճառ աւերման աշխարհին Վրաց, եւ մահուան Լաւասափ թագաւորին նոցա, որ եղեւ ձեռամբ Առաջին Շահ Աբասին — *Յորժամ դարձաւ Գորգի թագաւորն Վրաց...*

ժբ. *92ա–4բ* ԺԲ. Պատմութիւն նահատակութեան մօր Թամրազու թագաւորին Կախէթու ի նոյն Շահ Աբասէն — *Մինչ կայր Թամրազ թագաւորն յերկրի...*

ժգ. *94բ–104բ* ԺԳ. Պատմութիւն նեղութեանց՝ զոր կրեցին ազգն Հայոց յԱռաջին Շահ Աբաս թագաւորէն — *Ազգս Հայոց, որք մատամբն...*

ժդ. *104բ–10ա* ԺԴ. Միւս եւս պատմութիւն նեղութեանց, զոր կրեցին ազգն Հայոց յԱռաջին Շահ

Աբաս թագաւորէն — *եւ եղեւ յաւուրս ժամանակաց, յորում ամի էր…*

ժե. *110ա–4ա* ԺԵ. Վասն է՞ր ոչ գոյ ոչխարաց Քոդաւ յաշխարհին, որ Արաղըստան կոչի — *Արքայն* Շահ Աբաս Առաջինն…

ժզ. *114բ–27բ* ԺԶ. Պատմութիւն վասն ոչխարաց սրբոյն Կուսին Հոռիփսիմայ, թէ որպէս գտեալ եւ հանեալ եղեւ նա ի Ֆռանկաց, եւ թէ որպէս տարեալ եղեւ յԱսպահան քաղաք — *Ի ժամանակս առաջնորդութեան* Մելքիսէք *կաթողիկոսին*…

ժէ. *127բ–38բ* ԺԷ. Թէ որպէս կամ յինչ պատճառէ տարան յԱսպահան քաղաք զԱյծն սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին, եւ զքարինքն Սրբոյ Աթոռոյն էջմիածնայ — *Մեծ թագաւորն* Պարսից Առաջին Շահ Աբասն…

ժը. *138բ–48բ* ԺԸ. Յաղագս հարիւր թուման մուղադային, զոր շահն եդ ի վերայ Մելքիսէք կաթողիկոսին — *Արդ, որպէս կանխեաւ պատմեցաք…*

ժթ. *148բ–54ա* ԺԹ. Պատմութիւն կաթողիկոսութեան եւ փախստեան Սահակ կաթողիկոսին — *Որպէս կանխաւ պատմեցաք, թէ* Սահակն…

154ա Գրչի՛ց «Կերայ դառնիճ եւ արբի լեղի, ոչ էր դառն քան զաղքատութիւնն, բարձի զաղ եւ զարճիճն ի վերայ, ոչ էր ծանր քան զպարտս մարդոյն»։

ի. *154բ–61բ* Ի. Վասն հակառակութեան Սահակ կաթողիկոսին, զոր առաք ընդ Սուրբ էջմիածնայ եւ ընդ Մովսէս կաթողիկոսին — *Յետ փախստեան* Սահակ *կաթողիկոսին*…

իա. *161բ–9բ* ԻԱ. Պատմութիւն առաքինազործ արանցն Սարգիս եպիսկոպոսին եւ տէր Կիրակոսին, որք եղեն սկիզբն շինելոյ եւ հաստատելոյ անապատաց։ Որովք եւ պատճառք ամենայն բարեկարգութեան վանորէից եւ եկեղեցեաց, եւ նոցին բնակողաց — *Այս* Սարգիս *եպիսկոպոսս էր յաշխարհէն* Առարատեան…

իբ. *169բ–73ա* ԻԲ. Այլ եւս պատմութիւն վասն սոյն մեծ անապատիս — *Շարադրեսցուք վասն սոյն մեծ անապատիս…*

իգ. *173ա–84բ* ԻԳ. Պատմութիւն վարդապետութեան եւ վարուց սրբոյ վարդապետին Պօղոսի — *Սուրբ վարդապետն* Պօղոս *էր յերկրէն* Մոկաց…

իդ. *185ա–204բ* ԻԴ. Վասն վարդապետութեան եւ կաթողիկոսութեան տեառն Մովսէսի, ընդ որում եւ յաղագս նորոգութեան լուսակառոյց Սուրբ Աթոռոյն էջմիածնի — *Մեծահաւատ, սրբասնունդ…*

իե. *204բ–26ա* ԻԵ. Վասն վարդապետութեան եւ կաթողիկոսութեան տեառն Փիլիպոսի, յորում եւ վասն նորոգութեան եկեղեցեաց սրբուհի կուսանացն Գայիանայ եւ Հոռիփսիմայ, եւ յայտնելոյ նշխարաց նոցին — *Էէր* Փիլիպոս *կաթողիկոսն էր յերկրէն* Բարմայ…

իզ. *226բ–31բ* ԻԶ. Վասն նորոգութեան ամուանի վանորէից եւ շինութեան բազմածուխ եւ մեծավայելուչ եկեղեցեաց — *Որպէս ի գարնայնոյ ժամանակի…*

իէ. *231բ–7ա* ԻԷ. Վասն նահատակութեան տէր Անդրէաս Քահանային — *Եւ եղեւ զի Մեծ եւ* Առաջին Շահ Աբաս *թագաւորն*…

իը. *237ա–52ա* ԻԸ. Պատմութիւն նեղութեանց եւ վշտացն, զոր կրեցին հայ ազգաւ հրիստոնեայքն, որք բնակեալք են ի քաղաքն Իլով — *Ի վեր անդր ի կարգ պատմութեան…*

իթ. *252ա–67ա* ԻԹ. Թէ ո՞րք եւ որպէ՞ս եղեն վաճառք գտանելոյ զոճս եւ զգիտութիւնս արտաքին գրոց, եւ զարուեստս հերականութեան, եւ նորոգեալ սփոեցին ի վարդապետս Հայոց, որ բնաւին բարձեալ եւ անհետ էր լեալ — *Արդ, ի հին եւ ի վաղեմի ժամանակաց…*

լ. *267ա–78ա* Լ. Պատմութիւն վասն Սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչի Աջին — *Որպէս աւանդութեամբ կայ կարգ…*

լա. *278բ–84ա* ԼԱ. Շարադրութիւն կաթողիկոսացն մերոց առեալ եւ սկսեալ ի սրբոյն Ներսիսէ Կլայեցւոյ եւ կարգաւ ածեալ եւ հասուցեալ մինչեւ ցժամանակս մեր — *Ջկարգս կաթուղիկոսացս վասն այն…*

լբ. *284բ–5բ* ԼԲ. Կարգ վարդապետաց սկսեալ ի Գոշէ Մխիթարայ գաւազանաւն, որ իջանէ յէջմիածնայ դասատունն — *Նախ էառ Մեծ վարդապետն* Մխիթար…

լգ. *286ա–96բ* ԼԳ. Թէ վասն որոյ պատճառի զնայազուն հրիստոնեայսն հանին ի քաղաքամիջէն Հսպահանու եւ տարեալ յեզր քաղաքին յայնկոյս գետոյն բնակեցուցին — *Ի ժամանակս թագաւորութեան* Երկրորդ Շահ Աբասին…

լդ. *296բ–312ա* ԼԴ. Պատմութիւն վասն ազգին Եբրայեցւոց բնակելոցն յԱսպահան քաղաքի, եւ այլոց եւս Եբրայեցի ազգին, որ են բնակեալ ընդ իշխանութեամբ թագաւորութեանն Պարսից, թէ վասն որոյ պատճառի դարձուցին յիւրեանց օրինացն ի կրօնս Մահմետի — *Յետ հանելոյ ազգին Հայոց…*

լե. *312ա–5ա* ԼԵ. Վասն շարժման մեծ Քաղաքին Թաւվիզու — *Ի թվականութեան Հայոց ՌՂ (1641)…*

լզ. *315ա–6բ* ԼԶ. Պատմութիւն վասն գերեզմանին եւ ոսկերացն Վարդ Պատրկայ — *Որպէս գրեալ է ի պատմութիւնս* Վարդ Պատրկայ…

լէ. *317ա–20բ* ԼԷ. Յաղագս շարժին որ եղեւ ի Վան քաղաքին եւ իւրում շրջակայ երկրին — *Արդ, ի թվականութեանս Հայոց ՌՂԷ (1648)…*

լը. *320բ–7ա* ԼԸ. Պատմութիւն եւ պատճառ կողոպտելոյ զանուանի վանիցն Վարագ կոչեցեալ եւ տանելոյ տանելոյ զԱւաք Սուրբ Նշանն, ի բերդն Խօշաբայ և դարձուցանելոյ ի Վան քաղաք – *Տէրն Խօշաբայ բերդին…*

լթ. *327ա–8ա* ԼԹ. Վասն գնալոյ Հուսէյն աղային ի Ջուլամերկ – *Իսկ Հուսէյն աղէն եւ փաշէն…*

խ. *328ա–32ա* Խ. Պատմութիւն վասն սատակման պիղծ Ջօմարին — *Յորժամ* Սուլէյմանբէկն *եւ* Ջօմարն…

խա. *332ա–6բ* ԽԱ. Պատմութիւն վասն սատակման Սուլէյման բէկին – *Որպէս պատմեցաք յառաջդ…*

խբ. *336բ–8ա* ԽԲ. Պատմութիւն վասն պարոնութեան Իբրահիմ բէկին, եւ դարձի Սրբոյ Նշանին ի Վան քաղաք – *Արդ, ի զրաւ այսր ամենայնի…*

խգ. *338ա–40բ* ԽԳ. Պատմութիւն վասն նշխարաց սրբոյն Յովհաննու Կարապետին, որ յայտնեցաւ ի ժամանակս յետինս զոր ի Հին Ջուղայ պահեալ կայր ի վաղուց ժամանակաց – *Արդ, ի ժամանակին յորում թագաւորն* Պարսից Շահ Աբաս…

խդ. *340բ–4ա* ԽԴ. Պատմութիւն նահատակութեան անմեղ մանկանն Նիկողայոսին – *Այս երանելի նահատակ՝* Նիկողայոս…

խե. *344ա–51ա* ԽԵ. Պատմութիւն նահատակութեան խոստովանող վկային Քրիստոսի սրբոյն Խաչատուրին – *Այս երանելի նահատակ* Խաչատուր…

խզ. *351ա–3բ* ԽԶ. Պատմութիւն նահատակութեան Սիրուն անուամբ Քրիստոնէին – *Այր ոմն, որոյ անունն էր* Սիրուն…

խէ. *354ա–6բ* ԽԷ. Պատմութիւն նահատակութեան Մխիթար անուամբ Քրիստոնէին – *Այր ոմն* Մխիթար *անուամբ…*

խը. *357ա–9բ* ԽԸ. Պատմութիւն վասն նահատակութեան Աւետիս անուամբ Քրիստոնէին – *Այր ոմն ազգաւ հայ…*

խթ. *359բ–62բ* ԽԹ. Յաղագս սմանչելեացն Աստուածոյ, որ եղեւ ի վերայ առն ումեմն, որ ի ժամ մահուանն իւրոյ ուրացաւ – *Ի ժամանակս յետինս, յամս թագաւորութեանն…*

ծ. *362բ–5ա* Ծ. Յաղագս մասնական հրակիզութեան, որ եղև ի Կոստանդնուպոլիս Մեծ քաղաքին – *Այսմ հրակիզութեան…*

ծա. *365բ–76բ* ԾԱ. Պատմութիւն Օսմանցոց թագաւորաց: Օսման օղլու կարգն այս է, որ կոչի խոնդքար – Օսման *օղլու կարգն ու սկիզբն…*

368բ «Կարգ Օսմանցոց թագաւորացն» առանց խորագրի է, որուած պարոյրաձեւ բոլորակով: Տե՛ս տպ. 1896, էջ 570–571:

ծբ. *376բ–7ա* ԾԲ. Ազգաբանութիւն Պարսից թագաւորացն – *Սկիզբն* Շըխ Սաֆին *է…*

ծգ. 1. *379բ–84բ* ԾԳ. Վասն անուանց եւ որպիսութեանց պատուական ականց – *Կայծ, որ է եաղութին…*

Սկզբում 377բ–9ա Աղիւսակ անուանց ականց ի վեց լեզու:

2. *385ա–91ա* Այս է գիրք ջօհարեւորում, որ կան ի վերայ աշխարհի, թէ որ տեղեաց հասցլ կու լինի: Նախ եւ առաջին ալմաստն – *Ալմաստն ԺԲ ազգ է…*

ծդ. *391ա–400ա* ԾԴ. Պատմութիւն Աղուանից աշխարհին, արարեալ Ծարեցի Յոհաննէս վարդապետին – *Իսկ արդ, յետ երկոտասան ամի…*

ծե. *400ա–20բ* ԾԵ. Բանիւ համառօտ նշանակեալ թվականաւ յըսկզբ[ա]նէ մինչեւ ցմեր ժամանակս – *Թվականաւ նշանակեալ համառօտ բանիցս… Ի Հայոց թվականին Ժ կարգեցաւ հինգհարիւրակն… զանուն* Շահ Սուլէյման *ասեն եւ գրեն յամենայն տեղիս:*

420բ–30բ սրբագրողի յաւելագրութիւնն է. տե՛ս Բ:

ծզ. *433ա* ԾԶ. Պատճառ առնելոյ զՊատմութեանց գիրս, յորում եւ յիշատակարան առնողին – *Աւրհնութիւն, գոհութիւն, բարեբանութիւն Տեառն իմոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի, որ ետ կարողութիւն ինձ նուաստի եւ տկարի եւ չանարդի բանի սպասաւորի՝* Առաքել *կոչեցեալոյ, ի վերջին դարուս եւ յերեկոյացեալ ժամուս, ի բնէ նորոգ սկսանել յառնել եւ ի շարազուգել զնորոգ յառաջ ածեալ զգիրս զայս, որ կոչի Պատմագիրք, նաեւ հասանել յաւարտ սորին, որ կատարեցաւ…// (435բ)… Այլեւ յորժամ հրամայեաց ինձ* Փիլիպոս *կաթողիկոս առնել զայս գործ, եւ ես սկսայ առնել, էր թվականն մեր ՌՃ (1651), եւ յամս Դ աշխատեցայ եւ հաւաքեցի մասն ինչ պատմութիւն, իսկ զկնի վաղճանի* Փիլիպոս *կաթողիկոսին, լքեալ թողի եւ ի բաց կացի ի սմանէ՝ տեսանելով զյոքնակի վտանգն եւ զմտատանջ երկն աշխատանաց որ ի սմա, որ ի վեր քան զկարն իմ ծանր թուեցաւ իմում տկարութեանս, եւ մնաց խափանեալ այս գործ ցժամանել թուականին մեր յամն ՌՃԷ (1658), եւ այնուհետեւ հրամանաւ* Յակոբ *կաթողիկոսին կրկնակի մտօք յայս գործ եւ սկսաք առնել մինչեւ ցհասանել թվականին մերոյ ՌՃԺԲ (1662) ամն, եւ յայսմ վայրի եղեւ դադարիլ մեզ ի գործառնութենէս այսմիկ: Այլեւ թէպէտ ի շրջագայութիւնս աշխարհաց ի բազում տեղիս մասնաւորաբար եղեւ գրեալ ի սմանէ, սակայն սկիզբն սորին եղեւ ի բարձրագահ* Աթոռն *ի* Սուրբ Էջմիածին, *եւ կատարումն եւս ի նոյն տեղին…: Եւ ունի գիրքս այս Պատմութիւնս ամաց վաթանից, եւ այն եւս*

որ ինչ եղեւ գտեալ եւ ի սեղանաւորս ար// (436ա)կեալ՝ շնորհօքն Քրիստոսի, իսկ թերին եւ թիւրն եւ այլ սոյնպիսիքն յիմս տգիտութենէ եւ ի տկարութենէ, վասն որոյ աղաչանօք խնդրեմ ի ձէնջ ներումն: Այլեւ դիպեցաւ պատահիլ ինձ այս գործ ոչ ի ժամանակս առոյգ երիտասարդութեան, այլ յողորմելի ծերութեան վասն զի ծեր էի, նաեւ յոյժ ցաւագար մարմնով, եւ ի լուսոյ աչքս պակասեալ եւ ի պնտութենէ ձեռքս թուլացեալ դողայր, սոյնպէս եւ յայլ ամենայն կարողութեանց տկարացեալ եւ ամենեքեան հանդէպ աչացս եկեալ կացեալ, եւ սպառնալիք գեհենին եւս քան զեւս ի վերայ իմ յաճախեալ: Վասն որոյ զերեսս իմ առաթուր ձեր եդեալ... ժոեմ մեծաւ պաղատանօք, զի շնորհիցէք մեզ զԱստուած ողորմին... եւ զոր դուք մեզ ընձեռէք, եւ ձեզ լիցի մասն եւ բաժին յաւուրն ահեղին... ամէն:

Անանուն մէկի կողմից ամբողջ գործը սրբագրուած է, տեղ–տեղ լրացուած եւ յաւելագրուած: Տե՛ս ստորեւ Բ:

Բ. *420բ–30բ* Պատմութիւն անցից հրէից ազգին Սապէթայ անուն ջհտին, որ ասէր թէ. Ես եմ Քրիստոսն Փրկիչն հրէից ազգին. եւ արդ եկի եւ յայտնեցայ, զի փրկեցից զնոսա, եւ այլոց իրակութեանց, որ սոցունց հետեւեցան – *Ի թուին կենարարին մերոյ Քրիստոսի Աստուծոյ ՌՈԿԷ (1667) ամին... զորոց զթիւն Աստուած միայն գիտէ:*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

437ա Փա՛ռք... որ ետ կարողութիւն անարժան, մեղսամած եւ փծուն գրչի՝ Աթանաս *դպրի, աւարտել զգիրքս՝ ի յետին ժամանակս շարագրեալ զԱռաքեալ վարդապետէն, որ այժմ կոչեն* Առաքեալ *Պատմագիր, ի թվաբերութեանս մերում ՌՃ եւ ԺԲ (1663) թվին, ի հայրապետութեան Ընդհանուր ազգիս Հայոց տեառն* Յակոբի *սրբազան հայրապետի, ի թագաւորանիստ քաղաքէն* Շօղ *կոչեցեալ, որ այժմ* Ասպահան *ասաի, եւ էր ազգաւ* Ջուղայեցի, *ի թագաւորութեան* Պարսից *երկրորդ* Շահ Աբասին, *յիշխանութեան* Աւարադեան *երկրին՝* Ամիր Գունայ խանի *որդի* Աբասղուլի *խանին, որ յայսմ ամի զնաջափղուլի խանն ձգեցին եւ տուին զերեւան* Աբասղուլի *խանին: Արդ, գրեցաւ գիրքս ի յերկիրն* Աւարադեան, *ի գիւղաքաղաքն* Կարբի, *ընդ հովանեաւ* Գաբրիէլի *եւ* Միխայէլի *հրեշտակապետացն եւ ամենայն սրբոց, որք աստ հաւաքեալ կան. թեմ եւ վիճակ մեծափառ ուխտին* Յոհաննավանից Սուրբ Կարապետին, *սուրբ Ստեփանոսի աջին եւ սուրբ Աստուածածնի վարշամակին, ի յառաջնորդութեան սուրբ ուխտիս՝ հեզահոգի, խոհեմ, հնազանդ* Յոհաննէս *արհեպիսկոպոսի, բնիկ գիւղաքաղաքէն* Կարբու, *զոր Տէր Աստուած զուխտն իւր հաստատ եւ զինքն անփորձ պահեսցէ մինչեւ ի խորին ծերութիւնն. ամէն:*

Տպ. Երեւան, 1990, Գ:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

1. Պատառիկ պահպանակ Աա (Նօտրգիր) Թվին ՌՃԺՀ (1669) եւ՝ Ագուլեցի Քուրդունց *մղգսի* Աղամիրի *որդի* Ջաֆարիայ *այս Պատմութեան գիրքս տարայ* Ագուլիս *վասն օրինակի, գրել տվի: Աստուած ողորմի աշխատավորաց, եւ Քրիստոսի փառք:*

2. 437բ (Շղագիր) Ըստ այսմ բնագրի տպեցաւ ի 1884 ամի, ի տպարանի Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի, համեմատութեամբ ձեռագրի Աւետիք իրիցու (տե՛ս ձեռ. 1772), որ գտանի ի Մատենադարանի Մայր Աթոռոյս: Սրբագրիչ Ս[արգիս] Գնունի Վանեցի:

3. *(ԺԹ դ., շղագիր)* Գրիգոր Տէր–Մովսէսով:

ԿՆՔԱԴՐՈՇՄ 7ա, 204բ, 430բ Գիրքս Սուրբ Էջմիածնի *է:*

ԳՐՉԱՓՈՐՁ 1ա Պատարագ անուշահոտ մատուցին զքեզ... Ջգործս ձեռաց մերոց ուղիղ արա ի մեզ, Տէր...:

1774

Ժ Ո Ղ Ո Վ Ա Ծ Ո Յ

(Բաղկացած է 2 տարբեր ձեռագրերից)


ԹԵՐԹ՝ 246: ԿԱՋՄ՝ դրոշմազարդ բալագոյն կաշի՝ դռնակով, միջուկը՝ տախտակ, աստառը՝ ծաղկադրոշմ շերտաւոր կտաւ: ՊԱՀՊԱՆԱԿ՝ 2 (Ա—Բ) + 2 (Գ—Դ), մագաղաթ:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմի կաշին՝ թեթեւակի ճերմակած, եզրերը՝ մաշուած, դռնակի աստառը՝ ֆայֆայուած:


Ջ Ե Ռ Ա Գ Ի Ր Ա

ԺԷ — XVII


ԹԵՐԹ՝ 66 (1—66). չգրուած՝ 1աբ, 64բ—6բ: ՊԱՐԿ՝ Ա—Ջx12 (Ա 11, Ջ 9): ՆԻՒԹ՝ թուղթ, լուսագծերով եւ լուսադրոշմով: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 20,2x14,6: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն: ԳԻՐ՝ բոլորգիր (2ա—57բ), նօտրգիր (58ա—64ա): ՏՈՂ՝ 24—25:




Նմուշ՝ Աա



Նմուշ՝ 13ա



Նմուշ՝ 58ա



Նմուշ՝ 68ա

ՎԻՃԱԿ՝ բավարար. թանաքից գրադաշտը գունափոխուած: Բ ձեռագրին միացնելու ժամանակ Զ պրակից 3 չգրուած թերթեր կտրուած հանուած: ԺԹ դ. 65ա ազատ թերթի վրայ գրուած Բ ձեռագրի խորագիրը՝ «Պատմութիւն Ուխտանէս եպիսկոպոսի...»:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

–2ա–64ա Ն[որին Գրիգորի աշակերտի եռամեծի Յոհաննու Որոտնեցւոյ Համառօտ լուծմունք դժուարիմաց բանից ի Մեկնութիւն գրոցն Յորայ եւ ի բանս մեկնչաց]

Տե՛ս ձեռ. 1113, 3ա—105ա. *§ 1/2ա–7բ: 2.* ա/*7բ–14ա:* բ/*14ա–22բ: 3.* ա/*22բ–4բ:* բ/*24բ–5ա:* գ/*25ա–8բ:* դ/*28բ–31բ:* ե/*31բ–5ա:* զ/*35ա–7բ:* է/*37բ–40ա:* ը/*40բ–4ա:* թ/*44ա–5ա:* ժ/*45ա–9բ:* ժա/*49բ–54բ: 4.* ա/*54բ:* բ/*54բ–6ա:* գ/*56ա–7բ:* դ/*57բ–9ա:* ե/*59ա–61բ:* 5/*61բ–4ա (շար. թերի «Վասն խաւարի հարց... զոր ասեն վարդապետիք ժ կերպիւ///»): 6–7/չիք:*

Զ Ե Ռ Ա Գ Ի Ր Բ

ԺԶ — XVI

ԹԵՐԹ՝ 180 (67—246), չգրուած՝ 67աբ: ՊՐԱԿ՝ Ա—ԺԵx12: ՆԻՒԹ՝ թուղթ, լուսագծերով եւ ողկուզաձման լուսադրոշմով: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 20,2x14,6: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն: ԳԻՐ՝ բոլորգիր: ՏՈՂ՝ 28:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. վերջից պակասաւոր, խոնաւութիւնից տեղ—տեղ գրադաշտը գունափոխուած, կարմրագիր խորագրերից ոմանք եղծուած: ԺԹ դ. օգտագործողի ձեռով շղագրով գլխակարգուած, երբեմն փոփոխելով բնագրի գլխակարգութիւնը:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

–68ա–246ա Պատմութիւն յերիս հատուածս, զոր արարեալ է տեառն Ուխտանիսիսէ <ե> եպիսկոպոսի, ի խնդրոյ հաւրն Անանիայի Նարեկավանաց առաջնորդի եւ նախաշար վարդապետի. հատուածն առաջին. Յաղագս թագաւորաց եւ հայրապետաց մերոց, եւ երկրորդն. Վասն բաժանման Վրաց, եւ երոր[ր]դն. Յաղագս մկրտութեան ազգին այնմիկ Ծադն կոչեցեալ: Սկիզբն ասից

1. *68ա–148ա* [Հատուած առաջին. Յաղագս թագաւորաց եւ հայրապետաց մերոց]

ա. *68–78բ* Պատասխանի թղթոյն Անանիայի, եւ խոստումն կատարել զհայցուածս նորայ – *Զառ ի Հաւրէ լուսոյ շնորհաց...*

բ. *78բ–9բ* Յաղագս թագաւորաց: Սկիզբն յԱդամայ – *Աստանօր սկիզբն արասցուք պատմել...*

գ. *79բ–81ա* Յաղագս Նոյի – *Մարգարէանայ Ղամէք՝ հայր Նոյի...*

դ. *81աբ* Յաղագս Սեմա – *Սեմ՝ որդի հարիւրամէն[ի]...*

ե. *81բ–2ա* Դ. Յաղագս Աբրահամու – *Սա յԱդամայ քսաներորդ առաջներորդ...*

զ. *82աբ* Ե. Յաղագս Քամայ – *Քամ ծնանի զՔուշ...*

է. *82բ–3ա* Յաղագս Յաբեթի – *Յաբեթ ծնանի զԳոմեր...*

ը. *83ա* Յաղագս բաժանմա[ն]ց աշխարհաց երից որդոցն Նոյի – *Սահմանք Սեմայ ի Պարսից...*

թ. *83աբ* Եւ այլ սահմանք Քամայ – *Հոինիկոռուա մինչեւ զԳադիրոն, կողմն հարաւոյ...*

ժ. *83բ–4ա* Սահմանք Յար(=բ)եթի – *Ի Մարայ մինչեւ զԳադիրոն, ի կողմն հիւսիսոյ...*

ժա. *84ա* Յաղագս լերանց – *Եւ այս են անուանք երկոտասան լերանց...*

ժբ. *84ա* Յաղագս ծովու[ց] – *Ովկիանոս, որ կոչի համաշխարհական ծով...*

ժդ. *84ա–5ա* Եւ որ այլ ինչ զկնի բաժանման աշխարհաց – *Զհաւաստին ի սակաւուց որչափ կարացեալ ի...*

ժե. *85աբ* Յաղագս Հայկայ – Հայկս *այս գեղապատշաճեալ...*

ժզ. *85բ–6բ* Յաղագս ազգաց եւ ծննդոցն Հայկայ, եւ որ զինչ ի նոցանէ գործ – *Արդ, յա[յ]ժմ անցից ի թիւս մերոյ արանց...*

ժէ. *86բ–7ա* Յաղագս Արամայ պատերազմին սարտիւ նահատակութեան – *Սայ եղեալ այր պատերազմող...*

ժը. *87աբ* Յաղագս Արամա (=Արայի) – Արայն *այն գեղեցիկ՝ որդի* Արամայ...

ժթ. *87բ–8ա* ԺԹ. Յաղագս, որ ինչ զկնի մահուանն Արայի պատմին կար[գ]ի – *Ասացաք որ ինչ վասն ծննդոցն Հայկայ...*

ի. *88աբ* Ի. Յաղագս նահապետացն եւ դատաւորացն, որ կացին առաջնորդ եւ ժողովրդանն Իսրայէլի – *Աբրահամու իբրեւ եկն հաս...*

իա. *88բ–9բ* Յաղագս թագաւորաց Իսրայէլի – *Թագաւորեաց Սաուղ Իսրայէլի…*

իբ. *89բ–90բ* Թագաւորք Պարսից յազգէն Իսաճակայ – Կիւրոս *Թագաւորեաց ամս երեսուն…*

իգ. *90բ–1ա* Թագաւորք Հայոց ի Հայկազնեաց – *Թագաւորէ մեզ առաջին Թագաւոր՝* Պարոյր…

իդ. *91աբ* Յաղագս Հռաչեա թագաւորելոյն – Հռաչեա *Թագաւորեա[յ] Հայոց…*

իե. *91բ–2բ* Իե. Յաղագս Տիգրանայ — Տիգրան Առաջին *Թագաւորէ Հայոց…*

իզ. *92բ–3բ* Յաղագս թագաւորելոյն Արշակունեաց ի վերայ Պարսից եւ Հայոց – *Սկիզբն արասցուք քեզ պատմել զթագաւորութիւնն Պարսից եւ Հայոց…*

իէ. *93բ–5ա* Թագաւորք Հայոց՝ որ ի Պարթեւաց – *Առաջին Թագաւոր* Վաղարշակ…

իը. *95ա–6ա* ԻԸ. Սկիզբն թագաւորութեանն Յունաց – Յունաց *Թագաւորութիւնն յեսաւայ էր…*

իթ. *96ա–7ա* Յաղագս Արտաշիսի թագաւորին – *Թագաւորէ* Արտաշէս՝ *որդի* Արշակա…

լ. *97ա–8բ* Դ(=Լ) Վասն թագաւորելոյն Արտաւազդայ — Արտաւազդ՝ *որդի* Տիգրանայ…

լա. *98բ* Վասն թագաւորելոյ Աբգարու ի Հայք – *Թագաւորէ* Աբգար՝ *որդի* Արշամայ…

լբ. *98բ–9ա* Առաքումն իշխանացն Աբգարու առ Մառիննոս, յորում տեսին զՓրկիչն մեր, ուստի եղեւ սկիզբն հաւատոցն Աբգարու – *Ընդ այն ժամանակս եկաց ի գործ հազարապետութեան…*

լգ. *99աբ* Թուղթ Աբգարու առ Փրկիչն – Աբգար Լամացի՝ *իշխան աշխարհի…*

լդ. *99բ–100ա* ԼԴ. Պատասխանի թղթոյն Աբգարու, զոր գրեաց Թումաս առաքեալ հրամանաւ Փրկչին – *երանի իցէ, այնմ, որ հաւատայցէ յիս…*

լե. *100ա–1ա* Գնալն Թադէոսի առ Աբգար, եւ խաղոզել խաղաքին Ուռհայի – *Թովմաս առաքեալ մի յերկոտասանիցին…*

լզ. *101աբ* ԼԶ. Թուղթ Աբգարու առ Տիբեր կայսր Հռովմայեցւոց – Աբգար *արքա Հայոց՝ տեառն իմում* Տիբերիա…

լէ. *101բ–2ա* ԼԷ. Պատասխանի թղթոյն Աբգարու — Տիբեր *կայսր* Հռովմեացւոց՝ Աբգար *Թագաւորի Հայոց՝ խնդալ…*

լը. *102աբ* Թուղթ Աբգարու – *Դարձեալ առաքէ* Աբգար *առ* Տիբ(=բ)եր *ի ձեռն գրոյ…*

լթ. *102բ–3ա* Թուղթ Աբգարու – *Գրէ եւ առ* Արտաշես *արքայն* Պարսից… *103ա* Կայսերք – *Թագաւորէ* Գայիոս Երկրորդ… *103աբ* Կայսերք – Կղաւդէոս *Թագաւորէ…*

խ. *103բ–5ա* ԼՐ. Վասն թագաւորելոյն որդւոյն Աբգարու եւ Սանատրկոյ ի միում ժամանակի: Եւ յաղագս առաքելոյն մերոյ Թադեոսի եւ Բարղողիմէոսի – *Յետ մահուանն* Աբգարու *բաժանեցաւ Թագաւորութիւնն* Հայոց… *105ա* Կայսերք – Ներոն *Թագաւորէ… 105աբ* Կայսերք – *Թագաւորէ* Վեսպիանոս *ամս ժ…*

խա. *105բ–6ա* ԼԹ. Յաղագս Ա(=ե)րուանդայ – *Թագաւորէ* Երուանդ *զկնի մահուանն* Սանատրկոյ… *106աբ* Կայսերք – *Թագաւորէ* Տիտոս *ամս երկուս…*

խբ. *106բ–7բ* Վասն թագաւորելոյ Արտաշէս Հայոց – *Թագաւորէ* Արտաշէս՝ *որդի* Սանատրկոյ… *107բ–8ա* Կայսերք – *Թագաւորէ* Ներուաս *ամս…*

խգ. *108ա–9ա* Թագաւորելն Արտաւազդայ, եւ մեռանելն զարմանալի իմն մահուամբ – *Այլ թէպէտ եւ զկնի այսորիկ իմոյ բանիցս… 109աբ* Կայսերք – Մարկոս Անտոնիննոս… *109բ* Կայսերք – *Թագաւորէ* Կոմիդոս *ամս տասն…*

խդ. *109բ* Յաղագս Տիրանայ – *Թագաւորէ* Հայոց Տիրան՝ *որդի* Արտաշիսի… *109բ–10ա* Կայսերք – Սեւերիոս *ամբարիշտ… 110աբ* Կայսերք – *Թագաւորէ* Անտոնիննոս…

խե. *110բ* ԽԲ. Յաղագս Տիգրանայ – *Թագաւորէ Հայոց* Տիգրան *վերջին՝ եղբայր* Տիրանայ… *110բ–1ա* Կայսերք – *Թագաւորէ* Մակրինոս *ամս քսան…*

խզ. *111ա–2ա* Յաղագս թագաւորելոյն Վաղարշայ, եւ որ ինչ ի նմանէ գործ եւ պատերազմ ընդ խարզաց, եւ մահուան նորին – *Թագաւորէ Հայոց* Վաղարշ՝ *որդի* Տիգրանայ… *112աբ* Կայսերք – Մեխսիմիանոս *ամբարիշտ… 112բ–3ա* Կայսերք – *Թագաւորէ* Գորգիանոս… *113աբ Կայսերք* – *Թագաւորէ* Փիլիպպոս…

խէ. *113բ* ԽԶ. Յաղագս խոսրովու թագաւորելոյն – *Թագաւորէ Հայոց* Խոսրով Մեծ՝ *որդի* Վաղարշու…

խը. *113բ–4ա* Դարձեալ Վասն Խոսրովու — *Ի ժամանակս Թագաւորութեանն* Խոսրովու…

խթ. *114ա–5ա* Թիւ թագաւորացն Պարսից, որ Պարթեւաց մինչեւ ի վախճան – *Արդ, անցցուք ընդ թիւ Թագաւորացն* Պարսից…

ծ. *115աբ* ԽԹ. Արշաւանք Խոսրովու ի [վերայ] Պարսից, եւ հինայխնդիր լինել մահուանն Արտաւանա – *Իսկ ի գալ տարոյն՝ յետ սպանելոյն զ*Արտաւան… *115բ–6ա* Կայսերք – Դիկոս *չարաչար եւ անաւրէն… 116աբ* Կայսերք – Գաղոս *եւ* Վաղէնտիանոսի…

ծա. *116բ* Դարձեալ յարձակումն երկրորդ անգամ Խոսրովայ ի վերա Արտաշրի՝ առանց ուրուք աւգնականութեան – *Յետ մահուանն* Փիլիպպոս *կայսեր…*

ծբ. *116բ–7ա* Խաւսէ եւ խոստմունք Աւտաշրի Պարսից արքայի առ զաւս իւր – *Յետ այսքան աւերման…*

ծգ. *117աբ* ՇԲ. Գալն Անակայ առ Խոսրով յԱւտազ գաւառէ – *Իսկ ի գալն Անակայ առ Խոսրով…*

ծդ. *117բ–8ա* Կարգ թագաւորացն Հայոց եւ համար նոցին սկսեալ ի Վաղարշակայ մինչեւ ի Խոսրով, զոր սպան Անակ — Վաղարշակ *ամս ԻԲ (22)…*

ծե. *118աբ* ՇԴ. Յայտարարութիւնն որ ինչ զկնի մահուանն Խոսրովու – *Արդ, իբրեւ կատարեաց զկամս նենգութեանն… 118բ–9ա* Կայսերք – Վաղերիանոս և Գաղիոս… *Թագաւորէ* Կղաւդիոս *ամս մի…*

ծզ. *119բ–20բ* ՇԵ. Աւշաւունք Աւտաշրի ի Հայք զկնի մահուանն Խոսրովու – *Արդ, իբրեւ լուաւ* Աւտաշիր… *120բ* Կայսերք – *Թագաւորէ* Ուեղիանոս… *120բ–1ա* Կայսերք – [Պ]ոոբոս *թագաւորէ ամս վեց…*

ծէ. *121ա–2բ* ՇԶ. Յայտարարութիւն յաղագս սրբոյն Գրիգորի, թէ որպէս տարեալ լինէր յերկիրն Յունաց – *Արդ, ի գոռալն ընդ միմեանս… 122բ–3ա* Կայսերք – *Թագաւորէ* Կարոս… *123աբ* Կայսերք – Դիոկղէտիանոս *կռապաշտ…*

ծը. *123բ–5ա* Յաղագս նահատակութեան Տրդատայ նախան զթագաւորելն – *Արդ, իբր եհաս ժամանակ* Տրդատայ…

ծթ. *125աբ* ՇԸ. Յաղագս Կոստանդիանոսի Մեծի – *Թագաւորէ* Կոստանդիանոս *ամս երեսուն եւ չորս…*

կ. *125բ–7ա* Յաղագս սննդեան եւ ուսման եւ վարդապետութեան սրբոյն Գրիգորի յետ մահուանն Անակայ, եւ աղետին, որ եհաս ընտանեաց նորա եւ ազգականաց նորա ի զաւրացն Խոսրովու – *Յորժամ սատակեցին զնոսայ…*

կա. *127ա–9ա* Յաղագս խառասնից – *Մոռացումն եղեւ մեզ յիշատակել զնահատակութիւն…*

կբ. *129ա–31բ* Յաղագս չարչարանաց սրբոյն Գրիգորի – *Յառաջին ամին* Տրդատայ *[արքայ]ին Հայոց Մեծաց…*

կգ. *131բ–2ա* Յաղագս Տրդատա – *Թագաւորէ Հայոց* Տրդատ՝ *որդի* Խոսրովու…

կդ. *132ա–3բ* ԿԳ. Վասն սրբոց Հռիփսիմեանցն – *Յետ թագաւորելոյն* Դիոկղետիանոսի *կայսեր…*

կե. *133բ–4ա* Վասն հարուածոցն Տրդատայ, որ եհան(=ս) նմա ի Տեառնէ – *Արդ, իբրեւ էառ թագ քաջն* Տրդատն…

կզ. *134ա–5ա* Ելն ի Վիրապէն սրբոյն Գրիգորի – *Եւ առաքէն զնախարար ոմն* Աւտայ *անուն…*

կէ. *135աբ* Գալն Տրդատայ ի Հայք – *Իսկ ապա ի գալն* Տրդատայ *ի Հայք…*

կը. *135բ–7բ* ԿՁ. Յաղագս հաջութեանն Տրդատայ նախան զհաւատալն – *Իսկ թագաւորն* Տրդատ *զկնի ամենայն քաջութեան…*

կթ. *137բ–8բ* Դարձեալ ի նոյն խորհուրդ Յաղագս սրբոյն Գրիգորի երթալոյն ի ձեռնադրութիւն հայրապետութեանն – *Արդ, յորժամ եհաս հրաման ի Տեառնէ…*

ի. *138բ–9բ* Յաղագս եպիսկոպոսաց որք ընկալան աթոռ ի տեղիս—տեղիս ի սրբոյն Գրիգորէ յիւրաքանչիւր գաւս – *Արդ, յայսմ վայրի զաթոռակալս շարադրեցից…*

իա. *139բ–42բ* Յաղագս մկրտութեան Տրդատայ թագաւորին եւ իւայ[ն]իցն եւ ամենայն զաւրացն – *Արդ, իբրեւ եկն սուրբն* Գրիգոր…

իբ. *142բ–3ա* Գնալն երանելոյն Հեղինէի յերուսաղէմ ի խնդիր Սուրբ խաչին – *Յետ այսորիկ առաքէ սուրբն* Կոստանդիանոս *զմայր իւր…*

իգ. *143ա–4բ* Գ[ն]ալն Տրդատայ թագաւորին Հայոց ի Հռոմ առ Մեծն Կոստանդիանոս յաղագս միաբանութիւն հաւատոյ – *Ընդ ժամանակս ընդ այնոսիկ թագաւորեաց* Կոստանդիանոս…

իդ. *144բ–5բ* Դարձեալ ի նոյն խորհուրդ և յաղագս սրբոց առաքելոցն Պետրոսի և Պաւղոսի և Անդրէի նշխարհացն. յայլմէ Պատմութենէ – *Զայսու ժամանակաւ լուր եհաս…*

իե. *145բ–7ա* Յաղագս թագին երանելոյն Կոստանդինոսի, թէ ուստի՞ կամ որպէ՞ս յաջողեալ եղեւ ի նմայ ի Տեառնէ Շափոյ որիոյ (=Շապհոյ որդւոյ) Աշոտոյ ապահի պատրակի ասացեալ ի Պատմութեան իւրոյ – Կոստանդիանոս *թագաւորէ ամս երեսուն եւ երեք…*

իզ. *147ա–8ա* Ստուգաբանութիւն յաղագս Տրդատա թագաւորելոյն – *Գրեցաք ի մերում Պատմութեան…*

2. *148բ–246բ* Հատուած երկրորդ. [Վասն բաժանման Վրաց]

ա. *148բ–4բ* Վրաց պատճէն առաջին – *Ի ժամանակս թագաւորութեանն* Հռովմայեցւոց Մուրկայ…

բ. *151բ–5ա* Բ. Թուղթ տեառն Մովսիսի Հայոց կաթողիկոսի առ Կիւրտն Վրացա կաթողիկոս – Կիւրիոնի *Վրաց կաթողիկոսի…*

գ. *155ա–6ա* Գ. Պատասխանի թղթոյն տեառն Մովսիսի Հայոց կաթողիկոսի ի Կիւրիոնէ Վրաց կաթողիկոսէ – *Սրբասիրի եւ պատուականի տեառն իմոյ* Մովսէսի…

դ. *156ա–7ա* Դ. Պատճառ թղթոյն Հայոց կաթողիկոսի եւ պատասխանոյն Կիւրոնի, եթէ ո՞ր գտաւ եւ ո՞րպէս — *Արդ, զայսոսիկ թուղթս* Մովսէսի *Հայոց կաթողիկոսի…*

ե. *157ա–9բ* Ե. Յաղագս Կիւրոնի երկեղիւն եւ կասկածանաց — *Արդ, քանզի* Կիւրոնի *ոչ՛ իշխեցեալ…*

զ. *159բ–60ա* Թէ որպէս նենգութեամբ կոչեաց Կիւրոն զեպիսկոպոսն Յուտուայ Մովսէս առ իմն, եւ նա ոչ՛ գնաց յաղագս երկիւղի կասկածանաց. բայց ապա յետոյ գնաց յաղագս յանդիմանելոյ զնայ, թէպէտ եւ խափանումն առաւ ուխտին իւրոյ — *Իսկ իբրեւ մեռաւ* Մովսէս *կաթողիկոսն Հայոց…*

է. *160ա–1ա* Է. Գնալն Մովսէսի եպիսկոպոսի Յուտուայ առ Կիւրոն — *Բայց ապայ յետոյ գնացեալ…*

ը. *161բ–3բ* Ը. Որ ինչ զկնի այսօրիկ պատմի յաղագս Կիւրոնի — *Արդ, զայս նորա ասացեալ առ* Կիւրոն…

թ. *163բ–4ա* Թ. Պատճէն երկրորդ վասն բաժանման Վրաց զկնի մահուանն Մովսէսի — *Ի ժամանակն* Աբրահամու *Հայոց կաթողիկոսի…*

ժ. *164աբ* Ժ. Թէ զի՞նչ աւրինակաւ գրեաց Մովսէս եպիսկոպոսն Յուտուայ առ Վարթանէս Քերթողն գրել թուղթ առ վիճակեալս իւր եւ առ Կիւրոն եւ իշխանս աշխարհին — *Արդ, գրէ թուղթ եպիսկոպոսն* Մովսէս…

ժա. *164բ–5բ* Թուղթ առաջին Մովսէսի եպիսկոպոսի Յուտուայ առ Վրթանէս Քերթող մ(=տ)եղապահայ Աթոռոյ սրբոյն Գրիգորի — *Փափաքելի վիճակի քրիստոսեան…*

ժբ. *165բ–6ա* ԺԲ. Պատասխանի թղթոյն Մովսէսի եպիսկոպոսի ի Վրթանիսէ Քերթողէ — *Զգիր ողջոյնի սրբութեան քո ընկալայ…*

ժգ. *166աբ* Զկնի թղթոյն Մովսէսի եւ Վրթանէսի եւ ի սակ[աւ]ուց յայտարարութիւն — *Գրէ թուղթ շրջաբերական եպիսկոպոսն* Մովսէս…

ժդ. *166բ–8բ* Թուղթ շրջաբերական Մովսէս եպիսկոպոսի առ վիճակեալսն իւր — *Ի ժառանգութիւն երկնից վիճակեալք…*

ժե. *168բ–9բ* Պատասխանի թղթոյն Մովսէսի եպիսկոպոսին Յուտուա ի վիճակելոցն իւրոց — *Գիր ողջոյնի սրբութեան քո զխրատուիեան…*

ժզ. *169բ–70ա* ԺԶ. թուղթ շրջաբերական տեառն Վրթանիսի Քերթողի հայալեզու աշխարհն Յուտուա, ի խնդրոյ Մովսէսի եպիսկոպոսի առ ի հաստատել զնոսայ ի հաւատս — *Սրբասէր ուղղափառաց եւ ճշմարիտ ամենայն…*

ժէ. *170ա–1ա* ԺԷ. Պատասխանի թղթոյն Վրթանիսի հայալեզու աշխարհին Յուտուայ — *Տեսաք զթուղթ ուղղափառ հաւատոց ձերոց…*

ժը. *171ա–2բ* Յաղագս Յուտուայ, եւ որ ինչ վասն բղեշխին որ ի նմա լեալ, եւ վասն վրաց — *Ունիմ ի մտի եւ զայս եւս կարգեալ…*

ժթ. *172բ–6ա* Յաղագս Մովսէսի եպիսկոպոսին Յուտուա, թէ ուստի՞ կամ որպէս եկեալ ի պատիւ առաջնորդութեան, եւ գովութիւն նմայ, եւ կշտամբանք եւ ամբաստանութիւն Կիւրոնի եւ իշխանաց աշխարհին եւ այլոց — *Այլ յառաջ քան զձեռնարկելն մեր…*

ի. *176աբ* Թուղթ երկրորդ Մովսէսի եպիսկոպոսի առ(=ան) Վրթանէս վարդապետ Քերթողն — *Տեսի զգիր ողջոյնաբեր սրբութեան քո…*

իա. *176բ–7բ* Պատասխանի թղթոյն Մովսէսի եպիսկոպոսի ի Վրթանիսէ վարդապետէ — *Զգիր ողջոյնի սրբութեան քո…*

իբ. *177բ–9ա* Թուղթ Վրթանիսի Քերթողի առ Կիւրոն Վրաց կաթողիկոս եւ առ իշխանս աշխարհին, ի խնդրոյ Մովսէսի եպիսկոպոսէ պատճէնին — *Սրբասիրի տեառն* Կիւրոնի *Վրաց կաթողիկոսի…*

իգ. *179աբ* Թուղթ Վրթանիսի Քերթողի առ Պետրոս եպիսկոպոս ի խնդրոյ Մովսէսի եպիսկոպոսի — *Փառաւորելոյ տեառն* Պետրոսի…

իդ. *179բ–81բ* Թէ էՙր վասն ոչ գտաւ գրեալ ի Գիր Թղթոցն պատասխանի թղթոյն Վրթանիսի որ առ Կիւրոն եւ առ իշխանս աշխարհին եւ առ Պետրոս եպիսկոպոսն, զոր խնդրոյ եպսկոպոսին Մովսէսի գրեաց — *Թղթոյս այսոցիկ, որ գրեցաւ ի* Վրթանէսէ…

իե. *181բ–2ա* Թուղթ երրորդ Մովսէսի եպիսկոպոսի առ Վրթանէս Քերթողն — *Սրբասիրի տեառն* Վրթանիսի…

իզ. *182աբ* Պատասխանի երրորդ թղթոյն Մովսէսի եպիսկոպոսի ի Վրթանիսէ Քերթողէէ — *Ջողջոյն սրբութեան ձերոյ…*

իէ. *182բ–3ա* Որ ինչ զկնի երրորդ թղթին Մովսիսի, եւ վասն տեառն Աբրահամու, որ հանդերձեալ էր գալ յԱթոռ հայրապետութեան, եւ հայցումն Մովսիսէ ի Վրթանիսէ վերստին հաստատելոյ ի հաւատոյ եւ որ ինչ պատճառն էր — *Եւ զայս այսպէս կարգեալ կատարեցից…*

իը. *183ա–5ա* Թուղթ Վրթանիսի Քերթողի առ Մովսէս եպիսկոպոսն Յուտուայ որ է այժմ Գանձկէսի յաղագս հաւատոյ և վերստին հաստատելոյ — *Զգիր քո ընկալայ, Տէր իմ…*

իթ. *185աբ* Որ ինչ զկնի թղթոցն Վրթանիսի, զոր խնդրեաց Մովսէս ի խորհուրդ հաւատոց, եւ որ այլն եւս — *Արդ, զայսոսիկ պատմեալ նմա* Վրթանիսի…

լ. *185բ–7ա* Լ. Յաղագս Աբրահամու, որ հանդերձեալ էր գալ յաթոռ հայրապետութեան Հայոց հրամանաւ Սմբատայ Վրկան մարզպանի եւ այլոց նախարարացն Հայոց – *Սկիզբն արասցուք պատմել…*

լա. *187աբ* ԼԱ. Յաղագս Սմբատայ Վրկան մարզպանի, թէ յո՞րմէ յազգէ եւ յորո՞մ ժամանակս եղեւ մարզպան – *Գրեմ քեզ այժմ, որ յաղագս մերոյս* Սմբատայ…

լբ. *187բ–8բ* Ձեռնարկ, զոր խնդրեաց Սմբատ Վրկան մարզպան յայսմ եպիսկոպոսացն, որք դարձեալ էին, եւ նորին հրամանաւ ի Դվին կարգեալ կաթողիկոս Հայոց յետ մահուանն Մոսիսի, եւ զիւր ձեռնարկն ետ նոցա – *Ամենագովելոյ եւ փառաւորելոյ…*

լգ. *188բ–9ա* Ձեռնարկ Սմբատայ, զոր ետ եպիսկոպոսացն, զորոց անուանսն վերագոյն գրեցաք հանդերձ Վրթանիսիդ եւ այլովք միաբանելովք – *Ըստ բանիդ ձերում, նոյնպէս եւ ես՝* Սմբատ Վրկան…

լդ. *189ա–90ա* Յաղագս Վրթանիսի Քերթողի – Վրթանէս *այս վարդապետ եղեալ Հայոց…*

լե. *190ա–2ա* Յաղագս եպիսկոպոսացն այնոցիկ միւսանգամ ժողովելոյ ի ժամադրեալ տեղին հաստատեալ իւրեանց առաջնոյդ – *Յետ կարգելոյ կանոնսն…*

լզ. *192աբ* Որ ինչ զկնի ձեռնադրութեանն Աբրահամու խաւսք եւ խոստովանութիւնք ժողովոյն ձեռնարկ թղթովն, զոր ետուն Աբրահամու – *Թողլով զոչ կարեւորագոյնս…*

լէ. *192բ–3բ* Ձեռնարկ, զոր ետուն Աբրահամու Հայոց կաթողիկոսի միաբանութենէ աշխարհիս Հայոց, այնոքիկ ոյք էին ընդ իշխանութեամբ Հոռոմոց ի թագաւորութեանն Մուրկայ եւ յաշխարհակալութեանն Խոսրովու Պարսից արհայից արհայի – *Իմ* Աբրահամու *Հայոց կաթողիկոսի…*

լը. *193բ–5ա* Դարձեալ վասն Վրթանիսի վարդապետի – *Կամիմ դարձեալ երկրորդել…*

լթ. *195ա–6ա* Յաղագս աւրհնութեան Սուրբ իւղոյն, զոր աւրհնեաց Աբրահամ հայրապետն ի խնդրոյ եպիսկոպոսացն, որ ժողովեալ էին առ նա – *Իսկ ապայ զկնի կատարման իրացն…*

խ. *196աբ* Խ. Յաղագս որ ինչ զկնի այսորիկ պատմի – *Արդ, զայս այսպէս կարգեալ…*

խա. *196բ–7բ* ԽԱ. Թուղթ Մովսիսի եպիսկոպոսին Յարտաւայ առ Աբրահամ Հայոց կաթողիկոսն – *Սրբասիրի տեառն* Աբրահամու *Հայոց կաթողիկոսի…*

խբ. *197բ–8բ* Պատասխանի թղթոյն Մովսէսի եպիսկոպոսին Յուրտաւայ յԱբրահամէ Հայոց կաթողիկոսէ – *Սրբասիր[ի]ս տեառն* Մոսիսի *եպիսկոպոսի…*

խգ. *198բ–200ա* Թէ ընդէ՞ր եկն Մոսէս եպիսկոպոսն Յուրտաւայ անդ[ր] եպիսկոպոսացն, որ ի ձեռնադրութեան Աբրահամու – *Թուղթս այս առաջին, որ գրեցաւ ի* Մովսիսէ…

խդ. *200ա–1բ* Թուղթ առաջին Հայոց կաթողիկոսի առ Կիւրոն Վրաց կաթողիկոս ի ձեռն Պետրոսի եպիսկոպոսի եւ այլ ազատաց, ի խնդրոյ եպիսկոպոսի. Ա. – *Սրբասիրի տեառն* Կիւրոնի *Վրաց կաթողիկոսի…*

խե. *201բ–2բ* Պատասխանի առաջի թղթուն տեառն Աբրահամու Հայոց կաթողիկոսի, ի Կիւրոնէ Վրաց կաթողիկոս[է] – *Սրբասիրի տեառն իմոյ* Աբրահամու *Հայոց կաթողիկոսի…*

խզ. *202բ–4ա* Յաղագս որ ինչ զկնի թղթոյն Աբրահամու եւ Կիւրոնի – *Տեսեալ զպատասխանի թղթոյն տեառն* Աբրահամու…

խէ. *204ա–5ա* Թուղթ երկրորդ տեառն Աբրահամու Հայոց կաթողիկոսի առ Կիւրոն Վրաց կաթողիկոսի(=ն) – *Զգիր ողջոյնաբեր ձերոյ…*

խը. *205աբ* Պատասխանի երկրորդ թղթոյն տեառն Աբրահամու Հայոց կաթողիկոսի, ի Կիւրոնէ Վրաց կաթողիկոսէ – *Զինչ գրեալ էիք իմացայ…*

խթ. *205բ–7ա* Որ ինչ զկնի երկրորդ թղթին Աբրահամու եւ պատասխանոյն Կիւրոնի – *Իսկ արդ, յայսոսիկ թուղթս…*

ծ. *207ա–10ա* Թուղթ երրորդ տեառն Աբրահամու Հայոց կաթողիկոսի առ Կիւրոն Վրաց կաթողիկոսն – *Զի՞նչ առնեմք, ով պատուական եղբայր…*

ծա. *210աբ* Պատասխանի երրորդ թղթին տեառն Աբրահամու Հայոց կաթողիկոսի ի Կիւրոնէ – *Սրբասիրի եւ ճշմարտասիրի տեառն* Աբրահամու…

ծբ. *210բ–2բ* Որ ինչ զկնի երրորդ պատասխանոյն պատմի վասն Կիւրոնի – *Արդ, զայս այսպէս պատասխանի արարեալ…*

ծգ. *212բ–3ա* Յաղագս Պետրոսի եպիսկոպոսի – Պետրոս *այս եպիսկոպոս լեալ…*

ծդ. *213ա–4ա* Թէ ո՞րպէս պատմի վասն թղթոցն Սմբատայ Վրկան մարզպանի, դարձեալ ի նոյն խորհուրդ – *Այլ թուղթն* Սմբատա Վրկան *մարզպանի…*

ծե. *214ա–5ա* Թուղթ տեառն Սմբատայ Վրկան մարզպանի առ Կիւրոն Վրաց կաթողիկոս – *Սրբասիրի տեառն* Կիւրոնի *Վրաց…*

ծզ. *215ա–6ա* Պատասխանի թղթոյն տեառն Սմբատայ Վրկան մարզպանի, ի Կիւրոնէ Վրաց կաթողիկոսէ – *Փառաւորելոյ տեառն* Սմբատա Վրկան *մարզպանի…*

ծէ. *216ա–8ա* Թէ որպէ՞ս յերկուս կողմ[ա]ն բաժանեալ զկամս իւր Կիւրոն կեղծաւորութեամբ – *Ասել կա մեզ առաջի…*

ծը. *218ա–9բ* Թուղթ Մովսէսի եպիսկոպոսին Յուտաւայ առ տէր Սմբատ Վրկան մարզպան – *Աստուածաշնորհ պատուով պայծառացելոյ…*

ծթ. *219բ–20բ* Պատասխանի թղթոյն Մոսէսի եպիսկոպոսին Յուտաւայ, ի Սմբատայ Վրկան մարզպանէ – *Ջգիր ողջունի սրբութեան ձերոյ ընկալաք…*

կ. *220բ–1ա* Յաղագս երրորդ պատճենին, որ ինչ վասն բաժանմանն Վրաց գրեցան, եւ յայտարարութիւն ժամանակաց – *Ծրեցան եւ գլխաւորեցան թուղթքս…*

կա. *221ա–9բ* Յաղագս Կիւրոնի կշտամբութեան եւ որ ինչ ի նմանէ գիր եւ բան ընդդէմ Աբրահամու երրորդ թղթոյն, եւ որ այլ եւս ի բանից պատասխանի – *Ջհաւաստին որչափ կարացեալ ի բազմաց…*

կբ. *229բ–33բ* Յաղագս յայտարարութեան առաջին պատճառին, որ վասն բաժանման Վրաց ի Կիւրոնէ – *Գրեմ քեզ այժմ որ ինչ մերոցս ելեալ…*

կգ. *233բ–5ա* Յաղագս երկրորդ պատճառի բաժանմանն Վրաց, որ եղեւ ի հակառակութենէ Կիւրոնի – *Ջայս ասելով մեզ յայլոց պատմագրաց…*

կդ. *235ա–6բ* Դարձեալ ի նոյն խորհուրդ խնդրոյ յայլմէ Պատմութենէ – *Երկունք այսոքիկ են որք…*

կե. *236բ–7բ* Թէ յորո՞մ ժամանակի հաւատացին աղուանք յառաջ քան զհայ՞ ի Պատմութենէ իւրեանց – *Լսելով զայս մեզ պատմագրացն Աղուանից…*

կզ. *237բ–40ա* Դարձեալ ի նոյն խորհուրդ վասն Կիւրոնի, որ ինչ զկնի թղթոցն պատմի – *Ջամենայն յարմարեալ կարգեցից քեզ…*

կէ. *240ա–2ա* Յաղագս սրբոյն Շուշանա – *Արդ, այսուհետեւ ըղձալին քո…*

կը. *242ա–3ա* Առաջարկութիւն յաղագս շրջագայութեան թղթին տեառն Աբրահամու Հայոց կաթողիկոսի – *Արդ, որ վասն բաժանման Վրաց…*

կթ. *243աբ* Թէ յորո՞մ ժամանակի անիծաւ չար ժողովն Քաղկեդոնի, եւ մնալ Հայոց եւ Աղուանից միաբան, եւ Վրաց բաժանումն ի Հայոց, եւ զկին այնորիկ գիր շրջաբերական տեառն Աբրահամու Հայոց կաթողիկոսի – *Քառասներորդ երրորդ ամ էր թուականին Հոռոմոց…*

ի. *243բ–6բ* Թուղթ շրջաբերական տեառն Աբրահամու Հայոց կաթողիկոսի – *Նազելի եւ վեր քան զբան ի… բայց միայն գնել ինչ եւ կամ գնոյ/// (շար. թափուած):*

1871 թ. Վաղարշապատի հրատարակութիւնը կատարուած է այս ձեռագրից:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

Պահպանակ Դա Soann archiepi in massilie, 1847 ամի:

ԿՆՔԱԴՐՈՇՄ 2ա, 68ա, 246բ Գիրքս Սուրբ էջմիածնի *է:*

ԳՐՋԱՓՈՐՁ Պահպանակ Աա (ԺԹ դ. շղագիր) Շահատակութիւն: Պահպանակ Բա (նոյն ձեռք ռուսերէն 5 բառի բացատրութիւն) КЛОНИТЬ իջուցանել… Պահպանակ Դբ (նոյն ձեռք) Մասնակցութիւն:

1775
Ժ Ո Ղ Ո Վ Ա Ծ Ո Յ
(Բաղկացած 6 տարբեր ձեռագրերից)


ԹԵՐԹ՝ 211: ԿԱՋՄ՝ ճնշագծերով շագանակագոյն կաշի, միջուկը՝ տախտակ, աստառը՝ մասն Ա ձեռագիր (Ա), սպիտակ թուղթ (Բ):

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմի կաշին՝ ճեռնուած, եզրերը՝ մաշուած, թիկունքը՝ վնասուած, կապիչներն՝ ընկած:

Ձ Ե Ռ Ա Գ Ի Ր Ս

ԺԴ — XIV

ԹԵՐԹ՝ 8 (Ա + 1—7): ՊՐԱԿ՝ 1x8: ՆԻՒԹ՝ թուղթ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 21,2x15,5: ԳՐՈՒԹԻՒՆ: ԳԻՐ՝ նօտրգիր: ՏՈՂ՝ 35:



Նմուշ՝ 5ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. գրադաշտը խոնաւութիւնից գունափոխուած, առանձին տողեր ամբնթեռնլի, սկիզբից, միջից եւ վերջից պակասաւոր: Ա թերթը օգտագործուած որպէս կազմաստառ: Առկայ թերթերի ներթականութիւնը՝ խառը:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Ա. *1ա–7բ* [Քառոգգիրք]

ա. *Պահպանակ Աբ, 1ա–2բ ///(սկ. թափուած) բայ զի առ երրորդութիւնն բազում [հերձ]ուածք ընձիւղեալք լինէին… եւ զշաւիղս ձերոց խռովեցուցեն: Երկ[րորդ]///(շար. թափուած):*

բ. *5աբ* [ԿԲ…]—///*(սկ. թափուած) կին դաշտանի: Ոչ է զարմանք, թէ հոգի եղծանէ…*

գ. *5բ* ԿԳ. Յաղագս նորին. բան Գ: Բեր զմատուս fո եւ տես զձեռս իմ եւ այլն — *Ըստ երանելոյն Ագուստինոսի. Եռակի են կայան մարդոյ... զնոսա յետ յարութեանն /// (շար. թափուած):*

դ. *6ա—7բ* [ՁԲ]...—/// *(սկ. թափուած) [բա]ժանեաց, այլ ըստ իւրում առատաձիր բարութիւնն...*

ե. *7բ* ՁԳ. Յաղագս նորին. բան Բ: Ամէն ամէն ասեմ fեզ, եթէ ոչ nf ծնցի վերստին... — *Սուրբն Նիկոդէմոս կամեցեալ յաղագս փրկութեան... խրատիչս խորհրդականս գտեալ ի իմաս ///(շար. թափուած):*


զ. *3ա* [ՂԵ...]—/// *(սկ. թափուած) Գ Թագաւորութիւն Ի. Մի՛ պարծեսցի կորն...*

է. *3ա—4բ* ՂԶ. Յաղագս նորին. բան Գ: Միթէ կարիցէ կոյր կուրի առաջնորդել, ոչ ապաէն երկոքին ի խորախորատ անկանիցեն — *Յայսմ Աւետարանի խրատէ ծէրն... ընդդէմ անհրաւութեանց գործ/// (շար. թափուած):*


Ձ Ե Ռ Ա Գ Ի Ր Բ

ԺԷ — XVII


ԹԵՐԹ՝ 68(8—21, 58—103, 137—144). չգրուած՝ 8ա: ՊՐԱԿ՝ Ա—Ը x12 (Ը 8): ՆԻՒԹ՝ թուղթ, լուսագծերով: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 21,5x15,5: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն: ԳԻՐ՝ նօտրգիր: ՏՈՂ՝ 27:




Նմուշ՝ 9ա



Նմուշ՝ 24ա



Նմուշ՝ 56ա



Նմուշ՝ 58ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. վերջից պակասաւոր, թերթերը՝ խառնուած, ցեցակեր:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Ա. [Բանիւ զանազանիւ]

1. *8բ—16ա* Յոհաննու Տարօնացւոյ, ըստ արժանեաց կոչեցեալ վարդապետի աշակերտի երանելոյ վարդապետին [Անանիայի Ար]շարունեցւոյ, Շարադրութիւն պատմութեան Տանն Բագրատունեաց ի վերայ Հայաստանեաց, զոր արարի հրամանաւ տեառն Պետրոսի Հայոց կաթողիկոսի արժանաւոր աթոռակալի սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչի, իմաստուն եւ հանճարեղ գիտնաւորի գրոց սրբոց եւ ուղիղ դիտապետի եկեղեցւոյ Քրիստոսի Աստուծոյ մերոյ ի Տանս Թորգոմայ — *Ի սկսանել գշարադրութիւն Պատմութեան յաղագս Թագաւորութեան տոհմին* Բագրատունեաց...

2. *16ա—21բ, 58ա—64բ* Պատմութիւն յաղագս Սրբոյ խաչին, որ Հացունեաց կոչի, եւ թէ որպէս դարձաւ ի Պարսից աշխարհէն խաչն աստուածընկալ, եւ յայնժամ մասն ընկալեալ տիկնոջն Սիւնեաց — *Եւ եղեւ յետ Թագաւորելոյ* Մաւրկայ...

3. *64բ* [Սմանչելիք ի Տրապիզոն ի ձեռն Պետրոսի Գետադարձի] — *Եղեւ երբեմն ժամանակ, զի յաւուր Յայտնութեան Տեառն...*

4. *64բ—5ա* [Վասն Սրբոյ Երրորդութեանն] — *Աստ՝ Հայր, հաստատեաց՝ Որդին, սրբեաց՝ Հոգին Սուրբ...*

5. *65ա—6ա* [Վասն առոգանութեան] — *Առոգանութիւն՝ առերգութիւն կոչի...*

Բ. *66ա—103ա* [Պատճառք ճառից եւ տօնից]

1. *66ա—8բ* Պատճառ Քրիստոս ծնեալ ճառին [Գրիգորի Աստուածաբանի] — *Ի ժամանակս* Վաղէսի *եւ* Վաղէնտիանոսի...

2. *68բ—9բ* Պատճառ Ի պահու իմում կացից [ճառին Գրիգորի Աստուածաբանի] — *Ի ժամանակին իբրեւ կոչեցեալ եղեւ...*

3. *69բ—71ա* Պատճառ նաւակատեաց — *Հինգ տօն ի տարւոջն տօնէին եբրայեցիքն...*

4. *71ա—3բ* Աստուածածնի պատճառ — *Արարիչն արարածոց եւ ճարտարապետն բոլորից...*

5. *73բ—88ա* [Խորհուրդք ութօրէից] — *Աստուած յայտնութիւնն է աւր Ծնընդեան...*

6. *88ա—92ա* Յաղագս Գալստեան Սուրբ Հոգւոյն — *Հանեալ զաշակերտսն Տէր մեր Յիսուս Քրիստոս...*

7. *92ա—4ա* Պատճառք տօնի Դաւթի եւ Յակոբու — *Արդ, ինչ ամենայն տօնից հաւատացելոց...*

8. *94ա—6ա* Պատճառք տօնի սրբոյն Ստեփանոսի — *Նախասարկաւագ կոչեցաւ սուրբ Ստեփանոս...*

9. *96ա—7ա* Պատճառ տօնի Յակոբու եւ Յոհաննու՝ որդոցն Զեբեդեա — *Որդիք Որոտման անուանեցան Յակոբոս...*

10. *97բ* Պատճառ Ջատկի այս է – *Այսօր Տեառն մեր եւ Փրկիչն գայ յԵրուսաղէմ…*

11. *97բ–9բ* Յաղագս Համբարձման Տեառն յերկինս – *երիս քառասունս կատարեաց Քրիստոս…*

12. *100ա–3ա* [Պատճառ Թղթոցն առաքելոց] – *Յաղագս Թղթոց առաքելոց այսպէս իմանալի է…*

Գ. [Բանիւ զանազանիւ]

1. *103բ, 137ա* Կարգադրութիւն Աւետնութիւնաբեր ցուցակիդ, թէ յումմէ եղեւ սկիզբն աւանդութեան, զոր գրով եառուն մեզ անսղալ հիմն կարգի հրիստոնէութեանս – *Յետ հարիւր եւ երեսուն/// (բաց) թարգմանութիւն հայերէն լեզուի…*

2. *137ա–42ա* [Հարցմունիւ եւ պատասխանիւ զանազանիւ] – *Հարցումն. Զանազա՞ն են միմեանց… նախանձն եւ ոխն: Պատասխանի. Ըստ հասարակ տեսութեանն՝ ոչ զանազանին…*

3. *142ա–4բ* [Ի հասարակաց խրատուց Յովհաննու Երզնկացւոյ]: Կանոնիւ վասն եպիսկոպոսի եւ խրատ ամուսնացելոց – *Ջորրորդ. Գրեմք կանոն այնոցիկ, որք սրբութեամբ սնանին… եւ առողջանալի ցաւք յացնմանէ լինին /// (շար. թափուած):*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

8բ (տե՛ս Զ ձեռագրի վերջում):

Ձ Ե Ռ Ա Գ Ի Ր Գ

ԺԷ — XVII

ԹԵՐԹ՝ 36 (22—57): ՊՐԱԿ՝ Ա—Գx12: ՆԻՒԹ՝ թուղթ, լուսագծերով: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 21,2x15,5: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն: ԳԻՐ՝ նօտրգիր: ՏՈՂ՝ 24:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. լուսանցային մասերում տեղ—տեղ խոնաւութեան հետեւեր, փոորիկ պատռուածքներ, զանազան բծեր, ցեցակեր:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

–22ա–57բ [Ժամանակագրութիւն Մատթէոսի Ուռհայեցւոյ]

Տե՛ս նեւ. 1731, 77ա—273բ. *§ ա/46ա–57բ, 22ա–45բ (վրջ. «…յարիցեն եղբարք ի վերայ միմեանց սպանութեամբ եւ յարեան». տե՛ս տպ. 1898, էջ 1–72):* բ–դ/*չիք:*

Ձ Ե Ռ Ա Գ Ի Ր Դ

ԺԷ — XVII

ԹԵՐԹ՝ 33 (104—136): ՊՐԱԿ՝ 3 (է—Թ, այլ նեռ)x12 (Թ 9): ՆԻՒԹ՝ թուղթ, լուսագծերով: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 21,2x15,5: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն: ԳԻՐ՝ նօտրգիր: ՏՈՂ՝ 27:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. տեղ—տեղ զանազան բծեր, փոորիկ պատռուածքներ, վերջից պակասաւոր:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

1. *104ա–8բ* Համառօտ եւ պայծառ տեսութիւն եոամեծին Գրիգորի (Գրիգորի Տաթեւացւոյ Լուծմունք եւթաղեայ Յաոաջաբանին ի Թուղթս Պօղոսի) – *Ընդ ուսումնասէր եւ փոյթ: Լուծմունք.* Եւթաղ *գրէ առ ճգնաւոր ոմն* Աթանաս…

2. *108բ–12բ* Նորին Գրիգորի աշակերտի Յոհաննու Որոտնեցւոյ Լուծմունք համառօտ դժուարիմաց բանից ի Գիրս գրչութեան Արիստակիսէ Հռետորէ

Տե՛ս նեւ. 267, 444ա—55ա. *§ ա/108բ–9բ:* բ/*109բ–10ա:* գ/*110ա:* դ/*110աբ:* ե/*110բ:* զ/*110բ:* է/*110բ–1ա:* ը/*111ա:* թ/*111ա:* ժ/*111աբ:* ժա/*111բ–2բ:*

Տպ. երևան, 1962, էջ 321-40, F:

3. *112բ–8բ* Նորին Գրիգորի Լուծումն համառօտ ի խրատ գրչութեան Գէորգեա վարդապետի, զոր նա խնդրեալ էր Կոստանդեա գրչի եւ ապա Գոյներիցանց Ստեփանոսի

Տե՛ս նեւ. 267, 429ա—44ա. *§ ա/112բ–3ա:* բ/*113ա–6բ:* գ/*116բ–7բ:* դ/*117բ:* ե/*117բ–8ա:* զ/*118աբ:*

Տպ. երևան, 1962, էջ 341-58, F:

4. *118բ–23ա* Դաւթի Անյաղթ փիլիսոփայի Ներգինաց [Էականց գիրք] – *Ի քանի՞ս բաժանի էակն եւ յո՞րս: Երկակի…*

5. *123բ–9բ* Գիրք ի վերայ բնութեան հաւրական եւ մասնական, հահանայի ումեմն աշխատեալ Իշաւհան

Տե՛ս նեւ. 745, 153ա—70բ. *§ 1/ 123բ–9ա:* 2. *ա/129ա:* բ/*129ա:* գ/*129աբ:* դ–ե/*չիք:*

Ձի օգտագործուած քնն. բնագ., երևան, 1979:

6. *129բ–30ա* Նիւթ եւ նշան շարապի, որ օգտէ լերդի եւ ստամոհոց եւ գլխոյ – *Աո ծոր ժ դրամ…*

7. *130ա–5բ* Բուսայիդայ իմաստնոյ Քաղուածոյ Յաղագս կազմութեան մարդոյ

Տե՛ս նեւ. 1713, 390բ—4բ. *Նխ/130աբ: § ա/130բ–1ա:* բ/*131ա (խորագիր՝ «Վասն ականջից»):* գ/*131ա:* դ/*131աբ:* ե/*131բ:* զ/*131բ:* է/*131բ–2ա:* ը/*132ա:* թ/*132աբ:* ժ/*132բ:* ժա/*132բ:* ժբ/*132բ:* ժգ/*132բ:* ժդ/*132բ–3ա:* ժե/*133աբ:* ժզ/*133բ:*

Ձի օգտագործուած քնն. բնագ., երևան, 1974:

8. *134ա–6բ* [Գրիգորի Տաթեւացւոյ Լուծմունք Առաքինութեանցն Արիստոտէլի]

Տե՛ս նեւ. 58, 297ա—306ա. *Յանկ/134ա: Լուծմունք/134ա–6բ (վրջ. «…փափկութիւն ասի, իսկ այլ գգայու///». շար. թափուած):*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՁՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

123ա Ձգրիչն յիշեսջիք ի սուրբ եւ ի մաքրափայլ աղօթս ձեր, եւ զրաբունին իմ՝ զտէր Ղազարն, եւ քաջ երաժըշտականն Երզրնկացին։

Ձ Ե Ռ Ա Գ Ի Ր Ե

ԺԷ — XVII

Թերթ՝ 47(145—191)։ Պրակ՝ Ա—Դx12 (Ա 11)։ Նիւթ՝ թուղթ, լուսագծերով եւ եռամաիկ լուսադրոշմով։ Մեծութիւն՝ 21,2x15,5։ Գրութիւն՝ երկսիւն։ Գիր՝ նօտրգիր։ Տող՝ 31։

Վիճակ՝ բաւարար. խոնաւութիւնից գաղաշրջը տեղ—տեղ գունափոխուած, փոխրիկ պատռուածքներ, զանազան բծեր, ցեցակեր, վերջից պակասաւոր։

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն


–145ա–191բ [Համառօտ ժողովումն մեկնութեան սուրբ մարգէն եսայու ի լուսաւոր մեկնչացն՝ տեառն Եփրեմի Խորին Ասորւոյ, Յովհաննու Ոսկիբերանի, Կիւրղի Աղէքսանդրացւոյ, հրամանաւ տեառն Հայոց Հեթմոյ, արարեալ լուսաւոր վարդապետին Գէորգայ. ձեռ. 2281, 116ա] – *Ծածուկ միշտ եւ անյայտն բանք օրինաց... բնակեալն յերկին։ Եւ այս////(շար. թափուած)։*

Ձ Ե Ռ Ա Գ Ի Ր Զ

ԺԷ — XVII

Գրիչ՝ Յովանէս դպիր Ամասիացի։ Ստացող՝ Սահակ եպս.։

Թերթ՝ 20 (192—211)։ Պրակ՝ 2 (իթ, լԱ)x10։ Նիւթ՝ թուղթ, եռամաիկ լուսադրոշմով։ Մեծութիւն՝ 21,2x15,5։ Գրութիւն՝ միասիւն։ Գիր՝ նօտրգիր (տարբեր) (նմուշ՝ 192ա)։ Տող՝ 23—26։



Նմուշ՝ 192ա

Վիճակ՝ բաւարար. սկզբից եւ միջից պակասաւոր, լուսանցային մասերում խոնաւութեան հետեւ, փոխրիկ պատռուածքներ, զանազան բծեր։

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

1. *192ա–200բ* [Դաւթի փիլիսոփայի Ներբողեան ի Սուրբ Խաչն... — *Բարձրացուցէք ի զՏէր ամենայն տուած մեր..., ձեռ. 677, 240ա] ///Յանել կամ ի հուր այրելն եւեթ...*

2. *200բ–3բ* Յիշատակարանք, որ եղեն վասն Քրիստոսի առաջի Պոնտացո Պիղատոսի՝ իշխանին Հրէաստանի – *Յամս ութհուտասաներորդի իշխանութեանն կայսեր Թագաւորին յունաց...*

Միջից պակասում է մի ամբողջ պրակ։

3. *203բ–10բ* Երանելոյ եպիփանու եպիսկոպոսի ասացեալ Յաղագս Յարութեանն Քրիստոսի, ասացեալ ի Մաթէոս, Մարկոս եւ ի Ղուկասու Մեկնութենէ – *Ամենափրկագործ տնօրէնութեանն Քրիստոսի... մինչեւ մերձ ի մեռանել։*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

203բ Քրիստոս Աստուած... ողոմեա ստացողի սորա՝ տէր Սահակ եպիսկոպոսի եւ ծնողաց սորի[ն], եւ գծողի սուրբ ճառիս՝ Յովանէս դպիր Ամասեացոյ, եւ ծնողին իմոյ՝ մղսի Ալէքսանի, եւ մոր իմոյ՝ մղսի Մկլէիին, եւ թխթի կոկողիս՝ մղսի Պետրոսին, եւ ամենայն արեան մերձաւորաց, ընթերցողիս եւ լսաւղացդ առհասարակ ողորմեսցի. ամէն։

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

1. 8բ Իշատակ է Հարցմանցն կամ թէ կանոնքս ի դուռս Սուրբ Երորդութեան։ Ով չունի իշխանութիւն ծախելոյ կամ գրաւելոյ. ով որ ծախէ կամ գրաւէ, զմսան Ուդայի, պատիճն կայենի առցէ։ Թիվն ՌՃՒ (1671)։

2. 8բ (ԺԷ դ.) Իշատակ է Հարա[ն]ց Վարքս յի դուռն Սուրբ Երորդութիւնն։ Նայ իշխանութիւն չունի ծախէ կամ գնէ։

3. 8բ Յիշեցէք, ընթերցողք, զժողովողս ազգային հնութեանց՝ զմիաբան Սրբոյ էջմիածնի զՄեսրովբ եպիսկոպոս Սմբատեանց Նախիջեւանցի, ի 20 ապրիլի, 1886 ամի (վրան քիմիական մատիտով խազուած)։

ԿՆՔՎԱԴՐՈՇՄ 210բ Քրիստոսի ծառայ Խուակաս։ (1714)։

ԳՐՉԱՓՈՐՁ 211ա Գրչափորձ. տիրացու Ղազար։ 211բ Այսօր անճառ... Ողորմեայ ինձ Տէր...։

1776


ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՔԱՒԻՑ ԺՈՂՈՎՈՑՆ, ՈՐ Ի ՆԻԿԻԱՅ Ի ՍԱՐԴԻԿԻԱՅ Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ ԵՒ ՅԵՓԵՍՈՍ

Կոստանդնուպոլի՞ս ՌՄԹ — 1760

Գրիչ՝ Նիկողայոս դպիր։

Թերթ՝ 331—6 (տե՛ս Պահպանակ). չգրուած՝ 1ա—3բ, 28բ, 58բ, 327բ—31բ։ Պրակ՝ 28x12 (Բ 13, ե, Թ 10, ԻԸ 4)։ Նիւթ՝ թուղթ, լուսագծերով։ Մեծութիւն՝ 21,8x16,4։ Գրութիւն՝ երկսիւն։ Գիր՝ նօտրգիր։ Տող՝ 31։ Կազմ՝ ճնշագծերով շագանակագոյն կաշի, միջուկը՝ տախտակ, աստառը՝ մասն պահպա-

նակներէ: ՊԱՀՊԱՆԱԿ՝ 3 (1—3) + 3 (329—331), թուղթ լուսագծերով, մասն աստառի:



Նմուշ՝ 74ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. թանաքից գրադաշտը գունափոխուած: Կազմի կաշին՝ ցեցակեր, եզրերը՝ մաշուած:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Ա. *4ա—28ա* Համառօտ նախադրութիւն սուրբ ժողովոյն Նիկիայու, որ է առաջին տիեզերական ժողով — *Ի ներքոյ թագաւորութեան* Մեծի *օգոստոսի* Կոստանդիանոսին...

— *28ա* [Յիշատակարան թարգմանութեան]— *Թարգմանեցեալ ի նուաստ՝* Յակոբ *դպրէն, ի լեզուէն յունաց եւ լատինացւոց ի փառս Աստուծոյ եւ ի զուարճութիւն Հայկազունեաց:*

Բ. *29ա—44բ* Պատմութիւն սուրբ ժողովոյն Սարդիկայ, իբր մասն ինչ առակցական Նիկայու — *Իբրեւ հայ[ր]ն* Նիկիայու, *որոց ճշմարիտ...*

Գ. *45ա—58ա* Պատմութիւն Կոստանդնուպօլսոյ ժողովոյն, որ է երկրորդ ընդհանրական ժողով — *Յամի չորրորդի, յետ* Սաբտիկիոյ *ժողովոյն...*

Դ. *58ա—327ա* Պատմութիւն սուրբ ժողովոյն Եփեսոսի, որ է երրորդ տիեզերական ժողով

— *58ա—65ա* [Նախապատմութիւն սուրբ ժողովոյն Եփեսոսի, 65ա] — *Յետ* Նեբ[ա]արիոսի, *նսաւ յաթոռն...*

1. 65բ—108բ Սկսանի մասն առաջին: Ճառ Պռոկղոս վերատեսչին Կիզոյ, ասացեալ ի մէջ մեծի ժողովարանին Կոստանդնուպօլսոյ, առաջի Նեստորին, վասն մարդեղութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի — *Այսօր կուսական տօնախմբութիւնն զլեզու մեր...*

2. *109ա—226բ* Մասն երկրորդ, որով պարունակին գործ գործեալ ի մէջ ժողովոյն

ա. *109ա—63բ* Սկիզբն սուրբ ժողովոյն Եփեսոսի: Գործ առաջին — *Յետ բդեշխութեանն* Թէոդոսի *երեքտասան...*

բ. *163բ—6բ* Երկրորդ գործ սուրբ ժողովոյն Եփեսոսի — *Յետ բդեշխութեան տէրանց մերոց...*

գ. *167ա—8ա* Գործ երրորդ: Թուղթ պատմութեան սուրբ ժողովոյն, յուղակեալ առ յոյժ բարեպաշտ թագաւորս ձեռամբ եւտիխէս սպասաւորին, վասն ի Հռոմայու եկեալ եպիսկոպոսաց եւ նուիրակացն — *Գիր ի վերոյ բարեպաշտ եւ յոյժ աստուածասէր* Թէոդոսիդ...

դ. *168ա—72բ* Զորրորդ գործ սուրբ ժողովոյն Եփեսոսի. Գիրք մատուցեալք սուրբ ժողովոյն ի յամենասուրբ եպիսկոպոսաց Կիւրղէ Աղէքսանդրիայ եւ Մեմնոնէ Եփեսոսի, եւ այլ ամենասուրբ եպիսկոպոսաց, յորում զՅօհաննէս Անտիոքացին եւ զընկերս նոցին կոչեն ի ժողովն — *Յետ բդեշխութեան* Թէոդոսին *երեքտասան անգամ...*

ե. *172բ—82ա* Հինգերորդ գործ Եփեսոսի ժողովոյն — *Յետ բդեշխութեան* Թէոդոսին *երեքտասան...*

զ. *182ա—221բ* Վեցերորդ գործ սուրբ ժողովոյն Եփեսոսի — *Յետ բդեշխութեանն...*

է. *221բ—6բ* Եօթներորդ գործ սուրբ ժողովոյն Եփեսոսի. Գիրք մատուցեալ եպիսկոպոսացն Կիպրոսի առ սուրբ ժողովն — *Յետ բդեշխութեան* Թէոդոսին *երեքտասան...*

Յ. *226բ—327ա* Սկսանի մասն երրորդ, որով բովանդակին ոմանք որ առ սիւնիոդոս պատկանին եւ այլք ոմանք յետ ժողովոյն որք գործեացն: Մեկնութիւն երկոտասան գլխադրութեանցն, ասացեալ ի յեփեսոս ի Կիւրեղ դիտապետէն Աղէքսանդրիայու, երբ ժողովն խնդրեաց ի նմանէ... — *Ամենայն ինչ ուղիղ է իմաստնոց եւ յարմարեալ է այնոցիկ... յամի* Դիոկղետիանոսի *հարիւր վաթսուն եւ չորրորդին: Վերջ գործոցն առաջին ժողովոյն* եփեսոսի:

Ամբողջ գործը բովանդակում է ժողովներից առաջ, ընթացքում եւ յետոյ եղած գրագրութիւնները, արտասանուած ճառերը, ընդունուած որոշումներն ու կանոնները, թագաւորական հրովարտակները, եւլն, որոնց ընդհանուր քանակը հասնում է մի քանի հարիւրի:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

327ա Գրեցաւ ապիկար նօտար տիրացու՝ Նիկողայոս *եւեթ դպրէս, ի թուականութեան Հայոց ՌՄԹ (1760). հոկտեմբեր ամսոյ է (7)—ին եղեւ կատարումն:*


ԿՆՔԱԴՐՈՇՄ 4ա, 327բ Գիրքս Սուրբ էջմիածնի է:

1777
ԳՈՐԾՔ ՔԱՂԿԵԴՈՆԻ ԺՈՂՈՎՈՅՆ

Կոստանդնուպօլիս ՌՄԹ — 1760

ԳՐԻՉ՝ Նիկողայոս դպիր:

ԹԵՐԹ՝ 250—2 (տե՛ս Պահպանակ). չգրուած՝ 1աբ, 250աբ: ՊՐԱԿ՝ Ա—ԻԱ.x102 (Ի—ԻԱ. 10): ՆԻՒԹ՝ թուղթ, լուսագծերով եւ «CHARD» լուսադրոշմով: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 21,7x16,3: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն: ԳԻՐ՝ նօտրգիր: ՏՈՂ՝ 30: ԿԱՋՄ՝ ճնշագծերով շագանակագոյն կաշի, միջուկը՝ տախտակ, աստառը՝ ծաղկաթուղթ: ՊԱՀՊԱՆԱԿ՝ 1(1) + 1(250), թուղթ:



Նմուշ՝ 3ա

Վիճակ՝ բաւարար. թանաքից գրադաշտը գունափոխուած: Կազմի կաշին՝ ցեցակեր, եզրերը՝ մաշուած:

Ծնթ. ժամանակը եւ գրչի անունը՝ ըստ ձեռ. 1776—ի:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

–2ա–249բ Գործք Քաղկեդոնի ժողովոյն

ա. *2ա–111բ* Սկիզբն Քաղկեդոնի ժողովոյն – *Յամի Տեառն չորս հարիւր յիսուն եւ մէկ…*

բ. *111բ–45բ* Երկրաորդ գործ Քաղկեդոնի ժողովոյն – *Ի թուականին Քրիստոսի 451…*

գ. *146ա–56ա* Երրորդ գործ Քաղկեդոնի ժողովոյն – *Ի թուականին Քրիստոսի չորս հարիւր յիսուն եւ մէկին…*

դ. *156բ–7բ* Չորրորդ գործ Քաղկեդոն[ի] ժողովոյն – *Ի թուականին Քրիստոսի չորս հարիւր յիսուն եւ մէկին, եւ ի բդեշխութեան…*

ե. *157բ–76ա* Հինգերորդ գործ Քաղկեդոնի ժողովոյն – *Ի թուականին Քրիստոսի 451–ին, եւ ի բդեշխութեան տեառն մերոյ* Մարկիաննոսի…

զ. *176բ–80ա* Վեցերորդ գործ Քաղկեննդոնի ժողովոյն – *Ի թուականին Քրիստոսի Նէ եւ մէկին…*

է. *180ա–4ա* Եօթներորդ գործ Քաղկեդոնի ժողովոյն — *Ի թուականին Քրիստոսի Նէ եւ մէկին, եւ ի բդեշխութեան տեառն մերոյ* Մարկիաննոսի…

ը. *184բ–94բ* Ութերորդ գործ Քաղկեդոնի ժողովոյն – *Ի թուականին Քրիստոսի Նէ եւ մէկին, եւ ի բդեշխութեան…*

թ. *195ա–6բ* Իններորդ գործ Քաղկեդոնի ժողովոյն – *Ի թուականին Քրիստոսի Նէ…*

ժ. *197ա–8ա* Տասներորդ գործ Քաղկեդոնի ժողովոյն – *Ի թուականին Քրիստոսի Նէ եւ մէկին, եւ ի…*

ժա. *198ա–200ա* Մետասաներորդ գործ Քաղկեդոնի ժողովոյն – *Ի թուականին Քրիստոսի չորս հարիւր յիսուն եւ մէկին…*

ժբ. *200բ–14ա* Երկոտասաներորդ գործ Քաղկեդոնի ժողովոյն – *Նմանապէս եւ ի ԻՀ (28) հոկտեմբերի…*

ժգ. *214ա–9բ* Երեքտասաներորդ գործ Քաղկեդոնի ժողովոյն – *Ի թուականին Քրիստոսի Նէ եւ մէկին…*

ժդ. *219բ–21ա* Չորեքտասաներորդ գործ Քաղկեդոնի ժողովոյն — *Նոյնպէս եւ ի հոկտեմբերի Լ (30)–ին…*

ժե. *221ա–4ա* Հնգետասաներորդ գործ Քաղկեդոնի ժողովոյն – *Ի թուականին Քրիստոսի ՆԾԱ (451)…*

ժզ. *224ա–39ա* [Վ]եց եւ տասաներորդ գործ Քաղկեդոնի ժողովոյն – *Ի թուականին Քրիստոսի ՆԾԱ, եւ ի բդեշխութեան…*

ժէ. *239ա–49բ* Եօթն եւ տասաներորդ գործ Քաղկեդոնի ժողովոյն – *Ի թուականին Քրիստոսի ՆԾԱ (451), եւ ի բդեշխութեան տեառն մերոյ* Մարկիաննոսի… *Վերջ Գործոցն Քաղկեդոնի ժողովոյն:*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ


Տէ՛ս ձեռ. 1776, 327ա: (Գրուած է նոյն Նիկողայոս գրչի ձեռքով միեւնոյն գրատեսակով, նոյնորակ թղթի վրայ):

1778
Ժ Ո Ղ Ո Վ Ա Ծ Ո Յ

Կոստանդնուպոլիս ՌՄԺԷ — 1778

ԳՐԻՉ՝ Յակոբ վրդ. Սիմոնեան Կարնեցի:

ԹԵՐԹ՝ 142. չգրուած՝ 1ա—3բ, 7բ, 131բ—3բ, 140բ—2բ: ՊՐԱԿ՝ 1x3 + Ա—ԺԱx12 (ԺԱ. 10) + 1x9: ՆԻՒԹ՝ թուղթ, լուսագծերով, «BOURBONE» եւ այլ լուսադրոշմներով: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 21x15,5: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն: ԳԻՐ՝ նօտրգիր: ՏՈՂ՝ 24—37: ԿԱՋՄ՝ դռոշմազարդ շագանակագոյն կաշի, միջուկը՝ ստուարաթուղթ, աստառ՝ թուղթ, մասր պրակաց:



Նմուշ՝ 27ա

Վիճակ՝ բաւարար. խոնաւութիւնից վերին լուսանցային մասերը գունափոխուած, թանաքի ճապաղումներ, ցեցակեր: Կազմի կաշին՝ ճմրթուած:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Ա. *4ա* Օրէնք եւ սովորութիւմ եբրաեցւոց առեղծեալ ի Պօղոսէ վարդապետէ Մեղիկաց առաջնորդէ, ի բանից Աստուածաշունչ գրոց, յաւելմամբ թղթոյ միոյ առ համօրէն ազգն եբրաեցւոց: Համաոտելոյ խոհականութեամբ Նիկողայոսի Ստրատեանց, որ երբեմն ոաբբի եբրայեցի եւ յետոյ ուղղափառ հոովմէական դաւանութեամբ: Թարգմանեալ յիտալացւոց լեզուէ ի հայ բարբառ, աշխատութեամբ հօր Իգնատիոսի վարդապետի, աշակերտի տեառն Միխիթարայ վարդապետի՝ Աբբայհայր կոչեցելոյ: Յամի Տեառն 1760, իսկ եւ ի թուին Հայոց ՌՄԹ: Իսկ եւ արդ յօրինակեալ ի Յակոբայ վարդա-

պետէ Թէոդուպօլսեցւոյ Սիմօնեան, յամի Տեառն 1768 եւ ի թուին Հայոց ՌՄԺէ, ի Կոստանդնուպօլիս, յամսեանն յունիսի

—4բ—5ա Առ հրիստոնեայ վերծանօղ մատենիս *— Մեծ եւ գերազանց բարերարութիւնքն…*

— 5ա—6ա Առ եբրայեցի վերծանօղ գրոյս *— Յանկուիչն մեծի ըղձականութեան, զոր միշտ ունիմ…*

— 6բ—7ա Յանկ գլխոցն *— Ա. նախերգանք… ԼԲ. Կարծիք եբրայեցւոց վասն Մեսիային…*

1. *8ա—113ա* Որչիք եւ սովորութիւնք եբրայեցւոց

ա. *8աբ* Գլուխ Ա. Նախերգանք պիտանի առ իմացումն ամենայնի, որ բովանդակի ի գիրս յայս *— Որպէս զի դիւր լիցի հասու լինիլ…* բ. *8բ—9բ* Գլուխ Բ. Յաղագս ծննդեան եբրայեցւոց, գ. *9բ—13բ* Գլուխ Գ. Յաղագս թլփատութեանն եբրայեցւոց: դ. *14աբ* Գլուխ Դ. Յաղագս փրկանաց անդրանկաց: ե. *14բ—6ա* Գլուխ Ե. Յաղագս դաստիարակութեան եւ ուսման մանկանց եբրայեցւոց: զ. *16ա—9բ Գլուխ Զ.* Յաղագս Թալմդին եբրայեցւոց: է. *19բ—20բ* Գլուխ Է. Յաղագս կացուցման եւ իշխանութեան րաբունեաց: ը. *20բ—3ա* Գլուխ Ը. Յաղագս սինագովգային եւ առանձին աղօթատեղեաց եւ տանց եբրայեցւոց: թ. *23ա—4բ* Գլուխ Թ. Յաղագս հանանայից եւ ղեւտացւոց եբրայեցւոց: ժ. *24բ—9բ* Գլուխ Ժ. Յաղագս զգեստուց եբրայեցւոց, զոր զգենուն առնին ժողովրդանոցի: ժա. *29բ—32ա* Գլուխ ԺԱ. Յաղագս աղօթից եբրայեցւոց եւ վասն պատրաստութեան, զոր առնեն յառաջ քան սկսանիլ: ժբ. *32ա—5ա* Գլուխ ԺԲ. Յաղագս տուր եւ առից եւ վաճառաց եւ առուեստից եբրայեցւոց: ժգ. *35ա—43ա* Գլուխ ԺԳ. Յաղագս սեղանոյ եբրայեցւոց: ժդ. *43ա—5ա* Գլուխ ԺԴ. Յաղագս երազոց եւ իմիննական կրօնից, զոր առնեն ի նոսա: ժե. *45ա—6բ* Գլուխ ԺԵ. Յաղագս երդմանց եւ ուխտից եբրայեցւոց եւ արձակման նոցա: ժզ. *46բ—7բ* Գլուխ ԺԶ. Յաղագս խոստովանութեան եբրայեցւոց: ժէ. *47բ—9բ* Գլուխ ԺԷ. Յաղագս պահոց եւ ապաշխարութեանց եբրայեցւոց: ժը. *49բ—59բ* Գլուխ ԺԸ. Յաղագս տօնի Շաբաթուն: ժթ. *59բ—61ա* Գլուխ ԺԹ. Յաղագս տարոյ եւ ամսոց եբրայեցւոց եւ յաղագս տօնի Ամսամտին: ի. *61ա—5ա* Գլուխ Ի. Յաղագս տօնից եբրայեցւոց եւ յաղագս Զատկի Բաղարջակերաց: իա. *65ա—6ա* Գլուխ ԻԱ. Յաղագս տօնի Եօթներորդաց եւ Պենտեկոստէի եբրայեցւոց: իբ. *66ա—8ա* Գլուխ ԻԲ. Յաղագս տօնի Յոբելեան փողոց կամ Տարեգլխոյ եբրայեցւոց: իգ. *68ա—72ա* Գլուխ ԻԳ. Յաղագս պահոց եւ տօնի Քաւութեանց: իդ. *72բ—5ա* Գլուխ ԻԴ. Յաղագս տօնի Տաղաւարահաց կամ Տաղաւարաց եբրայեցւոց: իե. *75ա—6ա* Գլուխ ԻԵ. Յաղագս տօնի Նաւակատեաց, որ ասի Խանուկայ: իզ. *76ա—7բ* Գլուխ ԻԶ. Յաղագս տօնի Վիճակաց, որ ասացեալ է Փուրիմ, ըստ տաճկաց Թաթլը պայրամը: իէ. *77բ—80ա* Գլուխ ԻԷ. Յաղագս հարսանեաց եւ ամուսնութեան եւ դաշտանի եբրայեցւոց: իը. *80բ—1ա* Գլուխ ԻԸ. Յաղագս ապա[ճ]արգանի կամ թղթոյ արձակման եբրայեցւոց: իթ. *81ա—2բ* Գլուխ ԻԹ. Յաղագս բոկանալոյ եւ ազատելոյ ի կնոջէ եղբօր: լ. *82բ—91բ* Գլուխ Լ. Յաղագս հիւանդութեան, մահուան, թաղման եւ կոծոյ եբրայեցւոց: լա. *91բ—6բ* Գլուխ ԼԱ. Կարծիք եբրայեցւոց վասն դժոխոց եւ դիւաց եւ արհայութեան, եւ հրեշտակաց: լբ. *96բ—113ա* Գլուխ ԼԲ. Կարծիք եբրայեցւոց վասն Մեսիայի, եւ հաստատի թէ եկեալ է *— Թէպէտ եւ ի բազում իրս հրէական…*

2. *113ա—8բ* Թուղթ գրեալ առ եբրայեցիս Իտալիոյ, Պողոսի վարդապետի Մեդիկեանց հահանայի գիտնականի ատենական վարժապետի Փիովրէնտացիւոյ, յորում ընդ հաշուի համարոյ անուանի րաբունեաց տուեալ լիցի նոցա տեսանել յայտնապէս, թէ Մեսիայն եկեալ է *— Սիրելի եղբարք եբրանեցիք: Յանկուիչն այն… կաթոգին ձեր ծառայ եւ հշմարիտ բարեկամ՝* Պողոս Մետիկանց *քահանայ քրիստոնեայ: ի* Փիովրէնտիայ, *յամի Տեառն 1715, օգոստոս 7:*

3. *119ա—25բ* Յաղագս պատժոյ պատուհասին, զոր կրէ այժմիկ սինակօկայն, զի ոչ կամեցաւ ընդունիլ զՄեսիայն, եւ յաղագս խոստովանութեան կուրութեան եւ ատելութեան նորա, զոր ունի ընդդէմ հրիստոնէի[ց], եւս առաւել ընդդէմ նորահաւատի: Գլուխ ԼԳ *— Ձէ ինչ անսովոր, զի ժողովուրդն եբրայական…*

Բ. 1. *125բ—9բ* Թուղթ առ համօրէն ազգն հրէից: Շարադրեալ խոհականութեամբ Նիկողայոսի Ստրատեանց, որ երբեմն ռաբբի եբրայեցի եւ յետոյ ուղղափառ հոօմէական, յորում վկայութեամբք վարդապետացն հաւատարմաց ի մէջ հրէից ցուցանի գալուստ Մեսիայի Յիսուսի Քրիստոսի… *— Ոչ գոյ հաստատուն ինչ իմն…*

2. *130ա—1ա* Սուտ Մեսիայք, զոր ընկալան եւ հաւատացին եբրայեցիք (1—15) *— 1. Յամի 230 փրկութեան մերոյ եկն եբրայեցի ոմն* Բարկոխաբ *անուն… 15 Յամին 1682 ի* Գերմանիայ *եբրայեցի ոմն կոչեցեալ* Մարդոխալի…

Գ. *134ա—40ա* Յաղագս ծիծաղական պատմութեանց, թարգմանեցեալ յիտալական լեզուէ ի հայ բարբառ ի Պետրոս վարդապետէ Կոստանդնուպոլսեցւոյ *— 1. Յաւուր միում շիլ աչքաւոր ոք սապատղի… 2. Այր ոմն արբեցօղ… 3. Յաւուր միում այր ոմն գիւղական… 4. Գիւղական ոմն ացանէր իշով… 5. Այր ոմն հեծեալ ի վերայ անշահ ձիոյ… // (134բ)* 6. *Այր ոմն գանեաց զկին իւր… 7. Գիւղականի ումեք կինն մեռեալ… 8. Յաւուր միմում առաւօտու իշխան ոմն…* 9.

Եպիսկոպոս ոմն անցանելով ի գեղջէ... // (135ա) 10. *Ազնուական ոմն գնալով երբեմն ի տուն...* 11. *Դերձակ ոմն այնքան վարժեցեալ էր գողութեամբ...* 12. *Հարցումն ումեմն փիլիսոփայի...* 13. *Այր ոմն մեծատուն եւ ժլատ...* 14. *Աւազակ ոմն մինչ վճռեցեալ...* 15. *Քահանայ ոմն գէր եւ մեծափոր... // (135բ)* 16. *Այր ոմն մեծատուն...* 17. *Հարցումն եղեւ ումեք...* 18. Մեծն Աղէքսանդր *անցանելով ընդ* Ասիա... 19. Լուտովիկոս Մետասաներորդն *կամեցաւ...* 20. *Աւազակ ոմն տարեալ եղեւ ի կախարանն...* 21. *Արք ոմանք աւազակք... // (136ա)* 22. *Յաւուր միում զօրական ոմն...* 23. *Յաւուր մերում մին* Գալուխնեան... 24. *Հարցին ումեմն, թէ. Ընդէ՞ր ամուսնացեալ...* 25. *Յաւուր միում լուաւ* Օգոստոս *կայսրն...* 26. Հէնրիկոս Զորրորդն *գոլով մորուսաւոր...* 27. *Յաւուր միում ասացին* Փոռուն Թէոդոսի *կայսեր...* 28. *Յաւուր միում Բ (2) արք ընկերակցեալ... // (136բ)* 29. *Աղքատ ոմն վասն առատ ստանալոյ...* 30. *Այր ի* Նաբօլիթանցի... 31. *Այր ոմն բեռնաւորեալ...* 32. *Չորս գերմանացիք տուտէշք...* 33. *Ազնուական ոմն հոծմայեցի...* [34]. Պատմութիւն յաղագս Սիստոսի պապին եւ Օգոստինոսեա ումեմն կրօնաւորի — *Այս երանելիս երջանիկ գործով... // (138ա)...* 35. *Մուրացիկ ոմն չարաբարոյ եւ խաբեբայ...* 36. *Յաւուր միում այր ոմն որմնաշէն...* 37. *Յաւուր միում գիւղական ոմն... // (138բ)* 38. *Այր ոմն բարեգործ...* 39. *Ոմն չինկէնուհի ի մահուան առն իւրոյ...* 40. *Գուսանն* Հէնիխոս *ասաց աղախնոյ իւրում... // (139ա)...* 41. *Երբեմն զօրական ոմն գտանելով...* 42. *Յաւուր միում տիկին մի ազնուական... // (139բ)* [43]. *Յաւուր միում եաես գայլն զգառն մի...* [44]. *Յաւուր միում էշ մի արածելով...* [45]. *Պսակն սահմանեալ եղեւ ի յերկրաւոր դրախտին... // (140ա)* [46]. *Յաւուր միում Բ (2) արք ընկերակցեալ, մինչ երթային...* [47]. *Յաւուր միում լու մի մինչ... լինի յաղթեցեալ ի փոքունց:*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

4ա տե՛ս խորագիրը:

130բ Օրհնեալ է Աստուած... Գրեցաւ գԲօսնարան գիրքս կրօնիցն հրէից ի ՌՄԺԷ (1768), յամսեանն յուլիսի, ի Կոստանդնուպօլիս *քաղաքի, ձեռամբ նուաստի ուրումն՝* Յակոբայ *իբրու վարդապետի* Սիմոնեան Կարնեցւոյ:

ԿՆՔԱԴՐՈՇՄ 1ա (ԺՀ դ.) Սարգիս *վարդապետ:*

1779
Ժ Ո Ղ Ո Վ Ա Ծ Ո Յ
(Բաղկացած է 4 տարբեր ձեռագրերից)

ԹԵՐԹ՝ 278—4 (տես Պահպանակ): ԿԱՋՄ՝ ճնշագծերով շագնակագոյն կաշի, միջուկը՝ չիխ, աստառը՝ կարմիր կաշի, պատրաստուած ոսպէս գրապան: ՊԱՀՊԱՆԱԿ՝ 2 (1—2) + 2 (277—278), թուղթ, լուսագծերով եւ «I. VILLEDAR» լուսադրոշմով:


ՎԻՃԱԿ՝ բաւարար. պահպանակները ցեցակեր, կազմի կաշին՝ թեթեւակի ճեղծուած, եզերը՝ մաշուած:

ԾՆԹ. Զորս մասերը միացուած են 1731 թ.—ին Նոր Ջուղայում Յակոբ արեղայ Շամախեցու ձեռով:


Զ Ե Ռ Ա Գ Ի Ր Ս

ԺԶ — XVI


ԹԵՐԹ՝ 12 (3—14). չգրուած՝ 3աբ, 12ա—4բ: ՊՐԱԿ՝ 1x12: ՆԻՒԹ՝ թուղթ, լուսագծերով եւ ադիւծանշան լուսադրոշմով: ՄԵՑՈՒԹԻՒՆ՝ 18,4x14,3: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն: ԳԻՐ՝ նօտրգիր (1731 թ. նորոգող Յակոբ Շամախեցւոյ՝ 10բ—1բ): ՏՈՂ՝ 22:




Նմուշ՝ 4ա



Նմուշ՝ 22ա



Նմուշ՝ 107ա



Նմուշ՝ 218բ

ՎԻՃԱԿ՝ բաւարար. թանաքից գրադաշտը գունափոխուած:

ԾՆԹ. 10բ—1բ նախապէս ազատ թերթերի վրայ 1731 թ.—ին նորոգող Յակոբ Շամախեցին գրել է յաջորդ Բ—Դ ձեռագրերի նիւթերի ցանկը:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

*—4ա—*10ա [Գրառաջք]

ա. *4աբ* Կաթողիկոսի — *Տէր եւ իշխան յայսմ գաւառի, / եւ զարդարեալ փառօք ի լի...*

բ. *4բ—5ա* [Ե]պիսկոպոսի — *Բանալի արքայութեան երկնից, հովուապետ եւ առաջնորդ...*

գ. *5ա* Կաթողիկոսի — *Ի գերապետական գլխոյն գերապատուեալ, / Ի գերագոյն գոյէն գեր երեւեալ...*

դ. *5աբ* Կաթողիկոսի — *Ընտրեալ յորովայնէ եւ կոչեցեալ ի Հոգոյն Սրբոյ…*

ե. *5բ* Իշխանաց — *Քրիստոսապսակ եւ մեծաշուք, բարեպաշտ…*

զ. *5բ* Տանուտեառանց — *Քրիստոսասիրի եւ բարեպաշտի եւ…*

է. *5բ–6ա* Ժողովրդեան — *Աստուածային աջով տնկեալ, / Աւրհնութեամբ արմատացեալ…*

ը. *6աբ* Պ[արոնի] — *Ամենակարող զօրութեամբն Աստուածոյ պահպանեալ, / եւ աւրհնութեամբ նորին զօրացեալ…*

թ. *6բ* [Իշ]խանի — *Ով եղբայր իմ սիրական, / Տեսլեամբ պայծառ եւ գովական…*

ժ. *6բ–7ա* [Պա]ր[ոն]ի՛ — *Պարոն խօճա այս անուն, / Քաջ իմաստուն եւ ճարտար…*

ժա. *7աբ* ե///մե — *Առաքինի բոլորհաւատ գործօղ բարի, / Մեծահամբաւ ի յաշխարհի*

ժբ. *7բ–8ա* [Քա]հանայի — *Երկնաթռիչ եւ բարձրագնաց…*

ժգ. *8ա* Քահան[այի] — *Տիպ տիրական, / Տեսակ քո արքայական…*

ժդ. *8ա* Սարկաւագի — *Ի մանկութեան կրթեալ զլուծ, /Խոնարհութեան արբանունդ…*

ժե. *8աբ* Գրագրի գովասանք… — *Ի աստուածպետականէն, / Ի Հայրական յէութենէն… 8բ–9բ Սողոմոն մայրն իմաստութեան / Առ մեզ խօսի բան խրատական… 9բ–10ա Ագահն չէ աստուածապաշտ / Ըստ Պօղոսի վկայութեան…… Երիցանին զիրար կռվան,*

Բիր վերուցին եւ գաւազան,
Փետին մուրուքն երկայն–երկայն,
Կոտրեն բերան, թափեն զակռայն:
Վարդապետք, որ նոր եղան,
Բանին եղան վաճառական,
Քարոզին զհաճոյս մարդկան՝
Վասն արծաթոյ կորըստական:
Եպիսկոպոսք կանոնն անցան,
Որ պոռընկաց տան հրաման
Կաշառ առնուն կարմիր դահեկան,
Տան մէկ–մէկի աղչիկ տղա,
Կաթն եւ արիւն խառնին իրար,
Յորժամ առնուն եւ քննին
Եւ մէկ–մէկի ազգ դուս գան,
Մէկ պորտին ժ(10) ղբռուշիկն առնոյ՝
տայ հրաման
Եւ Բ (2) պորտն՝ քահանական,
Թէ Գ (3) լինի՝ երեքտասան,
Այսպէս կորոյս եպիսկոպոսն Եդոկիայն:
Տէր Մարգարէ *անուն կոչի,*
Նստեալ կա ի Սուրբ Աննան,
Ի Թօխաթցոց *աթոռակալ,*
Ունի տընտես,
Որպէս թուրքի քէհպին կտրեաց
Ղայտուն *դրանն:*

— *10բ–1բ* Յանկ գլխոց երկու հատոր գրոյս, որոյ առաջին մասն Քարոզ, եւ երկրորդն են Հարցմունք, Կանոնք, այլ եւ Քարոցք եւ Խրատ — *Ա. Նախ ի բանն Աւետարանին, որ ասէ. Եղերուք խորագետք իբրեւ զօձ… ՇԹ. Բուն Պատմութիւն սրբոյն* Ներսիսի *հայրապետին Հայոց:*

Գրուած է 1731 թ.–ին նորոգող Յակոբ Շաշմախեցու *ձեռքով, ապա Ա հատորի ցանկի վրայ (Ա–ԺԵ) գիծ է քաշուած եւ նշուած՝ 10բ «Զայս Ժ եւ ե քարոզքս ոչ կազմեացք ընդ գրգիս՝ վասն մեծութեան»:*

Զ Ե Ռ Ա Գ Ի Ր Բ

ԺԶ — XVI

ԹԵՐԹ՝ 86 (15—100). չգրուած՝ 15ա—6բ, 30աբ, 70բ, 81բ: ՊՐԱԿ՝ 1x2 + Ա.—է.x12: ՆԻՒԹ՝ թուղթ, արեւելեան, առանց լուսագծերի (1731—ի յաւելում՝ 15—17, 100, լուսագծերով եւ թագանշան «WR» լուսադրոշմով): ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 18,4x14,3: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն: ԳԻՐ՝ նօտրգիր (1731թ. Յակօբ աբեղայի՝ 17աբ, 100աբ): ՏՈՂ՝ 22—25:

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ — ձ ա կ ա տ ա գ ր դ՝ 17ա: Լ ու ս ա ն ց ա գ ր դ՝ բուսական (17ա): Զ ա ր դ ա գ ի ր՝ թուղնագիր (17ա): Գ ո յ ն ե ր՝ կարմիր:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. վերջից պակասաւոր, լրացուած Գ գրչի ձեռով: Եզրահատուած եւ լուսանցագրութիւնները վնասուած:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

1. *17ա–29բ* ԺԶ (=ԺԸ). Վասն հարցմանց անօրինաց՝ զանազան պատասխանիք, զոր խնդրեալ բարեպաշտին Աբիսողոմայ, եւ պատասխանեալ վարդապետին Մատթէոսի

Տե՛ս նեւ. 795, 2ա—12բ. § 1/*17ա–24բ:* 2/*24բ–5բ:* 3/*25բ–9բ:*

2. *29բ–35ա* [ԺԹ]. Սուրբ հօրն Յոհաննու Գառնեցոյ ասացեալ խրատ կրաւնաւորաց *–Մուտք բարեացն բազմադիմ[ի] են ի մեզ…*

30աբ ազատ՝ լրացման համար: Թէեւ նորոգողը նշել է՝ 30ա «Պակաս չէ» սակայն նեւ. 795, 12բ—7ա *«Ամենանուաստ ծառայակիցս ձեր ի Քրիստոս»*

3. *35ա–100բ* Ի (=ԼԹ). [Կանոնգիրք Հայոց]

Տե՛ս նեւ. 795, 17ա—191ա. § ա/*35ա–48բ:* բ/*48բ–57ա:* գ/*57ա–60ա:* դ/*60ա–8ա:* ե/*68ա–73ա:* զ/*73ա–5ա:* է/*75ա–6բ:* ը/*76բ–9բ:* թ/*79բ–85ա:* ժ/*85ա–8բ:* ժա/*89ա–90ա:* ժբ/*90ա–7ա:* ժգ/*97բ–8ա:* ժդ/*98ա–9բ:* ժե/*99բ–100բ (միայն ցանկ, գրչի ձեռքով Ա–ԻԴ, 1731 թ. Յակոբ աբեղայի ձեռքով Իե–Զե, խորագիրը եւ սկզբնատողը. շար. տե՛ս ձեռագիր Գ): ժգ–ժը/չիք:

Ջ Ե Ռ Ա Գ Ի Ր Գ

Ռ–ՀԸ — 1629

ԳՐԻՋ՝ Գրիգոր Ւհյ.։

ԹԵՐԹ՝ 92 (101—193). չգրուած՝ 115աբ, 133բ—5բ, 193աբ։ ՊՐԱԿ՝ է—ԺԳx12 (է 15, Թ 14, ԺԲ 13) + 1x2։ ՆԻՒԹ՝ թուղթ, լուսագծերով (1731 թ. յաւելում՝ 107—117, 126, 132—135, 145, 191—193)։ ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 18,4x14,3։ ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն (երկսիւն՝ 1731 թ. նոռոգողի 110բ, 116ա—7ա)։ ԳԻՐ՝ բոլորգիր (1731 թ. նոռոգողի 107ա—14բ, 116ա—7բ, 126աբ, 132ա—3ա, 145աբ, 190բ—2բ)։ ՏՈՂ՝ 24—25 (1731 թ. նոռոգողի 22—26)։

ՎԻՃԱԿ՝ բաւարար. սկզբից եւ վերջից պակասաւոր։ 1731—ին նոռոգուած, թերին մասամբ լրացուած, եզրերը կարկատուած եւ միացուած միւս ձեռագրերին։ Միացման ժամանակ եզրահատուած եւ լուսանցագրութիւնները վնասուած։

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Ա. *100բ—36ա* [Կանոնգիրք]

1. *100բ—10բ* ԼԴ. Սահմանք եւ կանոնք Աթանասի, արարեալ հարցմամբ եւ պատասխանիւ ի գլուխս Ջ եւ Ը — *Ի ժամանակին յայնմիկ երեւեցաւ այր մի՝* Գորգիոս *անուն…*

Յանկը՝ Բ ձեռագրի վերջում՝ 99բ—100բ։

2. *110բ* Կանոնք Դըւնի սուրբ ժողովոյն… գլուխ Ժ եւ Բ (ցանկ)։ 111ա—4բ Կանոնք Դըւնի սուրբ ժողովոյն — *Ա. Ջառաջնորդաց Սրբոյ Եկեղեցւոյ Հայոց…*

3. *116ա—27բ* [Կանոնք զանազանք]

— *116ա—7ա* Ցանկ կանոնաց սուրբ առաքելոյն Թադէոսի եւ այլոց սրբոց. գլուխս ԿԴ — *Ա. Վասն բարեգործ լինելոյ եպիսկոպոսաց… ԿԴ. Վասն կնոջ քրիստոնէի, որ տաճիկ երեխայի ծիծ տայ։*

Այս ցանկում նշուած 64 (Ա—ԿԴ) կանոնները քաղուած են.

— 18—ը (Ա—ԺԸ)՝ Թադէոսի կանոններից (տպ. Ա, Գ—Դ, ժ—ժԴ, ժէ—ժԹ, ԻԱ—ԻԳ, ԻԸ—ԼԱ, ըստ որում ԻԸ—ն ԻԲ—ից առաջ)։

— 40—ը (ԺԹ—ԽԳ, Խե—ԽԸ, ՇԳ—ՇԴ, ՇԶ—ԿԴ)՝ Դաւիթ Ալաւկաորդու կանոններից (տպ. Բ—ե, Ը—ժ, ԺԲ, ԺԶ, ԺԸ—ԻԱ, ԻԴ, Իէ, ԻԹ, ԼԱ, Խ, ԽԴ, Ծ, Ծե—Ծէ, ՀԳ, ըստ որում կոտորակուած, խմբագրուած եւ խառն հերթականութեամբ)։

— 4—ը (ԽԴ, Ծ, ՇԲ, Ծե)՝ ի կանոնաց վասն քահանայից։

— 1. ԽԹ. Առաքելական կանոններից (տպ. ԺԸ) 1—ը (ՇԱ)՝ Ի Հասարակաց խրատուաց Յովհաննու երզնկացւոյ՝ «Ցաղագս ոչ առնելոյ սուբ ի վերայ մեռելոց» (125բ—6ա)։

4. *127բ—8բ* ԼԶ. Կանոնք եւ սահմանք սուրբ հայրապետին Սահակա — *Պարտ է քառասունք տալ մեռելին…*

«Նիկիա կանոնացն է»։ Նման կանոններ Սահակի կանոններում չկան։

5. *128բ—31ա* ԼԷ. Եւ արդ, այսպէս է խնամութիւն — *Որ լինի կտրիչ տղայն ժե տարոյն՝ փեսացու է…*

6. *131աբ* ԼԸ. Վասն ազգակցութեանց հարց, զոր է Պորտն կոչի եւ բաժանի Գ դէմս՝ [ի վեր], ի վայր եւ ի կողմն, զոր ասացին սուրբ հայրապետքն — *Ի վերն այսպէս. առաջին՝ մեք եւ հայրն մեր…*

7. *132աբ* ԼԹ. Ցաղագս հոսման, [որ] ի հուն լինի — *Ջերմութիւն որ ի քուն լինի…*

8. *132բ—3ա* Խ (=ԽԲ). [Ի Դատաստանագրոց Մխիթարայ Գօշի]։ Վասն ատելութեան առն եւ կնոջ — *Եթէ զմիմեանս ատիցեն այր եւ…*

Տե՛ս տպ. 1975, Գ խմբ., գլ. Թ, ԺԱ, ԺԴ։

9. *136ա Խրատ կնք[ա]ւորութեան մինչեւ ի Գ պորտն, եւ Դ—ն առնուն զիրար (աղիւսակ)։*

Բ. *136բ—92բ* [Կարոզգիրք]

1. *136բ—40բ* ԽԳ. Քարոզ վասն Ադամայ խաբէութեանն, եւ պատճառ մարդեղութեանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ — *Իսկ յորժամ ստեղծ Աստուած զԱդամ…*

2. *140բ—3բ* ԽԴ. Այս է Քարոզ եւ խրատ վասն մկրտութեան — *Իսկ եթէ ոք հարցանէ, թէ. Ջի՞նչ է մկրտութեան պատճառն…*

3. *143բ—6ա* Խե. Քարոզ վասն աղաւթից — *Վարդապետն ամենայնի, Տէրն մեր Յիսուս Քրիստոս, կու հրամայէ…*

4. *146ա—7բ* ԽՋ. Քարոզ վասն պահոց է ասացեալ — *Եթէ ոք հարցանէ, թէ. Ջի՞նչ է պաքն: Պաքն աստուածադիր աւրէնք է…*

5. *147բ—25ա* ԽԷ. Քարոզ վասն ողորմութեան — *Նախ, ողորմած, Աստուծոյ անուն է…*

6. *152ա—5բ* ԽԸ. Քարոզ վասն խոստովանութեան — *Ունկնդիր լերուք եւ ի միտ առէք…*

7. *155բ—8ա* ԽԹ. Քարոզ վասն ննջեցելոց է — *Որպէս ասէ Յոբ. Ողորմեցարուք ինձ…*

8. *158ա—61ա* Ծ. Քարոզ վասն հայհոյութեան եւ անշահ մեղաց — *Եղբարք, ունկնդիր լերուք խրատոյս…*

9. *161ա—2բ* ԾԱ. Քարոզ վասն եղբայրսիրութեան — *Եղբայրք սիրելիք, սիրեսցուք զմիմեանս…*

10. *162բ—7ա* ԾԲ. Քարոզ Պատրաստ կալ ի պոռնկէ — *Այս է խրատ հոգէշահ եւ ընդունելի ամենեցուն…*

11. *167ա—72ա* ԾԳ. Յոհաննու վարդապետի ասացեալ Վասն աւերման աշխարհի եւ վասն դատաստանի աւուրն, եւ վասն գալստեան Քրիստոսի Աստուծոյ մերոյ — *Մեք որ ակն ունիմք գալստեանն Քրիստոսի…*

12. *172բ–4ա* ԾԴ. Քարոզ վասն հաճանալից – *Ո՛վ քահանայք եւ պաշտաւն[է]այք…*

13. *174ա–6բ* ԾԵ. Դարձեալ խրատ վասն ժողովրդեան ընդունել զհաճանայս – *Այս է կանոն եւ կարճ քահանայութեան…*

14. *177ա–83ա* ԾԶ. Երանելոյն Յոհաննու Մանդակո[ւ]նացոյ ասացեալ Վասն ընդունելի եւ անընդունելի ողորմութեան – *Բազում գաղտաձիք նետիւք…*

15. *183ա–8ա* ԾԷ. Երանելոյն Յոհաննու Մանդակո[ւ]նեցոյ ասացեալ Վասն թատերաց եւ գուսանաց – *Ու՞ր երթալ դադարեցից եւ լացից…*

16. *188ա–92բ* ԾԸ. Երանելոյն Եփրեմի Խորին Ասորոյ ասացեալ Վասն զղջման եւ խոստովանութեամբ – *Որք Սուրբ Հոգոյն ցանկացեալք…*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՁՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

136ա Ջմեղաւոր՝ զԳրիգորս *յիշեցէք ի սուրբ յաղօթս ձեր, ով եղբայրք իմ, եւ հայրն իմ* Մանսուր, *եւ մայրն իմ* Աննայի: *Թվին ՌՀԸ (1629):*

143բ Որոց աղաւթիւքն ողորմի Քրիստոս Աստուած ամենայն հաւատացելոց, եւ իմ ծնո[ւ]ղացն՝ Մանսուրին. *եւ նմա փա՛ռք յաւիտեանս. ամէն:*

145բ Արդ, աղաչեմ զձեզ, եղբարք սիրելիք, յորժամ ըն//(146ա)թեռնոյք եւ կարդայք զխրատս, եւ զմեղաւոր քահանայս յիշեցէք…:

147բ… եւ ինձ մեղապարտ եւ անպիտան՝ Գրիգոր *գրչիս… (նման՝ 167ա, 172բ, 174ա, 176բ):*

158ա… եւ ինձ սուտանուն՝ Գրիգոր *քահանայս՝ բազմամեղ գրչիս, եւ իմ ծնաւղացն՝* Մանսուրին*…:*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

1. 114բ Ջխոտանագիր՝ Յակոբ *աբեղայս* Շամախացի *յիշեցէք ի բարին, ո՛ անձինք բարեսէր՝ հանդիպողք սմա:*

2. 192բ Մանաւանդ լսել տացէ զնոյն բարբառն ինձ՝ յոգնամեղ Յակոբայ *հեղգ եւ պղերգ աբեղայիս, որ ստացայ զայս գիրքս, եւ զանկեալ թուղթսըն գրեալ նորոգեցի յիշատակ իմոյս ամենաթշուառ անձին, եւ ի վայելումն ուսումնասէր եղբարց: Ի թուականիս մերում ՌՃ եւ ութսուներորդի (1731), եւ յաւուրս Ժ եւ Ե(15)–երորդի ամսոյ փետրվարի, եւ ի հայրապետութեան* Սուրբ Էջմիածնի՝ *տեառն* Աբրահամու, *ի* Նոր Ջուղ[այ]ում*:*

Ջ Ե Ռ Ա Գ Ի Ր Դ

ԺՋ — XVI

Թերթ՝ 83 (194—276), չգրուած՝ 194բ, 273ա—6բ: ՊԱՐԿ՝ Ա—Էx12 (է 11): ՆԻՒԹ՝ թուղթ, լուսագծերով եւ «TS» լուսադրոշմով: ՄԵՏՈՒԹԻՒՆ՝ 18,4x14,3: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն: ԳԻՐ՝ նօտրգիր (նմուշ՝ 218բ): ՏՈՂ՝ 20:

ՄԱՆՐԱՆԿԱՐՁՈՒԹԻՒՆ — Ջ ա ր դ ա գ ի ր՝ թոչնագիր: Գ ո յ ն ե ր՝ կարմիր, սեւ:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. թանաքից գրադաշտը թեթեւակի գունափոխուած: Միացման ժամանակ սկզբից աւելացուած 1 թերթ եւ գրուած Յանկը՝ 1ա:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն


–195ա–273ա ԾԹ. [Մեսրոպայ Վայոցձորեցւոյ] Պատմութիւն սրբոյն Ներսէսի հայրապետին

Տե՛ս ձեռ. 702, 4ա—126ա. *§ ա/195ա–201ա (սկ. «Ութ եւ տասն ամին* Տղատա*…»): բ/201ա–7ա (առանց խորագրի. կցուած նախորդին՝ որպէս մասն Ա գլխի): գ/222բ–14ա: դ/214ա–8բ: ե/218բ–22բ: զ/222բ–6բ: է/226բ–31ա: ը/231ա–6ա: թ/236ա–41բ: ժ/241բ–54բ: ժա/254բ–63ա: ժբ/263ա–7բ: ժգ/267բ–73ա (վրջ. «… եւ արդ զայս հանեալ յԱրեւելից գրոց ի Հայոց մնացորդացն պատմութեանց, եւ ետու որդոց էլ իմոյ, սուրբ աւագանին ծնընդեամբն* Վահանա Մամիկոնս*, ի գեղն որ կոչի* Շաւրժի*… ամէն»): ժդ–իբ/չիք: Ունի.*


– 194ա Յանկ Պատմութեանս Ներսիսի Մեծի – *Ա. Յաղագս հայրապետութեանն Մեծին* Ներսիսի, *թէ որպէս յԱթոռ… ԺՒ. Յաղագս մահուան քաջին* Մուշեղայ*…:*

1780
Ժ Ո Ղ Ո Վ Ա Ծ Ո Յ
(Բաղկացած է 2 տարբեր ձեռագրերից)

Թերթ՝ 396: ԿԱՋՄ՝ դրոշմազարդ շագանակագոյն կաշի, միջուկը՝ տախտակ, աստառը՝ մասն հնատիպ գրքի (տե՛ս Պատառիկ—պահպանակ): Պահպանակ՝ 2+2, թուղթ (Ի դ.):



Նմուշ՝ 13ա



Նմուշ՝ 314ա

ՊԱՏԱՌԻԿ—ՊԱՀՊԱՆԱԿ — Քրիստոնէակա՞ն (լատինե-րէն—հայերէն): Հնատիպ՝ ԺԸ դ.: 1 (Ա) + 1 (Բ), օգտագործուած որպէս կազմաստառ: Կարդալ՝ Բ (տպ. էջ 7) «///Հց. Այժմն ուսոյ ինձ՝ էթէ որպիսի եղեւ մարմնանալ եւ շարչարանք Փրկչին մերոյ: Պ[ատասխանի]. Պարտ է ինձ իմանալ զի երկրորդ անձնըն աստուածութեան///»:

Վիճակ՝ բաւարար. կազմի վրայ բծեր, եզրերը՝ մաշուած, թիկունքը՝ կարկատուած (ի դ.), կապիչներն՝ ընկած:

Ձ Ե Ռ Ա Գ Ի Ր Ս

ԺԷ — XVII

Թերթ՝ 301: ՊՐԱԿ՝ Ա—ԻՁx12 (ԺԳ 11, ԻԲ, ԻԴ 10, ԻՁ 6): Նիհ՝ Թուղթ, լուսագծերով: ՄԵՇՈՒԹԻՒՆ՝ 19,9x14,4: ԴՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն: Գիր՝ նօտրգիր: ՏՈՂ՝ 19—26:

Վիճակ՝ բաւարար. լուսանցային մասերում խոնաւութեան հետեւեր, փոխրիկ պատռուածքներ, եզրահատումից լուսանցագրութիւնները վնասուած, նախկինում նորոգուած եւ լուսանցային մասերը՝ կարկատուած:

Ծնթ. Հաւանական է, որ ձեռագիրը գրուած լինի թարգմանիչ Յովհաննէս Ստանօզցու ձեռքով 1617թ.—ից յետոյ:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Ա. [Թարգմանութիւնք Յովհաննու Ստանօսցւոյ]

1. *1ա—15բ* [Ժամանակագրութիւն նահապետաց եւ յաջորդութիւնք յԱդամայ ցամն 6988 — 3026 արարչութեան] — *ՅԱդամայ մինչեւ ի Քրիստոսի Ծնունդն…*

— *15բ* [Յիշատակարան թարգմանութեան] — *Վերջ ամենայն թվականութեան, որ ի վերն ասացաք: Եւ ես՝* Յոհան Ըստանօզցի *թարգմանեցի ի ֆռանգ բառէն ի մերն:*

2. ա. *15բ—6ա* Կարգ Հին կտակարանաց գրոց — *1. Ծնընդոց… 36. Յովնան:*

բ. *16աբ* Կարգ Նոր կտակարանաց գրոցն — *Աւետարան ըստ Մաթէոսի… Դ եզր:*

3. *16բ* Վկայութիւնք վասն հաւարանին, որ ֆռանկն բուրկդոռիս կոչէ, հանե[ա]լ ի աստուածեղէն գրոցն — *եւ այս բուրկադորիոն է տեղիք մի…*

4. *16բ—39բ* [Անուանի իմաստասիրաց]

— *16բ—7ա* [Ի թարգմանչէ] — *Քանի մի անուանաց իմաստից անուանքն, թէ ի աստուածաբանութեան վերա, թէ ի արտաքին գրոց… Եւ այն բանս ինչն՝ անուանեալ* Յոհան Ըստանօսցի, *սուտումուտ թարգմանեցաւ ի գիւղն Ըստանազն ի ֆռանկաց բառէն, Քրիստոսի Ծնընդեան ՌՁԺէ եւ Հայոց ՌԿՁ (1617), սեպտեմբեր ամսոյն ԺԸ (18), օրն Ե. Ջ աբանէն, ժամն Ի (20):*

–*17ա—39բ* [Անուանի իմաստասիրաց ըստ այբուբենից լատինացւոց՝ Ա—Վ] — *3200 [թ.].* Առիմաւ *տաղասացք… Վերջէնջիոս պատմող՝ ի 1204:*

— *39բ* [Ի թարգմանչէ] — *Այսոքիկ են անուենք անվանի իմաստասիրաց… ի կարգն ֆռանգի ալպապեդի վերա… եւ պարտ է որ հայոց գրերուն վերա քաշվի… այլ բաւ է:*

Բ. 1. *39բ—289բ* [Թարգմանութիւնք Յովհաննու Անկիւրացւոյ]

Տե՛ս ձեռ. 1788, 3ա—121բ. *Ա § 1/39բ—44ա: 2. ա—ե/44ա—64բ: 3. ա—գ/64բ—80ա (յիշ. թրգմ.՝ 80ա: Յանկ՝ 80ա—1բ): 4/83ա: 5/83ա—6ա: 6/86ա—92ա: 7/92ա—7ա: Բ/97ա—127բ (յիշ. թրգմ.՝ 127բ): Գ. § 1/127բ—40ա: 2/140ա—206բ: 3/206բ—35բ: 4/235բ—45ա: 5/245ա—83բ (283բ—4ա յիշ. տե՛ս ստորեւ): Դ/284ա—89բ:*

— *283բ—4ա Ծանիք, ով ընթերնողք, որ այդ նոր աշխարհիս պատմութիւնքն գրեալ եմ որպէս որ առաջի ժամանակն գտան… մինչեւ ի մերումն անցեալ կա տարիք ՃԼՋ (136)… Եւ թէ Աստուած կամենայ, որ երթամ ի Ֆռանկաց Տունն եւ հանդիպիմ այդպիսի գրեանք… նա թարգմանեմ…:*

2. *289բ—92բ, 293բ—300ա* Վասն հաւարակաբար բառերուն՝ թէ պատուական եւ թէ անպատուական: Գլուխ Ա — *կատարեցաւ ասացումն ի վերայ մատաններուն…*

— *300բ* [Յիշատակարան թարգմանութեան]— *Եղեւ վերջ ականց ականց, թարմանեալ ի ֆռանկ եւ Անկուրացի Յոհաննէսէն, ի Անկուրիայ քաղաքն, թվին Հայոց ՌԿԷ (1618), ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ. ամէն: Եղիցի, եղիցի. ամէն:*

3. *292բ—3ա* [Թարգմանութիւն անուանց աշխարհաց]: Եւրոպիայու աշխարհից անուանք — *Ֆռանկի՝* էուրօբայ, *հայու՝* Իւրոպիայ… *Ֆրիկկիայ՝* Փիւրիւրիայ:

4. *300բ—1բ* [Բանք զանազանք]

ա. *300բ—1ա* Խրատ վասն ջրին վերայ բայլելու — *Նախ՝ թէ կամիցես գետ մի անցանել… բ. 301ա Թէ կամիցես բերել տալ այնպիսի պտուղնի, որ բնաւ կուտ չունենայ… գ. 301ա Նոյնպէս թէ կամիցես պահել ձմերուկ եւ սեղ… անպատճառ բոլոր տարին երթայ:*

Ա եւ Բ նիւթերի լուսանցքներում կան մեկնութիւններ, առանձին բառերի բացատրութիւններ:

ԿՆՔԱԴՐՈՇՄ 3բ (անընթեռնելի). Գիրքս Սուրբ էջմիածնա՞ *է:*

Ձ Ե Ռ Ա Գ Ի Ր Բ

Անկուրիայ, Մեռոնիոս գիւղ ՌՀ — 1621

Գրիչ, թարգմանիչ՝ Յոհաննէս Անկուրացի: ՍՏԱՅՈՂ՝ Կարապետ վրդ. Երզնկացի: Թերթ՝ 95 (302—396): «A. G.» լուսադրոշմով: Մեծութիւն՝ 19,9x14,4: Դրութիւն՝ միասիւն (302ա—50բ, 393ա—6բ), երկսիւն (351ա—92բ): Գիր՝ նօտրգիր (տարբեր՝ 396բ):

Մանրանկարչութիւն — Կարապետ վրդ.—ը դիտարկումներ կատարելիս՝ 303բ, 320ա, 396ա: Աստղաբաշխական զանազան գծագրեր, բառեզներ եւ գործիքներ (տե՛ս Ա, § ԺԹ, Բ, § 5. դ):

Վիճակ՝ բաւարար. լուսանցային մասերում փոխրիկ պատռուածքներ, զանազան բծեր, ցեցակեր: Նախկինում նորոգուած եւ պրակային մասերը կազմաստառի թղթով կարկատուած:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

–302ա–96բ Կոսմոկրափիա Պետրոսի Ապիանի Գերմանացոց երկրէն, որ է Աշխարհագրութիւն տ[ի]եզերաց, թարգմանեալ ի լատինացոց բառէն մերում Անկուրիացի Յոհաննէէն, ի խընդիր րաբունապետ երզնկացի տէր Կարապետ վարդապետին: Հսկիսբ արարեալ ի թվին Հայոց ՌՀ (1621) յուլիս ամսուն Լ (30), օր Բ—շաբաթի, ի մայրաքաղաքն Անկուրիայ Գաղատացոց, ի դուռն Հրաշայգործ Սուրբ Խաչին

Ա. *302ա–44ա* Առաջին բաժին գրգիս այտնի առնէ հասարական եւ առանձնական աշխարհագրութիւնք, եւ *ըսկսբ*ունին սոքա են

ա. *302ա–4ա* Ի՞նչ է կոսմոկրափիայ հասարակ եւ ի՞նչ է կոսմոկրափիայ առանձնական, եւ այս Բ արհեսդս ի՞նչ կերպիւ ի միմիանց բաժանին: Գլուխ Ա — *Կոսմոկրափիան, որպէս իւր բառն յայտնէ, է աշխարհի գրութիւն…*

բ. *304ա–5ա* Աղաբս շարժման գ*ը*նդից եւ բաժանման երկնից: Գլուխ Բ — *Աշխարհն Բ (2) կերպիւ բաժանի…*

գ. *305բ–7ա* Աղաքս գնդին *ա*րչապատից: Գլուխ Գ: Ի՞նչ է գունդն — *Գունդըն է դուրիք մի՝ մէկ երես ունելով…*

դ. *307բ–8բ* Աղաքս ե (5) ցեղ ծոնից, որ են ե բաժինք բնակութեան աշխարհի: Գլուխ Դ—որդ — *Հողն(ո)ւն եւ ջրին երեսն մի լինալով եւ գնդաձեւ…*

ե. *309աբ* Աղաքս բաւալել *ա*րչապատից: Գլուխ ե—երորդ — *Բարալէլի, որ ուրիշ անվանով սէկմէնդայ…*

զ. *309բ–10բ* Աղաքս կլիմաից: Գլուխ Զ—երորդ — *Ճարտար հին աստղաբաշխից…*

է. *311աբ* Աղաքս երկկայնութեան երկրի: Գլուխ է—երորդ — *Երկայնութեան երկրին, ըստ* Վէրնէրիոս *իմաստասէրին…*

ը. *311բ–3ա* Աղաքս լայնութեան երկրի եւ տեղաց: Գլուխ Ը—երորդ — *Լայնութիւն երկրի կամ բնակութեանց է…*

թ. *313բ–7բ* Եթէ կամենաս բեւեռային բարձրութիւն գիտենալ կամ երկրի լայնութիւնն առանձնական հերգեհոնով մի, որ է *ըստ*ռոլապի նման գործելի մի: Գլուխ Թ—երորդ… — *Բարձրութիւն արեգական ի վերայ…*

ժ. *318ա–21բ* Աղաքս իմանալու հաղաքաց, գաւառից եւ *բ*րաւ[ինցիա]ներուն երկայնութիւնն: Գլուխ Ժ—երորդ — *Երկայնութիւնք քաղաքաց…*

ժա. *322աբ* Աղաքս բաժանման կշեռից կամ սեռից երկրաչափական: Գլուխ Ա—տասաներորդ — *Կշեռն կամ չափն է երկայնութիւն…*

ժբ. *323աբ* Աղաքս որչափութեան երկրի: Գլուխ երկուտասաներորդ — *Սրշապատան բոլոր երկրին 3կ (360) աստիճան է…*

ժգ. *323բ–9ա* Աղաքս գտանելոյ տեղից հեռաւորութիւնք, թէ որչափ հեռու լինայ ի միմիանց: Գլուխ երեքտասաներորդ — *Եթէ կամիս երկու տեղի ճանապարհի հեռաւորութիւնն չափես…*

ժդ. *329բ–33բ* Որպէսի կերպիւ գունդն երկրաչափական սահմանես ըստ աշխարհիս Դ գլխաւոր կողմանց եւ ինչ աշխարհի… Գ[լուխ ԺԴ–երորդ] — *Իսկ իմանալ պարտ է, որ հողն կայ…*

ժե. *334ա–6բ* Աղաքս հողմոց: Գլուխ ԺԵ—երորդ — *Հողմն է շող եւ ջուր…*

ժզ. *337ա–8բ* Աղաքս նոցայ, որ բնակեալ են ի վերայ գնդին: Գլուխ ԺԶ — *Իսկ յամենայն երկիրն Դ բաժին…*

ժէ. *339ա–40ա* Ի՞նչ կերպիւ այլեւայլութիւն ունի կղզին ցամաք կղզէն, նեղ պողոսէն եւ հաղատ ցամաքէն: Գլուխ ԺԷ—երորդ — *Իսկ ի ջրէն երկիրն պարունակեալ…*

ժը. *340բ–2ա* Աղաքս գործ ածելու Պտղոմիոսի թաւլանեն եւ որպէսի կերպիւ իւրաքանչիւր երկրի կամ հաղաքաց *ո*դեւանքն ի նայ գտանցես հանգիսդարար: Գլուխ ԺԸ — *Իսկ եթէ կամիս իմանալ երկրի…*

ժթ. *342ա–4ա* Աղաքս աշխարհագրական հաւելուն: Գլուխ ԺԹ — *Հայելին է այն, որ առնումք…*

Կան բազմաթիւ գծագրեր, աղիւսակներ, քարտեզներ եւ աստղաբաշխական գործիքներ՝ 303ա–4ա, 305ա, 307ա, 308ա–9ա, 310բ, 311բ–2ա, 313ա, 314բ, 315բ, 317բ, 320ա, 322բ–3ա, 330բ–1ա, 332ա, 333աբ, 336բ, 338բ, 340բ, 341բ, 344ա: Կարապետ՝ վրդ.–ը դիտարկումներ կատարելիս՝ 303բ, 320ա («Սայ է յամենայիմասդ տէր Կարապետ վարդապետ»):

Բ. *344բ–96բ* Երկրորդ բաժին գլխաւոր գրիս այս՝ սա է: Աղաքս հասարակ եւ աւանձնական գրութեան Եւրոպիու, Ափրիկու, Ասիու եւ Ամերիգու, որ էն Նոր աշխարհն

1. *344բ–6ա* Գլուխ Ա. Վասն Եւրոպիու — Եւրոպիայ *կոչեցեալ ի* Աէնորայ Փիւնիկեցոց *արքային…*

2. *346բ–7բ* Աղաքս Ափրիկու, որ է Լիբիան — Ափրիկայ, *որ յունքն կոչեցին* Լիբիայ…

3. *347բ–8բ* Աղաքս Ասիու: Գլուխ Գ — Ասիան, *երրորդ բաժին երկրին…*

4. *348բ–9բ* Աղաքս Ամէրիգաու, որ է Նոր աշխարհն: Գլուխ Դ — Ամէրիգան, *որ այժմ Դ–որդ աշխարհի բաժին կոչի…*

349բ–50ա Մէյնութիւն յեէմմայ Ֆրիսիոսի իմաստասէրին – *Որպէս է անչափ թուելի բաժինն... Ասացեալ* Յոհաննու *թարգմանչին...*

5. *350բ–81ա* Աղաքս արզից, որ է հասարակաբար եւ առանձնակաբար աշխարհիս հաղարից երկայնութեան եւ լայնութեան գրութիւն: Գլուխ ե–երորդ...

ա. *350բ–81ա* Եւ նախ Եուրոպիու առանձնական գրութիւն պարզաբանեցուի: Սպանիու երկրին բաժինք եւ գաւառ – Պէդիգայ, *որ այժմ* Կռանադայ *անուանի...*

բ. *381ա–92բ* Կղզոց հասարակագրութիւն: Եուրոպիու կղզիին սոհայ են... – Գրէդայ, *որ այժմ կոչի* Գանտիայ...

– *392բ–3ա* Մէյնութիւն – *Պայծառագոյն ընթերձող, թեպետ աշխարհագրութեան արհեստն կատայրեցինք, բայց ի այս տեղն կամեցանք այտնել որպեսի կերպիս ի շառաւեղից լուսնուն... աղագս աղաչանաց մեր եղբոյր՝* Գեւորք Աբիանոյին, *որ խընդրեաց վասն Գիշերային ժամից...*

գ. *393ա–6բ* Գիշերային ժամին ի լուսին շառավեղից կողմնացուցով շիտակ եւ ստուգապէս իմանաս – *Լուսինն պայծառ լինելու աստենն առ կողմնացուցն...*

դ. *396բ* Աղագս մեծութեան արեգական եւ [երկն]ի անուանի աստեղաց – *Արեգակն, որ է մեծ քան զյամենայն լուսաւորք... Լուսինն է փոքր քան զաշխարհս ԼԹ (39) անգամ:*

Ժամացոյց գործիքներ՝ 394ա, 396ա, գծագիր – «Միաւորութիւն լուսնին հետ արեգական»՝ 395ա, Կարապետ վրդ.–ը դիտարկում կատարելիս՝ 396ա «Մայ է յամենագով յամենիմաղ Կարապետ *վարդապետ»:*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

302ա տե՛ս խորագիրը:

307ա Անկուրիացի Յոհաննէն *սահմանեալ ի խնդիր բարեւնապետ տէր* Կարապետ *վարդապետին:*

320ա Մայ է յամենայիմաղ՝ Կարապետ *վարդապետ:*

340ա եւ զայս յամենն գրեցաւ ի գեուղն, որ կոչի Մեռոնհոս, *ի խընդիրն Հրզնկացի որ էր վրեժխնդիր* էկլէսիադականից *առաքեալ ի կենդանայնահատակ* Մելիխէդ *կաթողիկոսէն:*

350ա... Ասացեալ Յոհաննու *թարգմանչին:*


396ա Մայ է յամենագով, յամենիմաղ՝ Կարապետ *վարդապետ:*

1781
Ժ Ո Ղ Ո Վ Ա Ծ Ո Յ


Կաֆա ՌՄԵ — 1756

ԳՐԻՉ, ՍՏԱՅՈՂ՝ Գրիգոր աբղ. Սիւնեցի:

ԹԵՐԹ՝ 143 + 1 (կրկ. 1). չգրուած՝ 1ա—6բ, 109ա, 121բ, 141ա—3բ: ՊՐԱԿ՝ 1x7+Ա.—ԺxI2+2x8+1x1: ՆԻՒԹ՝ թուղթ, լուսագծերով եւ լուսադրոշմով: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 20,5x16: ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն: ԳԻՐ՝ նօտրգիր (7ա, 62ա, 67ա–108բ, 112բ–4բ, 120ա–40բ), Անանուն Ա (62բ–6բ, 109բ–12ա), Բ (115ա–9բ): ՏՈՂ՝ 30—31: ԿԱՋՄ՝ դրոշմազարդ շագանակագոյն կաշի, միջուկը՝ ստուարաթուղթ, աստառը՝ թուղթ, մասն առաջին եւ վերջին պրակներուն:



Նմուշ՝ 7ա



Նմուշ՝ 118ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. թանաքից գրադաշտը թեթեւակի գունափոխուած, տեղ—տեղ զանազան բծեր: Կազմի կաշին՝ ճեղծուած, եզրերը՝ մաշուած:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. *7ա–60բ* Պատմութիւն Մեծի աշխարհակալին Աղէքսանդրի Մակեդոնացոյ. կեանք վարուց բաչութեան մինչեւ ի վաղչանն նորին – *Իմաստունքն եթօբացոց երկրի...*

Տե՛ս նաեւ. 1782, 2ա–61բ: Ունի նոյն կաֆաները:

– *60բ* Յիշատակարան գրոցս – *Փա՛րք... որ արժանի արարեր զթարմատար, յոգնամեղ, զապիկար եւ զվատթար անձն՝* Խաչատուր Կեչառեցւոյ *հասանել միշտանեւրկ մատամ[բ] եւ տկար մարմնով ի գիծ վերջին արքայական Գրոցս աշխարհակալին* Աղէքսանդրու: *Եւ ի յայս զինչ ունիմ հատուցանել ս(=տ)րիտուր, քան թէ քոյին լուսեղինաց եւ բոցեղէն բերանով օրհնել զքեզ, Հայր Աստուած եւ զԲան քո էկակից Որդին հանդերձ Հոգովդ փառակցաւ, նաեւ յօժանդակ առեալ զ[ը]նթացս//(61ա) օդակառոյց լուսաւորացդ, որ անբերան շարժմամբ զօրհնառաք բարեբանութիւն մատուցանեն... ամէն:*

Բ. *62ա* [Նշանագիրք իմաստնոց] — Q = երկինք... ՃԺԻ = *Քաղաքի...*

23 նշանագիր. տե՛ս գրիչ յիշատակարանը։

Գ. *62բ–6բ* Պատմութիւն յԱնի բաղաքին, զոր գրեալ է ի Կաֆայ Աբրահամու րաբունապետի եւ բանի սպասաւորի եւ առաջնորդին Թրակիայ – *Անի քաղաքն էր մեծ եւ հռչակաւոր... եւ եղեւ սկիզբն գալուն իւրեանց ի Կաֆայ, էր թիւն 780, եւ ըստ կենարարին՝ հազար երեքհարիւր երեսունեւմէկ։*

Դ. *67ա–108բ* Փոխր ի շատէ գրեացուէ ի յառաջնոց եղելոցն, որ ի թագաւորութեանցն այլոց եւ մերոց, ի Պատմութենէն Մաթէոսի գրոյն

Խորագիրը ճիշտ չէ։ Բերուած հատուածները քաղուած են Թովմայ Մեծոփեցու *(67ա–72ա) եւ* Կիրակոս Գանձակեցու *(72ա–108բ) պատմութիւններից։*

1. *67ա–72ա* [Քաղուածք ի Պատմութեանց թովմայի Մեծոփեցւոյ] – *Ի թուին ՊԼԵ (1386) եկն* Լէնկ թէմուրն...

Տե՛ս տպ. Թովմա Մեծոփեցի, *Փարիզ, 1860, էջ 12–14, 23–25, 62–73։*

2. *72ա–108բ* [Գլուխք ի Պատմութեանց Կիրակոսի Գանձակեցւոյ]

Տե՛ս ձեռ. 1518, 181ա—260բ. *Միայն 25 գլուխ՝ հատն։ § գ/103ա–5բ (անխորագիր, սկ. «Եւ որժամ սպանին Հռոմք զԳագիգ արքայ...»)։ դ/72ա–3ա։ ե/73ա–6բ։ ը/76բ–7ա։ թ/106ա–7բ։ ժա/84ա–5ա։ ժբ/85աբ։ ժը/86ա–8ա։ ի/91բ–2բ։ իդ/92բ–6ա։ իթ/77ա–8ա։ լբ/96բ–7բ։ լգ/81բ–2ա։ լե/98ա–9բ։ լզ/99բ–100ա (անխորագիր)։ լէ/107բ–8բ (անխորագիր)։ լթ/88ա–9ա։ խդ/90բ–1բ։ խզ/100ա (անխորագիր)։ ծե/80ա–1բ։ ծը/100բ–3ա։ կ/78ա–80ա (անխորագիր)։ կա/82ա–3ա։ կբ/83բա։ կե/89ա–90բ։*

Տպ. Երևան, 1961, Z։

Ե. [Բանիւ զանազանիւ]

1. *109բ–11բ* [Ի Հարցմանց գրոց Գրիգորի Տաթեւացւոյ. հատոր Զ, պրակ է]։ Վասն աշտարակին հարց – *Զաշտարակ որպիսի մտօք շինէին։ Պատասխանի. Նախ՝ զի ատէին...*

2. *112ա* Այս առնանագիր է բերեալ մասին հօրն մերոյ սրբոյ Լուսաւորչին, որ եդաւ ի գեօղն Խախ կոչեալ, եւ է այժմ ի սուրբ ուխտն Տիրանաշինոյ – *Եդաւ ի սմայ փայտն կենաց... ի թուին Հայոց ՉԽԹ (1294)...*

3. *112բ–4բ* Այլ իմն բան գտեալ ի Պատմութեանց հնոց, որ յաղագս ձեռնադրութեան Ֆահանայեապետին, որ ի Աթոռ Սուրբ Էջմիածնի, որ էր շփոթ ի մէջ միաբանից իւրեանց – *Բազում հրաշիւք սկիզբն արարաք ձեռնադրութեան... բարեխոսութեամբ եւ աղօթիւք* Կիրակոս *կաթողիկոսին։*

Տե՛ս տպ. «Թովմա Մեծոփեցու Յիշատակարանը», Թիֆլիզ, 1892, էջ 73–74, 79–87։

4. *115ա–9բ* Վասն հարցման աւօրինաց զանազան եւ պատասխանիք, զոր խնդրեալ բարեպաշտն Աբիսաղօմ մեծ տանուտէրն Շիրիեանա ի նուաստ ոգոյ Մաթէոս վարդապետէ գծողէ գրոց... – *Յաստուածային գիրսն գրեալ է, թէ. Պատրաստեցէք...*

5. *120ա* Խրատ Մահմետի, թէ ինչպէս օրէնք է դրեր իւրայնոցն – *Նախ եւ որդոյն Իսմայելի...*

ԵՒւարտում է «եւ մինչդեռ վիջէին նոքա, տեսին յանկար///» (շար. թերի)։

6. *120բ–1ա* Բան առ բարեմիտ ընթերցողս յաղագս առաջիկայ առակացս [Յառաջաբան Աղբիւր բացեալ գրոց Պետրոսի Աղամալեանի, ձեռ. 2, 12ա—5բ] – *Կանխարարբառ եւ հոգեշարժ...*

7. *122ա–34բ* Զայս վասն մահու եւ ի գերեզմանի տմնելոյ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի – *Յորժամ խաչեցաւ Տէրն մեր...*

8. *134բ–7ա* Քարոզ վասն դատաստանի, ի բան Սաղմոսին, որ ասէ. Դատ արարէք որբոյն եւ այրոյ եւ այլն – *Սովորութիւն է Աստուծոյ ի ձեռն առաջնոցն...*

9. *137ա–40բ* Քարոզ Քառասնիցն, ի բանն, որ ասէ. Անցաք մեք ընդ հուր եւ ընդ ջուր եւ – *Յաստուածային անեղ բնութիւնն միայն բարի ասաց գոլ...*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

61ա Վերստին ի լոյս ածեցեալ եղեւ ի հայրապետութեան տեառն Սահակ սրբազան կաթողիկոսին Ամենից Հայոց, եւ ի պատրիարգութեան սրբոյն Սաղիմայ Թորոս վարդապետին, եւ ի Թաբերութեան Փրկչին մերոյ 1756–ին եւ Հայոց ՌՄԵ–ին, Հոգաեմպեր ամսոյ 7–ն, ի քաղաքն Կաֆա, *ի դուռն* Զարխափան Սուրբ Աստուածածնի *վանիցն, եւ նորին դիպի՝ եղիազար արհիեպիսկոպոսին, եւ թագաւորութեանն Օսմանցոց սուլթան* Օսմանին։ *Եւ ես՝ անպիտան ձեր ոտից հող եւ մոխիր, որ ո՛չ եմ արժանի անուանագրութեան, այլ միայն սուտ անուամբ* Գրիգոր *եւեթ աբեղայս, որ ի բազմացհետէ ցանկայի, ամենայն ուրեք հարցանելով եւ որոնելով, զՊատմութեանց գրեանքն, որ ի նախկին վարդապետացն մերոց արարեալ են, ո՛չ կարացի գտանել։ Այլ ամենաբարին Աստուած, որ լցուցօղն է ամենայն փափակս սրտից մարդկան, իրաւի լցոյց զփափակս սրտից իմոց, որ եկեալ ի քաղաքս* Կաֆա, *գտի զայս արքայական Գիրքս աշխարհակալ թագաւորին* Աղէքսանդրու *յոյժ վայելուչ եւ գեղեցիկ շարադրանօք եւ ոսկէզօծ գրով ի վերայ մաքրաթի գեղեցիկ շարադրանօք գրեալ։ Կարի ախորժ թուեցաւ զպատմութիւն նորին յաչս իմ, զիրէ փոքր // (61բ) էր՝ իբրեւ փոքրիկ* Ոսկանի *Սաղմոսարան, եւ ես սակս փոքրկութեանն ցանկացայ գնել զնա դրամօք իմովք,*

չեղեւ հնար վաջառելոյ: Եւ այնորիկ բազում աշխատութեամբ ձեռօք իմօք գրեցի: Բայց աղաչեմ զձեզ, ո՛վ ընթերցօղք, աղալանաց իմոց ներումն արասջիք, զէրէ անսղալ միայն Աստուած է, եւ ոչ էր հմուտ արհեստին քերթողից եւ քերականութեան եւ շարադրութեան տառից. կար մեր այսքան էր, մի՛ մեղադրէք զանպիտան գծողս, այլ եթէ կամիք սրբագրել, ըստ ձեր կամացն եղիցի: Նաեւ յիշեսջիք ի մաքրափայլ յաղօթս ձեր զվերոյգրեցեալ հօրեղբայրն իմ ըստ մարմնոյ եւ հոգեւոր հայրն իմ՝ զտէր Եղիազար *արհիեպիսկոպոսն, որ հրամանաւ* Յակոբ *աստուածաբան պատրիարգին* Պօլսոյ *եղեւ առաջնորդ* Կաֆայու Զարխափան Սուրբ Աստուածածնին, *եւ ես մեղսամածս ընդ նմա սպասաւոր եւ ոտից փոշի եղեալ էի: Իսկ յօժարութեամբ երկսցունցս սրտի գրեցաւ յիշատակս անջնջելի մեր նախնեացն եւ մեր հոգոյն: Ով ոք որ հանդիպիք սմա ընթեռնելով եւ կամ օրինակելով եւ կամ շահելով ի յընթեռնուլն, հոգեւոր եթէ մարմնով, աղաչեմ զձեզ, միով Հայր մերիւ զվերոյգրեալքս յիշել, եւ դուք յիշեալ լիջիք ի միւսանգամ գալստեանն Յիսուսի Քրիստոսի, որ է օրհնեալ յաւիտեանս. ամէն: Հայր:*

Նաեւ, ո՛վ բարեսէր ընթերցօղք, ի ընթեռնուլն ձեր ուր—ուրեք, որ հանդիպիք ի վերա տառից զայս նշանիս (ѕ), ի բաց թողջիք զնա զի աւելորդաց է նա, բաց ի նոմոսացն Թագաւորաց, որ ամենեցուն գլուխքն դրեալ կան զայս վերոյյիշեցեալ նշանն, որ է սա (մ): Այլեւ գտանի մէջ սորա նշանագիր ի հնոց նշանագրաց: Մի ձանձրանայք եւ կամ բամբասէք զմեզ, նորին օրինակն // (62ա) ի ստւարտ տեսէք թէ զինչ են... (տե՛ս § Բ): Եւ սոքա ամենեքեան գրեցան ի Նաւասարդի 24, ի Թշրին 19, հոգտեմպերի 7, ի Պաղակիթ ամսոյ 28, որ է օրհնեալ յաւիտեանս: Որպէս ուրախութիւն է նաւելոցն ի նաւահանգիստն այնպէս գրչին՝ վերջին կէտն: Վերջ:

114բ Տէր Աստուած, սիրտ քարացեալ բռնաւորաց քաղցրասցի ի վերայ ամենայն քրիստոնէից, մանաւանդ տառապեալ ազգիս մերոյ եւ փծուն գրչիս՝ Գրիգորի Սիւնեցւոյ *իբր սեւաւորի, եւ ձեզ ընդերձօղացդ եւ որք զՈղորմին յիշատակօղացդ. ամէն: 355 (այսպէս) թվին:*

137ա... եւ մանաւանդ գծողի տառիս՝ Գրիգոր *իբր աբեղայիս* Սիւնեցւոյ...:

1782
ԺՈՂՈՎԱԾՈՅ

Կոգոլով ՌՃԱ — ՌՃԳ 1652 — 1654

Ա. *2ա—61բ* Պատմութիւն Մեծի յաշխարհական Աղէկսանդր Մակեդոնացոյն. կեանք վարուց բաջութեան միչեւ ի վաղչան նշանաւ — *Խմաստունքն* եգիպտացոցն *յերկրի...*

Ջունի գլխաբաժանում: Պատմողական խօսքը սակաւ է. գերիշխում են կաֆանները:

ա. *2աբ կֆ. Ով շ(=վ)ատշէր* Նեֆդանիբոս... *(2 տուն):*

բ. *2բ կֆ. Զլականն եդեալ իւր յառաջի... (1):*

գ. *3բ կֆ. Զմըսըր տըւեր, զո՞յ առեր... (2):*

դ. *4ա կֆ. Ծեր ալեաւք եւ շուն մըտաւք... (2):*

ե. *4ա կֆ. Ծոյլ եւ ծանեակ յաշխարհաւեր... (1):*

զ. *4բ կֆ. Զստուեր երազդ, որ տեսար... (3):*

է. *5ա կֆ. Մոգքն հնարիւք քէնէ հարեց... (5):*

ը. *5բ կֆ. Տեսանէ Տերն նահանջաման... (4):*

թ. *5բ—6ա կֆ. Կինն որ խալատի մեղաւք... (5):*


ժ. *6բ կֆ. Զի, ըզքեզ գոլել կամիմ... (2):*

ժա. *6բ—7ա կֆ. Արժան և իրաւ է խիստ... (2):*


ժբ. *7աբ կֆ. Թէպէտ կարի ուսուցանէ... (10):*

ժգ. *7բ—8ա կֆ.* Արիստոտէլ *հարցմունք լինի... (6):*

ժդ. *8բ կֆ. Զմանուկն ի յորոցքն ընտրէ... (5):*



Նմուշ՝ 50ա



Նմուշ՝ 177ա

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ — Ճ ա կ ա տ ա գ ա ր դ՝ 2ա, 99բ: Լ ու ս ա ն ց ա գ ա ր դ՝ բուսական (123ա): Ջ ա ր դ ա գ ի ր՝ հանգուցագիր, թուչնագիր: Գ ո յ ն ե ր՝ կարմիր, կապոյտ:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. լուսանցային մասերում փոխրիկ պատռուածքներ, Ա պրակից առաջ երեւում են կտրուած հանուած մի ամբողջ պրակի հետքեր: Կազմի կաշին՝ թեթեւակի ճեռծուած, կապիչներն՝ ընկած:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

ժե. *8բ–9ա կֆ. Հնազանդ լեր առ հայր որդոյ… (3)։*

ժզ. *9բ–10ա կֆ. Տէր մանուկ, տըղայ պարոն… (9)։*

ժէ. *10աբ կֆ. Ես ձեր միջնորդ այսաւր լնիմ… (4)։*

ժը. *10բ կֆ Ումըն պարսիկ յառաջագոյն… (2)։*

ժթ. *10բ–1ա կֆ.* Փիլիպպոս *նստեալ աթոռ… (6)։*

ի. *11բ կֆ.* Պոսիաճոս *հսկայաձեւ… (5)։*

իա. *12աբ կֆ. Գայ Իտալիեա գաւառն… (5)։*

իբ. *13բ–4ա կֆ. Խրատ մի տամ, հզաւր արքայ… (4)։*

իգ. *14ա կֆ. Ի շինուածեան Հսբընդէրիայի… (2)։*

իդ. *14բ կֆ. Ի սպարապետն* Մեբենի*… (5)։*

իե. *15ա կֆ. Մարմինն է ի խոտ նըման… (4)։*

իզ. *15աբ կֆ. Այս է պատկեր հաւրըն քոյ… (3)։*

իէ. *16ա կֆ. Ծուրածայ եղեր դանայնըման… (4)։*

իը. *16բ–7բ կֆ. Հսէնդէր հրաման երեւ… (14)։*

իթ. *18ա կֆ. Այս են դեսպանքըն* Դարեհի*… (5)։*

լ. *18բ կֆ.* Դանիշըն *ձեր ու շատ թէպտիր… (7)։*

լա. *20ա կֆ. Ոչ ոք չըկայ ըզդայ բարձաւղ… (1)։*

լբ. *20ա կֆ.* Երբակն *ի պատկերն երեւ… (4)։*

լգ. *20բ կֆ. Այս* Հոմերոս Զըմեռնացի*… (3)։*

լդ. *20բ–1ա կֆ. Վազ նա քիչն ի գետն յարձակ… (3)։*

լե. *21բ կֆ. Ապայ եհաս առ* Լոկրացիս*… (2)։*

լզ. *22ա կֆ. Քաշամարտիք եւ յահագին… (2)։*

լէ. *22աբ կֆ. Այս* Իսմերիոս *երգիչ… (7)։*

լը. *23ա կֆ. Թագաւոր, թէ յականջ դնես… (2)։*

լթ. *23ա կֆ.* Կլիմաճոս *գրէ հրուչակ… (4)։*

խ. *23բ կֆ. Այսաւր փոխարէն յառնեմ… (2)։*

խա. *24ա կֆ. Աթենացիքն են վրդովել… (2)։*

խբ. *24բ կֆ. Կարի անմիտ էք դուք… (2)։*

խգ. *24բ կֆ. Այսաւր յ*Աթենացոց *հրեշտակն… (2)։*

խդ. *25ա կֆ. Ո՛վ բնակիչք* Մակեդոնայ*… (1)։*

խե. *25բ–6ա կֆ. Սակայն ցաւ պատեց զարքայն… (6)։*

խզ. *26բ–7ա կֆ. Պարսիկն որ յետոյ անցեալ… (7)։*

խէ. *28ա կֆ. Ըզհաւատս է ի բաց առեր… (3)։*

խը. *28բ կֆ. Այս արքայն ի քուն եղեալ ննջէ… (7)։*

խթ. *29ա կֆ. Անդ, որ ընկա գետն անցանելով… (4)։*

ծ. *29աբ կֆ. Ասայ ինձ, թէ ո՞վ ես դու… (10)։*

ծա. *29բ–30բ կֆ. Վա՛յ* Աղեքսանդրի *ասեմ… (12)։*

ծբ. *31ա կֆ. Անվախ ու հըզաւր արքայ… (5)։*

ծգ. *31աբ կֆ.* Քսեբսի *պատկերքն ի վայր անկան… (5)։*

ծդ. *32ա կֆ. Աւա՛խ, թէ գիտել կարէի… (4)։*

ծե. *32բ կֆ. Յոյժ տարէկուսեա* Դարեհ*… (6)։*

ծզ. *33աբ կֆ.* Ջ*Դարեհն ի մէջ առեալ… (7)։*

ծէ. *34ա կֆ. Յորժամ չարխըն ի յետ քակի… (4)։*

ծը. *34ա կֆ. Երբ յ*Աղեքսան[դ]րոս *զայն լըսեց… (3)։*

ծթ. *34բ կֆ. Երբուիմ Արարիչն Աստուած… (6)։*

կ. *34բ–5ա կֆ. Փա՛ռք քեզ, Արարիչ Աստուած… (2)։*

կա. *35բ կֆ. Ճորտն, որ պարոնին նենգէ… (3)։*

կբ. *35բ–6ա կֆ. Վա՛յ զքոյ մայրն,* Հոոդոգոնէ*… (4)։*

կգ. *37ա կֆ. Այս տնկածու մարդիքս անբով… (2)։*

կդ. *37ա [կֆ]. Այս են հակայքըն վայրենի… (2)։*

կե. *37բ կֆ. Իսկ ի յայրին նոքա մըտեալ… (4)։*

կզ. *38ա կֆ. Յերեսնից կանկոնց երկան… (2)։*

կէ. *38աբ կֆ. Անունդ յաւրհնեալ յարարչական… (2)։*

կը. *38բ կֆ. Գազանս, որ եկուլ զնաւս… (2)։*

կթ. *39ա կֆ. Հաւք խաւսին մարդկան երգաւք… (3)։*

հ. *40ա կֆ.* Պովրոս *թագաւոր* Հնդկաց*… (5)։*

հա. *40աբ կֆ. Գիրն էր ի ձեռին առեալ… (4)։*

հբ. *41աբ կֆ. Եւ անհոգաց այսաւր ի կուռյ… (3)։*

հգ. *41բ–2ա կֆ. Առ քեզ մենամարտըկի… (9)։*

հդ. *42ա կֆ. Վա՛յ այս* Պովրոսիս *ասեմ… (2)։*

հե. *43ա կֆ. Բարակամանք իմաստասէրք… (2)։*

հզ. *44ա կֆ. Այս բռնաժանի գազանս… (2)։*

հէ. *45ա կֆ. Խաւսուն եւ յուսուն ծառերդ… (3)։*

հը. *46աբ կֆ. Արի եւ քաջանց նըման… (10)։*

հթ. *47ա [կֆ]. Այսաւր քեզ յաւանդ կու տամ… (3)։*

ձ. *48ա կֆ. Այս է տաճարըն* Կանդակէ*… (2)։*

ձա. *48աբ կֆ. Բեր զշուտդ ի վեր, հոգի… (6)։*

ձբ. *49ա կֆ. Ընծայս է առաջ բերեր… (4)։*

ձգ. *50աբ կֆ. Դեսպան եկեալ* Ամազուի*… (3)։*

ձդ. *51ա կֆ. Յամազուի կին յառաջ մատին… (4)։*

ձե. *52աբ կֆ. Տեսեալ բագին, եւ հարցանէ… (3)։*

ձզ. *52բ–3ա կֆ. Ո՛վ քաղդէացի, ասայ… (4)։*

ձէ. *53ա կֆ. Ի ծունդր իջեալ յաղաւթական… (3)։*

ձը. *53բ–4ա կֆ.* Իսկանդարեայ *բախեալ զՈւղղոս… (7)։*

ձթ. *54բ կֆ.* Ֆելէք*, որ զանմիտ մարդըն… (10)։*

ղ. *55ա կֆ. Մակեդոնացիք եկեալ ի տեսիլ… (3)։*

ղա. *55աբ կֆ. Գըրեաց կտակ անդարձական… (4)։*

ղբ. *55բ կֆ. Հուրդ, որ ըզքո սիրտըդ վառեց անշիջանելի... (1)։*

ղգ. *57աբ կֆ. Ո՛վ պարոնին նենգ ջանայ... (5)։*

ղդ. *58ա կֆ. Դադարեցար, յԱղէքսան[դ]րէ... (3)։*

ղե. *58բ կֆ. Ո՛վ հրաշալիդ Պտղոմէոս... (3)։*

ղզ. *58բ–9ա կֆ. Այս քաղաքն յԱղէքսան[դ]րէ... (5)։*

ղէ. *60ա կֆ. Ընդիր գոված եւ երեսբախտ... (2)*

Յիշատակարան խաչատրոյ Կեչառեցւոյ *տե՛ս* ձեռ. 1781, 60բ—1ա։

Բ. 1. *62ա–72բ* [Դիոնիսիոսի Թրակացւոյ] Յաղագս ճեռականութեան

Տե՛ս ձեռ. 267, 229ա—42բ. *§ ա/62ա։ բ/62ա։ գ/62աբ։ դ/62բ։ ե/62բ։ զ/62բ–3բ։ է/63բ։ ը/63բ–4ա։ թ/64ա։ ժ/64աբ։ ժա/64բ։ ժբ/64բ։ ժգ/64բ–7ա։ ժդ/67աբ։ ժե/67բ–8ա։ ժզ/68ա։ ժէ/68ա։ ժը/68աբ։ ժթ/68բ–9ա։ ի/69աբ։ իա/69բ–70բ։ իբ/70բ։ իգ/70բ–1ա։ իդ/71ա–3բ։*

2. *73բ–6ա* Մեկնութիւն բառից ճերակնութիւն (Ճերականի) – *Վերլուծութիւն՝ ընթերցողութեան...*

3. *76աբ* Մովսէսի Խորենացոյ Բան իմաստութեան – *ՅԱստուածոյ խորհրդով եւ իմաստութեամբ հաստատեցաւ մարդկայինս տեսակ...*

4. *76բ–99ա* Ճերականութիւն է Ը (8) մասանց բանի

ա. *77ա–81բ* [Յաղագս բանի] – *Ջի՞նչ է բանն։ Բան է հետեւակ բառի...*

բ. *81բ–5ա* Յաղագս բայի – *Հարց. Ջինչ է բա[յ]։ Պատասխանի. Բայ է բառ անհոլով...*

գ. *85ա–9բ* Յաղագս լծորդութեան – *Է՞ր ասի լծորդութիւն է կարգութիւն...*

դ. *89բ–90բ* Յաղագս ընդունելութեան – *Հարց. Ընդունելութիւն է բառ...*

ե. *90բ–2ա* Յաղագս յատի – *Հարց. Յաւդ է մասն բանի հոլովական նախադասեալ...*

զ. *92ա–3ա* Յաղագս դերան[ունու]թեան – *Հարց. Ջի՞նչ է դերանունութիւն...*

է. *93բ – 4բ* Նախադրութիւն – *Հարց. Ջի՞նչ է որ ասէ. նախադրութիւն...*

ը. *94բ–8ա* Յաղագս – *Ջի՞նչ է մակբայ։ Պատասխանի. Մակբայ է մասն բանի...*

թ. *98ա–9ա* Յաղագս շաղկապի – *Շաղկապ է մասն բանի...*

5. *99ա–110բ* Սահման Ճերականութեան

Տե՛ս ձեռ. 841, 120ա—30բ. *1. ա/99բ։ բ/99բ–100ա։ գ/100ա։ դ/100ա։ ե/100աբ։ զ/100բ–2բ։ է/102բ–5ա։ ը/105աբ։ թ/105բ։ ժ/105բ–7ա։ ժա/107աբ։ ժբ/107բ–9ա։ ժգ/109աբ։ 2. ա/109բ–10ա։ բ/110աբ։ գ/110բ։*

Գ. [Բանիբ զանազանիբ]

1. *110բ–4բ* [Ա]. Յովհաննէս վարդապետի եզբնկացոյ Խրատ հոգէշահ... – *Արար Աստուած զմարդն հոգի...*

2. *114բ–9ա* Բ. Վկայասիրի եղբաւր տեառն Ներսէսի կաթողիկոսի ասացեալ – *Դարձեալ պատգամք ի վեր քրիստոնէից...*

3. *119ա–21բ* Գ. Գրիգորիսի ասացեալ Բան խրատու հոգոց – *Ես՝ ծառայ Աստուծոյ եւ ընդերցող...*

4. *122աբ* Սուրբն Պաւղոս Առ Եփրայեցիս ԺԲ. Հայեցարուք ի զօրայգլուխն հաւատոց... – *Ոչ գիտեմ, եթէ ոք գտանիցի ոք...*

Դ. *123ա–61բ* [Քարոզգիրք]

ա. *123ա–4բ* Գլուխն Ա – *Աստուած սիրեաց զաշխարհս...*

բ. *124բ* Բ գլուխն – *Խորհեա եւս եւ զազնուականն...*

գ. *124բ–6ա* Գ գլուխն – *Եւ եթէ զնայ սիրել կամիս...*

դ. *126ա–7բ* Դ գլուխն – *Առ ի հասանելն փրկութեան...*

ե. *127բ–8ա* Ե գլուխն – *Ազաւթելով ի վերայ թշնամոյն քոյ...*

զ. *128աբ* Զ գլուխն – *Ո՛վ մեղսասէր մարդ...*

է. *128բ–30ա* Է գլուխն – *Յիշեայ, ո՛վ մարդ, զարժանաւորութիւնս քոյ...*

ը. *130աբ* Ը գլուխն – *Հայեաց յանձն, ո՛վ տառապելի մարդ...*

թ. *130բ–2ա* Թ գլուխն – *Յիշեայ, զի պանդուխտ եւ օտար ես...*

ժ. *132ա–4բ* Ժ գլուխն – *Ահաւասիկ լուար, թէ որպէս սուտ եւ յանցաւոր...*

ժա. *134բ–6ա* ԺԱ գլուխն – *Խոտորեայ եւս ի հպարտութենէ...*

ժբ. *136ա–7ա* ԺԲ գլուխն է այս – *Յիշեա զստութիւն յաշխարհիս...*

ժգ. *137աբ* Կանոն ԺԳ գլուխն – *Ի ճանապարհս Տեառն գոլով, զղջասցիր...*

ժդ. *137բ–8ա* ԺԴ գլուխն – *Եւ եթէ կամիս, զի ապաշխարութիւնդ...*

ժե. *138ա–9բ* ԺԵ գլուխն – *Եկեալ առ քահանայն ծունգր դիր...*

ժզ. *139բ–40ա* ԺԶ գլուխն – *Եւ եթէ զմեղս քո ոչ խոստովանիս...*

ժէ. *140աբ* ԺԷ գլուխ – *Մի յահացուցանիցէ զքեզ յերկիւղ քահանային...*

ժը. *140բ–1բ* ԺԸ գլուխն – *Արդ, եթէ խորհեսցիս, թէ զինչ չարգուտ է խոստովանութիւն...*

ժթ. *141բ–3ա* ԺԹ գլուխն – *Յետ սրբոյ խոստովանութեան...*

ի. *143ա—4ա* Ի գլուխն — *Ոչ միայն արտասուք հարկաւոր են յաղաւթից…*

իա. *144ա—5ա* ԻԱ գլուխն — *Ոչ միայն արտասուք…*

իբ. *145ա—6ա* ԻԲ գլուխն — *Եւ զողորմութիւնս եւս վաստակոց…*

իգ. *145բ—6ա* ԻԳ գլուխն — *Եւ յորժամ զբարի ինչ գործես…*

իդ. *146ա—7ա* ԻԴ գլուխն — *Յիշեայ զմեռանելդ…*

իե. *147ա—9բ* ԻԵ գլուխն — *Ումն կրաւնաւոր ի կարգէ քարոզողաց…*

իզ. *149բ—51բ* ԻԶ գլուխն ասէ Բառոզ — *Յետ մահուան յահաւոր դատաստանն գայ…*

իէ. *151բ—4ա* ԻԷ գլուխն ասէ — *Որպէս ոչ ինչ է ըստուգագոյն քան զմահ…*

իը. *154ա—5ա* ԻԸ. Յաղագս դատաստանին — *Բազում պատճառք են, որք զարթուցանեն…*

իթ. *155ա—7ա* ԻԹ գլուխն. Յաղագս դժոխոցն — *Յիշեցից եւս եւ զդժոխս…*

լ. *157ա—9ա* Լ գլուխն — *Զարքայութիւնն երկնից պատրաստեաց…*

լա. *159ա—60ա* ԼԱ գլուխն — *Եւ զի գիտասցես որոյ պատրաստեալ է…*

լբ. *160ա—1բ* ԼԲ գլուխն. Սուտ մարգարէից — *Պարտ է եւս զգուշ լինել…*

Ե. ա. *161բ—3բ* Խրատ գեղեցիկ առ ի հաղորդելն մարմնոյ եւ յարեան Որդոյն Աստուծոյ, ուրեմն վարդապետին ի կարգէ քարոզողաց՝ անուանելոյն Թումասի (Ագուինացւոյ): Բանի Տեառն — *Եկայք առ իս, ամենայն յաշխատեալք…*

բ. *164ա—5բ* Ո՛վ սիրելի յաղաւնի…

գ. *165բ—8ա* Յաղագս բահանայից — *Ամենակալն Աստուած կարգեաց զքահանայս…*

դ. *168ա—9ա* Յաղագս բրիստոնէութեան կենաց կարճառաւտ խրատ — *Եթէ հաճոյանալ Աստուծոյ կամիս…*

ե. *169աբ* Յաղագս չար կանանց — *Ի կին մարդոյ եւս պարտ է փախչիլ…*

Զ. *170ա—6ա* [Ասարայ Սեբաստացւոյ] Տումար առեգական եւ լուսնի…

Տե՛ս ձեռ. 680, 231ա—8ա. § ա/*170ա*: բ/*չիք*: գ/*170բ—6ա*:

170ա Գրչից. «*Եւ սայ եղեալ մաքրամիտ եւ հանճարեղ իմաստուն յուսումնասիրաց* Ասար Սեբաստացի *սարկաւագի*»:

է. [Յաւելագրութիւնք ժէ դ.]

1. *177ա—8ա* Պատմութիւն բառեղեն պատկերին, որ ի վերուստ պարգեւեցաւ եւ յԱստուծոյ տուաւ — *Յետ ժամանակի ինչ… այր ումն էր ի քաղաքէն, որում անուն էր* Հերակլի *քաղաք, անունն* Աթանագինէս…

2. *178ա* Գիր գոզկապի — Անանեայ, Ազարիայ, *ի ձիով, ի ջորով…*

3. *179բ* Մեծի նազելոյդ իմոյ — *Ոչինչ բերաք աշխարհս եւ ոչինչ եմք տանելոց, / Մերկ եկինք եւ մերկ եմք գնալոց:*


ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

114բ Ջծոյլս ի բարիս
Եւ զարագս ի չարիս,
Ջգծող՝ տէր Յակոբիս
Մի՛ մոռանայցես
Յիշել ի բարիս:
121բ Գրեցաւ ի թվին ՌՃԳ (1654)
Մեղապարտ գրչիս՝
Տէր Յակոբ *մեղաւորիս:*
169բ Գրեցաւ թվին ՌՃԳ (1654). յաւարտ գրոյս մարտի Ը (8), յաւրն ե՟ շաբաթի, մեղաւոր քահանայիս՝ Յակոբ *իրիցու. ամէն:*
170ա… Եւ գրեցաւ սայ ձեռամբ մեղաւոր եւ անպիտան եւ անարժան Տիւրիկցի Յակոբ *քահանայիս, ի քաղաքն* Կաւզլով, *թվին ՌՃԼ (1652):*
Եւ Քրիստոսի փառք յաւիտեանս. ամէն:
ԿՆՔԱԴՐՈՇՄ 2ա, 2բ, 169բ Գիրքս Սուրբ Էջմիածնա *է: 38ա, 62ա, 99բ (բոլորշի, անընթեռնելի):*
ԳՐՉԱՓՈՐՁ 1աբ Տէր Յոճ[ան]էս *յեպիսկոպոս, դիր զմեղս ի վեր այնոց… 178բ Յիսուս՝ որդի Դաւթի, ողորմեայ ծառայիդ…*

1783
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՂԷՔՍԱՆԴՐ ՄԱԿԵՆԴՈՆԱՑԻՈՑ

ԺԸ — XVIII

ԹԵՐԹ՝ 74. չգրուած՝ 1ա, 73բ—4ա: ՊՐԱԿ՝ 1x1 + Ա—Ջx12: ՆԻՒԹ՝ թուղթ, լուսագծերով: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն: ԳԻՐ՝ նօտրգիր: ՏՈՂ՝ 26: ԿԱԶՄ՝ վարդագոյն մոմլաթ, թիկունքը՝ կապոյտ գործուածք, միջուկը՝ ստուարաթուղթ, աստառը՝ թուղթ: ՊԱՀՊԱՆԱԿ՝ 1 + 1, թուղթ, մասն աստառի (Ի դ.):



Նմուշ՝ 13ա
ՎԻՃԱԿ՝ բաւարար. տեղ—տեղ թանաքի բծեր։

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

1. *1բ* [Վասն Աղէքսանդրի Մակեդոնացւոյ] — *Զկնի 224 ամացն* Կիւրոսի Պարսից *արքային…*

2. *2ա—72ա* Պատմութիւն Մեծի իսկական կայսերն Աղէքսանդրի աշխարհակալ թագաւորին Մակեդոնացւոյ

ա. *2ա—7բ* Իմաստունքն եգիպտացւոց երկրին…

3ա Գրչից. «Այս տեղս սուրաթ պիտի»։ 6բ «Այս տեղս պատկեր պիտի»։

բ. *8ա—9բ* Վասն ծննդեան արեային Աղէքսանդրի մեծի — *եւ* Փիլիպպոս *երանի տայր անձին իւրոյ…*

գ. *9բ—36ա* Գործք Մեծին Աղէքսանդրի — *եւ* Աղէքսանդրոս *աճէր եւ զարգանայր…*

դ. *36բ—9բ* Սպանումն Դարեհի, Բեսոսի եւ Զաուիվարդանայ — *եւ ի գարն[անային] եղելոյ եղանակին…*

ե. *40ա—61բ* Թուխտ Հռոգոնեայ եւ Ստատիրայ առ Աղէքսանդրոս արեայ (եւ բանիւ զկին) — Հռոգոնեայ *եւ* Ստատիրեայ՝ *թագաւորի* Աղէքսանդրի *խնդալ…*

զ. *61բ—72ա* Յաղագս դատյն Անթիպատրայ եւ այլոց բարեկամացն, եւ սակս մահաղեղին վէպ (եւ ողբ) — *Մինչդեռ Մեծն* Աղէքսանդրոս *ի* Բաբիլոն *էր… եւ այսպիսի ողբագին ձայնիւ զմահաբեր գուժն յորդորէին։*

68ա Գրչից. «Այս տեղս Ա Թուխտ պակաս էր»։

— *[Յիշատակարան նախագաղափար օրինակի] Որք լսէք զաղիողորմ բառառնութիւնս զայս, զյարմարագրօղ եւ ժողովօղ պատմութեանս՝ զխաչատուր Կեչառացին յիշեցէք, զոր եւ հեթանոսական անմիաբան գրելեացն սա ժողովեալ եւ աշխատութեամբ հաւաքեալ՝ զստոյգն գրեալ է զայս։*

Տե՛ս ձեռ. 1782, 2ա—61բ։ Այստեղ գերիշխում է պատմողական խոսքը։ Ունի սակաւաթիւ կաֆաներ։

3. [Կաֆայք]

ա. *3ա Ով վատաշուէր* Նեթթանիփոս… *(2 տուն)։*

բ. *3ա Զլականն եդեալ յառաջի… (1)։*

գ. *3բ Զմարը տուեր ու զո՞վ առեր… (2)։*

դ. *5ա Ծեր ալեօք եւ շուն մտօք (ի լուսանցս «մորւօք»)… (2)։*

ե. *5բ Ծոյլ եւ տկար աշխարհաւեր… (1)։*

զ. *6բ Զատուեր երազդ, զոր դու տեսեր… (1)։*

է. *7աբ Մոգքն հնարիւք ի նա հայեաց… (3)։*

ը. *64բ* Կաֆայ է — *Աւաղ իմ աւուրքս ու զկեանքս… (6)։*

թ. *66բ Զուր խնդրեաց ի զովացումն… (3)։*

ժ. *67աբ* Կաֆայ է — *Ազդեցէք ի* Տունն Պարսից *եւ ասացէք հօրն իմոյ* Դարեհի… *(10)։*

ժա. *68ա Այս է հրաշք, որ երեւեցաւ… (2)։*

ժբ. *68բ Այս քաղաք* Աղէքսանդրի է… *(1)։*

ժգ. *70ա* [Ողբ] — *Մայրք մանկագունից, լացէք… (2)։*

ժդ. *70բ—1ա* Ողբ — *Այ իմ միամօր որդի* Աղէքսանդր… *(2)։*

ժե. *71ա* Կնոջն է… — Իսկ ենդէր *արքայից արքայ… (2)։*

§ ա—է, թ, ժբ հմմտ. ձեռ. 1682, 2ա—61բ, § ա—է, ղգ (3—4 տները), ղզ։

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

74բ (Ծածկագի՞ր)
իացիւ վտու փք վկցգ շզչն սոտ օւդգի
պտիկցւ պփքօիշեւբ զօեբթժապ
բպտշչծ պղաց տպսոիրցւփք եւ օ
ղզշտավան ձաճնայմոտ պսիխաս
իտպակացւփք եւ օիքտլրտ պզչշօ
ոտիցքկ աբգ դեգէը թժիլխծ։

Յիսուս Քրիստոս Հայր Աստուած Աստուծոյ՝ Սարգիս։

ԳՐՉԱՓՈՐՁ 72բ Ալլեւ երկարակեաց առնէ, որպէս ասէ եզեկիէլ…։ 73ա Աբրահամ, Անդրիաս, Անդակում… էրթի, օրի, սմահ…։ 74բ Մկրտիչ, Ներսէս։ Ի յայս անգայուն եւ սուտ աշխարհէս…։ Մարփորձ արարի ես՝ անարժան Գրիգորս։

1784
Ժ Ո Ղ Ո Վ Ա Ծ Ո Յ
(Բաղկացած է 2 տարբեր ձեռագրերից)


ԹԵՐԹ՝ 261—10 (տե՛ս Պահպանակ)։ ԿԱՋՄ՝ դրոշմազարդ շագանակագոյն կաշի՝ դռնակով, միջուկը՝ տախտակ, աստառը՝ թուղթ (Ի դ.)։ ՊԱՀՊԱՆԱԿ՝ 1(Ա.) + 2(1—2) + 8(254—261) + 1(Բ), թուղթ։

Վիճակ՝ բաւարար. կազմի կաշին՝ ետծուած, եզրերը՝ մաշուած, դռնակի կաշին՝ կիսով չափ պատռուած ընկած:


Ձ Ե Ռ Ա Գ Ի Ր Ս

ԺԷ — XVII

Թերթ՝ 217 (3—219). չգրուած՝ 3ա—4բ, 219աբ: ՊՐԱԿ՝ Ա—Իx12 (Ձ/է 8, ԺԸ 13, Ի 4): Նիւթ՝ թուղթ, լուսագծերով եւ «SS» լուսադրոշմով: Մեծութիւն՝ 20,7x15: Գրութիւն՝ միասիւն: Գիր՝ նօտրգիր (ԺԸ դ. լրացնողի՝ 199աբ, 216ա—8բ): Տող՝ 26:



Նմուշ՝ 38ա



Նմուշ՝ 199ա

Մանրանկարզութիւն — Կիսախորան՝ 5ա: Ճակատազարդ՝ 26ա: Լուսանցազարդ՝ բուսական: Զարդագիր՝ թոչնագիր: Գոյներ՝ կարմիր, կապոյտ, դեղին:

Վիճակ՝ բաւարար. միջից պակասաւոր: ԺԸ դ. նորոգուած, լրացուած՝ 199աբ, 216ա—8բ:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Ա. *5ա—26ա* Պատմութիւն վարուց սրբոյն Ներսէսի (ի լուսանցս այլ ձեռ՝ Շնորհալւոյ) կաթողիկոսի եւ տիեզերալոյս իմաստասիրի, սկսեալ ի նախնեաց անտի — *Աստուածային անբաւ գթութեանցն շնորհ…*

— *26ա* [Յիշատակարան նախագաղափար օրինակի] *Իսկ ի թուականութեանս Հայոց ՉԻԲ (1273), զկնի ճՄ (101) ամի վերափոխման սուրբ հայրապետին* Ներսէսի, *ի հրամանէ հօր* Ստեփաննոսէ *աստուածազարդ մերոյ եւ սպասաւորէ* Սուրբ ուխտիս՝ Ականց *յանապատիս, շարագրեցաւ Պատմութիւն սուրբ հայրապետին* Ներսէսի *ի իւրոց նախնեացն ճշտաճառ եւ անսուտ պատմութեամբ սուրբ հայրապետին, ի ժամանակս քրիստոսապսակեալ բարեպաշտ թագաւորին Հայոց* Լեւոնի, *որդւոյ թագաւորին* Հեթմոյ *յաշխարհս* Կիլիկեցոց: *Արդ, վայելողք Սրբոյ արանցս պատմութեան, յիշեսջիք սիրով ի Քրիստոս զվերոյ նշանակեալ պատուական հայրն՝* Ստեփաննոս *եւ զամենայն եղբայրութիւն սուրբ ուխտիս՝ զմեծ եւ զփոքր զքահանայս եւ զկրօնաւորս ի մշտամատոյց յաղօթս ձեր, եւ Աստուած զձեզ յիշեցուսցէ յողորմութիւնն իւր. ամէն:*

Տե՛ս տպ. «Սոփերք Հայկականք», ԺԴ: Յիշատակարանի տուեալները տարբեր:

Բ. *26ա—92ա* Պատճառ խնդրոյ միաբանութեան թագաւորին Հոռոմց եմմանուէլի եւ սրբոյ կաթողիկոսացն Հայոց թուղթ, զոր գրեցին առ միմեանս

Տե՛ս նեռ. 500, 66բ—191բ. § ա/26ա—8ա: բ/28ա—39ա: գ/39ա—40բ: դ/40բ—6բ: ե/46բ—52բ: զ/52բ—61ա: է/61ա—2ա: ը/62ա—6բ: (66բ տե՛ս ստորեւ § Գ): թ—ժ/չիք: ժա/67ա—8բ: ժբ/68բ—9ա: ժգ/69ա—72ա: ժդ/72ա—4ա: ժե/74ա—7բ: ժզ/77բ—80բ: ժէ/80բ—7ա: ժը/87ա—92ա: ժթ—իա/չիք:

Գ. *66բ* Պատմութիւն Հայոց: Գլուխ ԻԱ — *Տէր* Ներսէս Կայեցի *տիեզերական վարդապետ… եւ բղխումն Հոգոյն Սրբոյ ի Հօրէ /// (շար. թափուած):*

Տե՛ս տպ.. Կղեմէս Գալանոս, Միաբանութիւն Հայոց սուրբ եկեղեցւոյն…, հատոր Ա, Հռոմ, 1650 էջ 238—239:

Դ. 1. *92ա—119ա* Թուղթ տեառն Գրիգորիսի կաթողիկոսի Հայոց, գրեալ եղբօր նորին Ներսէսի եպիսկոպոսի, հրամանաւ նորին ի Միջագետս Ասորոց… ի խնդրոյ որումն աստուածասիրի Առիւծ անուն իշխանի Թլկուրանն ասանի — *Որ թէպէտ եւ տէրունական հրամանն յորդորէ…*

2. *119աբ* Նորին տեառն Ներսէսի գրեալ առ եղբօրորդին իւր՝ Ապիրատն ի Կոստանդինուպոլիս («Առ Ապիրատն տէր Ներսիսէ բան չարփով սա ըյո») — *Արեգական լուսոյ ծագման, / Սէր քո իս համանըման…*

Ե. 1. *120ա—33ա* [Թուղթ տեառն Ներսիսի կաթողիկոսի Հայոց գրեալ ի զանազան ժամանակս առ այլեւայլ անձինս]

Տե՛ս նեռ. 500, 52ա—66բ. § ա/129ա—33ա (§ ժա—իգ յետոյ): բ/120աբ: գ/120բ—2ա: դ/120աբ: ե/120բ—4ա: զ/124ա—5ա: է/125ա—6ա: ը/126ա: թ/126աբ: ժ/126բ: ժա/126բ—9ա:

2. 133ա—7ա Նորին տեառն Ներսէսի կաթողիկոսի գրեալ Բան մխիթարութեան առ վտանգեալս մարմնով, որ յանբարեաց ոմանց նախատեսեալ եղեն, զոր ծանուցին նմա գրով — *Ընկալայ զգիր թախծանաց…*

3. *137ա—44բ* Թուղթ ի Ներսիսէ արեպիսկոպոսէ Կիլիկեցւոց Տարսոնէ պատասխանի Յուսկան արգելական ճգնաւորի ի մեծն Անտիոք, որում լուծանէ զհարցումն կղերիկոսացն Անտիոքու… — *Գիր քո պատուականութեանդ, երանելի այրդ Աստուծոյ…*

Զ. 1. *144բ—5ա* Տեառն Եփրեմի Խորին Ասորւոյ ասացեալ — *Տօն տարեկանք, զոր կատարեն…*

2. *145աբ* Ի Մնացորդաց մնացորդէն, զոր բազմաջան յուզմամբ հազիւ կարացի գլտանել — *Յորժամ յարոյց Աստուած սատան Սողոմոնի… զոր եւ*

յերիաւոսի գիրան գեղեցիկ յիշատակէ վասն Սողոմոնի:

3. *145բ–56բ* Գիր, որ եղեւ առ Պիւոսէ կրօնաւորէ մակակոչեցելոյ Դոմսապատիու, ի խնդրոյ բարեպաշտ մեծի թագաւորին Փռանկաց ի կղզին Սիկիլիայ Ռոճերին Վասն ե պատրիագացն աթոռոց... — *Ամենամեծատոհմ տէր իմ...*

է. *156բ–99բ* Թուղթ ընդհանրական Ներսէսի կաթողիկոսի Հայոց

Տե՛ս ձեռ. 500, 4ա—51բ. § ա/*156բ–64բ:* բ/*164բ–73բ:* գ/*173բ–5բ:* դ/*176ա–82ա:* ե/*182ա–91բ:* զ/*191բ–6ա:* է/*196ա–7ա:* ը/*197ա–8ա:* թ/*198աբ:* ժ/*198բ–9բ:*

Ը. 1. *200ա–3բ* Թուղթ Պիղատոսի դատաւորին, զոր գրեաց յաղագս Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եւ առաքեաց Տիբերոս կայսրն ի Հռոմ — *Ի ժամանակին յայնմիկ, յետ խաչելութեան Տեառն...*

2. *203բ* Սրբոյն Կիւրղի Երուսաղեմայ հայրապետին — *Զաւիկ Մովսէս ձայնեաց յեգիպտոս...*

3. *203բ* Ի կանոնաց սրբոյն Սահակայ — *Մեծ Լուսաւորիչն արար Իրմացն եպիսկոպոսս...*

Թ. *203բ–13ա* [Ի ժղլանաց Վարդանայ վարդապետի]

ա. *203բ–4ա* Գործատուբ որ ի մարդկան — *Լոյս Բանին եւ պայծառախօսութիւնն ի խելքն ծագէ...*

բ. *203ա* Տաղական բանին ցոյցք — *Իմաստնոյ չէ փոյթ տաղական բան առնել...*

գ. *204բ–5բ* Հարցմունք դշխոյին եւ պատասխանիք Սողոմոնի որդոյ Դաւթի — *Ի՞նչ է Աստուածն քո... Սողոմոն ասէ. Աստուածն իմ է է... 205բ* Բայց առ ի մէնջ եւ դու առակ մի — *Սողոմոն ասէ. Աշտարակ մի զօրաւոր...*

դ. *205բ–8ա* Թուղթ սրբոյ վարդապետին Վարդանայ գրեալ առ թագաւորն Հայոց Լեւոն Հեթում, յորժամ եկին ի պապէն թուղթք, որ ունէր իմեաս եժ—աւն գլուխս բանից, որ խառեցան ի մէջ մեր նոցա, զոր խնդրէին ընդունել եւ բառնալ զպատճառն բաժանման: Եւ սուրբ թագաւորն առաքեաց զնոսա հանդերձ թղթովքն ի Հռոմկլայն առ կաթողիկոսն Հայոց տէր Կոստանդին Վասն բանին մասանց, ի խնդրոյ բարեզարդ հաճանչի Թորոս անուն կոչելոյ եղբօրորդոյ տեառն Կոստանդեայ Հայոց կաթողիկոսի, ի Վարդանայ Աղվանեցւոյ կարճառօտ — *Բանին մասունք Ը (8) են, եւ են այսոքիկ...*

ե. *208ա–10բ* Յաղագս բնութեան զոր հրամայեցէք — *Արտաքին իմաստասէրքն այսպէս ասացին...*

զ. *210բ–3ա* Նորին Վարդանայ վարդապետի Աղօթք տղայոց առ Սուրբ Երրորդութիւնն: Առաւօտուն — *Լոյս համատարած եւ անճառ ճառագայթ...*

Ժ. 1. *213ա–6բ* Վասն ԲԺ—աւն ականցն... — *Երկոտասան ակունքն որ կան ի հին վակասն...*

2. [Վասն լուծողաց, մեկնչաց եւ համառօտողաց Սուրբ Գրոց]

ա. *216բ–7ա Հարց. Ո՞վ ոք է արարեալ զլուծմունս եւ քաղուածու Աստուածաշունչ գրոց: Պատասխանի. ՊԼԲ (1383)* Գրիգոր Տաթեւացին... բ. *217աբ Հարց. Վասն մեկնողաց Աստուածաշունչ գրոց, թէ ո՞վ ոք են արարեալ: Պատասխանի.* Անանիայ վարդապետն *ի Սանահին վանացն... գ. 217բ–8բ* Վասն համառօտողաց Սուրբ գրոց — *Զևրարածքն եւ զՍաղմոսն, զերգ երգոցն եւ զԴանիէլն՝* Վարդան *վարդապետն...*


ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՆԱԽԱԳԱՂԱՓԱՐ ՕՐԻՆԱԿԻ

ԿՆՔԱԴՐՈՇՄ 5ա Նահապետ *վարդապետ: 5ա Գիրքս* Սուրբ Էջմիածնա *է:*

Ջ Ե Ռ Ա Գ Ի Ր Բ

ԺԷ — XVII

ԹԵՐԹ՝ 33 (220—253) + 1 (ներդիր թերթիկ՝ 222 գդ). չգրուած՝ 222բ, 123բ: ՊՐԱԿ՝ ԻԱ—ԻԹ (նախապէս՝ ԻԹ, ԻԶ—ԻԷ)x12 (ԻԱ 9): ՆԻՒԹ՝ թուղթ լուսագծերով: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 20,7x15: ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն: ԳԻՐ՝ նօտրգիր (լրացնողների—շղագիր՝ 222գ, նօտրգիր՝ 223ա): ՏՈՂ՝ 33:



Նմուշ՝ 223ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. սկզբից, միջից եւ վերջից պակասաւոր ԺԸ դ. նորոգուած, լրացուած՝ 222գ, 223ա եւ միացուած Ա ձեռագրին:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

1. *220ա* [Խրատ հաճանայի՞ց —///] *կամ դաւանութիւն հաւատոյ, տա զՔրիստոսի մարմինն եւ զարիւնն...*

2. *220ա–1ա* Ու[ղիղ... դ]աւանդութիւն ի Սուրբ Երրորդութիւնն եւ մարմնացեալ Միածին Որդին Հօր Յիսուս Քրիստոս, որ ծնաւ ի Կուսէն վասն մերոյ փրկութեան — *Խոստովանիմ եւ հաւատամ անեղ եւ անսկիզբն...*

3. *221ա–31գ* ԽԳ. Հարցումն պիտանի — *Արթուն բնութեամբ ի գերեզմանն Զ...*

Հարցերը չկան. բերուած են միայն պատասխանները:

4. *223ա–31բ* Խե. [Աբուսայիդայ] Յաղագս մարդակազմութեան, ամենայն անդամոց գոյացութեան բոլոր մարմնոյս

Տե՛ս ձեռ. 466, 22ա—37ա. *Նխ./223ա, 224աբ:* § ա/*224բ–5բ:* բ/*225բ–6ա:* գ/*226աբ:* դ/*226բ–7ա:* ե/*227ա:*

գ/*227աբ*: է/*227բ*: ը/*227բ—8ա*: թ/*228աբ*: ժ/*228բ*: ժա/*228բ—9ա*: ժբ/*229ա*: ժգ/*229ա*: ժդ/*229աբ*: ժե/*229բ—30ա*: ժզ/*230ա—1ա*: ժէ/*231աբ*:

Ձի օգտագործուած քնն. բնագ., Երևան, 1974:

5. *232ա—3բ* [Ի հարցմանց գրոց Գրիգորի Տաթեւացւոյ]

ա. *232աբ* ԽՁ. Վասն մասանց հոգոյ (հատոր ե, պրակ ժզ) — *Հարց. Մասունք հոգոյն որպէ՞ս ճանաչի…*

բ. *232բ* ԽԷ. Վասն գործոց կազմուածոյ մասանց (հատոր ե, պրակ ժէ)— *Որպէ՞ս օրինակաւ մասունք…*

գ. *232բ—3բ* [ԽԸ]. Վասն գունոց մարդկան (հատ. ե, պրակ ԺԳ) — *Վասն է՞ր մարդն յորժամ…*

6. *233բ—4ա* ԽԹ. Վասն ասպարիսաց — *Քաջ երկրաչափք եւ ներհունք…*

7. *234ա—6բ* Ծ. Ի Դատաստանաւոց է բանս — *Թէ առնու այր կին եւ գտանի դիւահար…*

Քաղուածք Մխիթար Գօշից, Առաքելական Ա, Առաքելական Բ, Ներսէսի եւ Ներշապուհի, Սիոնի եւ այլ կանոնախմբերից:

8. *236բ—44բ* ԾԱ. Երանելոյն Աթանասի արեւպիսկոպոսի Աղեկսանդրացոյ Հարցմունք վայելուչ եւ պատասխանիք Կիւղի Երուսաւէմի հայրապետին Յաղագս մակացութեան եւ հանճարոյ — *Հետեւումն համարիմ ընդ Աստուածոյ երիս բանս… Պատասխանի. Իսկ ոգի մարդոյ գոյութիւն է…*

9. ա. *244բ—6բ* ԾԲ. Հարցումն պիտանի եւ գեղեցիկ վասն մանկանց եկեղեցոյ — *Ձի՞նչ է, թէ օրհնեալ է փայտն… Պատասխանի. Նախ՝ փայտ տապանին Նոյի…*

բ. *246բ—9բ [ԾԳ]. Վասն է՞ր կենդանակերպքն բժ—ան են թվով: Պատասխանի. Նախ՝ վասն այն, զի բժ—ան մասն է աշխարհի բաժանեալ…*

Գլխահամարը դրուած է պատասխանիի Ջ կէտի մօտ՝ 247բ:

գ. *249բ—50բ* ԾԴ. Խնդրելի է եւ վասն Դ—իցս որպիսութեան եւ յատկութեան եղանակաց: Յաղագս գարնանային եղանակաց (Հարցմանց գիրք, հատոր Դ, պրակ լա)— *Գիտելի է, զի Դ—եսին եղանակս տարոյն՝ գարունն այսու ճոխանա…*

դ. *250բ—2բ* ԾԵ. Նախ եւ առաջին ասելի է, թէ անչափութիւն միայն Աստուծոյ վայել է — *է՞ր վասն յաղագս այն, զի անեղ է…*

10. ա. *250բ—3ա* Վասն երկոտասան հողմոց — *Հնչեալ հողմունք զանազան / Ի Դ կողմանց աշխարհի գան…*

բ. *253ա* ԾԶ. Վասն աստեղաց թուոյ կենդանակերպիցն — *Խոյն իշխան է ամպրոպայ, / ԺԶ աստղ կա ի նմա…*

11. *253աբ* ԾԷ. Տեառն տէր Ներսէսի Հայոց կաթողիկոսի ասացեալ (Ք—Ա) — *Քաղցրագունիս այս մաղթանօք / Լցեալ ոգիս մեռեալ մեղաւք…*

12. *253բ* [Վասն չափուց ժամանակաց] — *ՅԱդամայ մինչեւ ի կատարած աշխարհիս Դ… ՃՂԹ Ը բիւր մասն է /// (շար. թափուած):*


ԿՆՔՎԴՐՈՇՄ 251բ (լուացուած), Գիրքս Սուրբ էջմիածնա՞ է:

1785
Ժ Ո Ղ Ո Վ Ա Ծ Ո Յ

ՌՃԽԹ — 1700

ԳՐԻՉ՝ Տէր Աստուածատուր: ՍՏԱՅՈՂ՝ Աղէքսանդր վրդ.:

ԹԵՐԹ՝ 283—1 (նկարի ներդիր պահպանակ՝ 11). չգրուած՝ 1ա—7բ, 11աբ, 277բ—83բ: ՊՐԱԿ՝ 1x6 + Ա—ԺԷx12 (ԺԵ, ԺԷ 10) +6x12 + 1x4: ՆԻՒԹ՝ թուղթ, լուսագծերով եւ «SS» լուսադրոշմով: ՄԵՑՈՒԹԻՒՆ՝ 21,2x15: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն: ԳԻՐ՝ նօտրգիր: ՏՈՂ՝ 19: ԿԱՋՄ՝ դրոշմազարդ բաց շագանակագոյն կաշի՝ դռնակով, միջուկը՝ տախտակ, աստառը՝ ծաղկադրոշմ կարմիր կտաւ: Կազմի Ա փեղկին ճնշադրոշմ՝ «Յիշատակ է գիրս եւ վայելումն սրբազան Աղէքսանդր վարդապետին: Գրեցաւ թվին (1700)»:



Նմուշ՝ 33ա

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ՝ Յովհան Ոսկեբերան ընդ Պետրոսի եւ Յովհաննու՝ 10բ «Խօսիլն Պօղոսի առաքելոյն յունկն Յոհաննու Ոսկիբերանի»՝ 76ա (ի լուսանցս): Կ ի ս ա խ ո ր ա ն՝ 12ա: Լ ո ւ ս ա ն ց զ ա զ ա ր դ՝ բուսական: Զ ա ր դ ա գ ի ր՝ կենդանագիր: Գ ո յ ն ե ր՝ կարմիր, կապոյտ, կանաչ, դեղին, ոսկի:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմի կաշին՝ թեթեւակի ֆեռծուած, եզրերը՝ մաշուած:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Ա. *8ա—10ա* Յանկ գրոցս [Վարուց Յովհաննու Ոսկեբերանի] — *Ա. Յաղագս նախերգանի գրոյս… եւ Յաղագս յիշատակարանի եւ թարգմանութեան գրոյս:*

—12ա—183բ Պատմութիւն սրբոյն Յոհաննու Ոսկիբերանի Կոստանդնուպօլսի եպիսկոպոսապետի եւ տիեզերաց լուսաւոչի, եւ ծննդեանն եւ սննդեանն եւ գեղեցիկ հաղաքավարութեանն

ա. *12ա—4ա* [Ա. Յաղագս նախերգանի գրոյս] — *Ամենեքեան որք ի հընուման գրոցք եղեն…*

բ. *14բ–8բ* Բ. [Յաղագս բարի խղճմտութեան Յոհաննու, որ ի մանկութենէ եւ ուսման] — *Արդ, զսկիզբն արարից նորա…*

գ. *18բ–28ա* Գ. Յաղագս ընդդիմութեան Անթոմէոսի եւ դարձին Աթենացւոց — *Եւ էր այր մի աթենացւոցն, որում անուն էր* Անթոմէոս…

դ. *28ա–30բ* Դ. Վասն դառնալոցն Յոհաննու յԱթենայ յԱնտիոք — *Եւ յորժամ եղեւ գալուստ նորա քաղաքին…*

ե. *30բ–1բ* Ե. [Յաղագս բաշխելոյն զինչս ծնողացն եւ սիրել զվարս սուրբ] — *Յետ այսորիկ* Ջենոնիոս *եպիսկոպոս…*

զ. *31բ–3ա* Զ. [Յաղագս գնալոյն Յոհաննու յանապատ եւ առաքինանալ] — *Այնուհետեւ հեռանայր յազգականաց…*

է. *33ա–6ա* Է. [Յաղագս տեսլեան Եւսիգիոսի վասն Յոհաննու] — *Էր ոմն ճրգնաւոր բնակեալ ի վանսն…*

ը. *36բ* Ը. [Յաղագս բժշկութեան առն, որ էր ակն ի բաց ոստեալ ի տեղւոջէն] — *Այր ոմն էր* յԱնտիոք…

թ. *36բ–9ա* Թ. [Յաղագս բժշկութեան բորոտութեանն Արէթոսի] — *Դարձեալ այլ ոմն այր ի…*

ժ. *39ա–40ա* Ժ. [Յաղագս բաւեկարգութեան վանորէից ի ձեռն Յոհաննու] — *Այր ոմն ի նմին քաղաքի, որում անունն էր* Թէոդորոս…

ժա. *40բ.* ԺԱ. [Յաղագս բժշկութեան կուրացեալ աչաց Եւսկլէոսի] — *Ասացից այսուհետեւ եւս սքանչելիս…*

ժբ. *40բ–2ա* ԺԲ. [Յաղագս բժշկութեան տեառտես կնոջն] — *Դարձեալ կին մի որում անուն էր* Քրիստեննեայ…

ժգ. *42ա–5ա* ԺԳ. [Յաղագս սատակման առիւծիւն աղօթիւքն Յոհաննու] — *Արդ, լուարուք այլեւս սքանչելիս…*

ժդ. *45ա–52ա* ԺԴ. [Յաղագս բաւանայութեան սրբոյն Յոհաննու] — *Յայնմ ժամանակի վախճանէր սուրբն* Մելիտոս…

ժե. *52ա–3բ* ԺԵ. [Յաղագս բժշկութեան մանկանն ի ձեռն Յոհաննու] — *Պատմեցից եւ այլ եւս սքանչելիս…*

ժզ. *53բ–9բ* ԺԶ. [Յաղագս բժշկութեան անպատմելի ցաւոց կնոջ Մարկիոնացւոյն] — *Ասացից եւ այլ սքանչելիս…*

ժէ. *59բ–62բ* ԺԷ. [Յաղագս բռնութեամբ տանելոյն զՅոհաննէս ի Կոստանդնուպոլիս] — Արկոդէոս *եւ* Ոնորիոս *յաղթօղք եւ հաւատարիմ…*

ժը. *62բ–3բ* ԺԸ. [Յաղագս ձեռնադրելոյն Յոհաննու յաթոռն Կոստանդնուպոլիս] — *Եւ յորժամ ազդ եղեւ թագաւորին գալուստ նորա…*

ժթ. *63բ–7ա* ԺԹ. [Յաղագս զգուշացանելոյն Յոհաննու զթագաւորն հանդերձ մեծամեծօք] — *Արդ, ձեռնադրեցաւ իմաստունն* Յոհաննէս…

ի. *67աբ* Ի. [Յաղագս ոչ ի բաց կալոյ ի Հաղորդութենէ խրատ] — *Եւ մինչ դեռ նա զայս խօսէր…*

իա. *67բ–74ա* ԻԱ. [Յաղագս խրատու հասարակաց ի սրբոյն Յոհաննու] — *Իսկ երանելին դարձեալ սկսաւ խրատել…*

իբ. *74ա–80ա* ԻԲ. [Յաղագս մեկնութեան բանիցն Պօղոսի, թէ որպէս յայտնեցաւ նմա առաքեալն] — *Եւ ինքն իմաստունն* Յոհաննէս…

իգ. *80ա–4ա* ԻԳ. [Յաղագս Թէոդորիոսի, որ կամէր թագուհին զինչս նորա յափշտակել] — *Եւ այր մի էր ի* Կոստանդնուպոլիս Թէոդորիոս *անուն…*

իդ. *84ա–5բ* ԻԴ. [Յաղագս Տրոպիլոսի սենեկապետի թագաւորին] — *Արդ, որպէս մեծն* Յոհաննէս…

իե. *86ա–9բ* ԻԵ. [Յաղագս արիանոսացն ընդդիմութեան եւ վասն երգոյն Իգնատիոսի] — *Յայնմ ժամանակի հնացեալ եւ փտեալ աղանդն* Արիոսի…

իզ. *89բ–90ա* ԻԶ. [Յաղագս սմանչելեաց մարմնոյ եւ արեանն Տեառն] — *Արդ, լուարուք եւ այլ եւս սքանչելիս…*

իէ. *90ա–2ա* ԻԷ. [Յաղագս ապստամբութեան Գալիենոսի] — *Արժան է եւ ոչ զանց առնել, զոր առ* Գալիանոսաւն *եղեւ…*

իը. *92ա–7ա* ԻԸ. [Յաղագս արդար իրաւանցն Յոհաննու եւ վասն Անտոնի եպիսկոպոսին Եփեսոսի] — *Պատմեցից եւ յաղագս այլոց իրացն…*

իթ. *97ա–100* ԻԹ. [Յաղագս իրաւանցն Բաբլակիոսի եւ կնոջ այրւոյ] — *Կին ոմն, որում անուն էր* Կալիստրապիոս…

լ. *100ա–2բ* Լ. [Յաղագս յանդիմանութեան եւդոխիա թագուհւոյն] — *Եւ ինքն երանելին դարձեալ անդրէն…*

լա. *102բ–6ա* ԼԱ. [Յաղագս զրպարտութեան Իսիդորոսի եպիսկոպոսի եւ այլոց, զոր արար Թէոփիլոս] — *Յայնմ ժամանակի* Ականիոս…

լբ. *106ա–13ա* ԼԲ. [Յաղագս զանազան չարեացն, զոր արար Թէոփիլոս ընդ կրօնաւորսն Նիտրայոյ] — *Բայց մեզ արժան է կարգաւ տանել զպատմութիւնս…*

լգ. *113ա–8բ* ԼԳ. [Յաղագս կնոջ Թէոգնոստեայ այգւոյն եւ հակառակութիւն ընդ թագուհւոյն] — *Եւ էր այր ի* Կոստանդնուպոլիս *սինկլիտոս…*

լդ. *119ա–22ա* ԼԴ. [Յաղագս գալոյն Եպիփանու ի Կոստանդնուպօլիս, եւ գրագրութիւն թագուհւոյն] *– Յետ սակաւ ժամանակի, Մեծն* Եպիփան…

լե. *122ա–9ա* ԼԵ. [Յաղագս առաջին արտասահմանութեան Յոհաննու] *– Յետ սակաւ ժամանակի եկն* Թէոփիլոս…

լզ. *129ա–30բ* [Յաղագս փախստեան Թէոփիլոսի եւ գրգռութիւն նորին] *– Յետ սակաւ ինչ աւուրց, դարձեալ…*

լէ. *130բ–2ա* ԼԷ. [Յաղագս դառնալոյն Յոհաննու յառաջին աֆսորանացն] *– Իսկ թագաւորն* Ոնորիոս, *յորժամ լուաւ…*

լը. *132ա–3բ* ԼԸ. [Յաղագս Ոլոմպիոսի որ յազգէ թագաւորին կոյս եւ կրօնաւոր] *– Ի ժամանակի յայնմիսի էր ի Կոստանդնուպօլիս կին մի…*

լթ. *133բ–6ա* ԼԹ. [Յաղագս պատկերին, զոր կանգնեաց Եւդոքսիա] *– Յայնժամ թագուհի* Եւդոքսիա *պատկեր արծաթի կանգնեալ…*

խ. *136ա–9ա* Խ. [Յաղագս գրգռութեան ոսոխացն Յոհաննու ի տօնի Ջատկին] *– Եկն եհաս օր տօնի Ծննդեան եւ Յայտնութեան…*

խա. *139ա–42ա* ԽԱ. [Յաղագս երկրորդ արտասահմանութեանն Յոհաննու] *– Իսկ ի կատարել սրբոյ Պենդէկոստէին…*

խբ. *142ա–4բ* ԽԲ. [Յաղագս թէ որպէս լուսաւորեաց Յոհաննէս հրիստոսական հաւատով յերկիրն Կոկիոսնայ] *– Իսկ զինուորքն առեալ զճգնազգեաց քահանայապետն…*

խգ. *144բ–5բ* ԽԳ. [Յաղագս զանազան տանջանօք նեղեցին զայնոսիկ, որ հաղորդ էին Յոհհաննու] *– Իսկ զկնի աքսորանաց սրբոյն…*

խդ. *146ա–7ա* ԽԴ. [Յաղագս ձեռնադրութեանն Աւսակիոսի զկնի աֆսորմանն Յոհհաննու] *– Իսկ ապա այսոցիկ սոյնպէս եղելոյ…*

խե. *147բ–9ա* ԽԵ. [Յաղագս ձեռնադրութեանն Ատտիկոսի եւ պէսպէս անկարգութիւն շփոթման] *– Յայնժամ սեւերիանոսքն ժողով առնէին…*

խզ. *149ա–52ա* ԽԶ. [Յաղագս թղթոյն Ոնորիոսի թագաւորի եւ չարութիւնն Եւդոքսիոյ] *– Յայնժամ եպիսկոպոսքն որ չարանախանձք էին…*

խէ. *152ա–4բ* ԽԷ. [Յաղագս վերստին թղթոյն Ոնորիոսի վասն ժողով առնելոյ, զի ստոյգն գիտասցեն] *– Դարձցուք արդ, ի կարգն…*

խը. *155ա–6բ* ԽԸ. [Յաղագս թէ որպէս չարչարանօք դարձուցին զեկեալ եպիսկոպունսն ի Հռոմայ, դաւաճանութեամբ թագուհւոյն] *– Արդ, առեալ զթուղթ թագաւորին* Ոնորիոսի…

խթ. *156բ–60բ* ԽԹ. [Յաղագս տանելոյն Յոհաննու յաֆսոռս յԱռապսուս եւ երեւելին վկային Քրիստոսի Բասիլիսկոսի եւ տալ զաւետիս փոխման նորա] *– Իսկ երանելին* Յոհաննէս *բնակէր ի* Կոկիսոն…

ծ. *160բ–1բ* Ծ. [Յաղագս հանգստեան վախճանին երանելոյն Յոհաննու] *– Յայնժամ գիտացեալ երանելոյն զօր հանգստեան իւրոյ…*

ծա. *161բ–4բ* ԾԱ. [Յաղագս բանիւ առնելոյն Ենովկենդիոսի հայրապետի զթագաւորն Արկադէոս եւ զեւտրոպի զԹէոփիլոս եւ զամենայն համախոհս նոցա] *– Եւ վասն զի քահանայքն զոր յառաջագոյն ասացաք…*

ծբ. *164բ–6բ* ԾԲ. [Յաղագս հաւատացանելոյն վրէժ չարախօսացն երանելոյն Յոհաննու թագաւորն Արկադէոս, եւ թուղթ զղջման առ հայրապետն Ենովկենդիոս] *– Արդ, իբրեւ ընկալաւ զթուղթս զայսոսիկ…*

ծգ. *166բ–70բ* ԾԳ. [Յաղագս հրամանի հայրապետին Ենովկենդիոսի վասն ժողովոյ, եւ վախճան նորա] *– Արդ, իբրեւ ընկալան երկոքեանն զթուղթն…*

ծդ. *170բ–1բ* ԾԴ. [Յաղագս տեսլեան Ադելփիոսի եպիսկոպոսին վասն Յոհաննու, զոր լուաւ թէ ընդ սուրբսն դասաւորեալ] *– Եւ արդ, պարտ է մեզ անդրէն դառնալ…*

ծե. *171բ–3բ* ԾԵ. [Յաղագս չարաչար պատժոցն, զոր կրեցին դաւաճանողքն Յոհաննու եւ որպէս դառն մահուամբ ելին յաշխարհէ] *– Եւ արդ, չէ պարտ եւ արժան…*

ծզ. *173բ–6ա* ԾԶ. [Յաղագս կամելոյն հանել զնշխարս Յոհաննու եւ ոչ տալ թոյլ բանալոյ գերեզմանին] *– Եւ արդ, հասեալ մինչեւ ցայս վայր պատմութեանս…*

ծէ. *176ա–8ա* ԾԷ. [Յաղագս բերելոյ նշխարս սուրբ մարմնոյն Յոհաննու ի Կոստանդնուպօլիս] *– Եւ վաղվաղակի առեալ թագաւորն քարտէս…*

ծը. *178ա–81ա* ԾԸ. [Յաղագս թէ զիա՞րդ անկաւ թագաւորն Թէոդոս ի վերայ լանջացն Յոհաննու եւ զմաղթանս զոր մատոյց ի դիմաց մօրն եւ որպէս դարձաւ գերեզմանն Եւդոքսիայի յերեւմանէն] *– Եւ իբրեւ այգ եղեւ, ամենայնքն առհասարակ…*

ծթ. *181ա–2բ* ԾԹ. [Յաղագս սմանչելեացն որ եղեւ ի սուրբ նշխարացն Յոհաննու եւ վերջ պատմութեանս] *– Իսկ ժողովուրդն իբրեւ արձակեցաւ յիւրաքանչիւր տեղիս… (182ա) Արդ, այս են վարք սրբոյն* Յոհաննու… *(182բ) Արդ, բարեխօսութեամբ եւ աղօթիւք սրբոյն Յոհաննու… Հայր մեր որ յերկինս:*

կ. *183ա* Կ. [Յաղագս յիշատակարանի եւ թարգմանութեան գրոյս] *– Յամի հազարերորդի եւ հարիւրերորդի եւ միոյ ամի յԱստուծոյ մերոյ Տեառն Յիսուսի Քրիստոսի գալստենէն, եւ ի հինգհարիւրերորդի եւ յիսուներորդի (1101) ի մերում թուականու-*

թեանս, եւ ի տասներորդի եւ եօթներորդի ամի թագաւորութեանն Կոմոնոսի Ալէքսի *բռնակալի, ես* Գրիգոր*իս՝ որդի* Գրիգորի Մագիստրոսի *հայկազնոյ, ըստ աշխարհի* Պարթեւ, *ըստ ժառանգութեան* Պալհաւիկ, *ըստ գեղն ընտիրն լինոյ յազգէ* Արշակունի, *որ եւ ողորմութեամբն Աստուծոյ կոչեցայ ի դիտապետութիւն* Ասաճազեանս, *ի բնիկ Աթոռ հայրապետութեան նախնեացն իմոց, եւ բազում նեղութիւն կրեալ մեր յայլասեռ ազգաց հեթանոսաց եւ բնակաց, եւ ապա, ի յառաջասացեալ ամսդ հասաք ի* Սուրբ *լեառն, զոր* Սեաւն *կոչեն, ի մեր սեփհական պարգեւական եկեղեցիքն յուխտն սուրբ, զոր ըստ ասորի բարբառոյ* Պաղահայ *կոչի, որ թարգմանի* Դրախտ Աստուծոյ*: Եւ անդ Լ եւ Զ ամի մերոյ յաթոռակալութեանս թարգմանեցի զվարս ճգնութեան մեծ եւ սքանչելի առն Աստուծոյ* Յոհաննու Ոսկիբերան, *ի* Կոստանդնուպօլսի, *ի ձեռն առն միոյ, որում անունն էր* Թէոփիստոյ, *//(183բ) ազգաւ յոյն: Եւ ապա ետու վերստին արծարծել զսա ի տարաբան եւ յօտարաձայն բայից եւ բառից յառաջին թարգմանութեան ըստ քերթողացն իմաստից, միաշար տողելով ի ձեռն* Մաթէոսի *եպիսկոպոսի, որ անեալ եւ վարժեալ էր ընդ մերով ձեռամբ: Արդ, որք մտադիւրութեամբ ընթեռնուք զվարս սրբոյն եւ կամ ընդօրինակէք գրչութեամբ, աղօթից մասին արժանաւորեցէք զառ հասարակ աշխատողքս, որպէս զի աղօթիւք սրբոյ հայրապետին ընկալցուք մասն ի յարութեան նորին: Արդ, աղաչեմ զօրինակագիծ գծօղդ, այլ եւ հրաման պատուիրանի աւանդեմ, մի ոք իշխեսցէ հատանել զՅիշատակարանս աշխատողացս, զի մի եւ ինքն ջնջեսցի ի դպրութենէն կենաց:*

Փակագծուած խորագրերն՝ ըստ ցանկի (8ա—10ա): Նոյնատիպ խորագրեր կան նաեւ բոլոր գլուխների ստորին լուսանցքներում:

Տե՛ս տպ. Վենետիկ, 1751:

Բ. [Բանիւ զանազանի]

1. ա. *183բ—91ա* Յարմարեցաւ Գովեստ ներբողեան ի սուրբ Աստուածածինն եւ ի Ծնունդն Քրիստոսի Աստուծոյ մերոյ ի տէր Առաքել վարդապետէ (վերջնամասը՝ «Ա—Ֆ») — *Ջբերան իմ բացից յօժարութեամբ կամաց, զարժանի…*

բ. *191ա—9ա* Գովեստ ստանաւոր ի սուրբ Աստուածածին կոյսն Մարիամ, ոգեալ ի տէր Առաքելոյ Սիւնեաց եպիսկոպոսի եւ շնորհալից վարդապետի — *Աստուածածին կոյս պատուական, / Հօր Աստուծոյ խորհրդարան…*

— *199աբ* [Յիշատակարան երգողի բանիս] — *Յարմարեցաւ ձառս Ծննդեան Քրիստոսի Աստուծոյ մերոյ եւ Յայտնութեան Փրկչին Յիսուսի եւ գովեստ տիրամայր սուրբ Աստուածածնին ի բազմամեղ* Առաքել վարդապետէ, *ի նորաշէն անապատիս, զոր յանուն* Սրբուհւոյ Աստուածածնին *եւ* Յոհաննու Կարապետին, *ի թուաբերութեանս Հայոց ութհարիւր ութսուն (1431): Ասացաւ շնորհօք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի Աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն:*

2. *199բ—203բ* Վասն միաբանութեան Հայոց եւ կաթուղիկոս ձեռնադրութեան (Թովմայի Մեծոփեցւոյ) — *Ի յութհարիւր եւ ինսուն թուականիս մեր…*

3. *204ա—7բ* Վարք անկարգ կաթողիկոսաց, ի բիւզանդեան վիպերգութենէ: Յաղագս վարուց Զաւինայ — *Եւ էր Զաւեւնս այս անուանի…*

Ապա՝ «Յաղագս Շահակայ Կորճէից», «Յաղագս Ասպուրակայ Մանազկերտացւոյ», «Յաղագս Յոհաննու եպիսկոպոսի»):

4. *208ա—63ա* Մեկնութիւն բնութեամբ աղօթիցն աստուածաբան սուրբ աւետարանչին Յովհաննու, ի խնդրոյ երջանիկ վարդապետի Ստեփաննոսի, մականուն կոչեցեալ Յակոբցի, ի տէր Ներսիսէ հոգեւոր որդւոյ, յեղբօրէ պարոն Հեթմոյ

Տե՛ս ձեռ. 603, 53ա—117ա. *Նխ. 208ա—11ա: Մեկն. /211ա—63ա:*

5. *263ա—73ա* Յաղագս որդէգրութեան Աստուածոյ, եթէ ո՞յր վերայ հաստատեալ է, կամ զիա՞րդ որդիք Աստուծոյ լինիմք — *[Ի]ոստովանիմք անշարժ եւ աներկբայ հաւատով…*

— *273ա* [Յիշատակարան թարգմանողի բանիս] — *Թարգմանեցաւ Որդէգրութեան բացայայտութիւն ի լատին լեզուէ ի հայ, աշխատասիրութեամբ տէր* Ստեփաննոսի *կուսակրօնի,* Վարդանի *որդւոյ* Իլուացւոյ, *ի* Սուրբ *մենաստանիս* Էջմիածնի, *ի լուսաւորութիւն մտաց մանկանց եկեղեցւոյ, ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ. ամէն:*

6. *273բ—6ա* Յոհաննու Ոսկեբերանի ի Հաւատամքն — *Հաւատամք ի մի Աստուած Հայր եւ ի մի Տէր Յիսուս Քրիստոս… նզովէ զնա եկեղեցի սուրբ:*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

12բ Ի թուին // (13ա) ՌՃԽԹ (1700):

191ա Յայտնութեամբ քո, Քրիստոս Որդի Աստուծոյ, ողորմեա եւ գթա ի հոգի հանգուցեալ ծառայի քոյ՝ մահդասի խօջայ Աւետին *եւ իւրայո[վ]ցն ամենայնի, որոյ էր օրինակս, մանաւանդ՝ զԱղէքսանդր աստուածաբան վարդապետն եւ զծնողսն իւր կրկնակի: Այլ նա՝ տէր Աստուածատուր դատապարտեալս մեղօք՝ ծրօղ տառիս, հրամանաւ վերոյ վեհիս. ամէն:*

199բ Յիշեցէք ի Քրիստոս զարժանին յիշատակի՝ զմահդասի խօջայ Աւետիքն, *զտէր օրինակիս հանդերձ իւրայովքն ամենայնիւ, տինա՝ զԱղէքսանդր վարդապետն, պատճառն գրոյս, եւ ինձ՝* Աստուածատուր *ապիրատ գրչիս, եւ դուք յիշօղքդ յիշեալ լիջիք առաջի անմահ Գառինն Քրիստոսի Աստուծոյ. ամէն: Հայր մեր որ:*

207բ Աւրհնեալ է Աստուած... Զի որպէս դիւրին թուի նաւավարին հասանիլ յեզր ծովին, նմանապէս գրչին՝ ի յետին գինն: Ես նուաստ ոգի՝ տէր Աստուածատուրս *սկսայ գիրքս այս ի թուին ՌՃԽԹ (1700), յամսեանն յունիսի ԻԱ (21), ողորմութեամբն Աստուծոյ, եւ զրաւեցի օգոստոս ամսոյ ԻՐ (28), օժանդակութեամբ նորին:*


276բ Յիշատակարան սուրբ գրոցս — *Աւրհնեալ եւ փառաւորեալ... Որ եռուր կարողութիւն դատապարտեալ ծառայի քո՝ տէր* Աղէքսանդրի, *անարժան բանի պաշտօնէի, անուամբ եւեթ այցելուի, տեսանել յաւարտ տառիս, զոր ծրագրեալ եռու դրոշմել ի քարտիսի զերկու գիրս. նախ՝ գլխակատար Պատմութիւնս սրբոյն* Յոհաննու Ոսկեբերանին, *եւ երկրորդ՝ զՄեկնութիւն զէր ընդ եղբարցն՝ հանգստեան աղօթից սրբոյն Յոհաննու աւետարանչի, եւ ընդգրկեալ զսա մեղսաթաւալ անձամբս, աղտեղաշաղախ ձեռօքս, մեղսամակարթ մատամբքս եւ ընծայել նուիրիեցի սա խայրիս խորհրդական եւ դահամունս նուիրական անպակաս գանձուցդ կաթուղիկէ Առաքելական եկեղեցոյ: // (277ա) Ընկալ քեզ ի հաճոյս, եւ եթէ ոչ ընդ կատարեալսն, այլ իբրեւ զլոմայ այրոյն եւ կամ ընդ բաժ մի ջրոյն, զոր եւ ակն ունելով սպասեմ փոխարինին, այն յանճառական գթութենէ մարդասիրութեանդ՝ շնորհել մեզաց թողութիւն... ընդ նմին եւ համօրէն աշխատողաց ի սմին, եւ զօրինակն շնորհողի. ամէն եւ եղիցի: Եղեւ յաւարտումն սորին եւ կազմն սեպտեմբերի ԺԵ (15), ՌՃԽԹ (1700) թուոջ:*

1786
Ժ Ո Ղ Ո Վ Ա Ծ Ո Յ

ԺԸ — XV

ԳՐԻՉ՝ Մարտիրոս որդի Առաքել:

ԹԵՐԹ՝ 97. չգրուած՝ 41ա, 44ա, 50ա, 63բ, 71բ, 90ա, 91ա, 93բ: ՊՐԱԿ՝ 13x8 (ԺԱ. 11, ԺԳ 3): ՆԻՒԹ՝ թուղթ, լուսագծերով եւ թագանշան լուսադրոշմով: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 20,5x14,5: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն: ԳԻՐ՝ շղագրանման ձօտոգիր : ՏՈՂ՝ 32: ԿԱՋՄ՝ բալագոյն մոմլաթ, միջուկը՝ ստուարաթուղթ, աստառը՝ թուղթ: Պահպանակ՝ 1 + 1, թուղթ, մասն աստառի (Ի դ.):



Նմուշ՝ 25ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. թանաքից գոադաշտը գունափոխուած, տեղ—տեղ զանազան բծեր, լուսանցային մասերում փոխրիկ պատռուածքներ: Նորոգուած է Ի դ.:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Ա. *1ա–36բ* [Ստեփաննոսի Դաշտեցւոյ] թագաւորութիւն Օսմանցոց. համառոտիւ պատմութիւն

– 1ա [Նախերգան] – *Խնդրօղք իմաստից և կամ այլս գիտութեանց գրոյ, հարևանցի տեսանելով կամ վեր ի վերոյ անցանելով, ոչ կարեն առնուլ զճաշակ... Վասն որոյ և հարկեցա համառօտել զՕսմանցոց թագաւորացն պատմութիւն... Արտադրեալ ի մատենագրացն Օսմանցոց ումեմն* Երեմիա Չէլէպու Քեօմուրճի *օղլոյ* Կոստանդնուպօլսեցւոյ, *մերձ ի թվականին Հայոց ՌՃԽԴ (1699)– ին:*

1. *1բ–2ա* Համառօտ պատմութիւնք թագաւորաց Օսմանցոց – *Ի թարիխն 611 [և ի թվական նութեան Հայոց ՈԿԴ (1214)],* յորժամ Չէնգիզ խան *թաթարաց զքաղաքն* Պալխ *աւերեաց...*

ա. *2ա Նախ.* Սկիզբն իշխանութեան սուլթան Օսմանայ 699 սանէն եղև... բ. 2աբ Երկրորդ. Սուլթան Օրխան... էՃԻՋ (726)... գ. 2բ–3բ Երրորդ. Սուլթան Մուրադ Ղազի խան Օրխանխան էՃԿԱ (761) սանէն... դ. 3բ–5ա Զորրորդ. Սուլթան Պայազիտ ելդրում իբնը Մուրատ խան էՃՂԲ (792)... ե. 5աբ Ե. Չէլէպի սուլթան Մէհմէտ, որդի Սուլթան Բէազըտի... զ. 5բ–6բ Զ. Սուլթան Մուրատ Երկրորդ, որդի Չէլէպի Մէհմէտի... է. 6բ–8բ Է. Սուլթան Մուհամմէդ Երկրորդ, իպըն սուլթան Մուրադ երկրորդ... ը. 8բ–10բ Ը. Սուլթան Պայազիտ խան, իպնը սուլթան Մէհմէտ խան... թ. 10բ–2ա Թ. Սուլթան Սէլիմ, իպնը սուլթան Պայազիտ–խան... ժ. 12ա–8ա Ժ. Սուլթան Սուլէյման, իպն Սէլիմ խան... ժա. 18ա–9ա ԺԱ. Սուլթան Սէլիմ Երկրորդ, իպնը Սուլէյման... ժբ. 19ա–21բ ԺԲ. Սուլթան Մուրատ, իպնը սուլթան Սէլիմ... ժգ. 21բ–2ա ԺԳ. Սուլթան Մուհամէտ իպնը Մուրատ խան... ժդ. 22բ–3ա ԺԴ. Սուլթան Ահմատ, իպնը Մուհամատ խան... ժե. 23ա ԺԵ. Սուլթան Մուստաֆայ, իպնը սուլթան Մըհամէտ... ժզ. 23ա–6բ ԺԶ. Սուլթան Օսման, իպնը սուլթան Ահմէտ... ժէ. 26բ–30ա ԺԷ. Սուլթան Մուրատ, իպնը սուլթան Ահմէտ... ժը. 30ա–2ա ԺԸ. Սուլթան Իպրահիմ, իպնը Ահմէտ խան... ժթ. 32ա–4ա ԺԹ. Սուլթան Մուհամէտ, իպնը Իբրահիմ խան... ի. 34ա Ի. Սուլթան Սուլէյման, իպնը

Իպրահիմ խան... իա. 34աբ ԻԱ. Սուլթան Ահմէտ, իպնը Իպրահիմ խան... իբ. 34բ–6բ ԻԲ. Սուլթան Մուստաֆա, իպնը Մուհամէտ խան Ղազի...

36բ «Մինչև ցաստ երեմիա Զէլէպուն գրեալ և վճարեալ էր։ Թէպէտ և մեք ըստ կարոյն մերոյ գեղեց-կացուցաք զպարադրութիւնս և ըստ քերթողութեան տառից ևս զոյն ինչ վայելչացուցաք, որպէս և կարէք տեսանել ընդ հեղինակին զփորձ առուլ»։

36բ Գրչից. «Այս գեղեցկացուցանօղն Դաշտեցի ամենահանճար պարոն Ստեփաննոսն է»։

իգ. *36բ* ԻԳ. Սուլթան Ահմէդ իպնը Մահմէտ խան Ղազի...

2. *37ա–40բ* Անուանիք որդոց թագաւորաց Օսմանցոց – *1. Սուլթան* Օսման Ղազի... *Էլայըտին փաշա վըզարէթ ըփթա... 23. Սուլթան* Ահմէտ իպնը Մըհամէտ...

Նշւում են նոյն 23 սուլթանները, նրանց կեանքի կարևոր թուականներն ու գործերը և որդիների անունները։

3. *41բ–2ա* Ոտիւ շարադրեալ անուանիք թագաւորաց Օսմանցոց – *1. Նախնի եղեալ քաջն այն* Օսման,/ *Այր կորովի և զինական.... 23. եղբայր սորա* Ահմէտ *սուլթան,* /*Որ զթշնամիան եղբօրն եսպանն։*

Բ. [Բանիք զանազանիք]

1. *42աբ* [Ժամանակագրութիւն թագաւորաց հնդկաց] – *Թվին ՌՃՇԶ (1707), փետրվար ԻԱ (21), փոքր թիվն ՂԱ, Նիրհան Ը, աւուր ուրբաթու ինքնակալն* Օվրանգ Ջիբ...

բ. *43ա* Կարգ թագաւորաց հընդկաց – *1. Որդի* էմիրի Թէմուր Սհաբդրան... *14.* Մահմադ *շահ փադշահ, որդի* Ջհանշիհ...

գ. 43բ Վասն եկեղեցեաց ֆռանկաց ուղղափառաց, թէ որիանիք են ի Հնդիկս – Օվրանգզիհի *երկրումն կայ եղ(=կ)եղեցիք...*

2. *44բ* Կարգ և թիւ թագաւորաց Պարսից – *Ի թուականութեանս Հայոց ՊԽՁ (1397), յորժամ* Լանկ Թամուրն... ա. *44բ* 1. Շահ Իսմայէլս ընդստի թագաւոր ի թուին Հայոց ՋԾ (1501)... բ. *44բ* 2. Շահ–Թահմազ, *որդի* Շահ Իսմայիլին *նստաւ թախտ թվին ՋՀԵ (1526)...* գ. *45ա* 3. Շահ Իսմայէլ *նստաւ թախտ թվին ՌԻԳ (1574)...* դ. *45ա* 4. Շահ Խուդաբանդայ, *կրտսեր որդի* Շահ Թահմազին... ե. *45աբ* 5. Շահ Աբազ, *որդի* Շահ Խուդաբանդային *թախտ նստաւ ի Մաշադ թվին ՌԻՓ (1580)...* զ. *45բ* [6]. Շահ Սէֆի, *թոռն* Շահ Աբազին, *ընդստաւ թախտ թվին ՌՀՀ (1629)...* է. *45բ–6ա* [7]. Շահ Աբազ *երկրորդ, որդի* Շահ Սէֆուն, *ընդստաւ թվին ՌՂԱ (1642)...* ը. *46ա* [8. Շա]հ Սուլէման, *որդի* Շահ Աբազ *երկրորդին... թախտ նստաւ ի թվին ՌՃԺԵ (1666)...* թ. *46բ–9բ* 9. Շահ Սուլթան Հուսէյն, *որդի* Շահ Սուլէյմանին, *ընդստաւ թախտ թվին ՌՃԽԹ... (1694)... Իսկ ի թվին 1729 և Հայոց ՌՃՀՀ...*

Հրատարակել է Ա. Աբրահամեանը Մարտիրոս Դի Առաքելի անունով տե՛ս տպ. «Գիտական նիւթերի ժողովածու», N1, Երևան, 1941, էջ 93–100։

3. *50բ* Յաղագս թանգնաֆազութեան... – *Առ նագլի ըստ հընդկաց, որ է նաչնի ըստ փրթքէզաց... 50բ* Յաղագս բաբասիլի... – *Առ թրև, որ է բողկ...*

4. *51ա* [Աղօթք, լատիներէն, հայերէն] *ա.* Փաթրէ նօսթէր... – *Հայր մեր...: բ.* Աւէ Մարիայ... – *Ողջոյն քեզ, Մարիամ...*

5. *51բ* [Կողմնացոյց նկար, բաժանուած 32 մասերի] – *Արևել, արև հարաւ արև, հարաւ արև ցրարև...*

6. *ա. 52աբ* Խորհած թուոյ իմանալոյ Հայկայ և Պօղայ – *Հայկ. խորհեաց: Պող. խորհեցայ՝4...*

բ. *53աբ* Տղայական ճարտասանութիւնք – ա. *Կենաց եմ պատճառ և մահու առիթ... բ. Երամ մի հաւ արածէր ի դաշտի... գ. Քառասուն մարդ գնացին ի բաղնիս... դ. Սին մարդ ունէր իւրն հետ մին գառն... ե. Ծեր ոմն օրհնեաց զմանուկ մի... զ. Մին մարդ ունի մին ութ ղտրանոցն աման լի ձիթով...*

գ. *53բ–4ա* Վաելուչ տղայական խաղ – *Իցեն 3 անձինք՝* Աւրամ, Հայկ և Տիգրան...

7. *54բ–5բ* Հանելուկ, արարեալ ումեմնէ Ստեփաննոսէ Դաշտեցւոյ...

54բ ա. *Թէպէտ շարժիմ և տամ շարժել, բայց ոչ ըզգամ... բ. Թռչիմ իբրև զարագ թռչուն, բայց ոչ ուտեմ... գ. Յազգայէ միոյ շարժին առհասարակ... դ. Փոր իմ երկայն և խորխորատ ունիմ ընդ իս... ե. Փոքր և չնչին եմ կենդանեաց... զ. Հանգոյն սերմանց եմ անկենդան... է. Ջերմ և սաստիկ եմ և վառիմ որպէս զհուր... 55ա* ը. *Ջերթ զպռոնիկ կին մի եմ ես... թ. Եղ ի ծակն իմ կոթ մի երկայն... ժ. Հարիւր ամօք թէև մնամ ի մէջ ջրոյ... ժա. Իբրև զքարինս եմ անկենդան և ոչ քայլեմ... ժբ. Կարեմ ասիլ որդի մարդոյ... ժգ. Ի յաստեղաց յերկուց պահեմ զգիծն իմ անշարժ... ժդ. Մեռեալ եմ ես և չորացեալ... ժե. Կառուցեալ կամ մերձ հոսանաց... 55բ ժզ. Ըստ համարոյ տարերցն ունիմ ականջս անլուր... ժէ. Ի յուտողէ չորկոտանոյ ըսքանչանամ... ժը. Յերկուց ծնողաց անզգայից ունիմ զծնունդ... ժթ. Ընդ կայսերաց և ըստրկաց խօսիմ անյագ... ի. Առ և տրուիհուն շնչոյ ունիմ ‘ւ եմ անկենդան... իա. Դուռն եմ սեռիցն կենդանեաց... իբ. Նիւթ մի եմ ես իբրև զաղբիւր...*

Պատասխանները լուսանցքներում վրացերէն։

8. ա. *56ա* [Վասն Աստուածաշունչ գրոց] – *Ջորս տեսակս ունի Հին Կտակարանն...*

բ. *56բ* [Վասն վեց դարուց] – *Առաջին դարնն է՝ յԱդամայ մինչև ի ջրհեղեղի վերջն…*

9. ա. *57ա* Վասն դեղին մոմ սպիտակացուցանելոյ – *Առ դեղին մոմ որքան և կամիս…*

բ. *57ա* Վասն շաբար խամն ճերմակացնելու – *Առ քանի մի ձու…*

10. *57բ* Ատամնայցաւի և այլ ցաւի – *Ուղղ ղայար…* Վասն ջուլաբի – *Առ և Թօլայ, որ է Բ կէս մսղալ սինայմէքի…*

11. *58աբ* Բառ ոմանց կանդանեաց (1—28) – *1. Առիւծն է ազատական… 28. Անծեղն, որ է կաչաղակն՝ լեզւագար և շողոքորթող։*

12. *59ա–65ա, 66բ, 67բ* [Դեղագիրք] Վասն հազի – *Սխտորն խորովեալ և զպճեղն ի մեղր թաթախեալ կեր…*

Յաջորդում են. Վասն ճիճուի, ատամնացաւի, քթի արեան, քէմմի, օֆահարի և այլ դեղագրեր։ 60ա Վասն թանաքի շինել է։

13. *65բ–6ա* Ոտաշարութիւն գեղջուկ ի վերայ Նոր Ջուղայեցւոց ասացեալ Ստեփաննոսի Դաշտեցւոյ – *Շինիս դաստուրն և ծէսն էս այ, որ օտարի տնազ կան, /Ինչ կու խօսին, շատ կէսն էս, այ, որ օտարի տնազ կան…*

14. *67ա* Ծիծաղելոյ Վարսուղ Ստեփաննոսի Դաշտեցւոյ («Ստեֆանի») – *Սըգա դէյիմ, բէգլար,/Իր խասաթում վար…*

15. *68ա–70ա* Ոտանաւորք, արարեալ ումեմն բանասիրի Կոստանդնուպօլսեցոյ, զոր ուղեկից գոլով ընդ այլ վարդապետ կոչեցեալ ոմանս, չոգաւ յԵրուսաղէմ, և զոր ինչ չար առ դիպեցեալ եղբարցդ, ի տէր Կոմիտաս բահանայէ շարադրեալ – *Ի թիւն Հայոց ազգիս մերոյ Արամեան, /Հազար հարիւր և յիսուն ամքն որ լցան (1701)…*

16. *70ա–1ա* [Ոտանաւորք Մարտիրոս դի Առաքելի]

ա. *70բ* [«Մարտիրոսի»] – *Մակաթիւն Հայոց եդեալ, /Աւետրդ Դըւին ժողովեալ… /ՈՀ ՆՍԱՆԵԼ (1706) զայս համարեալ…*

բ. *70բ* [«Ի Մարտիրոսի»] – *Ի Սպահանա յորժամ եղեալ, /Շիրազ քաղաք Պարսից հասեալ… /Տեառն թիւն ՌՉԹ (1709) լեալ…/Աղօթամատոյց զայս նըւիրեալ…*

գ. *70բ* («Աղափիրի») – *Ամենապայծառ սիրելոյդ/Ղամբարափայլ նազելոյդ…*

դ. *71ա* [Անխորագիր] – *Յիշեա զբանն Յիսուսի առ սուրբ Պետրոս առաքեալ… /Մարտիրոս զաղօթս յիշեա։*

17. *72ա* [Պատմութիւն և օրինակ]

ա. Վասն տևելոյ փորձութեան – *Թագաւոր մի սովորութիւն ունէր, որ ամենայն…* բ. Վասն համբերելոյ նեղութեանց – *Հայր ոմն սուրբ ունելով կին ոմն բարեպաշտ…* գ. Վասն զի ոչ պարտիմ մարմնաւորին խնդրել յԱստուծոյ – *Թագաւոր մի գնայր ի յգբօսանս…*

18. ա. *73ա–7բ* Անուանիք ականց (1—33)։ 1. *Ալմաս – Լիգրոն, որ է ալմաս, որ հայերէն լիգրոն և ֆռանկաց դիամանդ ասի…*

բ. *78ա* Ահարօնի չորէկարգեան ականակապ վակասին զերկոտասան ակունսն այս է ըստ հերբայեցւոց և եօթանասուն և երկու թարգմանչաց օրինակին – *Առաջին. Ահարօնի վակասի ակն այս է. երբայերէն ասի՝ օդամ…*

19. ա. *78բ* [Վասն երևալուն հրագոյն աստեղան] – *Թվին Փրկչին 1722 … Նոյեմբեր նոր տոմարին ԻԳ (23)… երևեցաւ աստղ մի հրագոյն… որ գրեցի ապիրատ* Մարտիրոս դի Առաքել։

բ. 78բ Պատմութիւն ևս ձեզ, եղբարք, իր իմն գարշելի մահմետականացն – *Յորժամ ի թվիս Փրկչին 1723, անսղալ սեպտեմբեր հասաք նաւօվ… ի քաղաքն* Լիվոռնայ…

20. *79ա, 80ա–6բ* Համառօտ վիպասանութիւն յաղագս ժամանակաց կենցաղոյս, ի յիսկզբանէ ստեղծման աշխարհի մինչև ցներկայական ամանակս մեր – *Արդ, ուրեմն պարտ է գիտել զի յԱդամայ…*

Տե՛ս Վ. Յակոբեան, Մանր ժամանակագրութիւններ, հ.1, էջ 205–277։

21. *79բ* [Վասն դարուց] – *Դարն է ստոյգ սահմանացեալ ժամանակ…*

22. 86ա–9բ Թուղ[թ] էմփրադօր Կառլօ Ֆրանդիսկօին, զոր գրեաց առ սուլթան Ահմադն թվիս Փրկչին 1715 – *Փադըշահի ադըլ վէ չումլէ… Եազլէան նամէի շէարիֆ թարիխի հազգրաթի Իսայ (1715)։*

23. 94ա–5բ Պատճէն թղթոյն տեառն Փիլիպպոսի հինգերորդի թագաւորին Իսպանիոյ, զոր գրեաց անդրանիկի որդւոյ իւրոյ Լուիսի, այսինքն՝ Լուդովիկոսի Առաջներորդի իշխանի Ասպուրիասի Թարգմանեցեալ ի լեզուէ սպանիականէ ի հայ բարբառ – *Քանզի հաճոյ եղև աստուածահանդիսավեհութեանն, որդեակ իմ յոյժ սիրելի… 14 յունվարի 172[6]։ Ես Թագաւոր։*

24. 96աբ [Հայատառ հնդկերէն]

ա. 96ա Ողջ լեր, թագուհի, մայր ողորմութեան և այլն – *Ռահմաթում կուն, էյ Փադշահինի…* բ. *Խոստովանիմ առաջի Աստուծոյ և այլն /// գունահրաւ կօնֆիսար…* գ. *Պատուիրանք Աստուծոյ են ժ (10)–*

[///] կի դինկի հուքմ դասէ... դ. *Պատուիրանք սուրբ եկեղեցւոյ...* — 1. Պէյլէ. Սօնայ սարի միսունկայ... ե. է խորհուրդ սուրբ եկեղեցոյ — *1. Պէյլէ. Պաւտիս մու...* զ. *96բ ... հընդկաց բառիւն...:* Հայր մեր երկինս — *Բաբ համարի քի աստանմը հէ...* է. Ողջոյն Մարիամ — *Սալամթում կուն, օյ Մարիամս.* ը. Հաւատամբ ի մի Աստուած — *Կման ողքտայըմ խուդակուն...*

25. *97ա* Բառ հայոց, որ համեմատին ընդ բառս պարսից — *1. Ռահռահ... [26]. նապէլի—նազընի:*

26. *97բ* Ամիսք ի տարին արեգական... արաբացոց, որ Դ ազգ հրիստոնեայք... վարին... — *1. Քանոն ախըր — յունվար... 12. Քանոն աւալ — դեկտեմբեր:*

Գ. [Յաւելագրութիւնք ԺԸ դ.]

ա. *67բ* Այս է յաչացաւի դեղն — *Ով որ յիշէ սուրբն* Փոտինէ...

բ. *67բ* Վասն յատամնացաւի — *Սուրբն Յանդիպաս յեպիսկոպոս...*

գ. *90բ* Աղօթ[f] սրբոյն Կիպրիաւոսի... — *Ես կիպրիանոս ծառայ Աստուծոյ...*

դ. *91բ* [Գիր չար աչից] — *Մվ անել և սքանչելի պետդ...*

ե. *91բ—2ա* Մեմէկ բանն գողնայ, գիրն այս է — *Ալահու նիայ նափ անիայ...*


զ. *92բ—3ա* Այլ գիր գլխացաւի, որ ոչ մերձենայ ի ծառայիս Աստուծոյ Յակոբին — *Կապեմ գքեզ խէթ...*

Ձեռագիրը գրչութեան յատուկ յիշատակարան չունի: Կենսագրական նշանակութիւն ունեն գրչի ոտանաւորները (Բ, § 16) և 2 պատմութիւնները (Բ, § 19): Գրչին վերագրուող ժամանակագրութիւնը (Բ, § 2), աւարտում է 1729 թ. դէպքերով, հետևապէս ձեռագիրը կարող է գրուած լինել միայն այդ թուականից յետոյ:


1787
Ժ Ո Ղ Ո Վ Ա Ծ Ո Յ

[Ռ]ՃՀԴ — 1725


Թերթ՝ 184. չգրուած՝ 1աբ, 5աբ, 135ա—6բ, 181ա—4բ: Պրակ՝ 1x5 + 1 — 18x10 (ԺԸ 9): Նիհթ՝ թուղթ, լուսագծերով, թագի եւ ողկոյզի լուսադրոշմով: Մեծութիւն՝ 21,3x16: Գրութիւն՝ միասիւն: Գիր՝ նօտրգիր (տարբեր): Տող՝ 23: Կազմ՝ ծաղկադրոշմ շագանակագոյն կաշի, միջուկը՝ տախտակ, աստառը՝ թուղթ, մասն առաջին եւ վերջին պրակների:



Նմուշ՝ 6ա



Նմուշ՝ 157ա



Նմուշ՝ 175ա

Վիճակ՝ բաւարար. կազմի կաշին՝ թեթեւակի ճեղծուած, եզրերը՝ մաշուած, ցեցակեր:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Ա. [Թարգմանութիւնք Յովհաննու Անկիւրացւոյ]

—2ա Գիրք որ կոչի Պատմութիւն աշխարհաց, որ պատմէ զբովանդակ հին եւ նոր աշխարհի որպիսութիւնն մանրամասնաբար: Պատմէ եւ ծանուցանէ զտեղեաց որպիսութիւնն եւ զչափն, զբնակչաց բարքն եւ զարարմունքն եւ զայլն ամենայն, որ ինչ անկուր եւ անծանօթ մեզ գտանին ի նոսա զարմանալիք: Թարգմանեալ ի լատինաց ի հայ բարբառ ի մօտ ժամանակիս

— 2ա—4ա եւ ամենայն պատմութիւնք տեղեաց որ ի սմա գտանին են եւ ցուցանեն ըստ այսմ ցանկի *— Վասն բոլոր աշխարհիս առհասարակ... Վասն* Բավբաւանայ *եւ վայրենի բնակչացն:*

— 4աբ եւ այլ ինչ գոյ ի գրիս վերջն *— Յաղագս ճանաչելոյ զմարդն ի վերայ կերպից անդամոց իւրոց... Մեկնութիւն բանից Ննջման սրբոյ աւետարանչին Յոհաննու...,* արարեալ սրբոյն Ներսէսի Լամբրոնացւոյ...

1. *6ա—123ա* [Նոր աշխարհացոյց]

Տե՛ս ձեռ. 1788, 119ա—21բ. § 1/*6ա—15բ:* 2/*16ա—58ա:* 3/*58բ—78բ:* 4/*78բ—88ա:* 5/*88ա—123ա:*

2. *123բ—5բ* [Մարմնազննութիւն]

Տե՛ս ձեռ. 1788, 119ա—21բ. § ա/*123բ—5բ:* բ/*չիք:* *Յիշ.՝ 123ա:*

3. *126ա—9բ* Պատմութիւն է հրաշից որ եղեն յաշխարհի *— Ջեօթն հրաշս աշխարհիս, որ եղեն...*

4. *129բ—34բ* Վասն երկնային եւ երկրային դրախտից եւ վասն սահմանաց հրեղէն երկնից

Տե՛ս ձեռ. 1788, 5ա—15բ. § ա/*129բ—34բ:* բ—ե/*չիք:*

Բ. *137ա—80բ* Տեսութիւն պատմութեան բանից Ննջման սրբոյ աւետարանչին Յոհաննու Աստուածաբանի, արարեալ արեղպիսկոպոսին Տարսոնի Ներսէսի, ի խնդրոյ ոմեմն եղբօր

—137ա—9ա [Նախերգան] — *Գիր քոյոյ պատուականութեանդ, մի անգամ և երկիցս…*

— 139ա—80բ Բան — *էր ընդ եղբարսն երանելին Յօհաննէս մեծաւ ուրախութեամբ ի Տէր: Մեկնութիւն. էր ասէ եւ թէ յորում տեղոջ… ամէն:*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

134բ Զբազմամեղ գրիչս յիշել աղաչեմ. [Ռ]ՃՀԴ (1725):


180բ Ջմեղապարտ եւ զանհմուտ գրիչս յիշեսջիք յաղօթս ձեր. թիւ գրեցման 1174 (1725), մայիս 10:

1788
Ժ Ո Ղ Ո Վ Ա Ծ Ո Յ

Կոստանդնուպոլիս ՌՃՀԸ — 1729

ՍՏԱՅՈՂ՝ Մաղաքիա վրդ.:

ԹԵՐԹ՝ 146. չգրուած՝ 1ա—2բ, 122ա—46բ: ՊՐԱԿ՝ 1x1 + Ա — ԺxI2 (Ժ 14) + 2xI2 (Բ 11): ՆԻՒԹ՝ թուղթ, լուսագծերով, եռամաիկ եւ «AZ» լուսադրոշմով: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 21x16: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն (երկսիւն՝ 30ա—46ա): ԳԻՐ՝ նօտրգիր: ՏՈՂ՝ 30: ԿԱՋՄ՝ դրոշմազարդ, շագնակագոյն կաշի, մետաղեայ զոյգ ճարմանդներով, միջուկը՝ տախտակ, աստառը՝ թուղթ, մասն սկզբի եւ վերջի պրակների:



Նմուշ՝ 37ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. լուսանցային մասերում խոնաւութեան հետեւեր: Կազմի եզրերը՝ թեթեւակի մաշուած:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Ա. [Թարգմանութիւնք Յովհաննու Անկիւրացւոյ]

1. *3ա—5ա* Վասն եօթն հրաշից աշխարհի, թէ որ են — *Զեօթն հրաշս աշխարհիս, որ եղեն ուրուք տեղիք…*

2. *5ա—15բ* Վասն Բ դրախտիցն երկնային եւ երկրային, եւ վասն սահմանաց հրեղէն երկնից

ա. *5ա—7բ* [Ա. Վասն Բ դրախտիցն] — *Հասարակաբար ասեն, թէ. Մեր երջանկութիւնն…*

բ. *7բ—9ա* Բ. Կամարն հրեղէն մեծ երեւի բան զերկնից աստղացն եւ տարերացն — *Արդ, որ ասես, թէ. Այլ լաւ իմանամ զսորին…*

գ. *9ա—11բ* Գ. Այլ եւ վասն շարժման երկնիցն. Գլուխ Գ — *Թէպէտ ի վերոյ ասացելոցս… եւ ըստ* Աղէքսանդր *եպիսկոպոսին, որ արարեալ է թուականութեան…*

դ. *12ա—4բ* Դ. *Յայտնի արարաք ի վերոյ, թէ որպէս հրեղէն կամարն…*

ե. *14բ—5բ* Ե. *Այլ հրեղէն կամարս է պատուական…*

3. *15բ—22ա* [Վասն թուոց եւ դասուց հրեշտակաց]

ա. *15բ—9բ* Ա. Սուրբ հրեշտակքն առաքեան ի փառն երկնային բնակարանին եւ վասն բազմագոյն լինելոյ, ի թիւն ասացուած — *Զայս տեղիքն որ ի վերայ ասացաք…*

բ. *19բ—21ա* Բ. Վասն զօրութեան գիտութեան եւ կարգաց եւ սպասաւորութեան հրեշտակաց — *Երկրորդ բանս, որ վասն երկնային ոգոյն…*

գ. *21ա—2ա* Վասն գեղեցկութեան հրեշտակացն, որ ի սոցանէ առնուն արդարքն զնորիս — *Ոչ սակաւ շնորհազարդութիւն առնուն արդարքն…*

— *22ա* [Յիշատակարան թարգմանութեան] *Կատարեցաւ ասացեալքն թուոց եւ դասուց հրեշտակաց, թարգմանեալ ի լատին բառէ ի հայս յումեմնէ՝* Յօհաննիսէ:

4. *22բ* Երկոտասան չար աւանդութիւնք, որ կան ի վերայ աշխարհի — *Ա. Իմաստունք առանց գործք… Զայս ԻԺ—ան բանքս ասէ սուրբն Կիպրիանոս:*

5. *22բ—3բ* Անուանք եւ գործք եւ մահ սրբոց մարգարէիցն — *Ա. Եսայի որդի Ամովսայ մարգարէացաւ ի ժամանակս Կադամայ…*

6. *23բ—6բ* Անուանք եւ գործ Ժ սիպիլեանցն, թարմանեալ ի ֆռանկաց բառէ ի մերս Յօհաննիսէ յԱնկիւրացւոյ — *[Տ]արակոյս բան աշխարհիս ոչ եղեն սիպիլլիայ կանայքն…*

7. ա. *26բ—8ա* Սկիզբն պատմութեան ամածունի կանանցն, որ գնացին առ մեծն Աղեքսանդր — *Քանզի ասացաք ի վերոյ վասն սիպիլլիանցն…*

բ. *28ա—9ա* Պատմութիւնք այլ կերպիւ վասն ամազունի կանանց — Դիատօրօս Սիգուլօս *ի գիրս յեր[ը]որդին ասէ…*

գ. *29ա* Քաղաքունք, զոր ամածունի կանայքն պատեցին իւրեանց բնակեալ տեղիքն — էֆուրօ *ասէ, թէ. Ամածունի կանայքն…*

Բ. *29ա—43ա* Սկիզբն առնեմք Թողմիայիս թատլներներում մնացեալն այսպէս (Աշխարհացոյց Պաղոմեայ) — *Ֆարղն այս թաւուլային բարալլէին…*

— *43ա* [Յիշատակարան թարգմանութեան] *Վերջ եղեւ Թօլօմիայի Աշխարհացուցին, թարմանեալ՝* Յօհաննիսէ *ումեմնէ:*

Գ. *43ա—119ա* [Նոր աշխարհացոյց]

1. ա. *43ա—4բ* Յանկ ալբաբիդի վերայ Նոր աշխարհացուցի եղեալ թատլաներն բոլոր աշխարհի — Ապիսսինօր, *որ է ձիօ, որ է Հապաշաց երկիրն…*

բ. *44բ–5բ* Օրպիսդէրոսմ, որ է վասն բոլոր աշխարհիս — *Այս առաջի թաւուլայի միջին կա գրեալ…*

գ. *45բ–6ա* Վասն Նօուտաս օրպիս, որ է վասն Նոր աշխարհին – *Զայս բոլոր երկիրն, որ այժմ Ամերիգայ կոչի…*

դ. *46ա–7ա* Վասն Ասիոյ, որ է Ասիան – Ասիան *բաժանի յե[ւ]րոպիայէն…*

ե. *47ա–8ա* Վասն Աբրիգիոյ, որ է Լիբիան – *Ի հնումն զայս ցեղ ու ցեղ բաժանեցին…*

զ. *48ա–9ա* Վասն Էուրօբայ, որ է Եւրոպիան – *Վասն է՞ր Եւրոպիայ կոչի այս Գ բաժին աշխարհիս…*

2. *49ա–80ա* [Եւ սկսանումմ Եւրոպիու բաժինն]

ա. *49ա–51ա* Վասն Պրիդանիջէ, որ է Պրիդակական կղզիին – *Այն կղզին է, որ այժմ Բ թագաւորութեան տեղիք են…:* բ. *51աբ* Վասն Հիպէրնիային: գ. *51բ–9ա* Վասն Սգոձիային: դ. *52ա–3բ* Վասն Սպանիային: ե. *53բ–4բ* Վասն Բարդուկալին թագաւորութեանն: զ. *54բ–5բ* Վասն Կալլիու, որ է Ֆրանձիան: է. *55բ–6ա* Վասն Պիդուրիկումի, որ է Ֆրանձիայի բաժին մի: ը. *56ա* Վասն Լիմանիու, որ է ֆրանցիու բաժին մի: թ. *56աբ* Վասն Կալէդէսին եւ Պօնօնիէնսէսին, որ է ի ֆրանցայու բաժին մի: ժ. *56բ* Վասն Ֆէրօմանաոի, որ է ֆրանձիու բաժին մի: ժա. *56բ–7ա* Վասն Կալլինայ Նոր Պօնինսիսի ծովու եզերին, որ է Ֆրանձիու բաժին մի: ժբ. *57աբ* Վասն Պուրկանիային պարոնին տեղացն, որ է Ֆրանձու երկրի բաժին մի: ժգ. *57բ–8ա* Վասն Սպատիայ երկրին, որ է Ֆրանձիու բաժին մի: ժդ. *58աբ* Վասն Ձերմանիու, որ է Ալամանու երկիրն: ժե. *58բ–9բ* Վասն Ձերմանիոյ Ֆէրէօրին, որ է Փոհր Ձերմանիան եւ է Ալամանն: ժզ. *59բ–61ա* Վասն Ձէլարային, որ է Ալամանու բաժին մի: ժէ. *61ա–2բ* Վասն Պրապանձիային, որ է Ալամանու բաժին մի: ժը. *62բ–3բ* Վասն Ֆլանտրային, որ է յԱլամանու բաժին մի: ժթ. *63բ–4ա* Վասն Ծէլանտիային, որ է Ալամանու բաժին մի: ի. *64ա–5ա* Վասն Հօլանտիոյ, որ է Ալամանու բաժին մի: իա. *65ա–6ա* Վասն Ֆրիսիու, որ է Ալամանու բաժին մի: իբ. *66ա–7ա* Վասն Տանիու, որ է հիւսիսիային Ալամանու բաժին մի: իգ. *67ա* եւ Ալամանու բաժին են այս երկիրս զոր ասեմմ – Վանէսֆէլտիայ, Փոմէսի երկիրն…: իդ. *67բ–8բ* եւ այժմ ասեմմ զԻտալիան եւ զիւր բոլորն թէ ինչպէս է: իե. *68բ–9ա* եւ այժմ ասեմմ վասն Յունեց տանն: Յաղագս Կրէջիային, որ է Յունաց տունն: *իզ. 69աբ* Վասն Բօլօնիային, որ է Լեհաց տունն: իէ. *69բ–71ա* Վասն Ունկարիային, որ է Մաճառաց տունն: իը. *71ա–2բ* Վասն Պաւէմիային, որ է Ալամանու բաժին մի: իթ. *72բ–3բ* Վասն Սաքսոնիու, որ է Ալամանու բաժինն: լ. *73բ–4ա* Վասն Վէսդէֆալիանու, որ է Ալամանու բաժինն: լա. *74ա–5ա* Վասն Ֆրանգօնիային, որ ի Ալամանու բաժինն: լբ. *75ա–6բ* Վասն Սուվէուն, որ է Ալամանու բաժինն: լգ. *76բ–7ա* Վասն Պրաւիային, որ է Ալամանու բաժինն: լդ. *77ա–8բ* Վասն Աւստդրիու, Գարինդրիու եւ Կիսդրիու: լե. *78բ–9ա* Վասն Լիւօնիու եւ Բրիսիայու, որ է հիւսիսային Ալամանու բաժինն: լզ. *79ա–80ա* Վասն Լիդիովանիու երկրին:

3. *80ա–94ա* Եւ սկսնումմ յԱսիու բաժինն

ա. *80ա–1բ* [Վասն Բուսիա երկրին] — Բուսիան, *որ այլ անուամբ կոչի* Բութէնիայ *եւ* Բօտօլիայ…: բ. *81բ* Վասն Դիլէ կղզոյն, որ է վերջի կղզին ի Բրիդանական կղզոց մէջն: գ. *81բ–6ա* Վասն թաթարաց տիրեալ երկրին, որ է երկրորդ բաժինն Ասիու: դ. *86աբ* Վասն Վրաց Տանն, որ ֆռանկին Կեաւկիանէ կոչէ: ե. *86բ–7բ* Վասն Մեծի Արմենիին, որ է Մեծն Հայք: զ. *87բ–9բ* Վասն Հնդկաց տանն՝ թէ ներին, թէ արտաքին Կանճէ գետոյն: է. *89բ–90բ* Վասն Դաբրօպօնիա կղզոյն, որ կոչի Սամօթրայ, եւ վասն Մուշտաֆէ կղզոցն, որ են ԺԱ հազար: ը. *90բ–1բ* Վասն Պարսկաց տանն, որ է Աճամու երկիրն: թ. *91բ–3բ* Վասն Տանկաց Տանն եւ տիրելոյն զերկիր: ժ. *94ա* Վասն Պաղիստինոյ երկրին, որ է Հրէաստան՝ խոստման եւ ժառանգութեան երկիրն:

4. *94ա–9բ* [Եւ սկսնումմ Աբրիկու բաժինն]

ա. *94աբ* Վասն Աբրիկու բաժնին, որ մնացեալ էր բանս ինչ, զայն այլ գրեմ ասելով, զի զԱբրիկու սահմանսն ի վերոյ գրեցաք, ապա բան ինչ կա, որ ոչ յիշեցաք, որ պիտոյ էր անդր ընդ շարս բանին գրել, որ են այսոքիկ – *ԶԱբրիկու բաժինն կան վիշապք…:* բ. *94բ–5ա* Վասն Պարպարիային, որ է Թունուզու, Մաղրիպու, Ձէզայիրու տունն: գ. *95աբ* Վասն Նումիտիանին: դ. *95բ–6ա* Վասն Նիկրիդարում ռէկէօքին, որ է չորրորդ բաժինն Աբրիգու: ե. *96ա–7ա* Վասն Հապաշաց Տանն: զ. *97աբ* Վասն յեգիպտոսին: է. *97բ–9բ* Վասն անծանօթ կղզեացն, որ ոչ գիտէին յառաջն եւ են սոքա ի բաժին Աբրիգու, գտեալ ի Սպանացի ումեմնէ:

5. *99բ–119ա* Եւ այժմ սկիզբն առնեմմ պատմելոյն Նոր Հնդկաց Տանն, կամ յԱրեւմտեան Հնդկացն, կամ Ամերիգու բաժնին

ա. *100ա* Վասն մեծութեան Հնդկաց Տանն որ յարեւմտից, եւ վասն առաջի գտնօղին, եւ թէ վասն էր Հնդկաց Տուն կոչեցին. ժողովեցաք համառօտ ի Գերօնիմոս գիլիսէ բահանայէ: Գլուխ Ա — Հնդկաստան *կամ Նոր աշխարհ…:* բ. *100ա–1բ* Վասն Սուրբ Խաչի կղզոյն եւ աւանդութեան բնակչաց: գ. *101բ–3բ* Վասն Սպանիօլայ կղզոյն, եւ վասն Պօրգուէնու եւ եամագայու: դ. *103բ–4ա* Վասն փոհր

կղզոյն որ կոչի Դերայ Տիլատրօ: ե. *104աբ* Վասն Լուգայէ կղզոյն եւ բնակչացն: զ. *104բ–5ա* Վասն Ֆլօրիայու երկրին, վասն Մալհատօ կղզոյն, եւ Բանուգօ երկրին եւ բնակչաց նորին: է. *105բ* Վասն Գուպա կղզոյն եւ բնակչացն: ը. *105բ–6ա* Վասն Եւգադարանա կղզոյն եւ բնակչացն: թ. *106ա–7բ* Վասն Հարաւային ծովուն եւ զգտանել մարգարտացն ի Սուրբ Միխայէլի Ծովու խորշն, եւ վասն Տարենու երկրին: ժ. *107բ–8ա* Վասն Ծնէի գետոյն, եւ վասն այն երկրի բնակչացն, եւ վասն Գօտէկօ կղզոյն, որ այժմ Գարդագիւէս ասի: ժա. *108աբ* Վասն Սուրբ Մարթայու երկրի եւ բնակչացն: ժբ. *108բ–9ա* Վասն Վէնէծուելայ եզերին եւ վասն բնակչաց նորին: ժգ. *109ա–10բ* Վասն Թուպակուայ կղզոյն, եւ Գումանայ եւ իւրեանց բնակչացն: ժդ. *110բ–1ա* Վասն Մարաննօ եւ Բարանկուածոյ գետոցն եւ վասն բնակչաց երկրին: ժե. *111աբ* Վասն Մակալլիանէսի նեղին եւ վասն բնակչաց երկրին: ժզ. *111բ* Վասն Ծէպուտու կղզոյն: ժէ. *111բ–2ա* Վասն Պօռնէ կղզոյն եւ բնակչացն: ժը. *111աբ* Վասն Մլուէ կղզոցն որ են ԺԱՒ եւ նոցին բնակչացն, կարգաց եւ կրօնից: ժթ. *112բ* Վասն Գուագօ խաղաքին եւ վասն իւր ազգաց, եւ վասն էլէսացւոց: ի. *112բ–3ա* Վասն Թարագուիլ մագարտի կղզոյն: իա. *113ա–4ա* Վասն Նիգարուկուայ բռովինձիային եւ իւր բնակչացն: իբ. *114ա* Վասն Գուաճուդէ Մալլանն եւ իւր բնակչացն: իգ. *114աբ* Վասն Գիգուիգայ եւ բնակչացն նորին: իդ. *114բ–6բ* Վասն Բէռուայ երկրին եւ օթեւանացն եւ օդից եւ եղանակաց փոփոխման: իե. *116բ–8ա* Վասն Ուռապայ եւ Անդիբ խաղաքին եւ նոցա որ ի միջասահմանն բնակին: իզ. *118աբ* Վասն Առամա գաւառին եւ բնակչաց նորին: իէ. *118բ–9ա* Վասն Բաբայեանայ բռովինձիային եւ վայրենի բնակչացն նոքին — Բաբայեանայ *բռովինձիան կոչեցաւ ի քաղաքէն... եւ այժմ տիրէ այս երկրին բարեպաշտ արքայն* Սպանիացոց, *զորոյ զթագաւորութիւնն նորին Աստուած հաստատուն եւ անշարժ պահեսցէ մինչեւ յաւիտեան. ամէն:*

ԻԴ գլխահամարը կրկնուած եւ շարունակուած, հետեւապէս ԻԴ–ԻՁ փխ. Իե–Իէ. Յիշ. թրգմ. տե՛ս 121բ:

Դ. *119ա–21բ* [Մարմնազննութիւն]

ա. *119ա–20բ* Յաղագս ճանաչելոյ զմարդիմ ամենայն, այսինքն՝ ի վերայ կերպից անդամոց իւրոց — *Յանդամոց եւ կերպից ցոյցքն եւ զգիրքն ֆիզոնոմիայ արուեստին...*

բ. *120բ–1բ* Վասն հասարակաց անդամոցն եւ չափաւոր ձեւոցն հասակաց, որովք ճանաչի եւ գիտացուի մարդ, թէ ինչ գործոց բնութեանց տէր է. ի փիսոնոմիայ առնեստէ խրատ — *Հաւասար ըստ չափոյ եւ ձեւոյ հասակին լինի մարդն կատարեալ... եւ փորձեալ են այս չափս վասն նշանաց մարդոյս:*

— *121բ* [Յիշատակարան թարգմանութեան] *Աւարտեցաւ Աշխարհացոյցս յաճախ լաւ եւ ընտիր օրինակէ, որ զամենայն պատմէ զաշխարհաց եւ զբնակչացն, որպէս գտանի ի մէջ սորայ: Թարգմանեալ* Յօհաննիսէ Էնկուրիացւոյ *ի լատին լեզուէ ի հայ բարբառ:*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

121բ... Արդ, աղաչեմ զձեզ, ով հայրք եւ եղբայրք, որք հանդիպիք սմա կարդալով կամ օրինակելով, յիշեսջիք ի մաքրափայլ յաղօթս ձեր զգծօղ սորին, զի եւ դուք յիշեալքք լիջիք յԱստուծոյ հանդերձ ծնօղօք եւ ննջեցելովք. ամէն: Արդ, Աստուծով յանգ ելեալ աւարտ հասեալ գրեալ եղեւ գրկուկս ի Կոստանդնուպօլիս, ի պատրիարգութեան սոյն մայրաքաղաքիս՝ տեառն մեծի Յովանիսի աստուածաբան վարդապետի Բաղիշեցւոյ, ի վայելումն Սուրբ Կարապետու նուիրակ եւ աշխատաւոր Մաղաքիա աստուածաբան վարդապետին, որ եւ Տէր Աստուած բարով վայելել տացէ եւ զինքն ընդ երկայն աւուրս արասցէ. ամէն: Եւ էր թվական ՌՃՀՀ (1729), մատի ժ (10):


ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

121բ (ԺԸ դ.) Ըզ*Մրուի որդի զտէր* Կարապետ Պալաթեցի, *որ ամ Ծռազատկին:*

1789
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՆՈՐ ԱՇԽԱՐՀԻՆ

ԺԸ — XVIII

ԹԵՐԹ՝ 91—6 (տե՛ս պահպանակ). չգրուած՝ 1ա—3բ, 87ա—91ա: ՊՐԱԿ՝ Ա—ԺԱ,x8 (ե 6, ԺԱ 7): ՆԻՒԹ՝ թուղթ, լուսագծերով եւ եռամաիիկ լուսադրոշմով: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 18,7x13: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն: ԳԻՐ՝ նօտրգիր: ՏՈՂ՝ 22: ԿԱՋՄ՝ ննշագծերով շագանակագոյն կաշի, միջուկը՝ տախտակ, աստառը՝ թուղթ, մասն պահպանակի: ՊԱՀՊԱՆԱԿ՝ 3 (1—3) + 3 (89—91), թուղթ, մասն աստառի:



Նմուշ՝ 29ա

Վիճակ՝ բաւարար. թանաքից գրադաշտը թեթեւակի գունափոխուած: Կազմի կաշին՝ ճեռուած:

Ծննթ. Այս եւ ձեռ. 1790 գրուած եւ կազմուած են նոյն ձեռով:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

–4ա–86բ [Պատմութիւն նոր աշխարհին]

